



«ՆՈՐԱՎԱՆՔ»
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՍԱԴՐԱՄ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Երևան – 2006

ՀՏԴ 941 (479.25) : 391/395 = 919.81

ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.5 (2Հ)

Պ 505

Պետրոսյան Ա.Ե.

Պ 505

Հայոց ազգածագման հարցեր. - Եր.: «Նորավանք»
ԳԿՀ, 2006. - 146 էջ:

Ժողովածուի հոդվածներում, որի հեղինակն է ՀՀ ԳԱԱ
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտ-
աշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Ա.Պետ-
րոսյանը, քննարկվում են Հայկական լեռնաշխարհի հնագույն
էրնիկական պատմության, լեզուների և մշակութային առն-
չությունների մի շարք խնդիրներ: Առաջարկվում են որոշ կա-
րևոր հարցերի նոր լուծումներ, ներկայացվում է հայոց ազգա-
ծագման խնդրի արդի վիճակի քննական տեսությունը:

**ԳՄԴ 63.3 (2Հ) +
63.5 (2Հ)**

ISBN 99941-961-4-6

© «Նորավանք» ԳԿՀ, 2006

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայումս հայագիտության մեջ, թերևս, առավել հրատապ են հայ ժողովորդի ծագման, ձևավորման և նախապատմության խնդիրները: Դրանք, բոլոր մնացածներից առավել, տեղի են տվել այլևայլ շահարկումների՝ տարբեր աստիճանի գիտականից մինչև հակագիտական մակարդակներով:

Կարևորագույն տեղ է գրավում Ուրարտու-Հայաստան ժամանգորդության խնդիրը: Եղե՞լ է արդյոք հայկական բնակչություն Ուրարտուում, և եթե այո, երկրի ո՞ր շրջաններում: Ի՞նչ էթնիկական արմատներ է ունեցել Ուրարտուի դիցարանը: Արդյո՞ք երկրի իշխող արքայատոհմը նույն ծագումն է ունեցել, ինչ և բնակչության մեծամասնությունը: Եղած տեսակետները հաճախ միակողմանի են և հենված չափազանց փոքրարիվ փաստարկների վրա:

Այս աշխատության մեջ քննվում են նշված խնդիրներին առնչվող մի շարք հարցեր: Առաջին հոդվածում ցույց են տրվում ուրարտա-հնդեվրոպական և հայկական մի շարք ընդհանրություններ, որոնց հիման վրա կարելի է եզրակացնել, որ Ուրարտուում էական է եղել հնդեվրոպական տարրի դերը:

Երկրորդ հոդվածը նվիրված է երեքունի-Երևան ամրոցի առաջին բնակիչների էթնիկական կապերի խնդրին: Բանն այն է, որ հաճախ, առանց լուրջ իհմնավորման, հայկական ծագում է վերագրվել Արգիշթի 1-ի կողմից այստեղ բնակեցված Հայկական լեռնաշխարհի ծայր արևմուտքից բերված մի քանի հազար գերիներին, որոնք, իբր, հետագայում, «հայացրել» են ողջ Երկրամասը:

Երրորդում առաջ է քաշվում Ուրարտուի արքայատոհմի և իշխող դասի ծագման վերաբերյալ մի նոր վարկած: Ամենուրեք, իշխող արքայատոհմները և ընդհանրապես իշխող դասերը հաճախ եղել են այլ ծագման, հաճախ ուշ դարաշրջանի եկվոր ցեղերից: Այսպես, Միջագետքում իշխել են եկվոր ամրությունները, արամեացիները, արաբները, իրանում և Հայաստանում՝ պարթևները, արաբները, թյուրքները, ողջ միջնադարյան Եվրոպայում՝ գերնանական ցեղերը և այլն: Նույն իրադրությունն է եղել, ամենայն հավանականությամբ, և Ուրարտուում:

Չորրորդում ցույց է տրվում հայոց ազգածին ավանդության՝ առաջին Հայկյանների վերաբերյալ տվյալների ոչ միայն պատմական, այլև ազգագրական, լեզվաբանական և առասպելաբանական արժեքը, ինչը պատշաճ ուշադրության չի արժանացել:

Աշխատության առանցքային մասն է կազմում վերջին՝ հայոց ազգածագմանը նվիրված հոդվածը: Մինչ այժմ եղած աշխատությունների հեղինակները սովորաբար ներկայացրել են իրենց պատկերացումները իրենց կողմից գերադասության արժանացած վարկածի շրջանակներում և փաստարկներ ներկայացրել իրենց վարկածի օգտին (երբեմն և ընդդիմախոսների տեսակետների դեմ): Հոդվածում, ժամանակակից գիտության տվյալների լույսի տակ, մանրամասն քննարկվում են եղած գիտական վարկածները, դիտարկվում դրանց ուժեղ և թույլ կողմերը:

Ժողովածուն ներկայացնում է ոչ թե իրար հաջորդող և իրարից բխող հոդվածների մի շարք, այլ միանգամայն անկախ աշխատություններ:

ՈՒՐԱՐՏԱ-ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ

«Եռամաս գաղափարախոսություն»: Ըստ Ժ.Դյումեզիլի, հնդեվրոպական առասպելաբանությունը ծևավորված է երեք հիմնական «ֆունկցիաների» շուրջ՝ 1. գերազույն իշխանություն, իր հնայական՝ «վարունայական» և իրավական՝ «միտրայական» առումներով, 2. ֆիզիկական ուժ, հատկապես ռազմական բնույթի և 3. պտղաբերություն իր էրոտիկ և երկրագործական առումներով։ Այս «եռամաս գաղափարախոսությունն» անվերջանալիորեն կրկնվելով՝ ի հայտ է գալիս աստվածների և հերոսների համակարգերում, կերպարներում, նրանց հերթագայության մեջ, առասպելներում, զոհաբերություններում, օրինանքներում, անեծքներում, երկնային և երկրային տարածաշրջանների, հասարակության դասակարգումներում և այլուր։ Դա, ըստ հեղինակի, հնդեվրոպական մշակույթների բնորոշ, առանձնահատուկ հատկանիշն է՝ կապված հասարակության եռամաս դասային կառուցվածքի հետ¹։ Այդպիսի ծևավորված հասարակություն դժվար է պատկերացնել հնդեվրոպական միասնության դարշրջանում։ Անոլիթում և էնեոլիթում, բայց հասարակության այդօրինակ եռամաս կառույցի (քրներ, ռազմիկներ, բարիքներ արտադրողներ) հետքերը պարզորոշ ի հայտ են գալիս հնդկական, իրանական, հունական, լատինական, կելտական ավանդույթներում, այսինքն՝ հին հնդեվրոպական հասարակությունն ունեցել է համապատասխան նախադրյալներ, որոնց հիման վրա և ծևավորվել են իրար այդքան նման դասային կառուցվածքներ²։

Ժ.Դյումեզիլի տեսությունը շատերի կողմից ընդունվել է, հաճախ էլ քննադատներ։ Մեր նպատակներից դուրս է այդ տեսության վերաբերյալ թեր և դեմ կարծիքները ներկայացնելը։ Ինչ վերաբերում է «եռամաս գաղափարախոսության» դրսևորմանն առասպելաբանության մեջ, ապա Ժ.Դյումեզիլի և նրա հետևողների ներկայացրած հսկայական նյութը կասկածից վեր է դարձնում այն։ Եվ,

¹ Տե՛ս, օրինակ, G.Dumézil, *Mythes et dieux des indo-européens. Textes réunis et présentés par Hervé Coutau-Bégarie*. Paris, 1992, p. 81-115։ Այս տեսակետի կողմ և դեմ կարծիքների քննարկումը տե՛ս, օրինակ, S.C.Littleton, *The New Comparative Mythology*. Berkley, Los Angeles, London, 1982, p. 153-203, 216-236։ Դայկական իրականության մեջ այդ ֆունկցիաների դրսևորմանների վերաբերյալ տե՛ս Ժ.Դյումեզիլի, U.Պետրոսյանի, Ս.Միյամի, Ս.Օրենցոյի, մեր և այլոց աշխատություններում։

² G.Dumézil, նշվ. աշխ., էջ 87-95, Օ.Ա.Ալի էջանուածական համապատասխան նույնականության մեջ և այլու աշխատություններում։

ի վերջո, այդ գաղափարախոսությունը ոչ այլ ինչ է, քան իդեալ և միաժամանակ՝ քննության մեթոդ:¹

Ուրարտերենն ազգակից է խուռիերենին, բայց հայտնի խուռիական դիցարանները և կազմով, և կառուցվածքով արնատապես տարբերվում են ուրարտականից² (ընդհանրապես, խուռիական և ուրարտական պատմամշակութային ընդհանրությունները թույլ են արտահայտված): Ուրարտական աստվածները, մեկ-երկու բացառությամբ, համապատասխանություններ չունեն խուռիական դիցարաններում։ հատկապես աչքի է զարմում գերագույն աստված Խալուի խուռիական գորգահեռի բացակայությունը:

Ուրարտերնը հնդեվրոպական լեզու է, բայց ուրարտական դիցակարգը կարող է դիտվել որպես տիպիկ հնդեվրոպական կառուց (նմանօրինակ հնդեվրոպական ազդեցություն ի հայտ է գալիս նաև որոշ այլ ոչ հնդեվրոպական ավանդույթներում): Դրա համապատասխանությունը ժ. Դյուլմեզիլի Վերակազմությանը բացառիկ է. եթե հնդեվրոպական դիցարաններում առանձնահատուկ եռամսա ֆունկցիոնալ կառուցը սովորաբար ի հայտ է գալիս վերակազմության արդյունքում, ապա ուրարտականի դեպքուն դա բացահայտ է: Ղա կարող է բացատրվել երկրի բնակչության մեջ հնդեվրոպական տարրի վճռական դեր ունենալով⁴:

Սեզ հայտնի ուրարտական դիցարանը կանոնակարգվել է մ.թ.ա. IX-րդ դարին, իշպուհնի և Մինուա արքաների ժամանակ: Այս դիցարանը ստեղծող աստվածաբանական միտքն առաջնորդվել է հնդեվրոպական «եռամսա գաղափարախոսության» սկզբունքով: Այսինքն՝ իշպուհնին, Մինուան և նրանց քրմությունը պետք է որ ունենային հնդեվրոպական ծագում⁵: Ստորև համառոտ կերպով

¹ G.Dumézil, Mythe et épopée. T. 1, Paris, 1968, p. 15.

² I.M.Diakonoff, Evidence on the Ethnic Division of the Hurrians. Studies on the Civilization and Culture of the Hurrians, Winona Lake, 1981, p. 83:

³ Ä.Äëëüöåëüì, Äðåâí èé í àðî ä öóððèòû. Í . , 1992, n. 76.

⁴ Ուրարտուն հայկական, թրակյան և իհանական տարրերի վերաբերյալ տես Գ.Զահենկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 434-435, 443-445, նույնի՝ Ուրարտերենը և հայերենը. Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 153: Ակնհայտ է նաև ներթաղովիհական ներկայությունը:

ներկայացվում են «եռամաս գաղափարախոսության» հետ համադրելի որոշ ուրարտական փաստեր:

ա. Ուրարտական դիցարանը գլխավորում են գերագույն աստված Խալդին, ամպրոպի աստված Թեյշեբան և արևի աստված Շիվինին¹: Սրա լավագույն զուգահեռը կարելի է համարել սկանդինավյան Օդին, Թոր և Ֆրեյր երակը: Առաջինը գերագույն աստված է, որը, պահպանելով առաջին ֆունկցիայի հատկապես հմայական ասպեկտը, յուրացրել է ռազմական ֆունկցիայի մի նշանակալի մասը և հանդես է գալիս որպես ռազմական ջոկատի աստված (այդպիսին է և Խալդին): Թորն ամպրոպի աստվածն է, շեշտված Երկրագործական կապերով (անձրևաբեր), որի նախկին ռազմական հատկանիշներն ի հայտ են գալիս հսկաների և հրեշների դեմ կորիվներում, իսկ Ֆրեյրը պտղաբերության և ամուսնության աստվածն է:

բ. Աստվածուհիների շարքը գլխավորում են Վարուբանին, Բարբան և Տուշպուեան, մեծ աստվածները կանայք:

գ. ԵՎ աստվածները, և աստվածուհիները բաժանվում են Երեք խմբերի:

դ. Դիցակարգում հիշվում են բազմաթիվ եռյակ սրբություններ՝ հիմնականում համադրված մեծ աստվածների հետ: Օրինակ, «Խալդիի զորքերը, Թեյշեբայի զորքերը, Արտու’արասի աստվածները» (այսինքն՝ Շիվինիի զորքերը), «Արդինի քաղաքի աստվածը, Կումենու քաղաքի աստվածը, Տուշպա քաղաքի աստվածը» (այսինքն՝ Խալդին, Թեյշեբան, Շիվինին), «Խալդիի դարպասը, Թեյշեբայի դարպասը, Շիվինիի դարպասը», «Լեռների աստվածը, հարթավայրերի աստվածը, ծովերի աստվածը», ապա և Խալդիի եռյակ հատկանիշները և այլն:

ե. Բազմաթիվ տեքստեր ավարտվում են անեօքի բանաձևով, որտեղ արձանագրությունը վնասողին պետք է ոչնչացնեն Խալդին, Թեյշեբան և Շիվինին:

օծածօնեան Ծանական «Սասմա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2004, նույնի՝ Ուրարտուի իշխող տարրի ծագման շուրջ. Յին Յայաստանի մշակությը, XIII, Երևան, 2005, նույնի՝ Ուրարտուի վերնախավի էրնիկական պատկանելութան խնդիրը. ՊԲՀ, 2005, N 1:

¹ Ուրարտուի կրոնի վերաբերյալ տես Մ. Նմայալյան, Վաճի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990: Ուրարտական այս եռյակի հինարևելյան լավագույն զուգահեռը ասորեստանյան Աշշուր, Չամաշ, Աղադ եռյակն է, բայց այստեղ ամպրոպի աստվածը հանդես է գալիս որպես եռյակի երրորդ անդամ, որով այն տարբերվում է հնդեվոնականներից: Ընդ որում, չի կարելի բացառել հնդեվոնական ազդեցություններն Ասորեստանի մշակույթում (հետաքրքիր է, որ մ.թ.ա. Երրորդ հազարամյակի Երևայի դիցարանի գլխավոր եռյակը՝ Կուրա, Չամաշ և Աղադ, համադրելի է ասորեստանյանին), տես Ա.Ա. Հ ձօնի ոյն, Ած յի ունեա յի ոն է ո օծի- յի անը, Ածածան, 2002, թ. 37, 187:

գ. Ուրարտական աստվածներին զոհաբերվել են ցլեր, կովեր (աստվածուիհներին) և ոչխարներ և միայն խալդիին՝ ուլեր, ցլեր և ոչխարներ, որը միանգամայն համապատասխանում է որպես տիպիկ «եռաֆունկցիոնալ» դիտվող հին հնդկական սառւտրամանի զոհաբերությանը՝ նվիրված աստվածների արքա Ինդրային¹:

է. Հնդեվրոպական առասպելաբանության «իիհննական առասպելը» ներկայացնում է ամպրոպի աստծու և նրա հակառակորդ Օձվիշապի հակադրությունը: Ուրարտական և խուրիական դիցաբանության ընդհանուր կերպարն է ամպրոպի աստվածը՝ խուր. Թեշուր, ուրարտ. Թեյշերա: Ի տարբերություն ուրարտական առասպելաբանության, որից ոչինչ չի պահպանվել, մեզ հայտնի են մի շարք խուրիական առասպելներ: Այստեղ ևս կենտրոնական դեր ունի ամպրոպի աստծու և նրա հակառակորդների հակադրությունը: Ընդ որում, այդ հակառակորդներից Արծար աստվածության գաղափարագրով ներկայացված անվան Վերջավորությունը ցույց է տալիս, որ այն ծագում է հնդեվրոպական «արծար» տերմինից, իսկ Ուլլիկումնի հրեշի անունը համադրելի է Օձ-վիշապի հնդեվրոպական անվանը (*wel-): Թեշուրի համար ևս հնարավոր է առաջարկել հիմնավոր հնդեվրոպական ստուգաբանություն (որպես «կացնավոր աստված», հմնտ. *tek's- «կացին»)²: Ցավոք, այդ անունները դժվար է միարժեքորեն կապել որևէ եթնիկական խմբի հետ:

ը. Ուրարտական երրորդ մեծ աստված Շիվինիի անունը հավանաբար փոխառված է խեթական արևի աստծու մի տեղական տարբերակից (հմնտ. խեթ. šinu, šiuanni, šuna- «աստված», հնդեվրոպական լուսավոր երկնքի, արևի աստծու *dyeu-/ *diw- անունից)³:

¹ Խալդիին, ի տարբերություն մյուս աստվածների, նաև ուլեր զոհաբերելու վերաբերյալ տես Ս. Դմայալյան, նշվ. աշխ., էջ 35: Հնդեվրոպական զոհաբերությունները հասուլ քննարկվում են «Եռամաս զաղափարախոսության» համատեքստում. կոնկրետ սառտրամադի-ի և զուգահեռների վերաբերյալ տես G. Dumézil, *Tarpeia*, Paris, 1947, p. 117 seq. J. Puhvel, *Indo-European Animal Sacrifice. Journal of American Philology*, 1978, N 99, նույնի՝ *Comparative Mythology*. Baltimore and London, 1987, p. 161-162: Որպես Հայկական լեռնաշխարհին մերձակա մի հին հնդեվրոպական զուգահեռ կարելի է նշել, որ այդորինակ զոհաբերություն (1 ցուլ. 4 ոչխար, 4 այժ) է կատարվել խեթական «քանակի ամպրոպի աստծու» համար, տես O.R. Gurney, *Some Aspects of Hittite Religion*, Oxford, 1977, p. 27-28:

² Ա.Ա. Է ձօծն նույն աստվածների եղակը...

³ I.M. Diakonoff, *Hurrisch und urartäisch*, München, 1971, S. 81. Է. Լ. Անդրեասի Տ 1 ձառն ծառ 1 ձառն ծառն է յունական աստվածների եղակը...

թ. Յայ. «Միերի դուռ» և ուրարտ. «Խալդիի դարպան» համապատասխանությունը ցույց է տալիս, որ հայկական էպոսի Միերի հնագույն նախատիպը Խալդին է (տես ստորև): Թվում է, թե Խալդիի կերպարը ներդրվել է հնդկական Միտրա-Վարունա դիցաբանական զույգի մի տեղական տարրերակի վրա: Միեր/Միհրը սերում է հնդ. Միտրայի հին իրանական ազգակից Միթրայից: Խալդիի կնոջ անունն է Արաբան/*Aruba*(i)ու: Վարունայի անունն առաջին անգամ ի հայտ է գալիս մ.թ.ա. XIVդ., Սիտաննիի արիական աստվածների ցանկում, ուրարտ. Արաբան/*Aruba*(i)ու-ին համահունչ Որսանա- և Արունա- տարրերակներով (ուրարտ. b = w): Այսպիսով, Խալդի-Վարութանի զույգը համադրելի է հնդ. Միտրա-Վարունային, և Վարութանի դիցանունը կարող է արիական փոխառություն լինել: Մուծածիրում Խալդիի կնոջ անունն ավանդված է Bagmashu/Bagbartu ձևով, որը նույնպես հնդիրանական դիցանուն է հիշեցնում (հնդ. Bhaga, իրան. ხաց, շատ հաճախ կապված Միտրա/Միթրայի հետ): Սիտաննիական արիացիների հայրենիքը եղել է, թերևս, Ուրմիա լճի շրջանում¹, որտեղ և գտնվում էր Խալդիի պաշտամունքի կենտրոն Արդինի/Մուծածիր քաղաքը: Ճնարավոր է համարվում, որ Մուծածիրն ինչ-որ ժամանակ եղել է իրանական ազդեցության տակ²: Ըստ մի տեսակետի, այդ նույն շրջանում է գտնվել և հնդիրանական ցեղերի նախնական հայրենիքը³:

Ժ. Որոշ ուրարտական դիցանուններ կարող են բացատրվել հայերենով: Այդպիսիք են Անիկուն (տես ստորև), Արդին (հնմտ. հայ. *արդ* «ձև, կարգ, սարք»), այս արմատը հայտնի է հնդեվրոպական դիցանուններում), Ծինուիարդին (հայ. *ծին* և *արդ*, որպես որդեծնության և տոհմի հովանավոր դիցուիի), Արտահինին (հայ. *այր* «անձավ»), Տուրանին (հայ. *տուր-ը* «նվեր, պարզեց»), Արծիբեդինին (հայ. **արծիւի*, *արծուի*) և այլն⁴: Սրանք երկրորդական աստվածներ են, որոնցից միայն Տուրանին է, որն անվանական մակարդա-

(1940), S. 217-218: Ըստ Ի.Դյակոնովի, դա բացարձում է, քանի որ 1. խուրեթենում և ուրարտեթենում չկան -m- / -w- համապատասխանության դեպքեր և 2. խուրառարտական iwi-ն ուրարտեթենում կամոնավոր կերպով պետք է սղվեր Ի-ի, և բնիկ լինելու դեպքում Տšiwin-e-ի փոխարեն կունենայինք Տšio: Որոշ ուսումնասիրողներ (Մ.Խաչիկյան, Ս.Սալվինի) շարունակում են պաշտպանել Ֆրիդրիխի տեսակետը՝ առանց փաստարկներ ներկայացնելու Դյակոնովի առարկության դեմ:

² Ch.Burney, The Gold Haldi and the Urartian State. Aspects of Art and Iconography; Anatolia and its Neighbours. Ankara 1993.

³ V.Sarianidi, Near Eastern Aryans in Central Asia. *Journal of Indo-European Studies*, 1999, N.2.

⁴ Գ. Զահոնիկյան, Յայլական շերտն ուրարտական դիցարանում. - ՊԲՀ, 1986, № 1:

կով կարող է պահպանված լինել հայկական ավանդության մեջ (հմտ. Տուրք կամ Տորք Անգեղյակի կերպարո):

Այսպիսով, ուրարտական դիցարանում բացահայտվում են մի քանի հնդեվրոպական լեզուների հետքեր, որոնց կրողների ազդեցությամբ էլ պետք է պայմանավորված լիներ պետական կրոնի տիպիկ հնդեվրոպական դիցակարգը:

Սոցիալական կատեգորիաներ¹: Աւելենի-ասելինը բառը թարգմանվում է որպես «քուրմ, տաճարի սպասավոր»: Հնդեվրոպական լեզուներում հայտնի չէ մի միակ արմատ «քուրմ» նշանակության համար: Բայց ակնհայտ է քրմության գոյությունը հնագույն հնդեվրոպական հասարակություններում, որտեղ տարրեր լեզուներ բառեր են ստեղծել տարրեր արմատներից²: Դրանցից է և *weid- «տեսնել, գիտենալ» արմատը, հմնու. հայ. *գէտ*, *գիտում*, *գիտող* «գիտակ մոգության, գուշակ, հմայող, կախարդ, մարգարե», հին ռուս. հեջանք «կախարդություն, հմայություն», հեջանք «գուշակ, կախարդ», հին պրուս. vaidlōtojis «քուրմ», հին հնդ. vidátham «քրմական իմաստություն», ուժու «կախարդություն, մոգություն»: «Քուրմ» և մերձավոր նշանակությամբ իմաստներ ի հայտ են գալիս *weid-ի բալքիական, սլավոնական, հայկական և հնդիրանական արտացոլումներում: Աւելենի-հ -սել- մասը հնչյուն առ հնչյուն համապատասխանում է հայ. *գէտ*-ին (= geit- < *weiti- < *weid-/woid-), ընդուրում, հայերենին բնորոշ «բաղաձայնական տեղաշարժով» (t < *d, ուրարտ. t-ն լավագույնս համապատասխանում է հայ. տ-ին)³, իսկ -ու-ն ուրարտական ածանց է: Ըստ Երվանդ Գրեկյանի սիրալիր հաղորդման, տեսականորեն չի բացառվում բարի նախաձայն ա-ի զաղափարագիր մեկնաբանությունը՝ ^{ԼՍ.Ա.}սելինի «սելի-ական որդի», տարրեր իմաստավորման հնարավորություններով: Այդ դեպքում այն փոխառված պիտի լիներ հնագույն հայկական *weiti-hg (քուրմ բառը սեմական փոխառություն է)⁴:

² J.P. Mallory and D.Q. Adams, *Encyclopedia of Indo-European Culture*, London, Chicago, 1997, p. 451-453.

³ Գ.Զահորյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 430:

⁴ Ըստ Հայոց Սարտիրոսյանի միրայի խորհրդատվության, առաջակայի շրջան, Երևան, 1971, էջ 100.

Ըստ Հայոց Սարտիրոսյանի միրայի խորհրդատվության, առևտուի համար հնարավոր է առաջարկել նաև հունական և իրանական ստուգաբանություններ։ Յնմտ. և միարժեք ստուգաբանություն չունեցող հայ. *աւետ-/աւէտ-* «բարի լուր», որը, որպես «զիտելիք, տեղեկություն», կարող է առնչվել օրմական գործառության հետ:

Mari-ն թարգմանվում է որպես «տոհմիկ, արքայական ծառայող, բարձր պաշտոնյա»: Յաճախ համադրում են խուռիական տարրանու-ին: Խուռիական հասարակության իշխող տարրը ծագումով հնդարիական էր, և այդ տերմինով սկզբնապես կոչվել են, հավանաբար, արիացի ռազմիկները, հմնտ. իինդ. márya «Երիտասարդ, ռազմիկ», «Երբայրության անդամ»¹: Յայտնի է նաև հայսական Mariya անունը, թերևս անուսնական մի բարձր դասի անվանում, միանգամայն համադրելի իշշյալ ուրարտական և հնդկական տերմիններին: Այս բոլորն էլ կարող են մեկնաբանվել հնդեվրոպական հիմքով, հմնտ. *meryo- «Երիտասարդ տղանարդ» և *meri- «Երիտասարդ կին»²:

Շուր-ները ենթադրվում են ուրարտական հասարակության տիրապետող տարրը: Այս անվանումը նույնական է ուրարտ. շուր «սուր, զենք, նիզակի շեղը» և հայ. սուր բառերին, որը բնիկ հայկական ծագում ունի, հմնտ. և խուռ. նույնմաստ շաuri «զենք», որը նույնայն կարող է հնդեվրոպական փոխառություն լինել (հնդեվրոպական *k'ō-ro-): Ըստ այդմ, շուր-ները պատկերացվել են որպես զինված համայնականների մի դաս, պետության լիիրավ քաղաքացիներ: Ի. Դյակոնովը կարծում է, որ շուր-ն ունեցել է նաև ցեղանվանական կիրառություն և եղել է Ուրարտուի իշխող ցեղի՝ «ուրարտացիների» ինքնանվանումը (ուրարտական արքաների կոչումներից մեկն է «Շուրili երկրի արքա, Biainili երկրի արքա»):

Տաստի-ն թարգմանվում է «ավար, գերիներ»: Օգտագործվում է տարրեր երկրներից գերեվարված բնակչության հիշատակություններում և կարող է մեկնաբանվել որպես «բնակչություն, մարդիկ, ժողովուրդ»: Այդ դեպքում այն համադրելի է հնդեվրոպական *teu-t- «համայնք, ժողովուրդ» արմատին (իին բարձր գերմ. diot, իռլ. túath, լատվ. tāuta «ժողովուրդ», հմնտ. և խեթ. tu葬zi «զորք»): Կազմված է ուրարտ. պատկանելության հի, կամ, թերևս, վերացական տիկ- ածանցով՝ tautu-տիկ > tautuhi:

¹ Ի. Դյակոնովը, որը հակված էր նվազեցնելու հնդեվրոպական և հնդիրանական տարրի դերը Յին Արևելքում, մերժում է mari-ի և mariannu-ի կապը հնդ. márya-ի հետ. E./A. Անցել 1/1. Աճածօձի ։ Ծեր 1 օձի է Օճաշահանը ։ հ. 66-67, ։ ծեր ։ 30: «Միջազգետքամ արիացիների» խորի վերաբերյալ հավասարակշռված մոտեցում տեսն, օրինակ, A. Աճածօձը ։ Աշկ. աշխ., էջ 44, հտն., հարցի գրականությամբ:

² Տես A.A. Աճածօձը. 1 որ 1 ծեր 1 օձի է օճաշահանը ։ աճ ։ աճ ։ աճ ։ աճ ։ աճ ։ ՊԲՀ, 1988, N 1, c. 65-66, J.P. Mallory, D.Q. Adams, նշվ. աշխ., էջ 656, A.A. Աճածօձ, Օճածօձնե. mari օճածօձնե. marianne օճածօճնե. Marija-. 1 աճածօճ աճածօճնե ։ հայ ծեր ։ 1 ., 1979, A./. Օճ-աճօճը. 1 աճածօճ-օճածօճնե ։ աճածօճ-օճածօճնե ։ Աճածօճ ։ Աճածօճնե ։ 1988:

Vedia(ni) «կին»: Գ.Զահորկյանը համեմատել է կին հնդ. vadhū «հարսնացու, երիտասարդ կին», ավեստ. ναδū «ամուսնացած կին» և նման բառերի հետ¹ (հնդեվրոպական համատեքստում՝ *iyāh ածանցով կազմություն, որին գումարվել է ուրարտական ու ածանցը): Այս տերմինները հաճգում են հնդեվրոպական *Huēdhi- «տանել» արմատին, հննտ. կին տանել: Եթինակը դիտում է տերմինն իր առաջադրած հնդեվրոպական և խուռասուրտական լեզուների ազգակցության վարկածի շրջանակում, որը մասնագետների շրջանում ընդունելություն չգտավ: Այդիսի տերմինները սովորաբար դժվար են փոխառվում, բայց հննտ. հայ. գվո. οὐλուշաղ՝ «կին», «ընտանիք»: Ուրարտերենում կա նաև լսու(nia) «կին» բառը, որի համար ևս առկա են հնդեվրոպական մեկնաբանության հնարավորություններ²:

Pura «ստրուկ»: Բառը խուռակութական է, հմնտ. խուռ. նույնինաստ *puram(m)*։ Յնարավոր է գտնել և հնդեվրոպական կապեր։ Վ.Իվանովը համեմատել է լատ. *puer* «երեխ» բառի հետ, որին ստվորաբար հնդեվրոպական ծագում է վերագրվում (ըստ հեղինակի, բառը, հավանաբար, էտրուսկյան է, որն, իր հերթին, ազգակից է խուռակութական լեզուներին)³:

Այսպիսով, ուրարտական սոցիալական կարգերի անվանումներուն կան հնդեվրոպական ծագումով տերմիններ, ինչը կարող է մատնանշել, որ երկրի սոցիալական կառույցի ձևավորման մեջ որոշակի դեր է ունեցել հնդեվրոպական տարրը:

Արածին մայրաքաղաքը: Արճեց քաղաքը գտնվում էր Վանա ծովի հյուսիսարևելյան ծոցի ափին: Այդպես է կոչվել և նույն այդ ծոցը, և Երբեմն՝ ողջ լիճը (Արծեշի ծով, ըստ Ստրաբոնի՝ 'Արտոնի, արար. Արյիշ): Վանա ծովից արևելք գտնվող փոքրիկ լճակը կոչվել է Արճեշի Նվազականով՝ Արճիշակ > Արճակ⁴: Այդ անվանումը կարող է ստուգաբանվել որպես հնեեվոռպական ջրանուններում հաճախ հանդիպող *Harg- «փայլուն, սպիտակ» արմատի⁵ ածանցյալ՝

¹ *A.Á.Áæðóðeyjí. Óðaððóñéé è èí ái áðóði i áéñéé ýçúéè, Áðáàáí, 1963, n. 15, 36.*

² Նույն տեղում, էջ 21, 177:

³ V.V. Ivanov, Comparative Notes on Hurro-Urartian, Northern Caucasian and Indo-European (ինդուն է այս երրորդի հմտելությանի տպարժեալի):

⁴ Այս հարցի շուրջը տես *Ի. Հայր Ի. Օ.* Ած մէ հայ է յի ոճո Թոթե՛ք եալ ա., 1908, ն. 315-316, ի օճ. 2, *Ա.Ա. ի ը օժի աղջու Ծածօն Ածական*, 1944, ն. 30, Ղ. Ի. Է ձական շուրջը, Ե՛տ եակած օճո Ծածօն ի օճու հու ա օճ օճ ա Ածական Ածական շուրջը, 1976, Ն. 5, ն. 91, *Թ Հայր յան, Ս.Մելիք Պախյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի Լ հարակից շրջանների տեղանունների բառարան*. հ. 1, Երևան 1986, էջ 462-463:

⁵ H.Krahe, Die Struktur der alteuropäischen Hydronymie, Wiesbaden, 1962, S. 8, 31-32.

Harg'esk(h)o- (-esko- բարդ ածանցով): Յայերենի զարգացման օրինաչափությունների համաձայն այն կարող էր ունենալ հետևյալ զարգացումը՝ *Արծեսքո- > *Արծեշո- > *Արծեյշո- > Արծէշ, սեռական հոլով՝ Արծիշոյ: Յնդեվրոպական *g'-ն դառնում է ծ միայն հայերենում, *sk-ն տալիս է սովորաբար g, բայց երբեմն՝ z¹. ծ-ն ճ, իսկ ե-ն է (εγ) է դարձել վերջին շ-ի ազդեցությամբ, հնատ. օրինակ ծանօթ/ծանաչ կրկնակը և *ek'wo- > էշ զարգացումը²: Ըստ այդմ, Արծէշը կարող է իմաստավորվել հայերեն, կամ, թերևս, վաղնջահայ մի բարբառով որպես «սպիտակ, փայլուն»: Ի միջի այլոց, այդ նույն արմատի մեկ այլ ածանցյալով է կոչվում Վանա ծովի հյուսիսվ հոսող Արածանի գետը (մ.թ.ա. Խեց ավանդված որպես Aršania): Այսինքն, հնդեվրոպական *Harg'-ը կարող է դիտվել որպես Վանա լճի հյուսիսային տեղանունների մի բնորոշ տարրը:

Ուրարտուի առաջին հայտնի արքա Արամուի «արքայական քաղաքը» ասորեստանյան արձանագրություններում կոչվում է Արշաշկու- (ֆ-ն համապատասխանում է հայ. ծ-ին, ս-ն հաղորդվել է շ-ով, օ-ն՝ ու-ով, և այդ անվանումը կարելի է կարդալ Արծաքո): Այն համարյա նույնական է Արծեշի համար առաջադրված *Արծեսքո- վերակազմությանը և, չնայած եղած տարբեր կարծիքներին, պետք է համապատասխանի Արծեշի³: Արշեքուի փոխարեն Արշաշկու- ծեր կարող է բացատրվել այլալեզու հաղորդումներում հաճախ հանդիպող անծշտությանը կամ տեղական է-ի այնպիսի հնչմամբ, որ ասորեստանգիներն ընկալել են որպես ա:

Երվանդ Գրեկյանի սիրալիր հաղորդման համաձայն, ասորեստանյան աղբյուրուն հիշվող Արծաշրուի մերձակա լեռ Adduri-ն (որի վրա է ապաստանում Սալմանասարից հետապնդվող Արամուն)՝⁴ կարող է համապատասխանել ուրարտական աղբյուրների Eiduru-ին՝ Սիփանին:⁵ Այսպիսով, Արծաշրուն պետք է զտնվեր Սի-

¹ Հայ. *sk^h > š անցման վերաբերյալ տե՛ս Ա.Ա. Աշածօյր, Ի ա յօւէլ ի ե՛ հեծանեօն հօճառածոկ է ի ածառածոյ հ ածի յի հետ ի յշւնեա. Լ աշաօն ածի աւ յետ ի չեօն ի ի ած-ի յի հետ ի օ յշւնեա ի աւ ըե. Ածառած, 1984, թ. 158-160:

1 γινεται ο γενετικος αριθμος της αποδοσης σε παραγωγη ενδιαφεροντων προϊοντων. Συναντηση μεταβολης στην αποδοση της παραγωγης ενδιαφεροντων προϊοντων σε παραγωγη ενδιαφεροντων προϊοντων.

³ Արճեցի տեղայնացման վերաբերյալ տես՝ Ղ.Ղ. Էձօնական Հայութը, պատմական այս ստուգաբանությունն առաջարկված է մեր աշխատություններում, տես՝ վերջին անգամ Ա.Ա. Ի ձօնությունը, Ած յի հեռաց յի է ն է օն է հայ, ո. 79:

⁴ E.İ. Aşkın İHA, Anadolu -aaşədî î-nəeâ é-ñöî + î-eeâ î-î é-ñöî î-eeâ Õðaððö. Åâñð-
î-ee âððâî áé è-ñöî î-eeâ, 1951, 2, N 27.

ქანას თუ მომავალში დარღვეული გადახდის მიზანით მიმდინარეობს არა მარტივი სამართლებრივი მოვლა:

Արենչի մերձակայքում գտնված Արգիշթի II-ի մի արձանագրության մեջ հիշվում է NA₄.ANŠU-քաղաքը¹, որն, ըստ Յ.Կարագյոյանի, ուբուսային ծևով ներկայացնում է Արշաշուն: «Քար» նշանակությամբ NA₄-ը մեկնաբանվում է որպես արձ, հմնտ. արձագանգ «քարի հնչյուն», իսկ ANŠU-ն՝ «կենդանի» և համարվում խեթ. աշկու-«փոքր կենդանի» բառին²: Կարծում ենք, որ այս մեկնաբանությունը, որոշ ճշգրտումներով, կարող է ընդունվել: Արձագանգ (ժամանակակից արձագանք) և արձան «մեծ քար, կոթող, կուռք» բառերի հիման վրա, իրոք, կարելի է վերականգնել արձ «քար» բառը: Ինչ վերաբերում է ANŠU-ին, ապա այն սեպագրում ոչ թե ընդհանրապես «կենդանի» հասկացության, այլ «էշ» կենդանու շումերոգրամն է, որը հանդես է գալիս նաև որպես էկվիդների և ուղտի բնորոշչչի³: Ըստ այդմ, NA₄.ANŠU-ն պետք է իմաստավորվի որպես «քարե էշ»: Էշ (< էշ, հմնտ. սեռ. իշոյ) բառը ստվիրաբար համարվում է բնիկ հայերեն և հանգեցվում հնդեվրոպական *ek'wo- «օձի» արմատին, իմաստի փոփոխությամբ: Մյուս կողմից, խուռերեն եշի, իշշիա «օձի» բառն անբաժանելի է բվում հիշյալ հայ և հնդեվրոպական ձևերից⁴: Այսպիսով, NA₄.ANŠU-ն պետք է կարդացվի Արձ-էշը: Այսինքն, հնագույն հայերեն «սպիտակ, փայլուն» նշանակությամբ Արժեշոն-ն «ժողովրդական ստուգաբանությամբ» իմաստավորվել է որպես «քարե էշ»: Ըստ այդմ, կարելի է վերականգնել ուրարտերեն արձ «քար» և էշ-«էշ» բառերը, որոնցից երկրորդը, հնարավոր է, փոխառված հայերենից:

Մայր քաղաքների «սպիտակ, փայլուն» անվանումը բազմաթիվ գուգահեռներ ունի հատկապես հնդեվրոպական ժողովուրդների ավանդություններում, որպես արտացոլում առանձնահատուկ առասպելական և տիեզերաբանական պատկերացումների (հմնտ. Բելգրադ, Վիեննա և այլն, ապա և խեթական նայրաքաղաք Խարուսասի և ողջ Երկրի գաղափարագիր՝ Կ.Յ.BABBAR «արծաք»)⁵:

¹ Εόει 406, υπη 36, Εόει 407, υπη 26:

² Ի. Ի. Եածանացի, Աշկ. աշխ., էջ 95:

³ R.Borger, Assyrisch-babylonische Zeichenliste. Neukirchen 1978, S. 109.

⁴ Այս տերմինների հարաբերության վերաբերյալ սեղմանը կազմության համար առաջին անգամ պատճենաբանվել է Հ. R. Borges, «Ազգային բազուցության չափումներ» Նույնականություն 1971, Ե. 198.

Խալդիկ պարզմները: Արգիշթի II-ի և Ռուսա II-ի մի քանի արձանագրություններում հիշվում է մի բանաձևային արտահայտություն, ըստ որի, Խալդի աստվածը արքաներին տվել է հսկողութիւն, ցուսչ և իրավունք¹: Ն.Հարությունյանն այս բանաձևը թարգմանում է որպես օճառական (՞), ոճառական էակ է աճառական աճառական (՞)՝ «հաջողություն (՞), ճակատամարտ և բարօրություն (՞)», Ս.Սալվիմիջ՝ happiness/well-being, force in the fight and masculine vigor (՞)՝ «երջանկություն/բարօրություն, ուժ կրվում և այրական հզրություն (՞)», իսկ Ե.Գրեկյան՝ «հաջողություն, (հաղթական) մարտ, առաջնորդություն»:

Եռանդամ բանաձևը, որի երկրորդ անդամը նշանակում է «մարտ, կոհիվ» և այդպիսով կարող է կապվել երկրորդ ֆունկցիայի հետ, արդեն բնութագրական է: Առաջին բառը բարգմանվում է որպես «հաջողություն» (օճախ), հմտ. խուռ. իսդ/թ-առ «ճակատագիր, բախտ»²: Հսկու-տսկու բառը, տսկու վերացարկող ածանցով, կապված է դիցարանի չորրորդ աստված Հսկուուի հետ: Վերջինս էլ, հավանաբար, խուռիական Հսկուա և Հսկուլլուր դիցանունների ուրարտական զուգահեռն է: Սրանք ճակատագրի աստվածութեաներ էին, որոնց անունները հանգում են խուռ. իսկ ու «գրել» արմատին (հմտ. հայ. ճակատագիր, որտեղ ևս շեշտվում է կապը գրելու հետ): Ըստ Ս. Ղնայակյանի, խուռութեանին համապատասխանում է հայ ժողովողական հավատալիքների ճակատագրի աստվածությանը՝ Գրողին³: Այսպիսով, հսկուտսկու-ն (բառացի՝ «գիր-ություն») կարող ենք բարգմանել որպես «ճակատագրի/բախտ, բախտավորություն, հաջողություն»: Ճակատագրի և առաջին ֆունկցիայի կապի համար նշենք, որ հին հնորկական Բիազա աստվածը՝ ճակատագրի բարիքների բաշխողը, մարմնավորում է առաջին ֆունկցիայի «միտրայական» աստեկոր⁴:

¹ Տե՛ս ԷՕԵՒ ՆՆ 406, 407, 413, ապա և Այանիսի և Գյովելերի արձանագրություններում՝ M. Salvini, The Inscriptions of Ayanis (Rusahinili Eiduri-kai). Ayanis I. Ten Years Excavations at Rusahinili Eiduri-kai. Roma 2001, p. 258, 261, Եղբայրական, Գյովելերի ուրարտական արձանագրությունը, էջ 233, 250:

² E.I. Aúyéřířa. Óðaðoñeeá i eñui a e aí eóit áí óú. I.-E., 1963, n. 88, I.E. Óað-e-éýr. Óðaðoñeeá è óðaðoñeeé ýcùeé, Áðåaaí, 1985, n. 47, ÉÓEÍ, n. 447.

⁴ Εγγρ. 2000, 42: «*Ε.Αριάδνης*. Αάδοι αί υά αί αέ εί αί αάδι i αέοάα. 1., 1986, n. 75-80: Η μήρη ωμηλη, ήμετρεύτην ρωμητ - «ψωτανόνιερ, ήμονητοιρηπούν, διάκωταφηρ» ρωμητην-

Գոստե «կրիվ, մարտ, ճակատանարտ» բառը, ըստ ուսումնասիրողների, պիտի կապվի հնդեվրոպական *gʷʰen- «խփել» արմատի հետ¹, որից նման իմաստով բառեր կան մի շարք լեզուներում, հնմտ. հայ. գանեմ, ջնեմ «խփել», գան «ծեծ», ոռւս. ձի ձնու «հալածել», հուն. φόνος «սպանություն, արյունահեղություն», իւլանդ. ցոռոր «կրիվ, մարտ» և այլն: Ի. Դյակոնովը հակված է համարել խեթալուվական փոխառություն, որը հավանական չի թվում ձայնաբանական անհամապատասխանության պատճառով (հնմտ. խեթ. կւենզ «խփել», լուվ. zantalašu «ստորացնել», որոնք կապվում են այս արմատի հետ)²: Ուրարտ. ցոստե-ն (կարդա gonos- սեպագրում օ հնչյունը հաղորդվել է ու-ով, ս-ն՝ շ-ով) հնչյուն առ հնչյուն համապատասխանում է հուն. φόνος-ի նախատիպ հնդեվրոպական *gʷʰonos-ին և, ամենայն հավանականությամբ, փոխարված է հունարենին մերձավոր որևէ լեզվից:

Ըստ Ն.Քարությունյանի, իքսեն բառը կապված է իքսա-դ(ս)-բայի հետ, որը հիշվում է միայն մեկ անգամ՝ Ռուսախիննիլի քաղաքը պիտի իքսածու լիներ անցկացված ջրանցքի ջրերով³: Այդ համատեքստից ելնելով՝ հեղինակն առաջարկում է «բարօրություն անել, բարգավաճել» (աչքան աչձանիկ աչձան, աչքան աչ ոչձան աչձան) թարգմանությունը: Այս մեկնաբանությանը, ընդհանուր առմամբ, դժվար է կասկածել: Պետք է միայն շեշտել, որ ջրանցքի ջրերի բերած բարգավաճումը կապված պիտի լիներ բույսերի պտղաբերության հետ:

Այսպիսով, նշված ուրարտական բանաձևում խալդին, որը, իբրև գերազույն աստված, իրենում ամփոփում է բոլոր հնարավորությունները, պարզեցում է արքային «բախտ, կրիՎ և ատղարերություն/թեղունություն»՝ կապված «եռամսա զաղափարախոսության» երեք ֆունկցիաների հետ: Ընդ որում, երկրորդ ֆունկցիան ներկայացնող տերմինը հնդեվրոպական է:

Խառված է նույն հետիրանական *v^hbaga- «բախտ, վիճակ, բաժին» արմատի միջին հրանական ժառանգից, տես Յ.Ածառյան, Դայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 389-390:

¹ A.A. Åsædøy, Öðaðöñééé è eí aí áðóí i áéñééé ýçûéé, n. 24, I.M.Diakonoff, Hurrisch und urartäisch, S. 82, Ö.A. Åsædøeëäçá è A.A. Eðáaí ðá. Èí aí áðóí i áéñééé ýçûé è eí aí áðóí i áéðóú. Öáéèéñé, 1984, n. 883.

² Ληγκτερνάνιδη ήντηπρωπάλακων *gʷʰ-h- ἡ αρματινή αρτωσηγιλμάν ψέρωρτεργαλ
πτέρινον. V.V.Ivanov, Palatalizations and Labiovelars in Luwian. Preceedings of the
Tenth Annual UCLA Indo-European Conference. Washington D.C. 1999:

Tenth Annual

3 EÓEÍ N 391.

Դայկական մայր դիցուիհն: Խեթական առասպելաբանության մեջ «մեծ մայր» դիցուիհն կոչվում էր Հառոահառո, որը ստուգաբանորեն կապված է հայ. հան, հանի «մեծ մայր, տատ» բառին (արմատի կրկնությամբ, հնդեվրոպական նույնիմաստ *Han- արմատից. հայերեն նախաձայն հ-ն կամ հնդեվրոպական կոկորդային հ-ի արտացոլումն է, կամ ուշ հավելում): Որոշ տվյալներ ակնարկում են, որ հայոց մեջ ևս այդ արմատը հանդես է եկել որպես դիցուիհու կոչում: Ժողովրդական երգերի հոյ Նար, Նարոյ կրկնվող բացականչությունները մեկնաբանվում են որպես *Նար դիցուիհու հիշողություններ (հմնտ. Ծովինար): Ըստ այդմ, հանիկ Նար բացականչությունն էլ պետք է մեկնաբանվի որպես «մեծ մայրիկ Նար»² (նվազական -իկ ածանցով, հմնտ. Աստղիկ դիցանունը):

Դայոց նախաքրիստոնեական դիցարանի մեջ նոր՝ Անահիտի անունն իրանական փոխառություն է: Ըստ Ղ.Ալիշանի, Անահիտի անունը «այլևայլ հեղինակը» գրել են նաև Անեա, Անիի, Անի ծևերով³ (այս հեղինակները, ցավոք, մեզ անհայտ են): Եթե դա այդպես է, ապա հնարավոր է, որ այս անուններում, հնչպես և հանիկ Նար բացականչության մեջ, պահպանվել է հայկական անունը, կոչումը կամ մականունը այն հնագույն դիցուիհու, որը հետագայում նույնացվել է իրանական Անահիտային: Վերջերս հրատարակած մի ուշագրավ հոդվածում L.Պետրոսյանը մի շարք փաստարկներ է բերում նաև Անի տեղանվան այս կոչումից ծագած լինելու օգտին⁴:

Դնագույն հայերենում, մինչև վերջին ձայնավորի անկումը, այդ կոչումը կարող էր հնչել *Չանիկո, կամ, եթե հ-ն ուշ հավելում է՝ *Անիկո, որն ուրարտական սեպագրում կարտացոլվեր որպես

¹ Ա.Ա.Էօ՛յ ա՛ օյց. Էնօ՛ ծե՛՛ -օ՛ ահե՛՛ ծե՛՛ ահե՛՛ ծե՛՛ ծն. Օ. I. Ածահա՛ր, 1956, ն. 295 ուն.

² Ս.Պետրոսյան և Ծ.Պետրոսյան, Դնագույն Ծովիի դիցական գլխավոր եղակի շուրջ.- Գիտակամ հետազոտություններ, IV. Գյումրի, էջ 87: Ավելացմենք, որ ամպրոպային դիցուիհու սինվոլիկ կերպարու ներկայացնող մի հանելովկի առաջին տողում «հանը մի ունեմ հանա, հանա» կրկնվող համ-վանկն անագրանային մակարդակով նոյնպես կարող է ակնարկել այդ դիցուիհու Ծովինարի ասովածային նախատիահի համ-կոչումը (Ա.Ա./ ձօ՛ժ յոյց. Ձօ՛ յի ունեա յոյց է ն էօ՛ յ ածոյց, ն. 11, 16):

³ Ղ.Ալիշան, Չին հաւատոք կամ հեթանոսական կրօնը հայոց, Վենետիկ, 1895, էջ 266:

⁴ Այսպես, Դարանայաց Անին Արամագդի պաշտամունքի կենտրոնը, ավանդված է նաև Չանի ծևով, համանուն Անի մայրաքաղաքում հատկապես նշանակալի է եղել սուրբ Աստվածածնի առաջամունքը, որոշ տեղեկությունների համաձայն Անիի տարածքում հնում Անահիտի տաճար է եղել, Անիի գինանշանը՝ էգ այցուօք. մայր դիցուիհու սինվոլն է, Անիի շրջանի հգաձոր տեղանունը լավագույն մեկնաբանելի է հեթանոսական դիցուիհու կերպարի շրջանակներում և այլն, տես L.Պետրոսյան, Մի հին պաշտամունքի հետքերը միջնադարյան Անիում. գիտական հետազոտություններ, V, Գյումրի, 2002:

Անկանությունը չկա հ, որը կարող է բաց թողնվել, կ-ին համապատասխանում է գ-ն, իսկ օ-ն հաղորդվել է ու-ով): Եվ ահա, Անկանությունը դիցուիին ավանդված է ուրարտական աղբյուրներում (նա արական աստվածություն էր կարծվում, բայց պարզվեց, որ նրան զոհաբերվել են կովեր, որն ուրարտական ավանդությունը բնորոշ է միայն աստվածուիիներին): Անհկուն չի հիշվում «Մերի դրան» արձանագրության պետական դիցակարգում և ի հայտ է գալիս միայն Ուլսա II-ի արձանագրություններում, այսինքն՝ պետության անկմանը նախորդող դարաշրջանում (Երկու անգամ՝ Արարատյան դաշտի և մեկ անգամ՝ Վանի շրջանի արձանագրություններում): Նա, հավանաբար, սկզբնապես եղել է պետության հյուսիսի՝ Արարատյան դաշտի և մերձակայքի բնակչության դիցուիին² (հնմտ. և Անի տեղանունների տեղադրությունը), որի պաշտամունքը հետագայուն, այդտեղից տարկած գերիների հետ, անցել է հարավ:

Խալդի, Սիեր և Արա Գեղեցիկ: «Սիերի դրան» արձանագրության հենց առաջին տողերում ասվում է, որ Եշպուհին և Մինուա արքաներն այդ «դարպասը» (այսինքն՝ դարպասի տեսքով ժայռափոր արձանագրությունը) նվիրում են «Խալդիին՝ տիրոջը»: Դայերեն «Սիերի դրա» անվանումը բացատրվում է այն հանգանաճով, որ «Սասնա ծռերում» այդտեղից է ժայռի մեջ մտնում և ապագայում այդտեղից պետք է ելնի Փոքր Սիերը: Սա թույլ է տվել ի. Շյակոնովին համարել հյայկական էպոսի Սիերին և ուրարտական դիցարանի Խալդիին և ցույց տալ, որ, այսպիսով, վիպական Սիերի հնագույն նախատիպը Խալդին է, որը միայն հետագայում, իրանական ազդեցության դարաշրջանում է վերանվանվել միջին իրանական Սիեր անվամբ, ապա և վիպականացել որպես Սիեր³:

Հայկական համատեքստում Փոքր Սիերին համապատասխանում են մյուս Վիպական շարքերի վերջին՝ մեռնող և հաօնող աստվածությունների հատկանիշներ ունեցող հերոսները՝ ազգածին ավանդության Արա Գեղեցիկը և «Վիպասանքի» Արտավազդը: Արա Գեղեցիկը մերժում է Ասորեստանի թագուհի Շամիրամի սերը և զոհվում նրա զորքերի դեմ կրվում: Շամիրամը նրա դիակը դնում է «ի Վերնատանն ապարանից», որպեսզի շնից սերված համարվող

¹ Ե.Գրեկյան, Գյովելերի ուրարտական արձանագրությունը. ՊԲՀ, 2004, N 1, էջ 244:

² I.Á.Áððòþíý. Þí ði ón óððòðñéðó éééí í í áðací úo í àai ènáé. Áððaaí, 2001 (áæéaa ÉOÉÍ), n. 478:

³ E.I. Äüyéêíîâ. È âí i ðí ñó í ñèí âí eå Öàëäè. Äðåâí èé Åí ñòí ê 3, Äðåâàí, 1983.

առասպելական արարածները՝ Արալեզ-Առլեզները վերակենդանացնեն նրան (Խորենացի - Ա, ԺԵ. Սեբեոս - Ա, Եղինիկ - Ա, Իհ):

Թովմա Արծրունուն շարունակողի մի վատ պահպանված հատվածի (IV, 18) քննությունը ցույց է տալիս, որ Արա Գեղեցիկի վերքերի սպիանալը տեղայնացվել է Լեզուոյ, հետագա Լեզը գյուղի շրջանում (Վանից 3-4 կմ հյուսիսի): Լեզենդներուն էլ պատմվում է, որ տեղի Ամենափրկչի մատուցի տեղում, գյուղամիջի քարաժայռի վրա, առաջ կռատուն է եղել: Այդտեղ չաստված-արալեզները լիգելով առողջացրել են հիվանդներին ու մեռածներին, և Շամիրամն այդտեղ է դրել Արայի մարմինը¹:

Լեզրից հայտնի է մի ուրարտական արձանագրություն փորագրված կլորավուն քարի, թերևս՝ սյան մնացորդի վրա: Արձանագրության մեջ պատմվում է այդտեղ Երգանակ «ամրոց», ապա՝ Է «տուն» գաղափարագրով նշանակված մեկ այլ շինություն կառուցելու մասին՝ լշրունի Sarduri hini անունու մասին: Իշրունի մասին անունը կապված է այս անունու հետ: Տարբերակը պատմում է այս անունու մասին: Այս անունը կապված է այս անունու հետ: Այս անունը կապված է այս անունու հետ:

Ապարանք «պալատը», որի վերնատանը դրվել է Արան, իրանական տերմին է՝ առաջանագարդ պալատ, ընդունելությունների դահլիճ» (բարի ծագումը միարժեք չէ): Նմանատիպ կառույցներ եղել են և Ուրարտուլմ, որոնք, հնարավոր են, իրենց ազդեցությունն են ունեցել իրանականների ձևավորման վրա, և

¹ Գ.Արվանձոյան, Երկեր, հ. I, Երևան, 1978, էջ 52, Ա.Ղանաղամյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 23, 273, Թ.Ճակոբյան, Ս.Մելիք-Քախչյան, Ք.Քարսեղյան, Յայստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 566-567: Լեզրի լեզնենների քննությունը տես Ս.Արենյան, Երկեր, հ. Ը, Երևան, 1985, էջ 257-255:

2 ΕΘΝΙΚΗ Ν 19.

³ Կա մեկ բացառություն՝ Էրեբունիի տաճարը, նվիրված Իվարշա աստծոն։ Այդ պատճառով էլ կարօնվ են, որ Իվարշան ափսի Խնձեր Խալիլի մի կերպարային համապատասխանությունը, տես A.A. 1 ձեռքեռութեք։ Է այ ՞ ո՞ ի ձաձօնի օօցի ձևենո՞ւ ի ձաձանեան օօծ անձօնձօ։ Անձօն է անձան էնո՞ւ ձեռ, 1958, N 2, դ. 45-46, Մ. Հրապանյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 79, Մ. Դմայալյան, Եղվ. աշխ., էջ 60-63, 65-66։

Լեզրի ուրարտական շինությունը կարող էր հենց այդպիսի մի սյունազարդ կառույց լինել¹:

Արայի անունն անբաժանելի է հնդեվրոպական առանձնահատուկ **ar-(y)o*- արմատի հետ կապված տերմիններից ու անվանումներից՝ հմնտ. հին հնդ. Āryāvarta, ավեստ. Airyana և յայ (հնդիրանական ցեղերի նախնական հայրենիքները), հին իրան. Ariyānām, պահլավ. Īrān «Իրան», հին օս. *Alani «Ալաններ» <**aryana*, հոլ. Ériu «Իռլանդիա»²: Սրանց դիցաբանական անձնավորումը ներկայանում է որպես հնդեվրոպական էպոնիմ, հնդիրանական Mitr-ի տիպի մի աստվածացված արստրակցիա «արիականություն» նշանակությամբ՝ կապված հնդեվրոպական սոցիալ-կրոնական կառուլցի հետ³:

Հատկանշական է, որ Արան ևս կարծես թե հետազոյւմ նույնացվել է Միթրա/Միհրի հետ: Ըստ Կեդը Պլուտարքոսի մի գրվածքի (De Fluviosis, XXIII, 4), Միթրասը, ատելով կանանց, բեղմնավորում է ժայռը, որը ծնում է Դիորփոս անունով մի որդի, որը սպանվում է Արեսի հետ մենամարտում և վերածվում լեռան Արաքս գետի մոտ: Այստեղ հերոսների կերպարները խարնված են՝ Միթրասի փոխարեն նրա որդին է ծնվում ժայռից, բայց և այնպես, ըստ Գ.Վիդենգրենի, սա ցույց է տալիս, որ Միթրա/Միհրի ծնունդը ժայռից տեղայնացվել է Հայաստանում⁴: Բայց ոչ թե Խալդիի պաշտամունքի շրջաններում, այլ ավելի հյուսիսի, Արաքսի ափին: Արաքսի մերձակա լեռը, ակնհայտորեն, Մասիսն է, որտեղ զնդանված Արտավազդն ինչ-որ առումներով համարելի է Դիօրփոսին, իսկ դեպի հյուսիս տարածվող հարթավայրը՝ Արարատյան դաշտը, կոչվել է «Դաշտն Արայի», Արա Գեղեցիկի անունով (սա, ակնհայտորեն, համապատասխանում է հնոյ Արա Արայի անունու): Արաքսը գուգահեռ անվանում-

¹ Իրանական արձանա-ի վելաբերյալ տես՝ Encyclopaedia Iranica. London, New York, 1985 (այսուհետև՝ EIr), V. 2, p. 145-148, ուրարտական համապատասխան կառուցների և նրանց՝ իրանականների վրա ունեցած ազդեցության վելաբերյալ՝ A.A. Ծէճակյան. Եօնական ազդանշանները պատմական պատմության մեջ, Երևան, 1988, էջ. 24-27, հարցի գրականությամբ:

³ J. Puhvel, Mythological Reflections of Indo-European Medicine. Indo-European and Indo-Europeans. Philadelphia 1970, p. 377-378, Անլինի՝ Analecta Indoeuropeae. Innsbruck 1981, p. 325-326 :

⁴ G. Widengren, The Mythraic Mysteries in the Greco-Roman World with Special Regard to Their Iranian Background. La Persia e il mondo Greco-Romano, Roma, 1966, p. 144.

ԱԵՐԻԾ): Հաշվի առնելով կերպարների ճշգած խառնաշփոթ՝ կարելի է կարծել, Արեսն այստեղ ներկայացնում է Արայի անվան հունական տառադարձումը: Այսպիսով, Խալդին, որի հիմքում նշմարվում է հնդիրանական Միտրայի կերպարը, այս դեպքում նույնացվել է հնդեվրոպական էպոնիմի հատկանիշներ ունեցող Արայի հետ¹:

Ըստ ավանդության, Շամիրամն է կառուցել Վան քաղաքը, թողել սեպագիր արձանագրությունները, ապա և զոհվել Վանա լճի ափին: Ըստ այդմ, Շամիրամի կերպարով առասպելուն մարմնավորվում է Վանի թագավորությունը: Վան քաղաքը հայոց մեջ կոչվել է Շամիրամի քաղաք, Շամիրամակերտ, իսկ Ուրարտուում այն, Տուշպա անունով, պաշտամունքի կենտրոնն էր Տուշպուեա դիցուհու՝ արևի աստծու կոնջ: Սա ցույց է տալիս, որ Շամիրամը շարունակում է Տուշպուեայի կերպարը²: Արա Գեղեցիկի և նրա հակառակորդ Շամիրամի ուրարտական դիցաբանական նախատիպեր ունենալու այս հանգամանքից բխում է, որ ԱրայիՇ Շամիրամի դեմ կրվում զոհվելու և Արալեզների կողմից լիզվելով հարություն առնելու առասպելը կարող էր իր հանապատասխանությունն ունենալ ուրարտական ավանդույթում: Դատկանշական է, որ բոլորովին այլ տվյալների հիման վրա Ֆ.Քյոնիգի կողմից Խալդին համադրվել է մեռնող և հառնող աստվածների հետ, ինչպիսին Արա Գեղեցիկն է:

Կարելի՞ է կարծել, որ Խալդիի ու Սիերի առասպելներում էլ ժամանակին եղել են լիզող շներ: Ըստ Սարգոն II-ի արձանագրության, Մուրծածիրի Խալդիի տաճարի աստծու բնակության սենյակում կային վեց մեծ ոսկեծոլյ վահաններ, որոնց մեջտեղում պատկերված էին բաց երախով շներ⁴: Բայց և այնպես, պետք է նշել, որ ուրարտական պատկերագրության մեջ, որտեղ, ինչպես և ողջ ուրարտական մշակություն, էական դեր պիտի ունենար Խալդիի պաշտամունքը, շների պատկերներ համարյա չկան:

Թաղման ծես: Արայի՝ շներից սերող Արալեզների կողմից լիգվելով վերակենդանացման առասպելն իր արտացոլումը պիտի ունենար ծեսում: Ընդհանրապես, թաղման ծեսն է, որը կոչված է ապահովելու ննջեցյալի հետագա վերածնունդը և անդրշիրիմյան կյանքը: Արայի ենթադրյալ վերակենդանացման առասպելը հա-

² Å.Å. I åððiñýí. Åði yí ñeeé yí iñ e i ðeði e i ðeði aëy, n. 188.

³ Հղվում է ըստ Ա. Ղմայակյան, նշվ. աշխ., էջ 36:

⁴ E. I. Áugvēr í Íð. Ánnéðir -áðæðeití ñeða èñðóti í èðeití Íð eñðóti ðeëe Óððaððó. Áðñò-í èðe áððaði áðe eñðóti ðeëe, 1951, N 2, n. 332.

մաղրելի է դիամանատման այն տարբերակի հետ, երբ ննջեցյալի դիմ տրվել է շներին՝ հոշոտելու, և նոր միայն թաղվել:

Ուրարտուում հայտնի են թաղման երեք հիմնական ժես՝ դիարաղում, դիակիզում և դիամանատում, իրենց տարբերակներով, երեքն էլ ավանդված արդեն նախառարտական ժամանակներից:¹ Դատկանշական է, որ Արգիշթիխիլի-Արմավիրից հայտնի դիամանատման ժեսով թաղումը համադրվել է Արա Գեղեցիկի առապելի հետ²: Շների (և թոչունների) կողմից դիակի հոշոտման ժեսը, հայտնի տարբեր ավանդույթներում, բնորոշ է հատկապես զրադաշտականությանը³: Բայց այդ ժեսը, հավանաբար, օտար է եղել նախնական զրադաշտականությանը⁴, և Արա Գեղեցիկն էլ, ինչպես և Խալդին, պաշտովել է նախարանական ժամանակներում:

1995-ին Վանից ոչ հեռու հայտնաբերված վահանի վրա Խալդին պատկերված է ուրարտական աստվածների զորքի առջևում կռվի նետվելիս, ձեռքերին՝ նիզակ և աղեղ, ամբողջովին բոցերի մեջ⁵: Այս պատկերը կարող է համադրվել հնդեվրոպական որոշ ավանդույթներում երթերի ժամանակ և զորքի առջևից կրակներ տանելու ժեսի հետ⁶: Ըստ այդմ, Խալդին կարող է պատկերացվել որպես կրակի աստված, որի առասպելույթի հետ տրամաբանական կիհներ համարել դիակիզման ժեսը:

Արայի ավանդությունը դեռևս Մ.Էմինը համեմատել է Պլատոնի «Պետություն» գրքում (614b հտն.) բերված մի առասպելի հետ, ըստ որի, պանփյուլիացի մի քաջ զինվոր՝ Արմենիոսի որդի երջ զոհվում է

¹ Տես, օրինակ, Ս. Դմայալյան, նշվ. աշխ., էջ 78-82, Ս. Եսայան, Լ. Բիյազով, Ս. Դմայալյան, Ա. Կանեցյան, Երևանի Բիայնական դամբարանը (2), Ս. Մելքոնյան, Ուրարտական ժայռափոր դամբարանները, Երևան, 1995, էջ 59, Ա. Փիլիպոսյան, Ռ. Ակրտյան, Գեղիովտի վանտոսայան (ուրարտական) քարայր դամբարանը, Երևան, 2001, էջ 57-58:

² Դ. Մարտիրոսյան, Ռ. Թորոսյան, Արգիշտիխիլիկի սարկոֆագը. ՊԲՀ, 1986, N 3, էջ 226-227:

³ Ավեստայում (Վիլենադ 6.45) Ակուրամազդան Զրադաշտին ասում է, որ դիակմերը պետք է դրվեն բարձրագույն տեղերում, որտեղ դիակը հոշուսող շներ և թոչուններ կան, տես The Zend Avesta (ed. M. Müller), Delhi, 1965, p. 329, տես և Ի. Արքա. Չի մի անձնելու համար անհնարինությունը պահպանվում է անհանդատ պահպանության մեջ: Անձնելու համար անհնարինությունը պահպանության մեջ պահպանվում է անհանդատ պահպանության մեջ:

⁴ Ի. Ա. Անդաման, Արքայի անձնելու համար անհնարինությունը պահպանության մեջ պահպանվում է անհանդատ պահպանության մեջ: Անձնելու համար անհնարինությունը պահպանության մեջ պահպանվում է անհանդատ պահպանության մեջ:

⁵ O. Belli, The Anzaf Fortresses and the Gods of Urartu. Istanbul, 1999, p. 37-41, fig. 17.

⁶ Կրակի նման ժեսերի վերաբերյալ տես Ա. Լ. Օվանեսյան, Միջին Ասիայից արևմուտք մինչև Սասանյան դարաշրջանը տիպիկ զրադաշտական թաղումների հետքեր չեն բացահայտվում, տես Encyclopaedia Iranica II, p. 560:

մարտում, բայց հետո, 12 օր անց, դիակիզման խարույկի վրա, վերակենդանանում է ու պատմում իր տեսածն անդրաշխարհում: Սա համապատասխանում է հնդեվրոպական ռազմիկի դիակիզման ծեսին և Խալդիի ու դիակիզման կապի մեր վերակազմությանը:

Մյուս կողմից, երի կերպարը հեշտ է համադրել միջագետքյան երրայի հետ, որը ռազմի ու անդրաշխարհի Ներգալ աստծու մի հիպոստասիսն էր (առասպեկում նա գնում է անդրաշխարհ որպես Ներգալ, բայց մնում է այնտեղ և Վերադառնում որպես Երրա): Բնութագրական է, որ Երրան և Ներգալն ունեն կրակի աստծու հատկանիշներ¹:

Դետաքրքիր է, որ որոշ հումական աղբյուրներում Երը, զարմանալիորեն, նույնացվել է Զրադաշտի հետ² (հնարավոր է, զրադաշտական թաղման ծեսի և Արայի առասպելի նամանության հիման վրա): Առաջանում են մի շարք հարցեր, որոնց դժվար է միարժեք պատասխանել: Ուրարտական թաղումների տարբեր տիպերը ինչպես կարելի է համադրել մարդկանց էթնիկական, դասային և սեռատարիքային բաժանման հետ (օրինակ, ըստ ոյումեզիլյան ֆունկցիաների՝ քրմեր, ռազմիկներ, համայնականներ): Արդյոք կարելի³ է ենթադրել, թե Արայի հնագույն նախատիպը եղել է գերագույն աստված, ինչպես Խալդին: Արդյո՞ք Երի և Արայի՝ դիակիզման խարույկի վրա կամ Արալեզների միջոցով վերակենդանանալու իրար հակասող առասպելներից մեկը հնագույն է, մյուսը՝ ուշ ներդրում:

Մի բան ակնհայտ է: Ժայռափոր դամբարանները, բնորոշ արքաներին և շրջանների կառավարիչներին, Դայկական լեռնաշխարհում Վանի պետության նորամուծություններ են⁴ և պետք է իմաստավորվեին Խալդիի՝ ժայռում փակվելու և այնտեղից վերածնվելու առասպելով:

Տաճարները: Ուրարտական սրբատեղիների ամենահաճախ հանդիպող տիպը «Խալդիի դարպասներն» են, որոնցից ամենահայտնին Վանա ժայռի «Սիերի դուռն» է: Դատելով Խալդի-Սիեր ժառանգորդությունից և «Սիերի դրան» լեզենդներից՝ Խալդիի կացարանը պատկերացվել է քարե «դրան» հետևում, լեռնային քա-

¹ Այս հարցերի շուրջ տես՝ Ա.Պետրոսյան, Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս, նույնի՝ Հայոց ազգածագման հարցեր ավանդական տվյալների քննության լույսի տակ, ՊԲՀ, 2003, 2, էջ 200-202:

² Տե՛ս հատկապես Ա.Մատիկյան, նշվ. աշխ., էջ 258-274:

³ Ch.Burney, The Urartian Funerary Customs. Archaeology of Death in the Ancient Near East. Oxford 1995, p. 207.

բայրի մեջ, որտեղից նա դուրս է եկել ինչ-որ հատուկ դեպքերում, որոշ տոների ժամանակ: Ըստ այդմ, նա պիտի պատկերացվեր որպես մի աներևույթ, մարդկային հասանելությունից դուրս եռթյուն: Վանի թանգարանում պահվող մի ուրարտական բարձրաքանդակում պատկերված է երկու սրարշավող ձի լծած դատարկ մի կառը, որոնց տակ՝ նետով խոցված թշնամու դիակ: Մի ուրարտական կնիքի վրա էլ պատկերված է դատարկ սայլ, վրան՝ խալդիկ նիզակածն սիմվոլը: Կառքերը պետք է պատկանեին Խալդիկն՝ ժայռի մեջ ապրող «անտեսանելի աստծուն»¹: Այս պատկերացումը պետք է ընկած լիներ «Խալդիի դարպաս» կոչվող ժայռափոր պաշտամունքային կառույցների գաղափարի հիմքում:

Ուրարտուում «դարպասներ» են կոչվել, հավանաբար, նաև հենց տաճարները²: Այսնիսի տաճարի արձանագրությունը նորից հաստատում է այդ կարծիքը՝ այդտեղ Ռուսա II արքան ասում է, որ ինքը «կառուցեց այս տաճարը», քիչ հետո՝ «ես կառուցեցի այս Խալդիի դարպասը», իսկ արձանագրության վերջում անհծովում է «նա, ով կքանդի այս Խալդիի դարպասի արձանագրությունը», որտեղից բխում է, որ «Խալդիի դարպաս» են կոչվել ոչ միայն ժայռափոր «դրների» տեսքով սրբատեղիները, այլև հենց տաճարները³:

Խալիդին սկսում է հիշվել Իշպուխինի արքայի արձանագրություններում, որի քաղաքական կամքով էլ, հավանաբար, ներդրվել և պետության գերագույն աստծու կարգավիճակ է ստացել նրա պաշտամունքը⁴: Ուրարտական արքաները «դարպասներ» են ծոնել միայն Խալիդին⁵: Պետության կերտման գործում էական է եղել Խալիդի պաշտամունքի ներդրումը լեռնաշխարհի գրավյալ տարածքներում,

¹ Աս տեսակետն առաջարկել է Պ.Կալմյայերը մի շաբ աշխատություններում, սեւ *P.Calmeyer, Zur Genese altiranischer Motive, II. Der leere Wagen. Archologische Mitteilungen aus Iran.* 7, 1974, S. 54-59, նույնի՝ Some remarks on Iconography. Urartu: a Metallworking Center in the First Millennium B.C.E. Tel Aviv, 1991, p. 313, 315, սեւ և *M.Salvini, Le panthéon de l'Urartu et le fondement de l'état. Studi epigrafici e linguistici sul Vicino oriente antico* 6, 1989, p. 86. հմմտ. *J. Deloñgchamps*, Երևան, այսու 109:

³ M. Salvini, *The Inscriptions of Ayanis (Rusahinili Eiduri-kai)*. - Ayanis I. Ten Years Excavations at Rusahinili Eiduri-kai. Roma, 2001, p. 260-261, n. 8, 14.

⁴ M. Salvini, La formation de l'état urartéen. *Hethitica* 8, 1987, p. 405. Անյանի Հայաստանը և պահանջման առաջնորդությունը. *Le panthéon de l'Urartu et le fondement de l'état*, p. 83, 85. Անյանի պատմությունը. *Geschichte und Kultur der Urartäer* 1995, S. 39, 184.

⁵ Ա. Դմայակյան, նշվ. աշխ., էջ 67:

որով Ուրարտուն տարբերվել է մնացած բոլոր հինարևելյան կայսրություններից¹: Այդ պաշտամունքը, որը Գ.Ղափանցյանի կողմից բնորոշվել է որպես «խալիամոլություն»², որոշ առումներով հաճարելի է նույնիսկ միաստվածության հետ: Բոլոր կամ հաճարյա բոլոր կրոնական արարողությունները կատարվել են Խալիկի տաճարներում³: Ըստ այդ, Ուրարտուում «տաճար» հասկացությունը կարող էր պատկերացվել որպես «խալիկի տաճար»:

Հայոց մեջ հեթանոսական տաճարները և զոհարանները կոչվում են մեհեան կամ բագին: Սրանցից առաջինը ծագում է Միհր դիցանվան մի ձևափոխված տարրերակից⁴, իսկ երկրորդը՝ baga-ից, որն, ինչպես ասվեց, նույնպես կապվել է Միհրա/Միհրի հետ⁵ (Հայաստանում էլ Միհրի տաճարը գտնվում էր Բագայառի գյուղում): Ակնհայտ է, որ այդ անվանումները սկզբնապես պիտի վերաբերեին Միհրի և հետո նոր միայն մյուս աստվածների տաճարներին, այսինքն՝ ամեն մի տաճար համադրվել է հատկապես Միհրի տաճարի հետ: Բայց իրանի և Հայաստանի գերագույն աստվածները Աստուրա Մազդան և Արամազդն էին և ոչ Միհրը: Ինչո՞ւ պիտի խալուին համադրվեր Միհրի և ոչ Արամազդի հետ:

Սի շարք հանգամանքներ ցույց են տալիս Աքեմենյան առաջին արքաներ Դարեհի և Բաերքսեսի հետաքրքրությունը Վանա ժայռի ուրարտական մոնումենտալ կառույցների նկատմամբ։ Դրանք տպավորել են Դարեհին ու Բաերքսեսին և, հավանաբար, օրինակ հանդիսացել Պերսեպոլիսի ժայռափոր դամբարանների համար⁶։ Արդեն Դարեհ լ-ը ցանկացել է արձանագրություն թողնել Վանա ժայռի վրա, բայց չի հասցել։ Այդ մասին է պատմում հոր ցանկությունն իրագործած Բաերքսես լ-ը (մ.թ.ա. 486-465)։

¹ *E. I. Aüyéér ríá. Aéáððááí í ðeír í ðoái èý á Óáéóðááàéí è, n. 58. Ùnuljih’ É áír í ðí ño í ñei áír éá Óæäé, n. 190.*

² Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 114:

³ Ա. Դմայական, Խոհեմարտին պատմություններ, Երևան, 1975, էջ 111.

⁴ Տես, օդինակ, Վ. Ածաղյան, Յարթերն անատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 296, Գ. Զահորյան, Յայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 534. անհամաձայնություն կա միայն բարի վեղածանցի հյական թե իրանական լինելու վերաբերյալ:

⁵ Eir, V. 3, p. 405.

⁶ M. Salvin, Geschichte und Kultur der Urartäer, 1995, S. 150-151, հարցի գործառնությամբ:

⁷ R.G.Kent, Old Persian Grammar, Texts, Lexicon, New Haven. 1953:152-153. տես և Ա.Սովորյան, Օտարների կրթմից նախանշատողյան դարաշրջանում թողնված գրավոր հուշարձանները և դրանց պատմական նշանակությունը. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXI. Երևան, 2002, էջ 249-250:

Ուրարտական քաղաքակրթությունն ընդհանրապես նշանակալի ազդեցություն է բողել Աքեմենյան Իրանի վրա: Աքեմենյան արձանագրություններում էլ նշանակալի է ուրարտական ազդեցությունը. փոխառված են կառուցվածքի հենքը, խոսքային բանաձևերը, ոճը և այլն: Իրանական կրոնին անծանոթ են եղել տաճարները, և Աքեմենյան տաճարատիա շինություններն ամբողջովին փոխառված են ուրարտականից¹ (հմնտ. և վերևում ապահովանելի վերաբերյալ ասվածը):

Քսերքսեսի այս արձանագրությունը նվիրված է Ասուրանազդային՝ գերազույն աստծուն (Ասուրանազդայի աքեմենյան սեպագիր ձևն է): Խալդիի և Ասուրանազդայի գերազույն աստվածներ լինելը և Ասուրանազդայի հիշատակությունը «Վանա ժայռ» արձանագրության մեջ հուշում են, որ Խալդին կարող էր համադրվել հենց Ասուրանազդայի հետ: Ըստ անտիկ հեղինակների (Հերոդոտոս, I.189, VII.40, Քսենոփոն, *Cyropaedia*, VIII.3.12, Ուլիփոս, *Hist. Alex.* III.3.11), սկսած Կյուրոսից մինչև Դարեհ III, պարսկական բանակին ուղեցել է սպիտակ ծիեր լծած մի դատարկ կառօք՝ նվիրված Զևս/Յուպիտերին, այսինքն՝ Ասուրանազդային, որն անտեսանելիորեն գտնվել է նրանում: Այս «անտեսանելի աստծու» պատկերացումը պարսիկները կարող էին փոխառել Խալդիի կերպարից²: Կարելի է ավելացնել, որ Դարեհ III-ի զորքի առջևից զոհասեղանների վրա տարվող կրակներն ել (Ուլիփոս, III.3.9) համադրելի են Անձավի վահանի վրա զորքի առջևից ընթացող այրվող Խալդիի պատկերի հետ: Ճարարավոր է, որ համընկնում են և Խալդիին, և Ասուրանազդային մյուս աստվածներից ավելի հզոր համարելու բանաձևերը. «Խալդին հզոր է, հզոր (բռլոր) աստվածներից» և «Ասուրանազդան ավելի հզոր է, քան որևէ այլ աստված», որը կարող է դիտվել որպես ուրարտական մշակույթի իրանական արձանագրությունների վրա ունեցած ազեղության և մեկ օրինակ³:

¹ Իրանական մշակույթով ուղարտական ընդհանուր ազդեցության վերաբերյալ տես, օրինակ, Ղ. Գիշշման, Աքեմենյան քաղաքակրթությունը և Ուրարտուն. Իրան նամե, 1993, N5, Գ. Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և արեմենյան Իրանը, ՊԲՀ, 1964, N2, արձանագրությունների ոճի վերաբերյալ՝ Ա. Ա. Ղ Ճըռքքածածէ. Օճածնության մասին պատմությունների ոճի վերաբերյալ՝ Ա. Ա. Ղ Ճըռքքածածէ Ենթակա լ. , 1972, թ. 101-102, Ղ. Ա. Ա. Ղ Ճըռքքածածէ Ենթակա լ. 1985, թ. 99, Լ. Կովհաննիսյան, Խայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 53, տաճարաշնուրային վերաբերյալ՝ D. Stronach, Urartian and Achaemenian Tower temples. Journal of Near Eastern Studies, 1967, M. Salvini, Geschichte und Kultur der Urartäer, 150-151. Eir. V. 2 p. 563-564. 571:

² M. Salvini, Le panthéon de l'Urartu et le fondement de l'état, p. 86.

3. M. Sariš. Le panthéon de Charax et le fondement de l'etat, p. 88.

Ուղարտկան բանաձիկ վերպերյան ան և Ա. Դավակայան նշվ. աշխ., էջ 35, ըստ
Հ.Ա. Ղազարյանի աշխ., N89, սող 5 (= Խածոն N115. կան և այլ ընթերցում-

Ինչպես ասվեց, Խալդիի կիրճ հիշվում է նաև Bagmash կամ Bagbartu անունով, որի հիման վրա վաղուց ի վեր կարծիք է հայտնվել, թե Խալդիի պաշտամունքի կենտրոնում արդեն այդ ժամանակից եղել է իրանական բնակչություն: Այսպիսով, Խալդի-Միթրա նույնացումը կարող էր տեղի ունենալ մինչև Ուրարտուի անկումը, արդեն Արդիին/Մութածիրում: Առաջին Աքեմենյաններն իրենց արձանագրություններում հիշում են միայն Ահուրանազդային: Միթրան սկսում է հիշվել, այսինքն՝ պաշտոնականացվում է միայն Արտարքոսերսես II-ի օրոր (մ.թ.ա. 404-359):

Խալդիկ կերպարի էվոլյուցիան և սինկրետացումը կարելի է պատկերացնել այսպես: Դայաստանում նա նույնացվել է Արա Գեղեցիկի, իսկ Դայկական լեռնաշխարհի հարավի հնդիրանական բնակչության մեջ՝ Միթրայի հետ: Առաջին Աքեմենյանների օրոք նրա որոշ հատկանիշները յուրացրել է Ասուրամազդան: Միթրայի պաշտոնականացումից հետո, իրանական ազդեցության դարաշրջանում, Արա Գեղեցիկը ևս նույնացվում է Միթրա-Միհրին: Այստեղ կարևոր դեր պիտի կատարեին Խալդիկ, Արայի ու Միհրի ընդհանուր հատկանիշները, հատկապես՝ նրանց կապը կրակի հետ¹: Խալդին անհետանում և մոռացվում է, իսկ Արան և մյուս բնիկ հայկական աստվածները, իրենց տեղը զիջելով իրանականներին, անցնում են ավելի ցածր՝ վիպական հերոսների մակարդակ:

Ուրարտունը ամեն մի տաճար կարող էր կոչվել «Դարպաս/Դուռ», իսկ դրանք նվիրվում էին համարյա բացառապես Խալդիին: Խալդիին հետագայում փոխարինել է Սիհրը, որի հետևանքով էլ ունենք մեհեան և բազին «հեթանոսական աստծու տաճար» տերմինները: Պահպանվել է միայն մեկ «Խալդիի դարպասի» «միհրականազած» ժառանգը՝ «Սիերի դուռը»:

Իրանում, իսլամական ժամանակներից, հայտնի է զրադաշտական սրբատեղիների dar-i Mihr «Միհրի դուռ» անվանումը: Այն ևս պիտի ծագեր, վերօդին հաշվով, «Խալիֆի դարպասից»:

ներ). իրանականը հանդես է գալիս Դարեթ Լ-ի Համադամի արձանագրության արադական տարբերակում, տես՝ Ղ.Ա. Անդրադականը է անձնագրություններում այլուրեք ասվում է, որ Աղոփականագրան մեծ է այլ աստվածներից:

Խալիկ-Միկը նոյնացման նախադրյալների վերաբերյալ տես A.A.՝ ձօծնյիր. Աօլ յի հունը լ օօծ, զա՞ հա՞ ն է լ էօծա է օօծնունը Օօչա՞:

ԵՐԵԲՈՒՆԻՒ ՑԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՋ

Երեբունի ամրոց-քաղաքը կառուցվել է Արգիշթի I-ի կողմից, Etiuni կամ Etiuni ընդհանուր անունով կոչվող նվաճված Երկուների կոնֆերացիայի կենտրոնական՝ ’Ազա կամ ’Աշա (= Waca) Երկուում: Etiuni-ն հիմնականում համապատասխանում է հետագա Մեծ Հայքի Այրարատ նահանգին, ’Ազա-ն՝ Այրարատի սրտի՝ Արարատյան դաշտի Արմավիրից Երևան ընկած տարածքներին: Այրարատը եղել է Մեծ Հայքի քաղաքական, կրոնական և մշակութային կենտրոնը ամենավաղ ժամանակներից: Հայոց համարյա բոլոր մայրաքաղաքները՝ Արմավիրից մինչև Երևան, գտնվել են Արարատյան դաշտում:

Մեզ հասած ուրարտական աղբյուրներում Երեբունի անունն ավանդված է 12 անգամ, երկու ձևով՝ Erbuni (10 անգամ) և Erebusni (2 անգամ). հնարավոր է ընթերցել և Ir(e)b/rumi: Erebusni-ն, որն ավելի քիչ հանդիպող ձևն է, ավելի է հիշեցնում Երևանը և ընդհանուր կիրառություն ունի:

Ուրարտական սեպագրում b-ով հաղորդվել են նաև v-ն և w-ն, ս-ով՝ նաև o-ն¹: Ուրարտերենում բառավերջի ձայնավորը հնչել է թույլ, որպես օ (ը). նման պատկեր է եղել և հայերենում, որտեղ բառավերջի ձայնավորն, ի վերջո, անհետացել է: Ըստ այդմ, Erebusni-ն, առանց վերջին ձայնավորի, կարող է վերականգնվել որպես Ervun-, Ervon-, Ereven- կամ Erevon-, ընդհանրացված ձևով՝ Er(e)vus/on- (v-ի փոխարեն կարող է պատկերացվել նաև w): Մյուս կողմից՝ ուն- ուրարտ. ուղղական հոլովի վերջավորությունն է, և անվան հիմքը կարող էր լինել Er(e)vus/o-: Երկրորդ ե-ի ոչ պարտադիր լինելը կարող է ակնարկել նրա թույլ արտասանությունը:

Երևան անվանումը հայկական համատեքստում միանգամայն թափանցիկ կառուցվածք ունի: Դնում Երևան (յերևան, յերևանի տարրերակներով) նշանակել է՝ «Երևումն և Երևելի. յայտ. յայտնի». Երևան գալ, Երևան հանել «ի յայտ գալ, Երևիլ, յայտնել»²: Արդի հայերենում արխահզմ է, որը կիրառվում է որպես հարադրությունների բաղադրիչ՝ Երևան բերել, Երևան գալ, Երևան հանել արտա-

¹ Հայ-ուրարտական բառային և անվանաբանական գուգաղիպություններում այս համապատասխանությունների վերաբերյալ տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 430-431:

² Նոր բարգիրք հայկագեան լեզուի, հ. Ա., Վենետիկ, 1836 (= Երևան, 1979), էջ 678:

հայտություններում¹: Դեղօնից հայտնի է Երևանս գյուղը², ակահայտորեն, նույնական Երևանին, հոգնակի հայցական հոլովածեռվ, այսինքն՝ այդ բարի տեղանվանական կիրառությունը միակը չէ: Երեւ- արմատը բնիկ հայկական է³, որը հանդես է գալիս նաև այլ հայկական տեղանուններում՝ Երեւեալ, Երեւար: Այսպիսով, Երևան տեղանունը միանգամայն բնական կերպով պիտի կապվեր համահունչ բարին: Չնարավոր է պատկերացնել նաև Երի + աւան տիպի մի բարդություն:

Բայց հայերենում այսքան թափանցիկ Երևանը կարող էր լինել նաև մի հին, համահունչ անվան վերահմատավորումը: Ժամանակին Մ.Նիկոլսկին կարծիք է հայտնել Երևանի՝ ուրարտական դարաշրջանի Eriaiու Երկրանունից ծագելու վերաբերյալ, որը հետաքրքիր է միայն գիտության պատմության տեսակետից⁴ (սկզբունքորեն հնարավոր է Երևանը կապել այդ տեղանվան հիմքին՝ Eri(a) + աւան, բայց այդ Երկիրը գտնվել է Երևանից շատ հեռու՝ Սևանի արևելյան ափին). Նույնը կարելի է ասել և Շիրակի Eriahi Երկրանվան վերաբերյալ): Եթե հայտնի դարձավ, որ Երեբունին գտնվել է Երևանի շրջանում, հավանական սկսեց համարվել Երևանի ծագումն Երեբունիից: Առաջինն այդ մասին գրել է Մ.Իսրայելյանը⁵: Շուտով Երևանի Երեբունիից ծագելու տեսակետը դարձում է տիրապետող առաջատար ուրարտավագետների շրջանում⁶: Դետագայում Մ.Իսրայելյանն առաջարկել է Երեբունիի առավել տարածում ստացած ստուգաբանությունը՝ ուրարտ. irbu-«հափշտակել, առևանգել» և նման իմաստներով բարից, որպես

¹ Ե.Աղայան, Արդի հայերենի բազատրական բառարան, հ. Ա., Երևան, 1976, էջ 342:

²Թ.Ի. Կանդրյան, *Ս.Տ. Աւելիք-Բախչյան*, Դ.Ի. Հայրապետյան, 1986, էջ 12:

Հնդեւորապական *prep- (Դ.Ածառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 49), կամ՝ *kʷrep-, ըստ որոշ նոր բառարանների (Յ.Մարտիրոսյանի անձնական հաղորդման համաձայն):

⁴ 1. A. I eēet eūnēē. Eēet iī aðaçí ua ūaäi enē Çäeäaæäcüy. 1 aðaððæäeu iī aðoåâ - eē aæe Eaaæäca, V. 1., 1896, n. 97.

⁵ Ս. Կիրայելյան, Ուրարտական երկու նոր արձանագրություն. Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1951, N8, էջ 92, ծան. 2:

⁶ F.König, Die Gründung der Stadt Erivan (ca 785 V.C.), Համուստ ամսօրթեայ, 1954, N7-8, S. 291 ff., *E. I. Այսպիսակ* (Ժաօնալ շէյ լա եի եաօ) *A. A. I ձեռքեօձակէք*. Աճահակ ահա ոհօն ։ Սա լա օձակէք է ենօն ծեռ լա ծով ահա կահապաչաւ, լ. լ ահեծ-Օջածօն. Ահանօն է ահա ահա ահ էնօն ծեռ (ահա ահ - ԱԱԵ), 1956, N2, ն. 62. *A. A. I էմ օժի ահքեք*, Ահա ոհօն ահա օձնօնակ (Օջածօն). լ. 1, 1959, ն. 31. Ն. Կարուրյունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը. ՊԲՀ, 1959, N2-3, էջ 78 հստ. հարցի պատմությամբ:

«գրավում, նվաճում, հաղթանակ»¹ (Եղել են Երեբունիի և Երևանի ստուգաբանության նաև այլ փորձեր):²

Եր(ե)ս/օ-ո-ից Երևան ուղղագիծ անցումը դժվար է պատկերացնել, և առաջարկվել են տարբեր հնարավոր զարգացումներ: Ըստ Ի.Դյակոնովի, սեպագիր Եր(ե)ս/ի իրական հնչողությունը պիտի լիներ *Երս- կամ Եր՞ս-, որից և Erev(u) + աւան > Երևան: Յավանական է համարվում նաև, որ իհն Եր(ե)ս/օ-ը ձևափոխվել և «ժողովրդական ստուգաբանությամբ» վերահմաստավորվել է - աւան Վերջավորությամբ տեղանունների կամ Երևան բարի ագնեցությամբ³:

Սեպագիր Երեսուն- կարելի է փորձել համաձայնեցնել Երևան բարի արմատին կամ ստուգաբանել այլ հնդեվրոպական հիմքերի հայկական հնարավոր արտացոլումների միջոցով (օրինակ, *erebh-, *rebh- ևն), բայց այդպիսի վերացական ստուգաբանությունների արժեքը մեծ չէ: Անվանը որևէ իմաստ վերագրելու համար անհրաժեշտ են կողմնակի տվյալներ, որոնք, այս դեպքում, կարող են տալ Երեբունի բլիի ժամանակակից անվանումները: Այն կոչվում է Արինքերդ (արյուն բարի բարբառային ձևից), որից է ծագում, կարծում են, նրա բուրբերեն Ղանլիթափա «Արյունոտ բլուր» անվանաձևը⁴: Յայերեն և բուրբերեն անվանումների համապատասխանությունը միայն մոտավոր է, որը ցույց է տալիս նրանց հիմն, ժողովրդական ծագումը: Բլրից 1,5կմ դեպի հյուսիս-արևմուտք է գտնվել Ղանլիթափա գյուղը, որի տարածքը մտնում է

¹ Մ.Իսրայելյան, Երեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 12 հտն.:

² Այսպես, Յ.Կարագյուղյանը Երեբունիի վերջին մասը ստուգաբանում է ըստ որոշ թրակյան տեղանունների -իօն վերջավորության, առաջին մասը կապում է հայերեն երանի բարի արմատին և այդ հիբրիդն անվանում «հնդեվրոպական-հայկական», տես՝ Դ.Դ. Էճճաճաչյի. Օծանեան ի ա թա՛՛ -չա՛՛ ձա՛՛ Ած յի ու՛՛ մ ի ձա՛՛ ծոյ. Պատմաբանաւիրուսական համես (այսուհետև՝ ՊԲՀ), 1988, N1, էջ 70-72: Դ.Սարգսյանը Երեբունին հանգեցնում է խուռառլարատական եւրա արմատին, իբր դրափիտությամբ (Դ.Սարգսյան, Երեբունի անվան մեկնաբանման հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, N8, էջ 53-56): Մեկ այլ հոյուծ վարկածային ստուգաբանություն (խուռ. Ենթադրյալ *eribus- «արծիվ») տես՝ V.V.Ivanov, Comparative Notes on Hurro-Urartian, Northern Caucasian and Indo-European. UCLA Indo-European Studies. Vol.1. Los-Angeles, 1999 (http://www.humnet.ucla.edu/pies/pdfs/IESV1/VV1_Horse.pdf), ո. 314: Զ.Ռասենը, որի աշխատություններում ամեն հայկական երևոյթ հանգեցվում է հնչող իրանական ակունքների, առանց որևէ հիմնավորման մերժում է Երեբունիի կապը Երևանի հետ և վերջինս հանգեցմում իրանական քանձու «առատ, մեծաշուրջ» բարին (Զ.Ռասեն, Առաքելական աստուածաբանութիւն. Յայաստանը և քրիստոնյա արևելքը, Երևան, 2000, էջ 45-46):

³ Ն. Յարությունյան, նշվ. աշխ., էջ 80, ծան. 8, Գ.Զահորեկյան, նշվ. աշխ., էջ 415:

⁴ Թ.Խ. Կակորյան, Ս.Տ.Մելիք-Քախչյան, Գ.Խ.Քարսեղյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 443:

Երևանի շրջագծի մեջ¹: Ըստ այդմ, հնարավոր է կապ ենթադրել Երեբունի անվան և «արյուն» կամ «արնագույն» իմաստների միջև:

Այդում բառը ծագում է հնդեվրոպական *esHr- արմատից, -իւն < *iōn- ածանցով²: Տեսականորեն հնարավոր է, որ երեսուն-ն լիներ արևո-ի հնագույն հայերեն վիճակի ուրարտական ընկալման սեպագիր արտացոլումը (ուրարտերեն-հայերեն համընկումներում կան ե/ա համապատասխանության այլ դեպքեր, չ-ն կարող է հաղորդվել ե-ով, ուրարտերենում՝ ե-ն և ի-ն, իսկ հայերենում՝ իւ և եւ երկրարբառները հերթագայում են):

Դարավոր է նաև մեկ այլ մեկնաբանություն: Դայերեն երեւիլ «բույսերի ժանգ հիվանդությունը» բառն, ըստ Գ.Զահուլյանի, ծագում է հնդեվրոպական *erebh- «մուգ գույն, մուգ կարմիր, դարչնագույն» արմատից³: Կարելի է կարծել, որ հենց հնագույն հայերեն *երեւ- «կարմրավուն» իմաստն է ընկած Երեբունիի հիմքում (Երեբունի բլուրն, իրոք, կարմրավուն է):

Եթե այդպես է, ապա տեղանունը կարող էր տարածվել, երկու էտապով, դեպի հյուսիս-արևմուտք. առաջին հանգրվանը վերանվանվել է թուրքերեն մոտավոր թարգմանությամբ, իսկ ավելի մեծ ու նշանավոր երկրորդը՝ պահպանել հին անունը:

Այս ստուգաբանությունները նշանաբանական են: Եթե Երեբունու հայերեն ստուգաբանությունը ճիշտ է, ապա այն կառուցվել է հայախոս երկրամասում, հայերեն անուն կրող բլրի վրա, կամ հայերեն անունը դրել են քաղաքը կառուցողը կամ այլ երկրամասերից բերված նոր բնակիչները:

Մյուս կողմից՝ հնարավոր է, որ այլալեզու մի անվանում է վերահնաստավորվել հայերեն հիշյալ հիմքերով: Բերված հնարավորությունները թողնելով ուժի մեջ՝ մենք այստեղ կառաջադրենք և կքննարկենք Երեբունիի մի ուրիշ ստուգաբանություն:

Երեբունիի կառուցման վերաբերյալ արձանագրություններում Արգիշթի I-ը նշում է, որ այստեղ նա բնակեցրել է 6600 «ռազմական մարդկանց» խարե և Ծուփանի երկրներից⁴: Ծուփանին հետագա հայոց Ծոփքն է, իսկ խարեն կապված է խեթական, ծագումով՝ նախախեթական (խաթական) Hatti-ի հետ: Ուրարտական աղբյուրներում այդ տերմինով, որպես հիշողություն խեթական կործանված

¹ Նույն տեղում, հ. 3, էջ 515:

² Ք.Աճառյան, նշվ. աշխ., հ.1, Երևան, 1973, էջ 316-317, Գ.Զահուլյան, նշվ. աշխ., էջ 166:

³ Գ.Զահուլյան, Ստուգաբանություններ, ՊԲՀ, 1991, N2, էջ 38:

⁴ Շ.Ա.Ածօծիքյան. Է՛ ծի օն օձածնեան է օձածն ի ածածի նո ի ասի էնան. Ածածն, 2001 (այսուհետև՝ ԷՕԷ1), ԷՕԷ1 173 II₃₆₋₃₇; 174 A2₂₁₋₂₂.

Կայսրության, կոչվել է Ծոփքից արևմուտք, Եփրատի և Արածանու միախառնման շրջանից հարավ և հարավ-արևմուտք գտնվող Երկրամասը՝ Մելիտեան, ներկայիս Մալաթիայի շրջանը¹: Այս 6600 ռազմիկները պետք է լինեին նախորդ տարվա արշավանքի ընթացքում Մելիտեա-Մալաթիայում գերվածների թվից²: Գերիները հաշվվում էին 2539 պատանի, 8698 տղամարդ և 18047 կին, և հնարավոր է, որ Էրեբունիում վերաբնակեցվել են ոչ միայն «ռազմական մարդիկ», այլ նաև նրանց ընտանիքները³:

Ուսումնասիրողները հայերի սկզբնական օրրանը սովորաբար տեղայնացնում են Եփրատի Վերին հոսանքների շրջանում, և խաթե ու Ծուփանի երկրների վերաբնակիչների մեջ գայթակղիչ է թվացել տեսնել հենց հայերի նախնիներին, այսինքն՝ հայերենի այն ժամանակների տարբերակով՝ «վաղ հնագույն հայերենով» խոսողներից⁴: Ըստ Ի.Դյակոնովի, այդ շրջանների բնակչությունը խառը վաղնջահայ-լուվա-խուրհական էր, որն օգտվում էր հայերենից՝ որպես երկրորդ լեզու, կամ նույնիսկ՝ միակ լեզու⁵: Գ.Սարգսյանը, զարգացնելով այդ թեզը, գտնում է, որ Երեբունի անվանումը, որը համոզիչ ստուգաբանություն չունի, կարող էր լինել այդ վերաբնակիչների լեզվով, թերևս՝ հայկական: Յնարավոր է, նաև որ այդ վերաբնակիչների աստվածն է եղել Երեբունիում հիշատակվող Խարշա-ն, որը, լար් ծնով, հանդես է գալիս նաև Երեբունիի հիմնադրումից շուրջ հարյուր տարի անց, հարևան Թեյշեբայինի մի արձանագրության մեջ (այս դիցանունն այլուրեք չի հիշվում Ուրարտուի աստվածների շարքում): Այսպիսով, հնարավոր է, որ այս վերաբնակիչները Արարատյան դաշտում հայալեզու բնակչության մի կողյակ էին առաջացրել, որը գնալով մեծանում էր⁶:

Այս բոլորը միայն վարկածներ են: Դայերենի կրողներին տեղայնացնելու համար անհրաժեշտ են լեզվական կռվաններ: Ուրարտական դարաշրջանի անվանաբանության մեջ հայկական շերտը չի կարող կենտրոնացած համարվել միայն Ծոփիքի և, առա-

¹ I. A. Åðóðþíýí. Óð í í í èì èêà Óðàðòó. Åðåâàí, 1985, n. 226-227.

³ Նույն տեղում, էջ 46:

⁴ Հայերենի շրջանաբաժնաման վերաբերյալ տես Գ. Զահորկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 25:

⁵ E.I. Äüyērī ā. I ðåäüñòî ðèy..., n. 233.

⁶ Գ.Արզույան, Ուրարտական տերությունը և հայերը. Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 117-118:

Վել ևս, Մալաթիայի շրջանում կամ մերձակայքում (ըստ արշավանքի նկարագրության, հավանական է, որ էրեբունի բերված վերաբնակիչների հիմնական զանգվածը լիներ Խարթեհ¹): Հատկանշական է, որ Ի. Դյակոնովը և նրա հետևողները չեն բերում հայերենով հուսալիորեն մեկնաբանվող անուններ, հատկապես անձնանուններ այդ շրջանի հայտնի անվանաբանությունից: Պատճառը պարզ է՝ այդ տարածաշրջանում նրանք չեն կարողանուն հայերենի հետքեր գտնել:

Ըստ անվանաբանական և պատմական տվյալների, մ.թ.ա. Երկրորդ հազարամյակի Երկրորդ կեսից այստեղի բնակչությունը խուրիսական և լուսական էր: Ավելի ուշ, քննարկվող դարաշրջանում՝ մինչև մ.թ.ա. VIII դարը, Վերին Եփրատի աջ ափի բոլոր դինաստիաները, այդ թվում և Մելիտեա-Մելիդում, լուսական էին: Եվ, հաշվի առնելով այն ժամանակների իրողությունները, խուրիսական և լուսական անուններ ունեցող իշխողները հենց խուրիսական և լուսական ծագում պիտի ունենային²: Յայերը, կարծում են, այդտեղ եկած պիտի լինեին խուրիսներից ու լուսացիներից հետո: Բայց որևէ երկիր նոր եկած տարրը, որը հետագայում դառնում է գերակշռող, սկզբնական շրջանում կազմում է երկոր իշխող վերնախավը: Այսինքն՝ այդ շրջանի հայկական բնակչության վերաբերյալ վարկածը հիմնված չէ որևէ աջակցող լեզվական փաստի վրա³:

Խարշա/լարšա դիցանվան հայկական ծագման գիտական մեկնաբանության փորձ մեզ հայտնի չէ: Այս դիցանունը կարդում են նաև Խեժա⁴: Երկու ձևերի համար էլ հայկական մեկնաբանության հրական հիմքեր չկան:

Այսպիսով, այն դրույթը, որի համաձայն, մ.թ.ա. Երկրորդ հազարամյակի վերջում և առաջին հազարամյակի սկզբում հնագույն հայերենի կրողները բնակվել են Ծոփքում և մերձակայքում, առնվազն կասկածելի է: Եկ հավանական չէ Երերունիի 6600 ռազմիկ-

¹ *A.A.I* åéèéèøâéèéè. 624. w24u., kq 47, i ðéì . 30:

² Այս հարցերի շուրջ Կեն Է. I. Aüyei /թ. Ի ծանունու ծըչ..., է. 228-229, 242-243:

³ Հիերողիկիային լուվերն արձանագրություններից հայտնի անձնամունքների վերաբերյալ տես *A.Ա.Եղինյի*. Էօաւենուա օածնօակ և աէի է Աշե է Շօւէահախնէօ և աէածնօակ է XII-VIII հա. ար 1 յ. (1 էածն աէսօն-հնէու էօաւենու է հնօւ 1+ էաւ). Ածնաա, 1994, թ. 88-97: Դակումենտը, հիպոթետիկ կերպով, փրոդաւմ է Թարաքի արքաներից մեկի ամունք մեկարաբն հայերնով, բայց ամիագոր, տես, օրինակ, *Է.Ի.Այսյերի թագ*. Լ աէայ Աշե է Ածն ար էյ է է 600ա. ար 1.յ. է Շօւէ ան ահաւեն ի նուօ օսձած. Ածնօւ է ածնաա աէ էնօւ ծէէ, 1981, N2, թ. 60, ի ծէ. 115 (այդ մեկարանության վերաբերյալ տես *Ա.Պետրոսյան*, Դայոց ազգածագման հարցի շուրջ /այս ժողովածուում/):

4 Stū ĒOĒI , 485:

Աերին համարել այն հայկական նախնական բժիջը, որի հիմքի վրա պետք է աճեր ու զարգանար Արարատյան դաշտի՝ Մեծ Հայքի այդ քաղաքական, մշակութային և կրոնական կենտրոնի հայ բնակչությունը (ըստ Գ.Մելիքիշվիլու, թեև հավանական է, որ ռազմագերիները Վերաբնակեցված լինեին իրենց ընտանիքներով, բայց և այնպես, երերունիի հիմնական կորիզը պետք է կազմեին ուրատական ռազմիկները)¹: Նույնիսկ Ի.Դյակոնովի տեսակետի համաձայն, Երերունիի Վերաբնակիչների մեջ կարող էին նշանակալի թիվ կազմել լուվերենի կրողները: Ավելին, նրանք կարող էին լինել եթե ոչ լուվերենի՝ որպես խոսակցական լեզվի, ապա անատոլիական անվանաբանության կրողներ (հմնտ. հետագայում հայերի կողմից ստեղծված իրանական և թուրքական տեղանունները):

Անատոլիական համատեքստում *Erebuni-Երևանը* համադրելի է խեթ. *arawa-* «ազատ (ինչ որ բանից)», *arawahh-* «ազատել, ազատ դարձնել», *arawes-* «ազատ դաշնալ», *arawanni-* «ազատ», հակադրված անազատին²: Դայտոնի է *Arauwanna* (տարրերակներ՝ *Arawanna*, *Arawunna*) քաղաքը *Պափլագոնիայի* մոտ, որի անունը մեկնաբանվում է որպես «Ազատ քաղաք»՝ *Villefranche, Fribourg*³: *Arawa-* «ազատ, ազատ(վ)ել» արմատը համաճատոլիական է: Այն ի հայտ է գալիս նաև Արևածյան Փոքր Ասիայի ուշ անատոլիական լեզուներից լիկիերեն մի տեքստում (նույն *arawa-* ձևով): Բայց լիկիայից հայտնի է նույն հիմքի մեկ այլ տարրերակ՝ ‘Երենա քաղաքանունը, որն ավելի մոտ է Երեբունիին և համարյա նույնական Երևանին: Ստեփանոս Բյուզանդացու մոտ այն մեկնաբանվում է որպես ‘Ելευթերա ‘ազատ, անկախ’ (սրա հունական գուգահեռն է, այսպիսով, ‘Ելեւթերա քաղաքն Աստոիկայում. հմնտ. և ռուս. Նե՛՛ ա՛ - ա՛ «Ազատ /հողագործների բնակավայր/», հայ. Ազատ քաղաք, տե՛ս ստորև): Լիկիերենը մերձավոր է լուվերենին, որտեղ ևս, լի- կիերենի հիման վրա, վերականգնվում է **arawa-* ձևուն⁴:

Անատոլիական arawa-ն կազմված է ara արմատով և wa ածանցով: Խեթ. āra- նշանակում է «ծիշտ, հարմար, շիտակ», սկզբնապես՝ «համապատասխան ներխսմբային կարգին, հասարակայնորեն ընդունելի, սոցիալական կարգին համաձայն», և «յու-

¹ A.A. 1 åéèéèøâééè. Աշվ. աշխ., էջ 45-46:

² Այս բառի վերաբերյալ տես J.Puhvel, Hittite Etymological Dictionary: Trends in Linguistics. V. 1-2, Berlin, New York, 1984, p. 119:

³ E.Laroche, Hittite arawa- "libre." Hommage à George Dumézil. Bruxelles, 1960, p.124.

⁴ Տույն սեղում, էջ 125, *J.Puhvel*, Աշվ. աշխ., էջ 120, սեղն և *Ա.Ա. Էաձիրա*. Ի և է՛Շ-ի յօք-անեօն նու ի հած էածնթռեօն հաքի. Աածն-ի նու է նունակ հակ էյ, 1984. լ., 1986, ն. 13:

րային, ընկեր, տեր». arawa-՝ «ara-ի հատկանիշներ ունեցող», «պարտականություններից (օրենքով) ազատված, ազատ»: Բնութագրական է natta արա «ոչ շխտակ, ոչ ճիշտ, անօրինական» ժխտական բանաձև՝ կիրառված «ոչ խեթական», բարբարոսական կենսակերպի վերաբերյալ¹:

Քննությունը ցույց է տալիս, որ խեթ. arawa-ն վերաբերում է պարտադրված աշխատանքներից և հարկերից ազատվելուն: Խեթական հասարակությունը կարգավորվում էր ֆեոդալական տիպի կանոններով, ուր վասալը կամ պետը է ծառայեր այուգերենին, կամ հարկ վճարեր: Դրանցից ազատումը հենց հաղորդվել է arawa- տերմինով: Ազատ քաղաքի անատոլիական հասկացությունը համապատասխանում է խեթական օրենքներին, որոնցում հարկերից ազատները (arawas) ապրել են որոշակի քաղաքներում²: Միևնույն պատկերացումների մի դրսևորումն է, թերևս, այդ օրենքների մի կետը (§ 54), ըստ որի՝ մամղա ռազմիկները, սակա ռազմիկները, Տամալկի, Խատրա, Ցալպա, Տեսիմիհա, Խենուվա քաղաքների ռազմիկները և մի քանի այլ կատեգորիաների մարդիկ ժամանակին որոշ ծառայություններ ու պարհակներ չեն կատարել³:

Այս քաղաքները գտնվել են խեթական տերության արևելքում, որը, մի տեսակետի համաձայն, վկայություն է խեթերի՝ արևելքից արևմուտք հին տեղաշարժի մասին⁴: Ա.Քոսյանը մասնավոր գրույցի ընթացքում ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ այս քաղաքները գտնվել են տերության ծայրամասային շրջաններում, այսինքն՝ թերևս «սահմանապահ» գործառույթներ են ունեցել, որը և կարող է բացատրել նրանց՝ այդ պարհակներից ազատված լինելը: Ընդ որում, Խատրան գտնվել է

¹ E.Laroche, նշվ. աշխ., էջ 126-128, տե՛ս և J.Puhvel, *Analecta Indo-europeae. Innsbrucker Beiträge zur Sprachwissenschaft 35*. Innsbruck, 1981, p. 323-324, նույնի՝ Hittite Etymological Dictionary, 1-2, p. 116-121, Ա.Ա.Էնդար նշվ. աշխ., էջ 13:

² Ա.Ա.Էնդար նշվ. աշխ., էջ 13:

³ Օձանձու և ածեյ և եռօն ծեռ Ածան աս Ան ոծոն եա. Լ. Ա. 1980, հ. 278.

⁴ F.Sommer, *Hethiter und hethitisch*. Stuttgart, 1947, S. 5-8, Ա.Ա. Էնդար Ա. ածու - եռ եռ նեա յշնեա. Ածան եա յշնեա և աս է Աշեա. Լ. Ա. 1980, հ. 131-132, հնմտ. G.Steiner, *The Immigration of the First Indo-Europeans into Anatolia Reconsidered*. Journal of Indo-European Studies, 1990, N1-2, p. 190-191:

Ծովագրում (իսկապես աղջանագրությունների խուվայում)¹: Ծովագրում և Մալաթիայից հեռու չեղ և Խենովան²:

Արգիշտին ասում է, որ ինքն է անվանել քաղաքն Էրեբունի անունով: Էրեբունին, ըստ այդմ, ուրարտական անվանաբանության մեջ բացարիկ է: Արքաները սովորաբար իրենց կառուցած քաղաքներն անվանել են իրենց կամ աստվածների անուններով (հնմտ. օրինակ, Argištihinili, Haldini URU և այլն): Այս բացարիկ անվանումը, թերևս, կարող է մատնանշել Էրեբունու վերաբնակիչների բացարիկ կարգավիճակը: Էրեբունին ստեղծվել էր որպես սահմանային ամրոց նոր գրավված երկրում, ընդդեմ տեղական բնակչության: Անատոլիական ավանդույթի համաձայն, arawa-տերմինով կարող էին կոչել Խաթեռում և Ծուփանիում գերված, բայց Եթիունիում սահմանային ծառայության նշանակված և այլ պարտականություններից օրենքով՝ արքայի հրամանով ազատված «ռազմական մարդիկ»:

Ուրարտ. Erebuni-Երևոն-ին անվանաբանության մեջ մոտ է խեթ. Arawunna-ն, իսկ բառային մակարդակում՝ արաւանուն (ոու-ածականակերտ ածանցով)³: Ուրարտերենում կրկնակի բաղաձայ-ները պարզեցվում են (հմնտ. օրինակ, Կոմու տեղանվան ուրար-տական Qumenu ձևը), վերջին վանկը բուլանում է և սեպագրում հաղորդվում ի-ով: Առաջին երկու վանկերում են ա-ի փոխարեն կարող է բացատրվել փոխատու և փոխառող լեզուներում ա-ի ար-տասանության տարբերությամբ՝ օտարալեզու ա-ն ընկալվել է որ-պես ե: Հնարավոր է պատկերացնել, որ խեթ. Arawunna-ի «խաթե-ծուիկանիական» բարբառային ձևը լիներ Երևոննա, հմնտ. լիկիա-կան ՚Երենա ձևը: Տեսականորեն նույնիսկ հնարավոր է, որ ուրարտ. irbu- «առևանգել, հափշտակել» արմատը անտոլիական փոխա-ռություն լինի arawa-ից, ոչ թե «ազատել», այլ «յուրացնել» (հմնտ.

¹ Del Monte, G., Tischler, J. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte (Répertoire géographique des textes cuneiformes, VI). Wiesbaden 1978, S. 104, Ա.Քոյսան, Քայլական Լեռնաշխարհի տեղանունները (Ըստ Խեթական սեպագի աղբյուրների), Երևան, 2004,էջ 55-56:

² Դ.Ա.Ածօթից. Օ՛՛ ի է ունեա Օձածօ, թ. 229, Ա.Թռսյան, նշվ. աշխ., էջ 56-57: Գ.Ղափանցյանը խեթ. Արավաննան նույնացնում է Պտղոմեոսի հիշատակած Արավենեին, Մալարիայի շրջանում (Ա.Ա.Էռի ա՛ օյց. Էնծի ծեռի - էօն հանդէծ-հանհեռ ծան- ան օն. Ածհանի, 1956, թ. 125, լ ծօւ. 1): Այս տեղայնացումը չի հաստատվում. հնարավոր չէ Ենթադրել, որ Մալարիայի շրջանում հետխեթական ժամանակներում եղել է մեկ այլ համանուն քաղաք, որի անունով է կոչվել Երեբունին:

³ E.Laroche, Աշվ. աշխ., էջ 124-125:

ara-wa- «յուրային») իմաստով: Սա կարող է հաշտեցնել երեքունիկ անտոլիհական և ուրարտական սոուզաբանությունները¹:

Պատմության պարադիքսալ երևույթներից է այն հանգամանքը, որ հայոց և առաջին, և վերջին մայրաքաղաքները՝ Արմավիրը (ուրարտ, Արգիշթիխնիլի) և Երևանը, հիմնվել են ուրարտական նույն արքայի՝ Արգիշթի Լ-ի կողմից, Արաբատյան դաշտում: Անեն ինչ վերադառնում է «ի շրջանս յուր»: Դետաքրիր է, որ նրանցից առաջինը հիմնվել է վերջինից վեց տարի անց (մ.թ.ա. 776թ.), ապա՝ կորցրել իր հին անունը, իսկ վերջինը պահպանել է: Ընդ որում, Արմավիրը, ինչպես և Երևանը, լավագույնս կարող է ստուգաբանվել անատոլիական լեզուների տվյալներով:

Հին *Armawira-ի (հմնտ. Արմաւիր, սեռ. Արմաւրայ և հուն.՝ 'Արμաօւրία, 'Արմաօύրρա ձևերը) առաջին մասի համար հմնտ. Arma-«լուսին, լուսնաստված», հայտնի խեթերենում, լուվերենում, հիե-րոգլիֆային լուվերենում, լիկիերենում ու լիդիերենում²: Երկրորդ մասը համադրելի է խեթ. sir, լիդ. bira, ապա և լուվ. rarma-, լիկ. *prnna- «տուն», կրոնական ոլորտում՝ «աստծու տուն, տաճար» բառերին³ (հայ ձևը մոտ է խեթականին և, առավել ևս, լիդիականին. b/p > w արտասանությունը բնորոշ է հին արևելափոքրասիական լեզուներին, այդ թվում՝ ուրարտերենին ու հայերենին, իսկ անատոլիականներից՝ նորից լիդիերենից)⁴: Ըստ ավանդության (Խորենացի, Ա.Ճ. Սերեսու, Ա), Արմավիրը, որպես իր «տուն բնակութեան», հիմնել է Քայլի թռո Արամայիս/Արմայիսը: Այս անունը նույնպես գործահեռ ունի Արևմտյան Փոքր Ասիայում, հմնտ. լիկիական Արմաւ անձնանունը (լուսնաստծու անունից)⁵: Քատկանշական է, որ լուսնաստվածը հայոց հին ավանդություն հիշվում է հենց Արմավիրի առնչությամբ՝ հայոց լեզենդար արքա Վաղարշակը

¹ Ընդհանրապես, ա/ե տատանումը հաճախ է լեզվից լեզու անցումներում, հնմտ., օրինակ, ուրարտ. euri «սեր»-ից. ալյիորդ «տիրոջ դուստր», սեպագիր (ասորեստանյան) Enzite-Անձիս և հուն. 'Ակիլիսին-Եկեղեց: Ուրարտական սեպագրում ե-ն և ի-ն, հնչպես ասվեց, հերթագայում են:

² Տես, օրինակ, J.Puhvel, Hittite Etymological Dictionary, V. 1-2, p. 151-153:

⁴ Å. Ørsted, Eeäeeñeeé yçüé. Äðaaáí èå yçüéè ì àéí é Áceé. ì . 1980, n. 319:

⁵ Զահնուկյան, Ստվետի Խորենացու «Քայլց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները, ՊԲՀ, 1981, N 3, էջ 53. Ըստյան անունը հայտնի է և հունա-եգիպտական այվանորություն, որի վերաբերյալ, այս արճշությանը, տես Ա. Շահումյանը. Ածուխ ու աշխարհը պատմության մեջ, Երևան, 1980, էջ 319.

«մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեացն» (Խորենացի, Բ.ը):

Արմավիրի և Արգիշթիկնիլիի տարածքները համընկնում են միայն մասամբ՝ Արմավիրի կենտրոնը գտնվում էր տարածքի արևելյան, իսկ Արգիշթիկնիլիինը՝ արևմտյան բլուրի վրա, իրարից մի քանի կիլոմետր հեռու: Ընդ որում, Արմավիրի բլրի լանջին բացահայտվում է նախառլարտական դարաշրջանի մի սրբազն տաճարային համալիր¹: Այն կարող էր նվիրված լինել լուսնաստծուն, և Արմավիրը կարող էր ծևափորվել այդ համալիրի շուրջը: Այսպիսով, կարելի է կարծել, որ անառողիական լեզվի կրողներ եղել են նաև այստեղ: Գուցե Արգիշթին իր՝ խաթեից և Ծուփանից բերած գերիների մնացած մասը բնակեցրել է Արգիշթիկնիլիում: Աղբյուրներից դատելով՝ Արմավիրի բլուրը կառուցապատել է Արգիշթիի որդի Սարդուրի II-ը²: Գուցե նրա ժամանակ են Արմավիրի բլուրը բնակեցրել արևմտյան գաղթականներով: Կամ՝ Երկրամասում մինչ այդ ել եղել է անառողիական բնակչություն: Արմավիր անունը ստուգաբանելի է խեթերենով և լիդիերենով և ոչ լուվերենով, ինչպես կարելի էր սպասել, որը հասուն քննության նյութը կարող է լինել:

Հայոց ավանդույթում «Ազատ քաղաքի» մի օրինակ է Արշակ II-ի կառուցած Արշակավանը, որտեղ, աղքայի հրամանով, ազատ ապրելու իրավունք էր տրվում հանցագործներին, տերերից և հարկերից փախած բոլոր հալածյալներին (Փավստոս, Դ.Ժ., Խորենացի, Գ.ի.):

Հայտնի է և «Ազատ քաղաքի» տեղանվանական կիրառությունը: Այդպես են կոչվել Երկու ավերակ քաղաքատեղի Սյունիքում (Սոքք և Գեղարքունիք գավառներում. հնմտ. և Ազատն զյուղատեղին Գողթնում)³: Ընդ որում, այդ քաղաքներն ունեցել են իրենց անունները, և «Ազատ քաղաքը» նրանց ավերակներին տրվող կոչում է միայն: Ըստ Յ.Մանանյանի, «Ազատ քաղաքը» ոչ թե տեղանուն է, այլ «սոցիալական հասուն մի տերմին, որով մատնամշվում է վերոհիշյալ վայրերի ազատ լինելը որոշ հարկերից և նրանց քաղաքային արտոնյալ դրությունը»⁴: Հայ միջնադարյան իրականությունը շատ իմքեր չի տալիս «ազատ քաղաքների» իրավական

¹ Է. Էածա՛յ ձօյն, Ա. Օձա՛յ ձօյն, Ա. Էա՛յ ձօյն. Ճ՛ օձածօննեան ձօյն ձօյն, 2004, N2, էջ 268-274:

² Ն. Տիրացյան, Արգիշթիկնիլիի հոգուր և աշխարհիկ կառույցների շուրջ ըստ սեպագիր արձանագրությունների. Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը. Գիտաժողով, Երևան, 2000:

³ Թ. Խ. Դակորյան, Ս. Տ. Մելիք-Քախչյան, Գ. Խ. Քարսեղյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 38, 42:

⁴ Յ. Մանանյան, Երկեր, հ. Ե., Երևան, 1984, էջ 204:

կարգավիճակ ենթադրելու համար¹: Բայց և լեզնդար Արշակավանը, և ենթադրյալ արտոնյալ «ազատ քաղաքները» կարող են դիտվել որպես հին ավանդույթի արտացոլումներ:

Արարատյան դաշտում հայտնի են Երկու կարևոր տեղանուն՝ կազմված Ազատ հիմքով. Ազատ գետը և Ազատն Մասիսը: Խեթ. առաւան-ն, տղամարդ կամ կին գաղափարագորով, նշանակում է «ազատ», միևնույն ժամանակ՝ «ազնվական»², որով ուղղակի համընկնում է հայ. ազատ-ին: Յարց է առաջանում. արդյո՞ք հնարավոր է, որ այս տեղանուններն ինչ-որ կերա կապված լինեն «ազատ քաղաք» Երեբունի-Երևանի հետ:

Երևանը կարող էր ինչ-որ ասոցիացիաներով կապվել Արա դիցանվան հետ (*Արաւան/Երևան): Իսկ Arawanna-ն ստուգաբանորեն առնչվում է խեթական Ara(s), Ara դիցանվանը: Գ. Ղափանցյանը հայոց Արային նույնացրել է խեթական այդ աստծում³, որին, հետևելով իր ժամանակի գիտությանը, համարում էր ոչ հնդեվրոպական՝ «ասիանիկ» ծագման բուսական մի կերպար: Արդի գիտությունն այդ դիցանունը միարժեքրեն համարում է հնդեվրոպական, կապված arawa-ի արմատին՝ որպես խեթական «օրինավոր» կենսածի մի աստվածացված մարմնավորումը, ընդ որում, ոչ մի հիմք չկա նրան ինչ-որ բուսական կապեր վերագրելով⁴: Ի միջի այլոց, խեթական նշված ձևերն են, որ հիմք են տալիս այդ հիմքի համար համահնդեվրոպական կիրառություն ենթադրել (հմնտ. արիացիներ): Այս դիցանունն, այսպիսով, հնդեվրոպական առասպելաբանության մի կարևոր անկյունաքար է խեթական ավանդություն:

Եթե հայերը փոխառած լինեին խեթական Արա դիցանունը, ապա այն, վերջին վանկի կանոնավոր անկումից հետո, որը տեղի է ունեցել անատոլիական լեզուների անհետացումից շատ դարեր անց, պետք է մեզ հասած լիներ Ար ձևով: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Արա Գեղեցիկի կերպարն անբաժանելի է խեթ. Արայի և նրան գուգահեռ մյուս հնդեվրոպական կերպարներից, սակայն, ամենայն հավանականությամբ, ոչ թե փոխառված ձև է, այլ նրանց հայկական համապատասխանությունը⁵: Բայց և չի կարելի բացառել անատոլիական ազդեցությունը հայոց Արայի կերպարի վրա:

¹ Յ. Պետրոսյան, Գարնին IX-XIV դարերում, Երևան, 1988, էջ 11-12, 119-120:

² E.Laroche, նշվ. աշխ., էջ 124:

³ Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկ պաշտամունք, Երևան, 1944, էջ 78-79:

⁴ J.Puhvel, *Analecta Indo-europeae*, p. 323-324, նույն՝ *Hittite Etymological Dictionary*, V.1-2, p. 116-121, տես և Օ.Ա. Առի էջանության համար, Ա.Ա. Էջան նշվ. աշխ., էջ 810:

⁵ Ա. Պետրոսյան, Արա Գեղեցիկ և սուլը Սարգս. Յայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, Ա.Ա. Դժունչյանի համար:

Արա Գեղեցիկը համարվում է «մեռնող և հարություն առնող» աստծու վիպականացած-պատմականացած տարբերակը¹: Յայկական առասպելաբանության համատեքստում նա համապատասխանում է «մեռնող և հարություն առնող» աստծու մյուս վիպական ժառանգներին՝ «Վիպասանքի» Արտավազդին և «Սասնա ծոերի» Սիերին: Ուրարտական դարաշրջանում «Սիերի դուռը», որի հետևում, ժայռի մեջ, ըստ Էպոսի, փակված է Սիերը, նվիրված է Եղել գերագույն աստված Խալդիին: Սա թույլ է տվել Սիերի կերպարը ծագած համարել ուրարտական Խալդիից²: Այսինքն՝ կերպարային առումով, կարելի է ասել, Խալդին որոշակիորեն պետք է համապատասխաներ Արա Գեղեցիկին³:

Այրարատ նահանգը և նրա կենտրոն Արարատյան դաշտը հայ ավանդույթում կապվել են Արա Գեղեցիկի հետ և կոչվել Արայի դաշտ (Խորենացի, Ա.ժե., Սեբեոս, Ա): Արարատյան դաշտի հյուսիսային Արայի լեռան անունը մեկնաբանություն չի պահանջում. այս առնչությամբ նշենք Արայի լեռան քարանձավային սրբավայրի գոյությունը⁴, որը Արային նոտեցնում է Խալդիկն, Արտավազդին ու Միերին: Դաշտի արևելյան Գեղամա լեռները համադրելի են Արայի Գեղեցիկ կոչմանը⁵: Արայի լեռան մերձակա Արագածն, ըստ Խորենացու, կապված է Արամանյակի հետ, որը, որպես Արարատյան դաշտի առաջին հայկյան բնակիչ և եպոնին, Արայի նախատիպն է: Նրա անունն էլ, հավանաբար, Արայի հնդեվրոպական հիմքի մի ածանցյալն է⁶ (Մեսականորեն նույնիսկ հնարավիր է Արամանյակին և Արային դիտել որպես, համապատասխանաբար, Արարատյան դաշտի հայկական և անտառիկական եպոնիմներ): Արայի ու Միերի գուգորդ Արտավազդը փակված է համարվել Արարատյան դաշտի հարավային լեռան՝ Սասիսի մեջ: Այսպիսով, Արարատյան դաշտը շրջափակող բոլոր լեռները ինչ-որ կերպ կապվել են Արայի կամ նրան գուգահեռ կերպարների հետ:

Արա Գեղեցիկի պաշտամունքը քրիստոնեական դարաշրջանում շարունակվել է սուրբ Սարգսի կերպարում⁷: Սուրբ Սարգսին,

¹ Ա.Մատիկյան, Արա Գերեցիկ, Վիեննա, 1930, Ն.Արուց, Քին հայոց աշխարհայագը. Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, Գ.Ղափանցյան, Ծնչ. աշխ.:

² È. I. Äüyéřířá. È ái ī ði nō ī ñeì ái eå Öäeäe. Äðåáí eeé Ái nòi è (Äðåááí), 4, 1983.

³ Ա. Պետրոսյան, Ուրարտա-հնդկովոպական և հայկական առնչությունների շուրջը (սույն ժղովածություն):

⁴ Պ. Ղափանցյան, Աշվ. աշխ., էջ 99:

⁵ A.A. / åððiñyí. Åði yí ñééé yí iñ e i eðt éi äey, n. 87-88.

Ա.Սատիկյան, սշվ. աշխ., էջ 153-170, Ե.Աղոստ, սշվ. գյան, նշվ. աշխ., էջ 63-68, Ա.Պետրոսյան, նշվ. աշխ.: 40

Ըստ ավանդության, թաղվել է Արարատյան դաշտի Կարքի գյուղում, որը նատնանշում է նրա կապը տեղի եպօնիմների՝ Արամանյակի ու Արայի հետ¹: Յատկանշական է, որ սուրբ Սարգիսը ծագումով Կապադովկիայից էր, որը ներառում էր ուրարտական աղբյուրների հին խաթե Երկիրը: Ըստ այդմ, նրա Երագահաս/Արագահաս մակդիրն արդյո՞ք հետագա Վերահիմաստավորումը չէ անատոլիական arawa-ի, որը հայերենում կանոնավոր կերպով պիտի դաշնար արագ/երագ: Եվ նույն արմատի մի այլ ածանցյալը չէ՝ Արագածը²:

Ստորև մի քանի խոսք երեբունիի վերաբնակիչների I(ս)արշա աստծու հնարավոր արևմտյան կապերի վերաբերյալ, ըստ ժամանակակից տվյալների: Ըստ Գ.Մելիքիշվիլու, Խարշա-ն նույնական է լուվական-փոքրասիական Imaršiya-ին (որը նա նեկանաբանում էր սկզբնապես որպես «Երևանյին», ապա՝ «հովտային»)³: Ըստ մեկ այլ կարծիքի, Ի(ս)արշան պիտի լիներ Արարատյան դաշտի բնիկների աստվածը⁴: Երկու կարծիքներն ել հույժ վարկածային են: Գ.Մելիքիշվիլու կարծիքը հենված է միայն անունների որոշ ննանության վրա: Լուվական Immarši աստվածը պաշտվել է Խատանուվա քաղաքում, որը, դատելով նրա դիցարանի վրա խորհիական ազդեցության բացակայությունից, կարող էր գտնվել Փոքր Ասիայի արևմուտքում կամ հյուսիս-արևմուտքում, այսինքն՝ Ծոփքից ու Մալաթիայից շատ հեռու (սա էլ, իհարկե, վարկածային տեղայնացում է): Immarši-ն ներկայունս նեկանաբանվում է որպես «պտղաբերության ողի» (Fruchtbarkeitsgenius), ըստ խեթ. immarni «պտղաբերություն» բառի⁵:

Ըստ հետազոտողների, Իվարշան պիտի լիներ Խալդիի մի կերպարային համապատասխանությունը⁶: Դա է մատնանշում այն հանգամանքը, որ Իվարշան պաշտպում էր սուս կոչվող տաճարներում, որոնք մնացած բոլոր դեաքերում նվիրվել են միայն Խալ-

¹ Ա. Պետրոսյան, Աշվ. աշխ., էջ 167:

² Այս լեռնավան վերաբերյալ տես և Ա. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 166, Ա.Ժ.Դ ձօթիկը. Նշվ. աշխ., էջ 91, Ա. Պետրոսյան, Հայոց ազգածաման հարցեր ավանդական տվյալների օննության լույսի տակ, ՊԲՀ, 2004, N2, էջ 220, ծան. 130:

⁴ І.А.Аððóþríý. І. Аððá ðððòññéå í àaëì èñè Ëæðì èð-áéððå. Áðåáàáí, 1966, n. 94, Éñéí, 1985. // hrynnukurkun. hrynnukuh. hef 78-79.

դիմ: Դժվար է պատկերացնել, որ Ամմարշի-ի նման մի երկրորդական աստվածություն նույնացվեր ուրարտական գերագույն աստծու հետ: Պետք է կարծել, որ Ի(ս)արշա-ն եղել է մեծ աստված: Խեթալուվիական աստվածների ցանկում Ի(ս)արշա ձևին առավել մոտ է թվում լուվական լարի աստվածը (ավանդված է նաև որպես լյարրիշ, Յարրիշ, ածականի ուղղական հոլովածնով՝ լարիշի): Վերջինս ռազմի և ժանտախտի մեծ աստված էր, լուվական այն երեք աստվածներից մեկը, որն անցել էր համախեթական դիցարան¹: Լարշա-ն կարող էր լինել լարիշի արտասանական մի տարբերակի ուրարտերեն հայորդումը (լարիշ- > լարիս- > լարշա / լարշա, որտեղ ան արտասանվում է հազարից խուսափելու համար, անշեշտ ի-ն ընկել է, իսկ վերջին ան կարող է բացատրվել ուրարտական նմանատիպ դիցանունների ազդեցությամբ, հնմտ. Թեյշերա, Բարա, Կուերա, Արարութա, Շուրա և այլն):

Ի(յ)արիսի և Արայի կապերն ակնհայտ են: Սրանցից առաջինն անբաժանելի է հին միջագետքյան կրակի, պատերազմի և ժանտախտի աստված Էրրա-ից²: Իսկ երան և անունով, և կերպարով համապատասխանում է Արայի հին նախատիպին՝ Երին³:

Այսպիսով, հավանական է, որ Արգիշթի լ-ի հարե և Շուրիմանի երկրներից բերված վերաբնակիչները եղել են լեզվական առումով անատոլիացիներ: Նրանց լեզվից կարող էր ծագել և երերունի անունը:

¹ B. Van Gessel, Onomasticon of the Hittite pantheon. Leiden, New York, Köln, 1998, p. 178-179.

² O.R. Gurney, Some Aspects of Hittite Religion. Oxford, 1977, p. 16.

³ Ի էօն ի ձօն ձի ա ի էօն. Օ. 2, 1 ., 1982, հ. 669.

⁴ Ա. Պետրոսյան, Արա Գեղեցիկ և սուրբ Սարգիս, էջ 168-169, նույնի՝ Ուրարտահնդեվողական և հայկական առնչությունների շուրջ (սույն ժողովածուում): Իվարշայի և լարիշի հնարավոր կապի վերաբերյալ տես և Ք. Նմայակյան, Դայասական Պ. GUR-ը և Արա Գեղեցիկը. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովորդներ, XXIII, Երևան, 2004, էջ 387: Ըստ մի կարծիքի, Ի(ս)արրի-ն ստուգաբանուեն կապված է հունական Յերա և սլավոնական Յարիլ դիցանունների հետ (Շ. Շահական, 1989), իսկ Գ. Ղափանցյանը Արային համադրել է Յարիլոյի հետ (Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 81-84, 94): Պետք է նշել, որ չնայած կերպարային որոշ համապատասխանությանը, Արայի անունը հնդեվողական հանատեքսուում չի կարող հանգեցվել Յարրիի և Յարիլոյի համար կամիսաղովող նախածկին:

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ԵՎ ԻՇԽՈՂ ԴԱՍԻ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐԶ

1. «Ուրարտական» տերմինով ժամանակակից գիտության մեջ ընդունված է կոչել մ.թ.ա. IX-VII դդ. Յայկական լեռնաշխարհը միավորած երկրը, դրա իշխանությունը, բնակչություններում համարվել է, որ Ուրարտուն նշանակալի չափով բնակեցված է եղել ուրարտերենի կրողներով՝ ուրարտացիներով և ազգակից ցեղերով, թեև նշվել է նաև, որ ուրարտացիները չեն կազմել երկրի բնակչության մեծամասնությունը¹: Յայկական լեռնաշխարհի՝ ուրարտական արձանագրություններից հայտնի անվանաբանությունը՝ անձնանունները, դիցանունները, տեղանունները նույնպես, երբեմն առանց տարբերակման, ուղղակի «ուրարտական» են համարվել:

Բայց այդօրինակ պարզ մոտեցումը միշտ չէ, որ արդարացնում է իրեն: Այդ տրանաբանությամբ, օրինակ, հին Ֆրանսիայի հիմնական բնակչությունը պիտի կազմեին գերմանալեզու ֆրանկները, հին Բուլղարիայինը՝ թյուրքալեզու բուլղարները, մինչդեռ այդ ցեղերը կազմել են երկրների իշխող վերնախավը, իսկ հիմնական բնակչությունը խոսել է այլ լեզուներով:

«Ուրարտական» տերմինով երկրի մշակույթը նույնացվում է հնագիտական որոշակի մի համալիրի, լեզուն՝ բնակչության և պետության հետ, որը գիտական առումով բոլորովին ճշգրիտ չէ: Ամեն ինչ ավելի բարդ է, ոչ միարժեք: Ուրարտական հուշարձանները և մշակույթը, ներառյալ արձանագրությունները, ստեղծվել են, ճնշող մեծամասնությամբ, պետական իշխանությունների կողմից: Վանի արքաներն ուժով են գրավել Յայկական լեռնաշխարհի տարբեր շրջանները (հիմնականում իրար հաջորդող երեք ականավոր արքաների՝ Իշապուհնիի, Մինուայի և Արգիշթի Լի օանքերով) և ուժով պահել իրենց իշխանության տակ: Յաջորդ արքաներն անընդիատ արշավանքներ են կազմակերպել լեռնաշխարհի վաղուց ի վեր «նվաճված» երկրամասերի դեմ: Ամենուրեք հիմնվել են քաղաքներ և ամրոցներ, որոնք բնակեցվել են պետությանը լոյալ, թեև էթնիկապես ոչ միասեռ, երբեմն լեռնաշխարհի այլ շրջաններից բերված բնակչությամբ: Այդ կենտրոններում են տեղայնացած «ուրարտական» մշակույթի հուշարձանները, խեցեղենից մինչև տաճարներ,

¹ Տես, օրինակ, Ա.Ա. Ղ. է՛ ծ՛ աղջէ՛ է. Ականան անընդիատ արքաներն անընդիատ արշավանքներ են կազմակերպել լեռնաշխարհի վաղուց ի վեր «նվաճված» երկրամասերի դեմ: Ամենուրեք հիմնվել են քաղաքներ և ամրոցներ, որոնք բնակեցվել են պետությանը լոյալ, թեև էթնիկապես ոչ միասեռ, երբեմն լեռնաշխարհի այլ շրջաններից բերված բնակչությամբ: Այդ կենտրոններում են տեղայնացած «ուրարտական» մշակույթի հուշարձանները, խեցեղենից մինչև տաճարներ,

իսկ մնացած բնակչությունը գտնվել է ուղղակի վերահսկողությունից դուրս, շարունակել իր հին, «ուրարտական»-պետականից եականորեն տարբերվող մշակույթն ու կենսակերպը և իշխանությունների նկատմամբ հաճախ ունեցել է թշնամական կեցվածք:

Ուրարտական պետական մշակույթին դժվար է միարժեքորեն ինչ-որ էթնիկական հիմքեր վերագրել. ակնհայտ է, որ այն ստեղծվել է ասորեստանյանի հզոր ազդեցությամբ: Ուրարտուն պետական իշխանության մի կառույց էր, ուր չկար կենտրոնի և ծայրամասի, պաշտոնական-արքունական և ենթակա շրջանների մշակութային ընդհանրություն: Այս խնդիրների համակողմանի քննարկումը թույլ է տվել կարծիք հայտնել, որ պետությունը, կրոնը, գիրը և պետության մյուս ատրիբուտները ստեղծողները, հավանաբար, եղել են չափազանց փոքրաթիվ՝ ուրարտերեն խոսող մի հանրույթ կազմել է կայսրության կորիզը, իսկ հիմնական բնակչությունը բաղկացած է եղել այլ տարրերից¹:

Ուրարտուն կայսրություն էր: Սա պետք է պնդել ամենայն որոշակիությամբ (այդ տերմինն օգտագործում են բոլոր առաջատար մասնագետները): Յայկական լեռնաշխարհի նման լայնատարած լեռնային երկիրը մինչև մեկ պետության մեջ միավորվելը չէր կարող լեզվական առումով միաստարդ լինել: Երկրի արձանագրությունների լեզուն ուրարտերենն է. հնարավոր է, որ եղել են նաև ուրարտերենին ազգակից բարբառներ: Լեռնաշխարհի հարավում խոսվել է, թերևս, խուռերեն և սեմական լեզուներով՝ ասուլերեն և արամերեն: Յայերենի ներկայությունն Ուրարտուուն ներկայունս կասկած չի հարուցում: Բոլոր իրազեկ ուսումնասիրողների կարծիքով, ուրարտերենուն կան հայկական փոխառություններ, այսինքն՝ ուրարտերենն ու հայերենը շիման մեջ են գտնվել իրար հետ մինչև Ուրարտուի ձևավորումը²: Ուրարտուուն և հարակից տարածքնե-

¹ P.Zimansky, Urartian Material Culture as State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire. Bulletin of American School of Research 299-300 (1995), տես և նույնի՝ Archaeological Inquiries into Ethno-Linguistic Diversity in Urartu. Greater Anatolia and the Indo-Hittite Language Family. Washington, 2001, P.Zimansky, E.C.Stone, Recent Excavations at Urartian Fortress of Ayanis.- Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and Beyond, Los Angeles, 2003. Որպես շատ փոքրաբանակ վերնախավի կողմից ստեղծված մեջ ու կենտրոնացված պետության օրինակ Զիմանսկի թերում է հնկաների կայսրությունը:

² Ուրարտերենուն և Ուրարտուի անվանաբանության մեջ բազմաթիվ հայկական տարրերի վերաբերյալ տես հատկապես Գ.Զահոնյան, Ուրարտերենը և հայերենը. Ուրարտու-Յայաստան, Երևան, 1988, էջ 148-161, և նույն հեղինակի այլ աշխատություններն այդ թեմայով, I.M.Diakonoff, First Evidence of the Proto-Armenian Language in Eastern Anatolia. Annual of Armenian Linguistics, V.13, 1992, p. 52-53:

Ընդունված տեսակետների իներցիայով չկաշկանդված գիտական մոտեցում որդեգրելու դեպքում կարելի է կարծել, որ այդ «ուրարտախոս» զանգվածը կարող էր լինել ոչ միայն փոքրաթիվ, այլև, ինչպես շատ այլ էթնիկական հանրույթներ, ձևավորված լինել բարդ գործնթացների արդյունքում:

2. Ուրարտական դիցարանի երրորդ՝ արևի աստծու անունն էր Շiuini (S̄iwini), որը պիտի փոխառված լիներ խեթերենին մոտ մի լեզվից, հմնտ. խեթ. šiu- (šiuni, šiuappni, šiuna-) «աստված», հնում՝ «արևի աստված», հմնտ. šiuatt- «ցերեկ» < *dyeu-, լուսավոր երկնքի աստծու հնդեվորապական անունից: Խեթերենում արևի աստվածը հանդես է գալիս խաթերենից փոխառյալ լշտան- անունով, այդ պատճառով էլ ուրարտական դիցանունը կարող էր փոխառվել ոչ թե խեթերենից, այլ մերձավոր մի բարբառից²: Շիվինիի պաշտամունքի կենտրոնն էր մայրաքաղաք Վան-Տուշպան: Այս հիման վրա կարծիք է հայտնվել, որ Վանի շրջանը կարող էր լինել խեթական ցեղերի այն հին բնօրրանը, որտեղից նրանք հետագայում տեղաշարժվել են արևմուտք³:

Հայկական անվանաբանության մեջ Šiwini անվան հետ համադրելի են սիւ-/սեւ- հիմքով տեղանունները (և խեթական, և

¹ Լեռնաշխարհի արևմտութի «ուշխեթքական» պետությունների լեզուն եղել է անատոլիկական լուվերենը: Ուրարտուում հայկական, թրակյան և իրանական տարրերի վերաբերյալ տես՝ Գ.Զահորկյան, Յայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 434-435, 443-445, նույնի՝ Ուրարտերենը և հայերենը, էջ 153:

² I.M. Diakonoff, Hurrisch und urartäisch. München, 1971, S. 81. Ḫ. Ä. Üyēērīā. 1
İ aēi ḫ̄ ȳuō i aī ȳāāeāi ḫ̄yō a ȳāādōñēi i ȳcūēi c̄i aī eē e i ȳ aūō ȳāādōñēēō ȳāāeñ-
ȳāō. ȳāāai eē Äi n̄ō i ē. 5. ȳāāaāi , 1988, n̄. 172. Կ. Կվանովը ուրարտական դիցա-
նունը փոխառված է համարում նախագրային իշեթենից, տես Ա. Է. Էāārīā.
Ա i ȳō i eēēēē ȳcūēe. ȳāāai eā ȳcūēe i aēi e ȳcēe. 1., 1980, n̄. 131, 136: Մյուս
կողմից՝ այս դիցանունը համարվել է խորհական արկի աստված Śimigi-ի ուրա-
րտական զուգահեռ, տես J. Friedrich, Aus verschiedenen Keilschriftsprachen. 1-2.
Orientalia, IX (1940), S. 217-218. Ըստ Ի. Դյակոնովի, դա քացանվում է, քանի որ
խորհենում և ուրարտենում չկամ -m/-w- համապատասխանության դեպքի և
բնիկ լինելու դեպքում Śimina-ի փոխարեն կունենայինք Տիո: Որոշ ուսումնասի-
րողներ (Ս. Խաչիկյան, Ս. Սալվիմի) , առանց հատուկ փաստարկներ ներկայացնե-
լու Դյակոնովի առարկության դեմ, շարունակում են պաշտպանել Ֆրիդրիխի
տեսակետը, որը պետք է դիմով որպես խորհարտարտական ազգակցությունը
շշշտելու ձգտման մի դրսերում:

⁵ Å.Å. *Eäaáríá. Ózq. wžju.*, t̄q 136, Ö.Å.Äärí eððæéëcäá è Å.Å. *Eäaáríá. Eí aí áðóí í áé- nñéé yçúé è eí aí áðóí í áéóú. Óáééèñé, 1984, n. 896.*

Ուրարտական սեպագրում ս հնչյունը հաղորդվել է շով, իսկ հայերենում եւ և իւ Երկրաբառները հերթագայում են): Սրանցից առաջին հերթին նշենք Սևան ամրոցը Վանից 33կմ արևելք՝ վանեցիների հավատալիքներում արևը մի հրեղեն պատաճի է, որը քնում է Վանա լճի մեջ և ծագում Վանի արևելյան լեռներից¹: Սևան անունով մյուս ամրոցը գտնվում էր Գեղամա լճի նույնանուն կղզու վրա. հետագայում այդ անունը անցել է լճին: Սևանա լիճը գտնվում էր Սյունիք, հնում՝ *Սիւնիք/Սեւնիք* նահանգում, որի անունն անբաժանելի է թվում Սևանից² (Տիւնի, Տեւան և Սիւնիք անվանումների հարբերության համար հնմտ. խեթ. շիւնի, շիւանն ձևերը): Սյունիքի արևելյան հարևան Արցախ նահանգը կոչվել է *Փոքր Սիւնիք*, իսկ նեղ իմաստով Սյունիքը Ծղուկն էր, ներկայիս Սիսիանը:

Սյունիքը *արև/արեգ* արմատով անվանումների առավել խիտ կենտրոնացման մի շրջան է, հմնտ., օրինակ, Արևիք, Արևեաց տուն, Արևիս, Արևաբուլ, Արևիկ տեղանունները (սրանցից առաջին երեքը ցեղանվան տեսք ունեն՝ «արևյաններ»): Արև անձնանունը հայտնի է Սյունյաց տոհմում հինգերորդ դարից. նույնարմատ անձնանունների մեջ մասը (Արևիկ, Արևիս և այլն) և Սյունիքից է³: Ըստ այդմ, կարելի է կարծել, որ Սիւնիք < *Siw(i)niyā տեղանունը կապած է «արև, արևի աստված» նշանակության հետ:

Ուրարտական մի արձանագրության մեջ թվարկվում են Սևանա լճի արևելյան ափի, այսինքն՝ հետագա հայկական Արցախ նահանգի տարածքում գտնվող մի շարք երկրներ⁴: Դրանցից մեկն ընթերցվում է Pirua-ini-ի (առաջին նշանը վնասված է, և տեսականորեն հնարավոր է նաև Țurua-ini ընթերցումը, բայց մասնագետները նախապատվություն են տալիս առաջին ձևին)⁵: Այս ձևը ակնհայտ անատոլիական տեսք ունի: Pirua-ն խեթալուվական «ձիավոր աստվածն» էր: Մյուս անվանումներում բացահայտ անատոլիական հիմքեր չկան: Եթե այս ընթերցումը ճիշտ է, ապա պետք է կարծել, որ Արցախի նախառարտական դարաշրջանի բնակչության մեջ եղել է անատոլիական մի տարր: Չին բազում երկրնե-

¹ Ս. Քարությունյան, Յայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 44-45:

² Դ.Ալիշան, Սիսական, Վեմետիկ, 1893, էջ 6. հմնտ. Դ.Աձրի՛օ, Ած ձի է յի 1 օօ թրծե՛ էա՛ ձ. Ն՛ ձ. 1908, ն. 421-423, ի ծել. 4.

³ Տե՛ս հետևյալ բառարամներում՝ Թ.Խ. Քակորյան, Ս.Տելիք-Քախչյան, Յ.Խ. Քարսեղյան, Յայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Երևան, 1986. Դ.Ածառյան, Յայոց անձնանունների բառարան, հ.1, Երևան, 1942:

⁴ ԷՕԷՌ , №389.

⁵ ՕԵՌ , ն. 329, ի ծել ձ. 7.

րում, այդ թվում, հավանաբար Ուրարտուում, արևի սիմվոլն էր¹: Յիշենք, որ Արցախ/Փոքր Սյունիքը հայտնի էր իր ծիերով, իսկ Սյունիքը՝ իր մեծաքանակ այրուծիով (ըստ «Չորանամակի»՝ 19400):

Վանա և Սևանա լճերի շրջանների հին բնակչության էթնիկական պատկանելության մի կարևոր ցուցիչ կարող են լինել տեղի ենդեմիկ (միայն այդ լճերին բնորոշ) ծկների՝ վանա տառեխի և Սևանա հշխանի անվանումները: Եվ հատկանշական է, որ երկու բառերի համար էլ հավանական է անատոլիական ծագումը²:

Ուշբարելոնյան ականդրութում Ուրարտուն կոչվում է Uraštu: Այս ձևը, թերևս, պահպանվել է Ոշտունիք գավառի անվան մեջ, որը վաղ միջնադարում ընդգրկել է Վան-Տոսպի շրջանը³: Ըստ Խորենացու (Բ. թ) մի տեղեկության, Ոշտունի նախարարները Սյունյաց (Սիսական) տան մի հաստվածն են: Այս ծննդաբանությունը կարող է դիտվել որպես Ոշտունիքի և Սյունիքի հին բնակչության գոնե մի մասի էթնիկական կապերի արձագանք:

Ուրարտական տեքստերում երկիրը, ինչպես ասվեց, կոչվում է Bia(i)nili (կարդա V(y)ânele) անվանաձևով, bia- (vya-/va-) հիմքով, որին հավելվել են սեռականի և ցուցիչը, ու մասնիկը և լի հոգնակերտը⁴: Կարծում են, որ վերջինիս Bia(i)na հոլովաձևից է ծագում

¹ Ա. Յնայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 45:

² Տառեխը նոյնական է հուն. τάριχος-ին («աղած, չորացրած կամ ծխահարված ձուկ»): Վերջինս կարող է առնչվել թաղման մի տերմին՝ ταρχύω-ի հետ, որը ծագեցվում է անատոլիական անպրոպի աստծու Տարխ- անունից (ինաստոն այն է, որ մեռյալը աստվածային վերաբերմունքի է արժանանում և նումիացվում), տես P. Chantraine, Dictionnaire étymologique de la langue grecque. Paris, 1968-80, p. 1094, 1095, G. Nagy, Greek Mythology and Poetics. Ithaca, London, 1990, p. 131 ff., 139, n. 70, հնմտ. Յ. Մեծաղյան, Դայերեն արմատական բառարան. հ. 4, Երևան, 1979, էջ 377: Վերջին մանրանամն ըննության համաձայն, իշխան բարի արմատն անատոլիական է հնմտ. խեր. išha-, ešha- «տեր, իշխան», տես L. Շովիհաննիհյան, Դայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 224-225, որտեղ հիմնավորվում է բարի անատոլիական և մերժման նախկինում առավել ընդունված իրանական ստուգարանությունը (հետինակն, ի թիվս այլ փաստարկների, շեշտում է, որ իրանական բառավագքի /իշ-ն հայերենում արտացոլված է աշխ- ձևով, հնմտ. աշխարհ, աշխետ և մինչդեռ սրանք իշխով սկսվող միակ հին հայկական բառերն են): Դատկանշական է, որ որոշ խերական տեքստերում išha-ն առնչվում է սիս- արմատի՝ աստվածների և աստվածուիների, այդ թվում և արևի աստծու հետ (օրինակ, ԾՏՒ-ը išha-mi հանձանա հանեսնաš išhaš «արևի աստված, ին տեր, դատի արդար տեր», տես J. Pušvel, Hittite Etymological Dictionary: Trends in Linguistics. V. 1-2. Berlin, New York, Amsterdam, 1984, p. 385, 390): Այսիսով, վանա և Սևանա լճերի էնտեմիկ ծկների անվանումները ծագում են, հավանաբար, անատոլիական դիցարանական ակունքներից:

³ Տես, օրինակ, A.A. Լ է՛ Ծ ծ՛ անէ՛ է. Օձածօծ, Ածածած, 1944, ն. 31. Ա. Երեմյան, Դայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 79:

⁴ Լ. Է. Օձ-է՛ է. Օձածօծնէ՛ է օձածօծնէ՛ չշնէ՛. Օ. 2, Ածածած, 1985, ն. 38, 134:

Տուշպայի հետազա Վաճ անվանումը: Բիայնիլին, հավանաբար, ներկայացրել է պետության կենտրոնական՝ Վաճ-Տուշպայի շրջանը, որը տեքստերում հակառակում է թշնամական երկրներին: Ըստ Գ.Դափանցյանի, Բիայնիլի-Վաճի հիմքի հետ է կապված Սյունիքի Վայոց ծոր տեղանունը¹: Վերջինս սահմանակից էր Արցախի Վայկունիք զավարին, որը նույնպես կարող է կապվել սեպագիր bia- (> va-) ցեղանվան հետ, ցեղանուններին բնորոշ հկ և ունի ածանցներով:

Մի կարծիքի համաձայն, Bia-nili-ն ուրարտական ցեղերի կամ նրանց հիմնական ճյուղերից մեկի տեղական անվանումն է², բայց դա սուսկ ենթադրություն է: Կարելի է կարծել, որ սեպագիր եթեղանունը գալիս է նախառարտական՝ անատոլիական ենթաշերտից: Այսպիսով, Վաճից մինչև Սևան ընկած տարածքներում մինչուրարտական ժամանակներում եղել է, հավանաբար, անտոլիական, խեթերին ազգակից մի տարր:

3. Ուրարտուի կենտրոնական տարածքներում և հատկապես Վաճի շրջանում՝ Ուրարտուի սրտում, ողջ մ.թ.ա. II հազարամյակի ընթացքում բնակավայրերի հնագիտական վկայություններ չեն արձանագրվում (կան միայն գերեզմանատեղիներ): Այս տարածքները, մինչև մ.թ.ա. IX դ. բնութագրվում են, այսպիսով, նստակյաց բնակչության համարյա իսպառ բացակայությամբ (ենթադրվում է, որ տեղի բնակիչների նշանակալի մասը եղել են վրանաբնակ քոչվորներ, որոնք սեղուային տեղաշարժեր են կատարել իրենց անասունների հետ. իշխող վերնախավի մի մասը ապրել է փոքր ամրոցներում, մյուսը՝ վարել կիսաքրչվոր կյանք): Եղած աղքատիկ հնագիտական նյութը կապեր է դրսենորում Անդրկովկասի հետ³:

¹ Ա.Ա.Էսիան օյց. Էնծի ծեռ քառ անուններ անուններ և անուններ անուններ, 1975, ն. 129-130. Bia- ցեղանվանական հիմքին նույնական է թվում Biana տեղանունը Յայկական լեռնաշխարհի հյուսիսում (սրա տեղայնացման վերաբերյալ տես Դ.Ա.Ածոնի էջը՝ Ծովական է ունենալ անունների հետ. իշխող վերնախավի մի մասը ապրել է փոքր ամրոցներում, մյուսը՝ վարել կիսաքրչվոր կյանք): Եղած աղքատիկ հնագիտական նյութը կապեր է դրսենորում Անդրկովկասի հետ³:

² Ա.Ա.Ի անունները պահպանված են անուններում (այսուհետև՝ ՕԵՒ). 1., 1960, ն. 423. Բիայնիլի տերմինի նշանակության վերաբերյալ տես և Ա.Ա.Ի է՛՛ Ծանոթագիրը. Առ առ առ առ առ առ առ, 1985, ն. 56):

³ V. Sevin. The Origins of the Urartians in the Light of the Van/Karagündüz Excavations. Anatolian Studies, 1999, p. 163. Նույն՝ The Early Iron Age in the Van Region. Archaeology in the Borderlands. Los Angeles, 2003, p. 196. Նույն՝ Pastoral Tribes and Early Settlements of the Van Region. Ancient Near Eastern Studies. Supplement 12. A View From the Highlands. Archaeological Studies in Honour of Charles Burney. Peeters 2004, p. 188. սեպ և P. Zimansky. Archaeological Inquiries into Ethno-Linguistic Diversity in Urartu, p. 18, 24:

Այդ դեպքում, որտեղից է ծագում Վանի շրջանի ուրարտական դարաշրջանի բնակչությունը:

Մարտսի նախնական ձևերն են համարվում ասորեստանյան աղբյուրների *Uruat̪ri/u-* (մ.թ.ա. XII դ.) և *Urat̪ri-* (մ.թ.ա. X դ.) անվանումները, տեղայնացած Յայկական լեռնաշխարհի ծայր հարավում՝ Նիբուր կամ Կորդվաց Արարատ լեռան (Ներկայումս՝ Ձուղի) շրջանում և հարակից տարածքներում¹: Ուրարտական դիցարանի առաջին երկու աստվածների՝ Խալդիի և Թեյշեբայի պաշտամունքի կենտրոնները գտնվում էին համապատասխանաբար Արդինիում (ասուր. Մուժածիր) և Կումենուում (Կումմե): Արդինին գտնվել է Ուրմիա լճից հարավ-արևմուտք, ներկայիս Ռովանդուզի, իսկ Կումենուն՝ Նիբուր լեռան շրջաններում: Այս երկու երկրներն ել գտնվում են Յայկական լեռնաշխարհի ծայր հարավում և դուրս են եղել բուն Ուրարտուի տարածքներից:

Յնագույն խեթական դիցարանը գլխավորում էր արևի աստվածը, մինչդեռ Ուրարտուում Շիվինին գերագույն եռյակի երրորդ աստվածն էր: Դիցարանի այս կառույցը հիմք է տալիս ենթադրելու, որ Շիվինին մեծ աստվածն էր Վանի շրջանի հին խեթալեզու բնիկների, որոնց տիրել էին հարավից՝ Արդինիից և Կումենուից եկած նվաճողները:

Ուրարտական դիցարանը հայտնի է իշպուինի և Մինուա արքաների «Միերի դռան» մեծ արձանագրությունից (մ.թ.ա. I դ. վերջ), ուր ներկայացված են մի քանի տասնյակ աստված, նրանց հիերարխիան, յուրաքանչյուրին մատուցվող զոհերի կարգը, թիվը և ժամանակը: Դիցարանի ամենաբնորոշ առանձնահատկությունը նրա վառ արտահայտված եռամաս կառույցն է: Այն գլխավորում են գերագույն աստված Խալդին, ամայրոպի ու փոթորկի աստված Թեյշեբան և արևի աստված Շիվինին: Այս եռյակը համադրելի է հատկապես հնդեվրոպական «եռամաս գաղափարախոսության» և եռամաս դիցարանների հետ²: Ընդ որում, եռաֆունկցիոնալ ստորաբաժանման սկզբունքը բնորոշ չէ բոլոր հնդեվրոպական դիցարաններին. օրինակ, հին անատոլիական՝ խեթալուվական ավանդույթում այն դժվար է բացահայտել: Խուրիականներից եապես տարբեր, այդքան ընդարձակ ու մանրամասնորեն կանոնակարգ-

¹ Ի. Ա. Ածօթիքի Ածաթի աշխատանքները (Երևան, 1970, էջ. 17).

² Ա. Պետրոսյան, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը. Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՅ), 2002, №2, նույնի՝ Ուրարտա-հնդեվրոպական և հայկական առնչությունների շուրջ (այս ժողովածուում):

ված կառույցը, ակնհայտորեն, ոչ թե խուռառլարտական մի ցեղի համայնքային պարզ կրոնի արտահայտություն է, այլ պետականութեն ուղղորդված որոշակի աստվածաբանական մտքի գործունեության արդյունք¹: Այն ընդգրկել է լեռնաշխարհի տարբեր շրջանների աստվածներ և քաղաքական պատվերով ձևավորված պետական՝ կայսերական կրոնի մի դրսնորում է:

Գերագույն աստված Խալդին սկսում է հիշվել Իշպուհինի արքայի արձանագրություններում, որի քաղաքական կամքով էլ, հավանաբար, ներդրվել և պետության գերագույն աստծու կարգավիճակ է ստացել այդ պաշտամունքը²: Խալդի, Թեյշեբա, Շիվինի եռյակով առաջնորդվող կայսերական կանոնակարգված դիցարանն էլ ձևավորվել և համակարգվել է հշպուհինի և Մինուա արքաների քաղաքական կամքով: Կարծի է կարծել, որ աստվածների աստիճանակարգը արտացոլումն է ոչ միայն որոշակի դիցարանական պատկերացումների, այլև այդ աստվածների պաշտամունքների կենտրոնների էթնիկական խմբերի՝ կայսրության մեջ ունեցած դերի: Եթե այդպես է, Ուրարտուի բնակչության մեջ առավել բարձր դիրք պիտի գրավեին ծագումով Արդինիի, ապա՝ Կումենուի և նոր միայն Տուշպայի հետ կապված խնբերը: Պետք է կարծել, որ Ուրարտուի արքաները և նրանց քրմությունը ծագումով կապված են եղել Արդինի-Մուծածիրի հետ և ունեցել են հնդեվրոպական (ոչ անատոլիական) ծագում:

4. Ուրարտուի էթնիկական իրադրության վերաբերյալ մենք կարող ենք դատողություններ անել երկրի անվանաբանության հիման վրա: Մարդկանց էթնալեզվական պատկանելության ամենաեական կրօվանը կարող է լինել նրանց անունների՝ որուել լեզվին պատկանելը: Մինչաքեմենյան Դին Արևելքում կրոնական պաշտամունքները եղել են բացառապես համայնքային՝ սահմանափակված տվյալ համայնքի տարածքում, և պաշտամունքն էլ իրականացվել է համայնքի լեզվով: Չեն եղել տարբեր էթնոսներ ընդգրկող մեծ կրոններ և դրանց համապատասխան դավանաբանական անձնանուններ: Անձնանունները սովորաբար որոշակի իմաստ են

¹ Ուրարտուի կրոնի՝ պետական լինելու վերաբերյալ տես M. Salvini, *Le panthéon de l'Urartu et le fondement de l'état. Studi epigrafici e linguistici sul Vicino oriente antico* 6 (1989), p. 82, *Անապակյան, նշվ. աշխ.:*

² M. Salvini, *La formation de l'état urartéen. Hethitica* 8 (1987), p. 405, նույնի՝ *Le panthéon de l'Urartu et le fondement de l'état*, p. 83, 85. նույնի՝ *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt, 1995, S. 39.

ունեցել մարդկանց մայրենի լեզվում. բացառության կարգով հանդիպում են հին, ենթաշերտային լեզվի անուններ¹:

Ուրարտուի իշխող արքայաստոհմը, հավանաբար, ծագում էր Խալդիի պաշտամունքի կենտրոնի շրջանից (այլ կերպ անբացատրելի կլիներ պետության տարածքից դուրս գտնվող այդ քաղաքի աստծու գերազույն հռչակումը)²: Արքայաստոհմի անունները չեն ստուգաբանվում ուրարտենուվ և գուգահեռներ չունեն այլ հինարևելյան ավանդույթներում: Նրանց մի մասը կրկնվում է մի քանի անգամ (չորս Սարդուրի, Երկու Արգիշթի, չորս Ռուսա): Ընդ որում, Rusa անունն ակնհայտորեն ուրարտական չէ՝ ուրարտենում, ինչպես և խուռենում, հայերենում, խեթենում և հունարենում, բարը չի կարող սկսվել r-ով³: Երկու անուններ պարզորոշ գուգահեռներ ունեն բալկանյան անվանաբանության մեջ⁴:

Minusa-ն (սեպագիր Meίνυα/Menusa) ուղղակի նույնական է հունական Μινύας-ին, մինյուացիների (արգոնավորդներ) ցեղի էպոնիմին⁵ (անվան հնագույն հնչողությունն է Minyas, որը դասական հունարենում դարձել է Minūas, ապա, նոր հունարենում՝ Minias): Ցեղանունների և համապատասխանաբար՝ էպոնիմների ամենահին և ամենահաճախ հանդիպող նշանակությունն է «մարդ»⁶. Ըստ այդմ, հնարավոր է մեկնաբանել հնդեվրոպական *mῆνος- «մարդ» տերմինով (հնարավոր է, իբրև «մտածող», հմնտ. *men- «մտածել»)⁷:

¹ E.I. Անյեր ՀՀ թ. Դաձանութիւն ծեյ..., թ. 242, Մ. Ծեծն. Օւշ ս յծն է- անուն է անձանութիւն ծեյ... թ. 136. Մույմի Օւշ ս յծն է- անուն է անձանութիւն ծեյ... թ. 15.

² Այս մասին տես՝ A.A. Լ ծեռածութեան է Անձնութեան է 1954, թ. 368:

³ Այդ անունն, այսպիսով, հնարավոր չէր անխարթ արտասանել ուրարտենում. ասորեստանցիները, որոնք լսել էին այն բանավոր ուրարտեն խոսքում, տառադարձել են որպես Ursia, տես՝ I. E. Օձաւութիւն օծածութեան է օծածութեան չշնորհած պատճենը՝ անձանութիւն ծեյ... թ. 1. Անձնութեան է անձանութիւն ծեյ... թ. 77:

⁴ Ուրարտական անունների մի շաբաթ արևմտյան գուգահեռներ (ոչ բոլորն ընդունելի) առաջարկել են Պ.Կոբեմերը և Ո.Այսերը, տես՝ K.F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt. B. 2, H. 2. Berlin, Leipzig, 1931, S. 902-903.

⁵ Ա. Պետրոսյան, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատերսում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997, էջ 96-100:

⁶ A.A. Լ է անձնութիւն ծեյ... Յօն ի է անձնութիւն ծեյ... թ. 1., 1970, թ. 15-16.

⁷ Μινύա-ի հնդեվրոպական բնույթի մասին կարող է վկայել այն հանգամանքը, որ հունական առասպելաբանության մեջ բնիկ հնդեվրոպական համարվող հազվագյուտ նմուշներից նեկան այդ արքայի և նրա նախորդների վեան է (Պավսանիաս IX. 34 հսն. տես՝ F. Vian, La triade des rois d'Orchomene: Étéocles, Phlégyas, Minyas. Hommages à Georges Dumézil, Brussels 1960): Հնդեվրոպական «մարդ» տերմինը վերականգնում էին որպես *manu-, բայց ներկայումս այն ներկայացվում է որպես *mῆνος-, որտեղ Վ-ն չճշգրտված ծայնավոր է, տես՝ J.P. Mallory, D.Q. Adams, Encyclopedia of Indo-European Culture, London, Chicago, 1997, p. 366-367. Այս արմատով է կոչվում առաջին մարդը որոշ հնդեվրոպական առասպելներում, որի հիման վրա և վերականգնվում է հնդեվրոպական տիեզերածնության և մարդա-

Argišt-i համար հմնտ. 'Արցոտիկ «սպիտակ, փայլուն» և 'Արցոտիկ «Արագ», իբրև քամու մակդիր կամ առասպելաբանական անվանում (ուրարտ. Շ-ն համապատասխանում է հայ. սողին¹), հմնտ. հնդեվրոպական *Harg'- «փայլուն», «արագ»²: 'Արցոտիկ-ն Եսրիլոսի «Պարսիկներուն» հիշվում է որպես պարսկական անուն, բայց այն պարսկերենով չի ստուգաբանվում և կարող է վկայել պարսիկների և Ուրարտուի իշխող վերնախավի հին կապերի մասին³:

Հնդեվրոպական ստուգաբանություններ կարող են առաջարկել արքայատոհմի նաև մյուս անունների համար:

Aramu. համապատասխանում է հայոց Արամ նահապետի անվանը: Համեմատական քննությունը ցույց է տալիս, որ Վերջինս ծագում է հնդեվրոպական *rēmo- «քուխ, սև» արմատից⁴:

Sarduri. կարող է ներկայացվել որպես Sardorə (Նկատենք, որ ուրարտ. s-ի հնչումը պարզ չէ. Վերջին վանկը հնչել է թույլ, որպես Շ, իսկ σ-ն սեպագրում հալորդվել է ու-ով): Կապված է ուրարտական

ծնության առասպելը՝ տես *B.Lincoln, Priests, Warriors, and Cattle. A Study in the Ecology of Religion.* Berkeley, Los Angeles, 1981, p. 69 ff. Հնդկական առասպելաբանության մեջ Մանուն առաջին մարդն է, որ փրկվում է ջրհեղեղից: Դատկանշական է, որ Միննաց-ը հանդիս է օգլիս որպես երկրանուն ջրհեղեղի լեռան, այսինքն՝ Նիբուր/Չուղի դադի շրջանում (Յովսեպոս Փլավիսո, Հրեական հնավտություն I.3.6, ըստ Նիկողայոս Դամակալուց): Սա հաստատում է Միննա-ի և Միննաց-ի մեր ստուգաբանությունը և ուրարտական վերնախավի կապը Նիբուր լեռան շրջանի հետ: Պ.Կրեչմերը ուրարտ. Minua-ն համեմատել է Կրետեի առասպելական արքա Մինոսի անվան հետ (հղում՝ ըստ Ա.Ա.Ռ է՛ օձի հնէեւ. Օձձձօ, թ. 47), որը, նույնացն, չնայած որոշ հնչյունաբանական դժվարություններին, հնդեվրոպական մարդաճնության առասպելի համատեքստում լավագույնս համապատասխանում է *manu-ին, տես *B.Lincoln, Death, War, and Sacrifice.* Chicago, London, 1991, p. 40, 47, n.69. Այս հարցերի շուրջ տես Ա.Ա.Ռ ձձձի յց ։ Ած յն է և է է անուն հանդիշի հմտեվոյական արմատին՝ հ.-ե. *menu- «փորր», տես Գ.Զահուկյան, Հայկական շերտն ուրարտական դիցարանում. -ՊԲՀ, 1986, №1, էջ 55):

¹ Գ.Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 430-431:

² Այս ստուգաբանությունն առաջարկել է Ռ.Այսլերը. հղվում է ըստ K.F.Lehmann-Haupt, Armenien einst und jetzt. B. 2, H. 2. Berlin, Leipzig, 1931, S. 902. հմնտ. էջ 684, 901. Մինուա և Արգիշթի անունների վերաբերյալ տես Ա.Պետրոսյան, Արամի առասպելը..., էջ 95-102:

³ Յ.Ա.Ածա՛ն ձն անեւ. Տակ ի յց էնծ ծեց էնծ ու էնծ ան ։ Ած ան ան ան ։ 1 ., 1970, թ. 308, 314:

⁴ Ա.Պետրոսյան, Արամի առասպելը..., էջ 33-34. Արամուի համար առաջարկված է նաև «արամեացի» մեկնաբանությունը, տես M.N.van Loon, Urartian Art. Istanbul, 1966, p. 7, n. 24. M.Salvini, La formation de l'état urartéen, p. 399-400, նույնի Գeschichte und Kultur der Urartäer, 1995, S. 26, որը, կարծում ենք, հավանական չէ, տես Ա.Ա.Ռ ձձձի յց։ Աշխ. աշխ., էջ 79:

Սարդ ղիցուհու անվան հետ¹: Ղնարավոր է համարդել ղիցանուն + *dōro- հնդեվրոպական անձնանվանական կաղապարին՝ հմտ. հուն. Σαρδοῦπηροս, Αրտեմիդորոս, հայ. Աստվածատուր (Sardodōro-> Sardōr, կրկնվող վանկի սղմանը և վերջին վանկի թուլացմանը):

լշրւունի (գուցե և Խոսքա). հմնտ. ուրարտ. իշրւուն «Երջանկություն (?)». ըստ Գ.Զահեռլյանի, համադրելի է հնդեվրոպական ձևերի հետ (հնդեվրոպական *spōi-, հմնտ. լատ. pro-sperus «բարեհաջող, երջանիկ»), ոռւս. ó-փ' ձօ «հաջողություն»)². -ո- տարրով ածանցը բնորոշ է և ուրարտական, և հնդեվրոպական անվանաբանությանը:

Rusa. Արգիշտիի և Արամուի «գունային» անունների կողքին բնական է թվում Ռ.Այսլերի համադրությունը հուն.՝ ‘Պօնսաց «կարմիր» ձևին³ (սկզ, սպիտակը և կարմիրը վաղնջական հասարակություններում երեք էական գույններն են): Վերջինս բնիկ հունարեն չէ, բայց ի վերջո հանգում է հնդեվրոպական արմատի. ըստ այդմ, Ուլսայի համար կարելի է առաջարկել *rudh-�ա ածանցյալ նախաձևը (հնդեվրոպական *reudh- «կարմիր»). Իիշենք, որ ուրարտ. սեպագիր Տ-ի հնչումը պարզ չէ⁴:

Erimena. Վկայված է արդեն միջինասորեստանյան ժամանակներից⁵: Յանադրվել է արմեն ցեղանվան հետ⁶. հայկական ավանդական անվանացանկում առավել նման է Արամանեակին: Ռ.Այսլերը համեմատել է հուն.՝ ‘Εριμένης «Երկար մնացող» (Langbleibenden) բառի հետ⁷:

Սրանով ուրարտական արքայացանկը սպառվում է (հայտնի է արքայատոհմի և վերնախավի ևս մի քանի անուն, բայց սահմանափակվում ենք միայն թագադրված արքաների անուններով): Այս շարքում Արամու և Երիմենա անուններն առանձնահատուկ են: Արամինն, ինչպես ասվեց, նույնական է առասպելական Արամին,

¹ Այս անվան մասին տես *Է. Հ. Անյերի հայության պատմությունը*՝ 1958, էջ 38, 50, ՕԵՒ, էջ 440. *M.N.van Loon*, Եղվ. աշխ., թ. 8, էջ 29:

² Á.Á.Áæðóðeyr. Óðaðóðnæðe è eí aí áðaði i áeññéa ýcúêe. Áðåâàí, 1963, n. 28, 100.

³ K.F. Lehmann-Haupt, Աշվ. աշխ., էջ 902.

⁴ Միայն մտահյեցողական է ուրարտ. Rusa-ի իրանական մէկնաբանությունը որպես րօշան- «լուսավոր», իբրև վերջին -ո-ի որպես ուրարտական հոդ գիտակցմամբ և անկնամբ, տե՛ս Գ. Զահորեցյան, Յայոց լեզվի պատմություն, էջ 435:

⁵ Å. Ödåéääl e. Ii áuå ääil iuå tå i öi i oääl eyö nööääi äänneöeéenëti åi öäoññöåå n näääädöi üi e è näääädöi -çäi ääil üi e nööääi åi e.- Ådäääi eé Äi nööti e 2, Ådäääi, 1976, n. 87-88.

⁶ Տես, օրինակ, Գ. Զահորյան, Յայց լեզվի պատմություն, էջ 441:

Հղ. ըստ K. F. Lehmann-Haupt նշկ. աշխ., էջ 902, տե՛ս և էջ 684:

որի հետ է կապվում հայերի արմեն ցեղանունը (Խորենացի, Ա. ԺԲ): Ըստ մի կարծիքի, Արամուից հետո դինաստիան փոխվել է: Երիմենան էլ Ուրարտուի անկման դարաշրջանի անուն է և, թերևս, կապված չէ հին դինաստիայի հետ:

Այս անձնանունների համար, այսպիսով, հավանական է հնդեվրոպական՝ թերևս հնաբալկանյան, հունարենին, մակեդոներենին ու փոյուգերենին մերձավոր, «թրակափոյուգական» ծագումը (Ներկայումս այս տերմինը չի կիրառվում, քանի որ պարզ չէ թրակերենի և փոյուգերենի մերձավորության աստիճանը): Սարդուրի և Ի-ի հայրանունն է Լուտիրի, որը մեկնաբանվում է խուռառւրատական հիմքերով՝ ուրարտ. Խոս «կին» + խուռ. իրի «տեր»: Ըստ Ն.Աղոնցի, Լուտիրի-ն Արամուի մականունն էր, որն ինաստով նույնական է Ռուսա և Ի-ի Սամիրի մականվանը՝ ուրարտ. սաւ(ան) «կին» + իրի¹: Հնարավոր է հետևյալ զուգադրությունը: Խուռիհական Միտաննի թագավորությունում բոլոր հայտնի արքաները կրել են հնդարիհական գահանուններ: Բայց գոնե մեկ արքա ունեցել է նաև խուռիհական անուն (խուռիհական են և երկու արքայադրուստրերի անուններ): Դա բացատրվում է արքայատոհմի հնդարիհական ծագմամբ: Արքաները կարող էին ունենալ խուռիհական անձնանուններ, բայց գահանունները միայն էին դինաստիական էին²: Նորիսեթրական արքաները և ունենում էին խուռիհական անձնանուններ և խեթական գահանուններ: Նման մի սովորույթ կարող էր լինել և Ուրարտուում, որը ցույց է տալիս իշխող կամ գոնե նախկին արքայատոհմի ոչ ուրարտականությունը:

5. Արդեն վաղուց նշվել է լեզվական առումով բալկանյան տարրի հավանական ներկայությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ Հայասայում և մերձակայքում մ.թ.ա. Երկրորդ հազարամյակի կեսերին³: Հայասայի առաջնորդների և ար-

¹ Ա.Աղբյուն, Քայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 194, տես և ԷՕԵՌ, հ. 485, 491: Այս ստուգաքանություններն առաջարկել է Պ.Կրեչմերը, տես՝ K. Lehmann-Haupt, Op. cit., S. 901: Կրեչմերն այդ անունները նեկանաբանում է որպես «կանանց տեր», իսկ Աղբյունը՝ «աստվածուհու հովանավորյալ»: Քետարորդի է, որ այդ խորառությունը կան ձևակերպությունները պահպանության մեջ:

² Տես, օրինակ, Ե.Դ. Այստեղի հաճախակի պատճենը՝ պատճենագույնությունը:

Ե.Դ. Այստեղի հաճախակի պատճենը՝ պատճենագույնությունը:

3 Տես հասկապես Գ.Զահերկյան, Քայերնը և ի հմտելով պահանջման իր լեզուները, Երևան, 1970, էջ 79-81. նույնի Յալոյ լեզվի պատմություն, էջ 338-339. Ա.Պետրոսյան

քաների անուններից երկուսի լավագույն զուգահեռները Բալկան-ներից են՝ մակեդոնա-փոյուգական ավանդույթից:

Midaš/ Mitaš. Դայասայի և մերձակա տարածքներում խեթերի դեմ ապստամբած մի առաջնորդի անունն է (մ.թ.ա. XVII. վերջ)¹: Նույնական է Փոյուգիայի արքա Միդասի անվանը (մ.թ.ա. VIII-ի.):

Karanniš (ավելի հազվադեպ կարդում են նաև Lanniš). համադրելի է Մակեդոնիայի արքա Կάրանօչ-ի անվանը (հնմտ. մակեդ. կόραννος «արքա», հուն. κάρανος «առաջնորդ», հնդեվրոպական ստուգաբանությամբ)²: Ըստ լեզենդի, Միդասը բրիգների արքան էր Մակեդոնիայում, որն իր ցեղակիցներով անցել էր Փոքր Ասիա և հիմնել Փոյուգիան: Նրան դուրս էր քշել Կարանոսը և հիմք դրել այն դիճաստիային, որի ներկայացուցիչն էր Ալեքսանդր Մակեդոնացին (Քերողոտոս, VII.73, Պլուտարքոս, «Ալեքսանդր» II. Յուստինոս VII.1.11)³:

Գ.Զահուկյանը բերում է հայասա-մակեդոնական նաև այլ անվանաբանական զուգահեռներ՝ Hugganaš – Սսագա, Gabildiyiš – Կեթելինօս և Կեթելօս (անձնանուններ), Barraya – Եր(թ)օւա, Halimana – Almana, Arniya – ’Արնիստա (տեղանուններ). Կան և մի շարք ակնառու հայասա-թրակյան զուգահեռներ⁴:

Այս հոդվածի նպատակներից դուրս է քննարկել և վերլուծել նաև Դայասայի անվանաբանությունը, որը շատ ավելի թերի է հայտնի, քան Ուրարտուինը: Բայց հայասական և մակեդոնա-փոյուգական անձնանունների այս նույնականությունը հեշտ է բացատրել այդ երկրների իշխողների լեզվական մերձավոր ազգակցությամբ: Ընդ որում, Մակեդոնիայի առասպելական արքաները, զարմանալիորեն, թվագրվում են շատ դարեր ավելի ուշ, քան Դայասայի իրական դեմքերը: Դատկանշական է, որ արևմտափոքր-

սյան, «Վրկելյան մուշկերի» երնիկական պատկանելության խնդիրը.- Հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Դայաստանի Դանրապետությունում 1989-1990թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. գեկուցումների թեզիսներ, Երևան, 1991, էջ 22-23. Ա. Դ ձեռնություններ. նշվ. աշխ., էջ 150-158, 163-168:

Այս ապստամբության թվագրության վերաբերյալ տե՛ս Ա. Թոսյան, Խեթական պետությունը և Դայական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա. XV դարում, ՊԲՀ, 2000, №3, էջ №161-164:

² P.Chantraine. Dictionnaire étymologique de la langue grecque. Paris, 1968-80, p. 496.

³ Այս անունների վերաբերյալ ավելի մանրանասն տե՛ս Ա. Պետրոսյան, Արամի առասպելը..., էջ 82-86. Ա. Ա. Դ ձեռնություններ. նշվ. աշխ., էջ 165, ի ծեւ . 534:

⁴ Գ.Զահուկյան, Դայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 43, 73-81: Դեղնակի հետագա աշխատություններում նշվում է, որ Gabildiyiš-ի վավերականությունը կասկածելի:

ասիական Լյուտիա պետության լեզենդար պատմության մեջ ևս կրկնվում են Հայասայի և խեթական կայսրության հակադրության պատմական անունները և դրվագները¹: Ըստ այդմ, հնարավոր են նոր, հետաքրքիր ենթադրություններ: Արդյո՞ք Մակեդոնիայի լեզենդար պատմության նշված դրվագները Հայասայի պատմական դեպքերի առասպելականացած հիշողություններ չեն: Դա հնարավոր կլիներ, եթե Փոյուգիայում էական դեր կատարեր արևելյան (ծագումով՝ Հայասայից) մի տարր, որի դիմաստիական վեաը հունական ավանդություն տեղափոխվել է փոյուգացինների արևելյան՝ բալկանյան նախնիների վրա:

Հայկական լեռնաշխարհի հյուսիսում և հյուսիս-արևելքում, ըստ Ստրաբոնի, հնում եղել են թրակյան ցեղեր (XII.5.2, XI.14.14): Արդեն ուրարտական դարաշրջանից այստեղ ի հայտ են գալիս հավանական բալկանյան անվանումներ²: Հատկանշական է, որ Հայասայի հնագիտությունը (այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջանների ուշբրոնզեդարյան նյութերը) կապեղ է դրսնորում ներկայիս Հայաստանի Հանրապետության և Վրաստանի նյութի հետ, որի հիմնան վրա կարծիք է հայտնվել, որ Հայասայի բնակչությունը մասամբ ծագում էր «Անդրկովկասից»³:

Լեռնաշխարհի հարավում բալկանյան կապերով էթնիկական տարրն առաջին անգամ հիշվում է մ.թ.ա. XII-ի. ասորեստանյան աղբյուրներում: Թիգլաթպալասար I-ը (մ.թ.ա. 1116-1090թթ.) պատմում է, որ իր գահակալման տարում 20000 մուշքեր, իրենց հինգ արքաներով, որոնք իսկուն տարի առաջ նվաճել էին Ալզի (հայ. Աղձնիք) և Պուրուլումզի երկրները, գրավիւմ են Կաղմուխի երկիրը (Նիբուր/Զուլի լեռան արևմուտքում): Արքան պարտության է մատնում մուշքերի 12000-անոց զորքը, մնացածին՝ տեղահանում և վերաբնակեցնում, իսկ մուշքերի երկիրը՝ միացնում Ասորեստանին: Այդ ընթացքում 4000 կաշկացիներ (ուրիշ անունով՝ արեշլացիներ) և ուրումացիներ՝ «Խաքե (խեթական) երկրի անհանգիստ/անհնազանդ զորքեր», որոնք գրավել էին Սուբարտուի (միև-

¹ A.A. Շահումյան. Աշխարհագոյքը. Եջմ. 156-163.

² Տե՛ս, օրինակ, Մ.Երեմյան, Ն.Մարգ և VII դարի հայոց «Աշխարհացոյք»-ը. Մարգ և հայագիտության հարցերը, Երևան, 1968, տե՛ս և Մ.Պետրոսյան, Թրակակիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում. ՊԲՀ, 1977, №1 և նույն հեղինակի այլ աշխատություններն այդ թեմայով:

³ J. Yakar, Beyond the Eastern Borders of the Hittite Empire: An Archaeological Assessment. Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp. Ankara 1992, p. 514.

նույն երկրամասի) քաղաքները, առանց կրկի հպատակվում են արքային¹:

Պատմական Ծոփի և հարակից տարածքներում վաղ երկաթի դարի սկզբում (մ.թ.ա. XII դ.) ի հայտ է գալիս մեծ քանակությամբ նոր, տեղականից էապես տարբեր «անդրկովկասյան» տիպի խեցեղեն, նույնական նախորդ դարաշրջանի՝ ուշ բրոնզի վերջին փուլերի ներկայիս Յայաստանի Յանրապետության և մերձակա շրջանների (ներկայիս Վրաստանի և Թուրքիայի տարածքների) խեցեղենին: Սա Յայկական լեռնաշխարհի հին պատմության այն հազվադեպ դրվագներից է, երբ պատմական աղբյուրի տեղեկությունը կարելի է ուղղակիորեն համադրել հնագիտական տվյալների հետ՝ այդ փոփոխությունը բացատրվել է հիշյալ ցեղերի ներխուժմամբ²:

Բայց և որոշակի հակասություն կա գրավոր աղբյուրների և հնագիտական նյութի միջև՝ առաջինները ներխուժողների գոնե մի մասին բնորոշում են որպես «Խաքե Երկրի» մարդիկ, այսինքն՝ արևմտյան ծագում վերագրում, իսկ Երկրորդը, առավել օբյեկտիվը, մատնանշում է նրանց հյուսիսարևելյան ծագումը: Ըստ Ա.Քոսյանի, այդ հակասությունը կարող է լուծվել, եթե ընդունենք, որ ներխուժողները եկել են լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքից, Յայասայի տարածքներից, որը մինչ այդ գտնվում էր խեթական ազդեցության գոտում և կարող էր ասորեստանցիների կողմից ընկալվել որպես «Խաքե Երկր»³: Դնարավոր է, որ ներկայիս Յայաստանի և/կամ հարակից տարածքներից մի զանգված անցած լիներ արևուտք՝ Յայասա, ապա, իրենց մեջ տեղական բնակչություն ներառելով՝ հարավ:

¹ A.K. Grayson, *Assyrian Royal Inscriptions*. Vol. II. Wiesbaden, 1976, №№ 18, 67, 93. Անոնց -աձանական համարական նշանը կազմում է առաջինները ներխուժողների գոնե մի մասին բնորոշում են որպես «Խաքե Երկրի» մարդիկ, այսինքն՝ արևմտյան ծագում վերագրում, իսկ Երկրորդը, առավել օբյեկտիվը, մատնանշում է նրանց հյուսիսարևելյան ծագումը: Ըստ Ա.Քոսյանի, այդ հակասությունը կարող է լուծվել, եթե ընդունենք, որ ներխուժողները եկել են լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքից, Յայասայի տարածքներից, որը մինչ այդ գտնվում էր խեթական ազդեցության գոտում և կարող էր ասորեստանցիների կողմից ընկալվել որպես «Խաքե Երկր»³: Դնարավոր է, որ ներկայիս Յայաստանի և/կամ հարակից տարածքներից մի զանգված անցած լիներ արևուտք՝ Յայասա, ապա, իրենց մեջ տեղական բնակչություն ներառելով՝ հարավ:

² Տես հատկապես V. Sevin, *The Early Iron Age in the Elazig Region and the Problem of the Mushkians*. Anatolian Studies XL (1991), p. 96-97. Պ.Ավետիսիսյան, Կենսատարածքի կազմակերպման կառուցվածքը և սոցիալ-ժողովրդագրական գործընթացները Յայաստանում թ.ա. XXII-IX դդ.- Յայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցերը. Յայկական լեռնաշխարհը հայ երնուի բնօրրան. գեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2004, էջ 21-22:

³ Այս հարցերի շուրջ տես Ա.Քոսյան, մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Յայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 105-107, 162 և հաջ., 175-176, հարցի գուակամությամբ:

Մուշքերի ժագման և սկզբնական տեղայնացման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Ըստ Ի.Դյակոնովի, այդ մուշքերը հայերի լեզվական նախնիներն էին՝ վաղնջահայերը, որոնք, գաղթելով Բալկաններից, սկզբնապես հիմնվել են Յայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում¹: Այս վարկածը չի ընդունվել մասնագետների մեծամասնության կողմից, իսկ հնագիտական նյութը, ինչպես տեսանք, մերժում է նրանց ելակետի բալկանյան տեղայնացումը: Այլ հեղինակներ մուշքերին համարել են Յայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների հին բնակիչներ, որոնց անվանումը հետագայուն տարածվել է փոյուգացիների վրա (սեպագիր աղբյուրներում մուշքեր են կոչվել նաև մ.թ.ա. VIII-VIIդդ. Փոքր Ասիայուն իրենց պետությունը ստեղծած փոյուգացիները): Ասորեստանյան աղբյուրներում հիշվում է մուշքերի արօա Միտան, այսինքն՝ Փոյուգիայի արօա Միտասը, որի անունը, ինչպես ասվեց, նույնական է մ.թ.ա. XVդ. Յայասայի շրջանում խեթերի դեմ ապստամբած Միտաս/Միդասին: Յավանական ենթադրություններից մեկն այն է, որ Վերջինս մուշքական ծագում է ունեցել: Սեպագիր տաշկու/ ցեղանվան հետ նույնական է պոնտական մոսխերի ցեղանունը (հին հուն. μόσχοι «մոսքեր»). սեպագրում օ-ն հաղորդվել է ու-ով, ս-ն շ-ով): Այս մոսխերի հետ են կապում վրացական մեսխի ցեղանունը և Մեսխեթի երկրանունը Վրաստանի հարավ-արևամուտքում²:

Կաշկացիները խեթական թագավորության հյուսիսարևելյան բարբարոս հարևաններն էին (Յայասայից արևմուտք): Այդ անվանումը համեմատում են հյուսիսկովկասյան համահունչ մի ցեղանվան հետ (հայ. Գաշք, Վրաց. Կաշագ/կ-, ոռուս. ԷՇ Ռ Ա «չերքեզ»): Նույն ցեղի մյուս՝ աբեշլացիներ կոչումը համադրելի է մեկ այլ կովկասյան ցեղանվան հետ՝ հուն. ሿՊԻԼՈՒ, լատ. Absilae, հայ. Ափշիլք, Վրաց. Արշլետի, հմնտ. արխազ. A-արսա «արխազ»³: Ուրումացի-

¹ Է.Ի. Անդրեասյան. Ի ծանոնձն ծեյ..., թ. 224.

² Մուշքերի վերաբերյալ մանրամասն տես Ա.Թոսյան, մ.թ.ա. XII դարի..., էջ 162-166, հարցի գրականությամբ (որտեղ մուշքերի հավանական ելակետն է համարվում Յայասայի շրջանը). մուշքերի ցեղանվան, արևմտյան կապերի և Յայկական լեռնաշխարհում բռնած հետքերի վերաբերյալ Ա.Ի ՃԾՈՒՆՅՈՒ. Աշվաշին., էջ 150-154, 167. նրանց քարքվելական ծագման վերաբերյալ՝ օրինակ, G.L.Kavtaradze, The Interrelationship between the Transcaucasian and Anatolian Populations by the Data of the Greek and Latin Literary Sources. The Thracian World at the Crossroads of Civilizations, Bucharest, 1997, p. 353-354:

³ Այս ցեղանունների վերաբերյալ տես Է.Ի. Անդրեասյան. Ի ծանոնձն ծեյ..., թ. 12. Ի.Ա. Արքենք. Եօլի է ն է Շեան ան ի աշամ է ն Նաամ է ն Էաամ է ն 1973, թ. 19-23; Է.Ի. Արքենք. Աճամ է ն Ա ու ն է ն 1998, թ. 6-18. Ա.Ա. ՃԾՈՒՆՅՈՒ. Աշվաշին., էջ 180:

ների ցեղանունը հիշեցնում է հայերի (արմեն) և արամեացիների ցեղանունները, որի հիման վրա նրանց երթեմն համապատասխան ծագում է վերագրվել:

Չնայած մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքներին, ապացուցային հիմքեր չկան պնդելու, որ մ.թ.ա. XIX-ի. այդ ցեղանուններով կոչվող ցեղերը լեզվական առումով հայկական, արամեական, քարթվելական կամ հյուսիսկովկասյան ծագում են ունեցել՝ ցեղանունները հաճախ անցնում են մի ցեղից մյուսին: Բայց ցեղանվանական համապատասխանությունները մատնանշում են, որ այդ ցեղերի կամ գոնե նրանց մի մասի ելակետը կարելի է փնտրել Սև ծովի հարավարևելյան ափերից ոչ հեռու՝ Պոնտոսում, Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում և մերձակայքում:

6. Ուրարտական կայսրության, որպես կենտրոնացված քաղաքական ամբողջության, կերտման գործում էական է եղել Խալդիի պաշտամունքի ներդրումը լեռնաշխարհի գրավյալ տարածքներում, որով Ուրարտուն տարբերվում է մնացած բոլոր հինարևելյան կայսրություններից¹: Խալդիի պաշտամունքն այնքան առաջնային է եղել Ուրարտուում, որ Գ. Ղափանցյանն այն անվանել է «Խալդանություն»²: Ոչ մի հիմք չկա Խալդիին երնիկական «ուրարտական» համարելու՝ նա Ուրարտուի պետական աստվածն էր և ոչ ուրարտացիների (ուրարտախոս հանրույթի) երնիկական աստվածը³: Ընդ որում, խորհիական դիցարաններում նա զուգահեռներ չունի: Մինչ կայսրության ստեղծումը նա պիտի լիներ մի ինչ-որ սահմանափակ համայնքի և տարածքի՝ Արդինիի մեջ աստվածը:

Խալդի անունը, որպես դիցակիր անձնանունների բաղադրիչ, ավանդված է միջինասորեստանյան դարաշրջանից (զանգվածաբար՝ ուշասորեստանյան ժամանակներում՝ մ.թ.ա. VIII-VIIդդ.): Այդ անունները կրող անձինք ուրարտացիներ չեն, անունների մեջ մասի մյուս բաղադրիչներն ել պարզորոշ աքաղական են, այսինքն՝ այդ մարդիկ ուրարտախոս չեն եղել⁴: Դա մատնանշում է Խալդիի

¹ Է. Լ. Անյեր Ի Դա. Աքածական անձնանունների բաղադրիչ, ավանդված է միջինասորեստանյան դարաշրջանից (զանգվածաբար՝ ուշասորեստանյան ժամանակներում՝ մ.թ.ա. VIII-VIIդդ.): Այդ անունները կրող անձինք ուրարտացիներ չեն, անունների մեջ մասի մյուս բաղադրիչներն ել պարզորոշ աքաղական են, այսինքն՝ այդ մարդիկ ուրարտախոս չեն եղել⁴: Դա մատնանշում է Խալդիի

² Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 114:

³ M. Salvini, Le panthéon de l'Urartu et le fondement de l'état, p. 85, Մույնի՝ Geschichte und Kultur der Urartäer, S. 184:

⁴ Այս անունների վերաբերյալ տես K.L. Tallqvist, Assyrian Personal Names. Helsingfors, 1914, p. 83, Անհեծի-հահաւան նույնականացումը՝ էնծի և էնծի անհամարժությունը, 1951, №3, էջ 244-245. C. Saporetti. Onomastica Medio-Assyria. Roma, 1970, I, p.

պաշտամունքի առկայությունը Միջագետքին մոտ գտնվող տարածքներում, թերևս հենց Յայկական լեռնաշխարհի հարավում, Ուրարտուի կազմավորումից ավելի վաղ ժամանակներում:

Յունական աղբյուրները Յայկական լեռնաշխարհի հյուսիսարևմուտքում՝ Պոնտոսում, իշխում են խալդայների ցեղը (իհն հուն. χαλδαῖοι «քալդայներ»), որը համապատասխանում է հայ. Խաղողիքին: Ուրարտագիտության ռահվիրա Կ.Լենան-Յառապոք գտնում էր, որ ուրարտացիները կոչվել են իրենց մեծ աստծու՝ Խալդիի անունով: Նա խալդայներին համարում էր ուրարտացիների ժառանգներ, որոնք տեղաշարժվել են լեռնաշխարհի այդ ծայրամասը հայերի ճնշման տակ: Խորհրդային գիտության մեջ այս տեսակետը զախցախիչ քննադատության ենթարկվեց և, փաստորեն, դուրս եկավ շրջանառությունից¹: Այս քննադատությունը ճիշտ էր միայն մասամբ՝ ուրարտացիների խալդեր կոչվելը հենվում է տեքստի սխալ մեկնաբանության վրա, և դժվար է պատկերացնել, որ իհն կայսրության առաջատար ժողովուրդը կարող էր վերածվել հայերի դեմ մարտնչող և Յայաստանի արքային ռազմիկներ տվող ռազմաշունչ վայրի լեռնականների մի ցեղի: Բայց և այնպես, բերված փաստարկները չեն բացառում խալդայ-Խաղողիք ցեղանվան կապը Խալդի դիցանվան հետ²: Խալդի դիցանվան հետ համադրելի է և Հալդիրիսի քաղաքանունը, որի հետագա ձևափոխու-

283. Ա. Օծանականը, 1 հանձնական հայության առաջնական առաջնական համարություններ (Ըստ Կ. Տալվիստի)՝ «Օ Խալդի, պահպանիր Եղբորը», «Խալդին տնկեց», «Խալդին ողորմաց», «Խալդին ստեղծեց», «Խալդին իմ աստվածն է», «Խալդին ինձ հետ է», «Խալդին հովանավոր է», «Օ Խալդի, ողորմա ինձ»: U. Սալվինի միջինասորեստանյան դարաշրջանի երկու հայտնի անունները, առանց հիմնավորման, թվագրում է մ.թ.ա. XIII դ. (M. Salvini, Le panthéon..., p. 83), թեև նրա հղած հեղինակները՝ Սապորետին և Ֆրայդանկը, ներկայացնում են դրանք առանց թվագրության:

¹ Տես հատկապես Ա. Ա. Ղերածի աշխատանքը՝ Օծանական առաջնական համարություններ (1959, համար 117-121):

² Խաղողիքը հիպոթետիկ կերպով նույնացնում են ուրարտական աղբյուրների Հալիտ տեղանվանը, որն իրը բացառում է նրա կապը Խալդիի հետ: Բայց հենց սեպագիր Հալիտ-ն կարող էր ներկայացնել Խալդի դիցանվան տեղական տարրերակը («Խալդու»): Ուրարտական գրիչը կարող էր չընկալել այդ տեղանվան դիցակիր բնույթը և կապն իրենց Խալդիի հետ: Խալդի/Խալդայներին, հատկապես վրացական գիտության մեջ, քարթվելական ցեղ են համարում, որի համար լուրջ կռվաններ չկան (տես, օրինակ, G. L. Kavtaradze, նշվ. աշխ., էջ 353-354. միակ փաստարկն այն է, որ նրանց երկրամասում հետագայում արևմտաքարթվելական ցեղեր են բնակվել):

թյունն են տեսնում Հյուսիսային ծովակի թուրքական ԶԼԻՊ անվան-ման մեջ¹ (Տայք նահանգի արևելքում):

«Միերի դուռ» է կոչվել Վանա ժայրի հսկայական ժայռափոր արձանագրությունը, որի սկզբում ասվում է, որ այդ «դարպասները» նվիրվում են Խալիֆին («Խալիֆի դարպասները» ուրարտական ամենատարածված պաշտամունքային կառույցներն են): «Սասնա ծրերում» «Միերի դոճից» է ժայրի մեջ նտոնում և այդտեղից պիտի դուրս գա Փոքր Միերը: Ըստ Ի.Դյակոնովի, դա, անկասկած, նշանակում է, որ իհն Յայաստանում խալիֆին նույնացվել էր Միթրա-Միհր աստծուն (որի վիպական ժառանգն է Միերը)²: Միհրի մեհյանը գտնվում էր Դերջան գավառի Բագայառիծ («աստծու գյուղ») գյուղում: Այս գավառը, թերևս, նվիրված էր Միհրին, ինչպես հարևան Եկեղյաց և Դարանադի գավառները՝ Անահիտին ու Արանգղին: Դերջանը գտնվում էր պատմական Խաղողիքի հարևանությանը (հարավ): Բագայառիծից արևելք, նույն գավառում հայտնի է Խաղողյա առիծ գյուղը: Միհրի պաշտամունքի շրջանի Խաղողյա առիծը, որպես Բագայառիծին զուգահեռ մի անվանում, կարող է վերագրվել Միհրի տեղական իհն համապատասխանությանը: Սա միհանգամայն համահունչ է Վանա ժայրի Խալիֆ-Միեր համադրությանը: Այսինքն՝ Յայաստանի հյուսիս-արևմուտքում ևս Միհրը կապվել է xald/t- անվանաբանական տարրի հետ: Կարելի է կարծել, որ այդտեղ ևս իհնում պիտի եղած լիներ Խալիֆի պաշտամունքի մի կենտրոն, որը հետագայուն անցել է Միհրին:

Սանրամանսն քննարկումը ցույց է տալիս, որ Խալդիի կերպարը հնագույն ներկայացուցիչն է հայկական և կովկասյան առասպելների հիմնական՝ քարից (վերա)ծնվող հերոսի՝ «կովկասյան պրոմեթեևսների» (հայ. Արտավազդ, Միեր, Վրաց. Ամիրանի, արխազ. Աբրսպիլ, կովկասյան նարթական էպոսների մեջ հերոսները՝ արխազ. Սասրըկվա, աղօզ. Սոսրուկո, օս. Սոսլան և այլն)³: Սրանց հնագույն մի տարրերակն է փոյուգական Ագրիստիսը⁴: Խալդիի հետ են կապում սրբազն սայլի պաշտամունքը՝ հայտնի նաև Փոյուգիայում, և «Խալդիի դարպասների» ճարտարապետական գուգահեռներն էլ հայտնի են Փոյուգիայից⁵:

¹ *I. A. Àðóòþí Ýí. Óttíttí èéà Óðàððó*, n. 220.

² E.I. Äüyēîřřā. È âī ī ðî ñō ī ñèl âî eå Öäeäe, n. 191-193.

³ Ա. Պետրոսյան, Ուրարտական գլխավոր աստվածների երակը..., Ա.Ա. Ի ձօ՛՛ դյ. Աօ՛ յի նե՞ց 1 օձօ, զա՛ ահ նե 1 էօձօ է օձածնե՞ց Օա՞քա. Քայլական «Սամա

«Ծառաբանութեան մասին» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2001

⁵ Ա. Խոստիկյան, Հայոց պատմության պատմական աղբյուրները, Երևան, 1987, էջ 212.

Ղերջանը, ըստ Ստրաբոնի (XII.14.5), հայերը գրավել էին մուսունոյեկներից և խայլուրներից (իհն հուն. χαλύβες «քայլուրներ»). ըստ հեղինակի, այդպես են կոչվել հնում խալդայները (Ստրաբոն, XII.3.19): Ընդ որում, խայլուր ցեղանունը միարժեք չէ¹: Ինչևէ, Միհրի պաշտամունքի շրջանը հնում պետք է գտնվեր խալուր/խալդայների երկրում: Կարելի է Ենթադրել, որ խալդայ/խաղսի ցեղանունը մականում է տրված այլ անվանում ունեցող մի ցեղի՝ խայլուրներին կամ նրանց մի մասին, իրենց աստծու անունից, որպես «խալդապաշտներ»: Ըստ Ի. Ռյակոնովի, հնարավոր է, որ այդ խալուր/խալդայները նույնական են մոսխերիմ²: Բայց կա հակասություն՝ Խալիստուն հիշվում է Մուշքինիի հետ՝ որպես նրանից տարբեր մի երկիր: Խնդիրը կարող է լուծվել, եթե Ենթադրենք, որ Մուշքինին և Խալիստուն (եթե Վերջինս իրոք կապված է խալդայների հետ) ներկայացնում են իրար ներձավոր ազգակից ցեղեր կամ միկնույն ցեղի երկու տարբեր ճյուղեր:

315. *È. Í. Áuyéríta*. È áî'í ðí nò ́ ñèí áî eá Óæáé, n. 192-193. *M. Salvini*, Le panthéon..., p. 82.

7. Այստեղ քննարկվող պատմական գործընթացների որոշ արձագանքներ կարելի է գտնել հայոց ազգածին առասպելում (Խորենացի, Ա.Ժ-Ծ., Սեբեոս, Ա): Հայկը՝ հայոց առաջին էպոնիմը, Բաբելոնից շարժվելով հյուսիս՝ հանգրվանում է մի լեռան ստորոտում, ապա, այդ երկրամասը թողնելով իր թոռ Կաղմոսին՝ հաստատվում է Վանա լճի հյուսիսում: Նրա ավագ որդի Արամանյակ/Ար(ա)մենակը (ըստ Սեբեոսի առաջին գրքի՝ հայերի մյուս էպոնիմը), այդ շրջանը թողնում է իր եղբայրներ Խոռին ու Մանավագին՝ Խորխոռունիների ու Մանավագյանների էպոնիմներին և անցնելով հյուսիս՝ հաստատվում Այրարատում՝ Արարատյան դաշտում, որն այդ ժամանակից դառնում է Հայաստանի կենտրոնը: Մի քանի սերունդ անց, հայերի երկրորդ էպոնիմ Արամը, հաղթելով իր հակառակորդներին Հայաստանի հարավում, գրավում է Կապա-դովկիան և այնտեղ կուսակալ թողնում իր տոհմակից Մշակին:

Հայկի առաջին հանգրվանը, ակնհայտորեն, Նիբուր/Զուրի լեռան շրջանն է, իսկ Կաղմոսը՝ Կաղմուսի երկրի էպոնիմը: Այդ հանգրվանը Նիբուր լեռան մոտ՝ խուռառարտական ամպրոպի աստված Թեշուր-Թեշեբայի պաշտամունքի շրջանում, մատնանշում է Հայկի և այդ աստծու կերպարների նույնացումը¹: Թեշուրն ուներ երկու որդի-ցլիկներ՝ Շերի և Հորրի, որոնք կարող են դիտվել որպես խուռառարտական լեզվախմբի երկու ճյուղերի՝ ուրարտացիների և խուռիների էպոնիմներ՝ Հորրի-ն նույնական է խուռիների, իսկ Շերի-ն՝ համադրելի ուրարտական ենթադրյալ շուր ցեղանվանը² (խուռերենում և ուրարտերենում կան ու համապատասխանության այլ դեպքեր): Հայկի որդի Խոռը նույնական է սեպագիր Հորրի-ին (որտեղ ու-ն հալորդում է օ հնչյունը, հնմտ. Եբր. հօր՝ հուն. χοραῖος)³: Մանավագը, որի անունը երբեմն համադրվում է

¹ Ա. Հնայակյան, Հայկ նահապետի մասին առասպելն ու Կիրշա քաղաքը Նիբուրի լեռներում. ՊԲՀ, 1992, №1, էջ 131:

² Ուրարտական արքաների կոչումներից մեկն է «Շորիլի-ի արքա», որի հիման վրա էլ վերականգնվում է այդ ցեղանունը, տես Է. Դ. Այյել / Է. Ահածակ / Օ. Տառը. Առաջնային մի փորձ տես M. Payne and A. Ceylan, A New Urartian Inscription From Ağrı - Pirabat. Studi Mici-nei ed Egeo-Anatolici, XLV/2 (2003), p. 197-199:

³ I.M. Diakonoff, Evidence on the Ethnic Division of the Hurrians. Studies on the Civilization and Culture of the Hurrians. Winona Lake, 1981, p. 83.

⁴ Խոռի՝ որպես խուռիների էպոնիմի վերաբերյալ տես Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961, էջ 114-115, Գ. Զահորկյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի ամձնանունների լեզվական աղբյուրները. ՊԲՀ, 1981, №3, էջ 55:

ուրարտական Մինուա արքայանվանը, կարող է համարվել վերջինիս իրանական ազդեցությամբ ձևափոխված մի տարրերակը¹, այսինքն՝ մեկնաբանվել որպես ուրարտացիների էպոնիմ²:

Այդ դեպքում Արամանյակի՝ իր հոր Երկիրը թողնելը կրտսեր եղայրներին կարող է դիտվել որպես խուռառութարտական ցեղերի ճնշման տակ հայերի հյուսիս տեղաշարժի մի արձագանք: Յակառակ տեղաշարժ է տեղի ունենում Արամի ժամանակ, որը, ելակետ ունենալով իր մայրաքաղաք Արմավիրը Արարատյան դաշտում, նոր Երկրամասեր է գրավում Յայկական լեռնաշխարհի հարավում և արևմտատրում: Արամ և Մշակ անունները համարելի են ուրումացիների և մուշքերի ցեղանունների հետ՝ այդ կերպարները կարող են համարվել համապատասխան ցեղերի էպոնիմներ³ (Մշակի՝ մուշքերի էպոնիմ լինելը հաստատվում է այն հանգամանքով, որ Խորենացին նրա անունից է բխեցնում Կապադովկիայի Մաֆակ քաղաքի անունը, մինչդեռ Յովսեպոս Փլավիրոսի մոտ և անտիկ ավանդույթում այն կապվում է նոսիս/մեսսերի հետ)⁴: Ըստ այդմ, կարելի է ենթադրել, որ այն շարժումը, որի մասին վկայում է մ.թ.ա. XII դ. հնագիտական մշակույթի փոփոխությունը Արևմտյան Յայատանում և ուրումացիների և մուշքերի ներխուժման վերաբերյալ տեղեկությունը, իրոք սկիզբ է առել ներկայիս Յայատանի Յանրապետության և մերձակա տարածքներից:

Արամի և Մշակի անունների գուգահեռները ի հայտ են գալիս Սասունում և Մուշում: Սասունի շրջանը ուրարտական աղբյուրներում կոչվել է Ուրմե. այստեղ է տեղայնացվում, հավանաբար, ճակ

¹ J. Markwart, *Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*. Berlin, 1901, S. 162, գ. Զահնուկյան, Յայոց լեզվի պատմություն, էջ 441:

² Այս մասին մանրանասն տես A.A. Ղ օծի ղը. Աօն յի ուն է լ օն է ա զ, ն. 193-194.

⁴ Այս հարցի շուրջ տեսն և G.L.Kavtaradze, նշվ. աշխ., էջ 352-354:

«Աներքին Ուրումու» երկիրը¹: Իսկ Մուշ տեղանունը, ըստ Ի.Դյակոնովի, կարող է կապվել մուշքերի ցեղանվան հետ²: Մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ ազգածին ավանդության Արամ-Շակ գույգը համապատասխանում է «Սասնա ծռեր» էպոսի հնագույն տարբերակի Սանասար-Մուշ գույգին՝ Սասունի և Մուշի էպոնիմ-ներին, որտեղ Սանասարն Արամի կերպարի ժառանգն է, իսկ Մուշը և Մշակը (Մուշ-ակ) միևնույն անվան տարբերակներն են³: Վաղուց ի վեր մուշք անվանումը համադրվել է բալկանյան և արևմտափոքրասիական տաս- ցեղանվան հետ⁴ (հմնտ. Մյուսիա երկրանունը, որը հաճախ ներկայացվում է ըստ նոր հունարեն հնչման՝ Միսիա): Մուշ-Սասունի և Մյուսիայի հին առասպելներուն և անվանաբանության մեջ ի հայտ են գալիս բացահայտ գուգահեռներ, որոնք հաստատում են, որ այդ երկրամասերի հին բնակչության մեջ երել է նույնական՝ լեզվական առումով բալկանյան մի տարր⁵:

Ստրաբոնի բերած լեզենդի համաձայն, արմենների (հայերի) նախնին էր թեսալացի արգոնավորդ Արմենոսը, որը Յասոնի հետ Կոլխիդա է նավում: Նրա ուղեկիցները սկզբնապես հաստատվում են Ակիլիսեներում՝ Եկեղիքում և շրջակայքում, որտեղից տարածվում են այլ շրջաններում, մինչև Աղիաբեն՝ Ասորեստան (Ստրաբոն, XI.4.8, XI.14.12. տես և Տրոգոս Պոնտեոսի աշխատության Յուստինոսի համառոտագրությունը՝ XLII.2.3):

Զայկի, Արամի ու Մշակի և Արմենոսի ավանդությունները հայոց ազգածագումը ներկայացնող առանձնահատուկ՝ առասպելական աղբյուրներ են, որոնց նպատակից դուրս է եղել այլ եթնիկական խմբերի մասին ճշգրիտ տեղեկություններ պահպանելը: Բայց և այնպես, եղած նյութը հնարավորություն է տալիս որոշ եզրահանգումների: Եթե ճիշտ է ուրումացիների և հայերի օտարալեզու արմեն ցեղանվան կապը, ապա, ելնելով Ստրաբոնի լեզենդից՝ ուրումացիների նախնական տեղայնացումը կարելի է փնտրել Երզնկայի շրջանում, այսինքն՝ խեթական աղբյուրների Յայասայում:

Ուշագրավ է տարաբնույթ աղբյուրներում ուրարտական Մինուային համադրելի անունների ի հայտ գալը: Արգոնավորդները, ինչպես ասվեց, կոչվել են մինյուացիներ (իրենց նախահոր՝ Օքրոմենոսի արքա Մինյաց-ի անունով): Մինյուասը, մյուս կողմից, մի երկիր էր Յայկական լեռնաշխարհի հարավում (Ասորեստանի հյու-

¹ Ի.Ա.Ածօձիք/ Օլ Ռ Էլ էջա Օծածծ. Ածած, 1985, թ. 212.

² Է.Լ.Անյեր/ Շա. Դահնոնդի ծեյ..., թ. 223, թ ծե 87.

³ Ա.Ա.Դածրինյ. Աշխ., էջ 151.

⁴ Է.Լ.Անյեր/ Շա. Դահնոնդի ծեյ..., թ. 222 (ըստ Ա.Գյուտցի և Պ.Կրեչմերի):

⁵ Ա.Ա.Դածրինյ. Աշխ., էջ 150-158, 163-168.

սիսում), ջրհեղեղի Նիբուր/Ջուլիի լեռան մոտ, այսինքն՝ պատմական Ուրուատրիհում: Սինյուասի հետ համահունչ անունով Մանավազը Յայկի հետ այդ լեռան շրջանից գալիս է Յարը՝ որտեղ նրա անվան հետ է կապվում Մանազկերտ քաղաքը: Ուրարտական Մինուա արքան (մ.թ.ա. 810-786) գրավում է Դիառլիսի Երկիրը, որը ներառում էր Խեթական դարաշրջանի Յայասայի և հունական աղբյուրների Կոլխիդայի որոշ տարածքներ: Ըստ այդմ, Սինյուաս-Մանավազն իրոք կարող է համարվել ուրարտական էպոնիմ, որին հունական ավանդույթը բալկանյան ծագում է Վերագրել: Եվ արդյո՞ք մինյուացի-արգոնավորդների արշավանքը Կոլխիդա Մինուայի և նրա որդի Արգիշթիի կողմից այդ Երկրամասի նվաճման առասպելական արձագանքը չէ¹:

8. Այս քննության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Ուրարտուի իշխող վերնախավը հնդեվրոպական ծագում է ունեցել: Հնարավոր է ձևակերպել հետևյալ վարկածը:

Մինչև մ.թ.ա. առաջին հազարամյակի սկիզբը Ուրարտուի ապագա կենտրոնը՝ Պանի շրջանը (և ավելի հյուսիս-արևելքը ընկած տարածքները), բնակեցված է եղել անատոլիական՝ Խեթերենին մոտ լեզվով խոսող բնակչությամբ: Խուռառուրարտական բնակչություն եղել է, հավանաբար, Պանա լծից հարավ և արևմուտք ընկած շրջաններում: Խեթական կայսրության կործանման դարաշրջանում (մ.թ.ա. շուրջ 1200թ.) մի քանի ցեղ, ներխուժելով Յայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններից, գրավել են լեռնաշխարհի հարավային և արևմտյան տարածքները (Մուշ, Ծոփք, Աղձնիք, Կորդուք), իսկ Թիգլաթպալասարը նրանցից շատերին վերաբնակեցրել է նաև հարևան շրջաններում: Այդ ցեղերից մեկը, մի քանիսը կամ բոլորը եղել են հնդեվրոպական ծագման՝ լեզվական առումով ազգակից հնաբալկանյան ցեղերին: Նոր եկած ռազմաշունչ այդ տարրը, ինչպես և հնդեվրոպական ցեղերի մյուս հայտնի գաղթերի դեպքում, իշխող դիրք է գրավել տեղի հին բնակչության նկատմամբ: Այդ եկվորներից սերված արքայաստիհոնով առաջնորդվող մի զանգված, ելած Արդինի քաղաքի շրջանից, մ.թ.ա. Խեթ. Վերջին իր իշխանությունը տարածում է ողջ Յայկական լեռնաշխարհի վրա²:

¹ Նույն տեղում, էջ 194-195.

² Այս վարկածի վերաբերյալ տես՝ Ա. Պետրոսյան, «Արևելյան մուշկերի» երմիկական պատկանելության խնդիրը, Ա.Ա.Շահումյան, 62վ. աշխ., էջ 53, 102, 196.

Հավանական է, որ այդ արքայատոհմը և նրա շրջապատը ծագեին մուշքերից կամ լինեին մուշքերին ազգակից մի հանրույթ, այն ցեղի գաղթականությունը, որը հետագայի հին հունական աղբյուրներում կոչվել է խալդայներ: Արդեն Արդինիում և Կումենուում, հնարավոր է, որ նրանք կորցրել են իրենց լեզուն, բայց, ինչպես հաճախ նման դեպքերում, պահպանել են դինաստիական անունները: Նրանց և ուրարտերենի կրողների հարաբերությունը կարող է պատկերացվել այնպես, ինչպես եղել է արիացիների և խուրիների հարաբերությունը Միտաննիում, սկանդինավցի-վարյագների և սլավոնների կամ բյուրց-բուլղարների և սլավոնների հարաբերությունը Քին Ուլսիայում և Բուլղարիայում:

Առավել ակնառու են հետևյալ համեմատությունները: 911թ. Ֆրանսիայի հյուսիսարևմտյան մի մարզ անցնում է սկանդինավյան վիկինգներին՝ նորմաններին և սկսում կռվել Նորմանդիա: Դետագայում նորման նվաճողները յուրացնում են ֆրանսերենը և լուծվում տեղական բնակչության մեջ (ինչպես Ռուսիայում): 1066թ. Նորմանդիայի դուքսը նվաճում է Անգլիան, որից հետո այնտեղ մի քանի դար իշխում են նորմանդա-ֆրանսիական, լեզվով՝ ֆրանսախոս նվաճողները: Մեր տարածաշրջանի պատմության մեջ նման մի օրինակ է պարնացիների քոչվոր ցեղի ներխուժումը Պարթևք, Վերջիններիս հետ ձուլվելը, ապա իրենց արքայատոհինի (Արշակունի) իշխանության տարածումը ողջ Երանի ու ներձակա երկրների վրա:

Այս վարկածը որոշ չափով վերադարձ է դեպի Կ.Լենան-Յառաւտի և Պ.Կրեչմերի դրույթները, դրանց մի նորացված տարրերակը¹: Ուրարտուի արքայատոհմը և վերնախավը ծագեցնելով մ.թ.ա. XII դ. նվաճողներից՝ հատկապես մուշքերից, մենք ելնուն ենք ոչ միայն վերջիններիս բականյան կապերից, այլև այն հան-

Առաջին՝ Ուրարտական գլխավոր աստվածների եռակը..., էջ 266-269, Առաջին՝ Ած-ի յի հոռեա լ օձ, շատ համար նաև լ էօձա է օձածնորութեա Օձածնութեա, դ. 52-54:

զամանցից, որ պատմության ընթացքում ամենուրեք սովորաբար գերիշխող դիրքեր են գրավում վերջին դարաշրջանի նվաճողները:

Ղա չի նշանակում, որ այդ ցեղերը հայտնվել են Հայկական լեռնաշխարհի հարավում և մերձակայքում հենց մ.թ.ա. XII-ի.: Նախ, Թիգլաթպալասարի նշած հիսուն տարին միայն մոտավոր թիվ է: Ապա, նրանց առաջին, թերևս, ոչ այդքան մեծաքանակ ներխուժումները կարող էին տեղի ունեցած լինել շատ ավելի վաղ: Որպես պատմական գուգահեր նշենք իրանական և բյուրքական ցեղերի ներխուժումները Հայկական լեռնաշխարհ տարբեր դարաշրջաններում: Արանու, գուցե և Մինուա անունների առաջին գուգահեռները Հայկական լեռնաշխարհի մերձակայքում ի հայտ են գալիս արդեն մ.թ.ա երրորդ հազարամյակի վերջից¹: Ուրումացինների և արեշլացինների ցեղանունների հետ համադրելի Urumum և Apisal ցեղատեղանունները միջագետքյան աղբյուրներում ավանդված են խոր հնությունից: Ինարավոր է, որ այդ ցեղերի որոշ հատվածներ Միջագետք և հարակից տարածքներ անցած լինեն շատ ավելի վաղուց²: Խորառութարտական առասպելներում էլ ի հայտ է գալիս հնդեվողական մի շատ հին, բալկանյան կապեր ունեցող շերտ՝ այդպիսին են թվում, օրինակ, ամպրոպի աստված Մեշուր-Մեյշերայի և նրա հակառակորդի անունները³:

Որտեղից և ե՞րբ կարող էր Յայկական լեռնաշխարհում հայտնվել բալկանյան տարրը: Ըստ ավանդության, արգոնավորդների ճանապարհորդությունը Յունաստանից Կոլխիդա կատարվել է Տրոյայի պատերազմին նախորդող սերնդի հերոսների կողմից՝ մ.թ.ա. XIIIլդ., իսկ բալկանյան տիպի անունները Յայսայի շրջանից ավանդված են ավելի վաղ՝ մ.թ.ա. XV-XIVդդ.: Մյուս կողմից, ըստ Թ.Գամկրելիձեի և Վ.Իվանովի, արգոնավորդների առասպելը կարող է դիտվել որպես մի հիշողություն հույնների և բալկանյան ժողովորդների՝ Յայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում ունեցած հին հայրենիքի⁴: Յիշենք, որ Սակերոնիայի

¹ *A.Ä.Èèòðèòèí.* ÄâðåÖðè-äññéèå áî ççðåí èý áððåáí èô ñòî áðñ íà ïðè òàòåñè Äññåå (2162-2137ää).- Í àëèñòðèí ñèéèé ñâî ðí èé, 13 (76), n. 65-66.

²Ոլումումը հիշվում է Նարամ-Սուլենի դեմ ապստամբության մասին եպիկական մի տեքստում, (տես G.A.Burton, The Royal Inscriptions of Sumer and Akkad. New Haven, 1929, p. 140-141), իսկ Ասիշալը Յին Միջագետում հայտնի մի երկիր է. սրանց և ոլումացիների ու արեշացիների կապի վերաբերյալ տես J.J.Gelb, Inscriptions from Alishar and Vicinity. Researches in Anatolia, V. 6. Chicago, 1935, p. 6:

³ Ա. Պետրոսյան, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը...

⁴ ል.አ.አài ንዲዬናቸው ይሸፍ እና በአዲነ ተስፋዋል. በግዢ. ወጪዎች, ክፍለ 908:

ու Փօյուգիայի լեզենդար արքաների անուններն ել կրկնում են բազում դարեր առաջ ավանդված հայասական պատմական անունները, ինչը հնարավոր է բացատրել հնդեվլուպական դարաշրջանից շատ ավելի ուշ՝ մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսից հետո մարդկանց՝ Հայասայից դեպի արևմուտք տեղաշարժով:

Մնում է ավելացնել, որ այս վարկածով նոր, ավելի հավանական մեկնաբանություններ կարող են ստանալ մի շարք պատմական փաստեր՝ Ուրարտուի անկումը, Ուրարտու-Հայաստան անցումը (որպես արքայատոհմի անկում և վերնախավի փոփոխություն կայսրության ներքին էթնիկական հակասությունների հետևանքով), հունական աղբյուրներում արմեններին մշտապես փոյուգական-բալկանյան ծագում վերագրելը (որպես ուրարտական վերնախավի փոյուգական կապերի արձագանք), հունաուրարտական և հայ-հնաբալկանյան մի շարք բառային¹, անվանաբանական² զուգահեռներ և այլն:

¹ Ամենաակնառու հայ-ուրարտա-հունական զուգահեռներն են հայ. *աւել*, *յաւելով*, ուրարտ. *abili-d(u)-*, *հուն.* ծփելմա, ծփելլա (ընդ որում, հայերենում և հունարենում «ավելու գործիք» և «ավելացնել» իմաստներով) և հայ. *բուրգմ*, ուրարտ. *Burgana(ni)*, *հուն.* πύργος: Սրանց պետք է ավելացնել հայ-հնաբալկանյան ընդիհանուր արմատները՝ օրինակ, *ալիս*, *աղաւրիք*, *աղիս*, *աղուես*, *դամբան*, *թեղի*, *կաղին*, *կամուրջ*, *մողի*, *սիւճ* և *այլն* (տես Գ.Զահորելյան, Հայոց լեզվի պատմություն, Էջ 296-306). հատկապես հետաքրքիր է հայ. *արքայ* բառը, հունարեն և փոյուգերեն զուգահեռներով, որը կարող էր ուղղակի փոխառություն լինել ուրարտական վերնախավի լեզվից (ուրարտերենում այդ բառը չկա):

² Հնմտ., օրինակ, ազգածին ավանդության հունարենատիպ Կաղմոս, Կարոս անձնանումները և Հայաստանի հարավի Տավրոս, Առնոս, Արտոս, Գրգոս տեղանունները:

ԱԶԳԱԾԻՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ

Դայկական ավանդությունը: Հայ ժողովրդի ազգածագման, ձևավորման ու վաղ շրջանի պատմության վերաբերյալ տեղեկությունները կարելի է բաժանել երկու մասի՝ արտաքին և ներքին: Արտաքինն օտար՝ գրավոր (հիմնականում սեպագիր և հունական) աղբյուրների տվյալներն են, իսկ ներքինը՝ հայկական, բանահյուսական-առասպելաբանական բնույթի: Արդեն V դարում ձևավորված հայկական գրականությունն ու պատմագրությունը պահպանել են հայոց ազգածագման ավանդությունը («ազգածնության առասպել»): Այն գալիս է ժողովրդական ակունքներից, թեև մեզ է հասել Խորենացու և Սեբեոսի առաջին գրքի անանուն հեղինակի գործերից, Աստվածաշնչի՝ բացարձակ ծշմարտություն համարվող տվյալների և հունական որոշ աղբյուրների հետ համաձայնեցված-ձևափոխված՝ «ճշգրտված» և գրական մշակման ենթարկված վիճակում: Բանահյուսական աղբյուրները թեև պատմական ճշգրտության տեսակետից զիջում են արտաքին, շատ ավելի հին ու վավերական աղբյուրներին, բայց, մյուս կողմից, գոնե մեկ առունով, գերազանցում են նրանց: Այդ աղբյուրների միջոցով է մեզ հասել մեր նախնիների կենդանի ծայնը, այն ոգին, որով նրանք ինաստավորել են իրենց գոյությունն ու անցյալը:

Ըստ ավանդության, հայերի առաջին նախնին Թորգոմի որդի Հայկն էր, Նոյի որդի Հաբեթի սերնդից: Նա նկարագրվում է որպես «վայելչակազմ, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվուն աչքերով, հաստ բազուկներով» մի հսկա, «հզոր նետաձիգ», «քաջ և երևելի» մյուսների մեջ: Նա բարելոնյան աշտարակաշինությունից հետո հրաժարվում է ենթարկվել Բաբելոնի բռնակալ, ինքն իրեն աստվածացրած Տիտանյան Բելին (նույնացված Աստվածաշնչի Նեբրովթին) և իր հսկայական՝ երեք հարյուր այր լնդգրկող աղխով՝ նահապետական գերդաստանով տեղափոխվում է հյուսիս: Սկզբում նա հանգրվանում է հարավային մի լեռան (Կորդվաց Արարատ, հնում՝ Նիբուր) ստորոտում, ապա այդ շրջանը թողնելով իր բռնանը, գալիս բնակվուն է Հայաստանում՝ Վանա լճի հյուսիսարևմտյան Հարթ գավառում, որտեղ կառուցում է Հայկաշեն գյուղը: Բելն առաջարկում է Հայկին հնազանդվել իրեն և մերժվում, որից հետո իր զորքով հարձակվում է նրա վրա: ճակատամարտը տեղի է ունենում Վանա լճից հարավ-արևելք, Հայոց ձորում: Անա-

նունի տարբերակում ներկայացվում է ճակատամարտից առաջ Հայկի և Բելի երկխոսությունը: Բելն առաջարկում է Հայկին անցնել իր մոտ ծառայության, որպես որսորդ մասուկների պետ, իսկ Հայկը նրան շուն է անվանում՝ խոստանալով նրա վրա թափել իր կապարծի նետերը: ճակատամարտը անհաղթ հսկաների մի կոիվ է, բայց, ի վերջո, Հայկն իր «լայնալիճ» աղեղի «երեքթեկան» նետով խոցում-սպանում է Բելին, իսկ նրա զորքը փախուստի է դիմում:

Ազգածին ավանդությունը ներառում է ոչ միայն Հայկի, այլև նրան հաջորդող յոթ նահապետների զրույցները, մինչև Արա Գեղեցիկ, որոնք «ազգածին այրեր» են կոչվում: Հայկի երկիր Հարքը մնում է նրա կրտսեր որդիներ խոռին և Մանավագին (Խորիխոռունիների և Մանավագյանների էպոնիմներն են), իսկ ավագը՝ Արամանյակը, Վերաբնակվում է Այրարատում՝ Արարատյան դաշտում, որը դառնում և մնում է Հայկյանների հաջորդ սերունդների ոստանը: Արամանյակի որդի Արամայիսը կառուցում է Արմավիր մայրաքաղաքը: Նրան հաջորդում է Ամասիան, որի անունով է կոչվում Մասիսը: Ամասիայի որդի Գեղամը դառնում է Գեղամա լճի արևմտյան և հարավային շրջանների էպոնիմը: Գեղամին հաջորդում է Հարման, սրան՝ Արամը, ազգածին ավանդության ամենառազմական կերպարը, որը բազմաթիվ պատերազմներում լայնացնում է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից: Սա նահապետների շարքն է ավագ գժով: Որոշ դեպքերում որպես էպոնիմներ են հանդես գալիս նահապետների մյուս որդիները: Այսպես, Արամայիսի որդի Շարան դառնում է Շիրակի էպոնիմը, Գեղամի որդի Սիսակը՝ Սյունիք-Սիսականի և այլն:

Արամը նկարագրվում է որպես աշխատասեր և հայրենասեր մարդ, «որը լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները»: Ասորեստանի արքա աշխարհակալ Նինոսը, վախենալով նրանից, իրավունք է տալիս նրան իրենից հետո երկրորդը կոչվել: Արևելքում Արամը հաղթում է մեղացի քաջերի առաջնորդ Նյուքար Մադեսին (մեղացիների էպոնիմին), ապա, հարավում՝ Ասորեստանում, Բարշամին, որին հետագայում ասորիները «աստվածացրած պաշտում էին»: Արևմուտքում՝ Կապադովկիայում նա հաղթում է Տիտանյան Պայապիս Քառյային, տեղի բնակիչներին հրանայում սովորել ու խոսել հայերեն և այնտեղ կուսակալ նշանակում իր տոհմակից Մշակին, որը կառուցում և իր անունով է կոչում Մաժաք (հետագայում՝ Կեսարիա) քաղաքը:

Արամին հաջորդում է նրա որդի Արա Գեղեցիկը: Նինվեի թագուհի «վավաշոտ և անառակ» Շամիրամը, լսած լինելով նրա գեղեցկության մասին, պատգամավորներ է ուղարկում, խնդրելով իրեն կին առնել և թագավորել իր երկրում, բայց մերժվում է: Շամիրամն իր զորքով հարձակվում է Արայի վրա: ճակատամարտը տեղի է ունենուն Արարատյան դաշտում: Յայերը պարտվում են, Արան՝ զոհվում: Բայց Շամիրամն իր սիրեկաններից մեկին «զարդարում» է որպես Արա և լուր տարածում, թե իր աստվածները, որոնք նույնացվում են «շնից սերված» համարվող արալեգառլեզների հետ, լիզել-կենդանացրել են նրան: Շամիրամը կառուցում է Վան քաղաքը և, ի վերջո, զոհվում Վանա լճի ափին: Սրանով ազգածին ավանդությունը վերջանում է: Յայերն ընկնում են օտարների տիրապետության տակ, որից դուրս են գալիս շատ սերունդներ հետո:

Յայ ցեղանունը կապվում է Յայկի անվան հետ: Ըստ Խորենացու, օտարները հայերին սկսում են կոչել արմեն և նման ձևերով Արամի անունից, իսկ Անանունի մոտ շեշտվում է Արամանյակ/Ար(ա)մենակի ազգածին բնույթը, որից կարելի է ենթադրել, որ նա է համարվել արմեն ցեղանվան էպոնիմը¹: Մյուս կարևոր տեղանունը՝ Այրարատը, որը, որպես Յայաստանի կենտրոն, որոշ չափով ողջ Յայաստանի համարժեքն է, կապվում է Արայի անվան հետ («դաշտն Արայի»):

Յայկի և նրա առաջին ժառանգների գրույցներն ավանդաբար համարվել են վավերական պատմական աղբյուրներ XVIII-XIX դդ. որոշ հեղինակների գործերում²: Յետագայում, XIX-XX դդ. այդ ավանդությունները քննադատաբար ուսումնասիրվել են մի շարք մասնագետների կողմից (Ս.Էմին, Թ.Պատկանյան, Ա.Կարիեր, Յ.Մարկվարտ, Ս.Աբեղյան, Ն.Աղոնց, Ա.Մատիկյան, Գ.Ղափանցյան, Յ.Մանանյան, Ս.Ակիյան, Ժ.Ղումեզիլ, Գ.Սարգսյան, Ս.Յարությունյան, Ա.Պետրոսյան, Ա.Քոսյան և այլք): Դրանք բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում որպես հայոց հին մշակույթի, ազգագրության, կրոնի, առասպելաբանության, ազգածագման և նա-

¹ Յննտ. Անանունի «ազգ Արամենակայ», «որդիք ազգածնին Արամենակայ» և Խորենացու «արք Արամեանք», «Արամեան ազն» արտահայտությունները, տես Գ.Սարգսյան, Յատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու պատմության մեջ. Պատմա-բանասիրական համես (այսուհետև՝ ‘ՊԲՅ’), 1998, № 1-2, էջ 123: Այդպիսին է Արամանյակը նաև Ներսես Շնորհակու «Վիպասանության» մեջ:

² Լ.Բարսեղյան, Յայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ, էջ 140-141:

իսպատմության վերաբերյալ աղբյուր և պետք է համակողմանիորեն քննվեն տարբեր հայեցակետերից (առասպելաբանական, ազգագրական, լեզվաբանական, պատմական):

Առասպելաբանություն: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հայոց ազգածին ավանդությունը տիեզերքի և ժամանակի ծագումը ներկայացնող հնագույն արարչագործության առասպելի վիպականացած և պատմականացած տարրերակն է: Արարչագործության առասպելներն, ընդհանրապես, տեղայնացվում են «աշխարհի կենտրոնում», որտեղ, «ժամանակի սկզբում», սկսվում է արարումը: Դրանցից են ծագում և դրանց են կրկնում մյուս առասպելները¹: Յայկական ավանդության մեջ Յայկի և նրա առաջին յոր սերնդի ժառանգների հետ են կապվում հայոց տիեզերքի՝ սկսած երկնային մարմիններից (հմտ. Յայկն «Օրիոն համաստեղությունը», Արա՝ մի աստղի անուն), մինչև երկրի, նրա նահանգների, լեռների, գետերի, նրանում բնակվող ժողովրդի, իշխող տոհմերի, ապա և՝ ժամանակի տերմինների ծագումն ու անվանումները (ըստ Անանիա Շիրակացու, Յովհաննես Սարկավագի և Վանական վարդապետի, հայկական ամիսները կոչվել են Յայկի որդիների և դրստրերի անուններով)²: Անվանումն առապելաբանության մեջ համազոր է արարմանը: Ազգածնությունը սերտորեն կապված է տիեզերածնության հետ՝ այն տիեզերածնության մի մասնավոր դրսնորումն է:

Յայկյանների առասպելի հնագույն նախատիպը պիտի ներկայացներ դիցածնությունը՝ տիեզերքի արարումը և աստվածների սերունդների հաջորդականությունը: Յայկի և նրա հաջորդ «ազգածին նահապետների» կերպարները ծագում են հին աստվածություններից: Դա բոլորովին չի նշանակում, թե նրանք հենց աստվածներ են: Յայկյանների ավանդությունը ժամրային առումով վիպական (էպիկական) բնույթ ունի. հին աստվածների կերպարներն իշեցվել են ոյուցազունների ու հերոսների մակարդակի, ինչի հետևանքով փոխվել-պատմականացել է ողջ կառույցը, նոր կեր-

¹ M.Eliade, *Cosmos and History. The Myth of the Eternal Return.* New York 1959, p. 6 ff.

² Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար. Երևան, 1940, էջ 76-77, Յովհաննես Իմաստասերի մատենագրությունը. Երևան, 1956, էջ 224, Յաղազս տարենտին ի Վանական վարդապետ ասացեալ. Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, I, Երևան, 1941, էջ 160:

պարներ են ավելացել և այլն¹: Առասպելի առանցքային կերպարներն են Յայկը, Արամը և Արա Գեղեցիկը: Յայկը պիտի ներկայացներ աստվածների նահապետի, Արամը՝ ամպրոպի աստծու, իսկ Արա Գեղեցիկը՝ մեռնող և հարություն առնող աստծու վիպականացած տարբերակը: Յայկը, Արամը և Արա Գեղեցիկը կազմում են հնդեվրոպական «Եռաֆունկցիոնալ» մի համակարգ՝ ներկայացնելով հնդեվրոպական առասպելաբանության համապատասխանաբար առաջին (տիրակալության), երկրորդ (ռազմական) և երրորդ (պտղաբերության) ֆունկցիաները: Նույնը կարելի է ասել Յայկի երեք որդիների վերաբերյալ: Այսպիսով, սա մի տիպիկ հնդեվրոպական առասպել է, և պատմականացումն ու ուշ մշակումը չեն վերափոխել նրա հնագույն կառուցվածքային հիմքը²:

Յայկյանների ավանդության մեջ, Բելի, Բարշամի և Շամիրամի կերպարներում, ինչպես ասվեց, ի հայտ է գալիս նաև հինարևելյան տարրը: Բայց հատկանշական է, որ հայոց ավանդությունը նրանց ևս ներառել է հնդեվրոպական եռամաս համակարգի մեջ (Բելը կապված է առաջին, Բարշամը՝ երկրորդ, իսկ Շամիրամը՝ երրորդ ֆունկցիային)³: Յայկի և Բելի, Արամի և իր հակառակորդների կրիվները գուգահեռներ ունեն այլ հնդեվրոպական ավանդույթներում⁴:

¹ Միանգամայն անընդունելի է նրանց՝ իրական պատմական հերոսներ համարելը, որը գալիս է առասպելական և երապարների իրական նախատիպեր ունենալու մ.թ.ա. IV դ. հոյս հեղինակ Եվկիեմերոսի մոտեցումից: Աստղերը, լեռներն ու գետերը կոչվում են դիցարանական կերպարների և ոչ իրական մարդկանց անուններով:

² Արամի ավանդությունը, հունական առասպելների համեմատությամբ, քննել է արդեն 3.Մարկվարտը, որի մի շաբթ դրույթներ մնամ են ուժի մեջ, տես J. Marquart, Die Entstehung und Wiederstellung der armenischer Nation. Berlin, 1919, S. 67-68, նույնի՝ Le berceau des arméniens. Revue des études arméniennes, 8, 1928, f. 2, p. 215 սqq.: Յայոց ազգածագման ավանդության մեջ հնդեվրոպական «Եռամաս» գաղաքախոսության դրսնորմների վերաբերյալ տես S. Ahyan, Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes. Revue de l'histoire des religion CIC-3. G. Dumézil, Le roman des jumeaux. p. 1992, p. 133 սqq. Ավանդության քննությունն ընդհանուր և համեմատական առասպելաբանության համատեքստում տես Ա. Պետրոսյան, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը. Երևան 1997. A. Y. Petrosyan, The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epics. Journal of Indo-European Studies Monograph 42. Washington D.C. 2002. A. A. Ի ձօծ՛նյ՛, Ած յի ո՞ւ ո՞ւ յի ո՞ւ է ո՞ւ ո՞ւ ո՞ւ այց. Ածահանուր և համեմատական առասպելաբանության համատեքստում տես Ա. Պետրոսյան, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը. Երևան 1997. A. Y. Petrosyan, The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epics. Journal of Indo-European Studies Monograph 42. Washington D.C. 2002. A. A. Ի ձօծ՛նյ՛, Ած յի ո՞ւ ո՞ւ յի ո՞ւ է ո՞ւ ո՞ւ ո՞ւ այց. Ածահանուր և համեմատական առասպելաբանության համատեքստում տես Ա. Պետրոսյան, Արամի առասպելը հնդեվրոպական կապեր և ծեռք բերել նույնիսկ Բելի անունը, տես Ա. Կարությունյան, նշվ. աշխ., էջ 231-232:

Առաջին Հայկյանների որոշ կերպարներ կապեր են դրսելում Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների աստվածների հետ: Ըստ մի տեղեկության, Մարս մոլորակը նույնպես կոչվել է Հայկ¹: Ըոլորակներն աստվածների անունով կոչելու սկզբունքը հին բարելոնյան ավանդույթից անցել է այլ հին ազգերի՝ պարսիկներ, հույներ, հռոմեացիներ: Միջագետքում Մարս մոլորակը կոչվել է անդրաշխարհի և պատերազմի աստված Ներգալի անունով: Հատկանշական է, որ Հայասայի մեծ աստվածը վկայված է U.GUR գաղափարագրով, որը Ներգալի անվանումներից մեկն էր (սեպագրում, եթե միայն հնարավոր էր, տեղական աստվածների անունները հաղորդվում էին գաղափարագրով): Մի կողմից Հայկի, իսկ մյուսից՝ Հայասայի մեծ աստծու նույնացումը Ներգալին պատահական չէ: Սա խոսում է Հայկ-Ներգալ կերպարային կապի մասին՝ հայոց առաջին նահապետ և նախնի Հայկը, Բելին հաղորդն, ակնհայտորեն, առնչվում է մեռած նախնիների և պատերազմի հետ: Ուշագրավ է, որ Ներգալի սիմվոլիկ գենքերից էին լայն աղեղն ու նետը,² որոնք, ինչպես տեսանք, բնորոշ էին նաև Հայկին: Սա հնարավորություն է տալիս Հայկին համադրել Հայասայի մեծ աստծուն՝ U.GUR-Ներգալին: Հայկ և Հայասա անունների համահնչությունն էլ հնարավոր է դարձնում այդ անունների ստուգաբանական կապի ենթադրությունը: Հայասական մեծ աստծու չարձանագրված տեղական անունն այսպիսով կարող էր լինել Հայկի նախատիպը, որը նաև երկրի էպոնիմն էր:

Առասպելաբանական կերպարների բացահայտման համար էական են տեղագրական տվյալները: Հին աստվածների կերպարները դարերի ընթացքում պահպանվում են իրենց պաշտամունքի կենտրոններում, նոր անունների տակ: Հայկի առաջին հանգրվանի՝ Կորդվաց Արարատ լեռան շրջանում է գտնվել ուրարտական ամպրոպի և փոթորկի աստված Թեյշեբայի պաշտամունքի կենտրոն Կումմին կամ Կումենուն: Այսինքն, Հայկի բարդ կերպարի մի բաղադրիչն էլ կարող էր ծագել Կումենուի հնագույն ամպրոպի աստծուց³:

¹ Դ.Ալիշան, Հին հաւատը կամ հեթանոսական կրօնը հայոց. Վենետիկ, 1895, էջ 124:

² Reallexikon der Assyriologie und vorderasiatischen Archäologie (այսուհետև՝ RLA), Bd. 9, 3/4. Berlin, New York, 1999, S. 222:

³ Տե՛ս Ա. Հնայակյան, Հայկ նահապետի մասին առասպելն ու Կիբշա քաղաքը Նիբուրի լեռներում. ՊԲՀ, 1992, № 1, էջ 131. Ա.Ա. Շահումյան, Ածու յի ողջ առաջնային պատճենների կերպերյալ տես Ա. Պետրոսյան, Կորդվաց լեռը տարածաշրջանի հին ժողովուրդ՝

Արամը, հայերի երկրորդ էպոնիմը, ըստ Մ.Աբեղյանի արտահայտության՝ Յայկի «Երկրորդ տիպարն» է: Քննությունը ցույց է տալիս, որ նա ևս ամպրոպի աստծու մի վիպականացած և պատմականացած տարբերակն է, խուռառարտական Թեշուբ-Թեյշերայի հին հայկական համապատասխանությունը և «Սասնա ծոերի» Սանասարի նախատիպը¹:

Ըստ ավանդույթի, Արա Գեղեցիկի՝ արալեզների կողմից լիզվել-կենդանանալը տեղի է ունեցել Լեզք (հնում՝ *Լեզուոյ*) գյուղում: Այստեղից գտնված ուրարտական արձանագրության մեջ խոսվում է, ամենայն հավանականությամբ, Խալդիին նվիրված պաշտամունքային կառույցի մասին, ինչը թույլ է տալիս կարծելու, որ Արա Գեղեցիկի հին աստվածային համապատասխանությունն էլ եղել է Խալդին²:

Ազգագրություն: Դին առասպելներն արտացոլում են ոչ միայն տիեզերաբանական պատկերացումներ, այլև իրենց դարաշրջանների հասարակական հարաբերությունները: Յայկի աղխն ընդգրկում էր նրա որդիներին, դուստրերին ու նրանց ժառանգներին, մոտ երեք հարյուր այր (ըստ Անանունի՝ Յայկը և իր յոթ սերունդներ՝ մինչև Արա Գեղեցիկ, որոնք ծնվել էին Բարելոնում), իրենց ընտանիքներով: Սրա հետ համեմատելի է մինչև XIX դար պահպանված հայ նահապետական ընտանիքը, որը կոչվում էր սովորաբար *ազգ*: Այն ներառում էր նահապետի հաճախ վեց-յոթ, հազվադեպ՝ ութ սերունդը. ընդ որում, ազգը կոչվում էր նահապետի անունով³: Միևնույն ժամանակ, *ազգ* նշանակում է «ցեղ, ժողովուրդ»: Նույն նշանակությունն ունեն նահապետական ընտանիքի հանար կիրավող մյուս տերմինները (*ցեղ, տում* և այլն): Դնդեվորպական ընտանեկան ազգակցության տերմինները լավագույնս պահպանվել են հայերենում, որտեղ կորել է դրանցից միայն մեկը, մինչդեռ մյուս լեզուները կորցրել են ավելի շատ տերմիններ: Ըստ այդմ, հայերը պետք է որ լավագույնս պահպանած լինեին նաև հնագույն

ների տիեզերածնության և մարդածնության առասպելների կենտրոն, Յայ ժողովրդական մշակույթ XII. հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2004:

¹ Ա. Պետրոսյան, Արամի առասպելը..., էջ 12 հոդ. Ա.Շ ձեռնություն, Ած յի նույնականացումը կազմակերպության կողմէ կատարված է 1998 թվականի հունվարի 10-ին:

² Ա. Պետրոսյան, Ուրարտա-հնդեվորպական և հայկական առնչությունների շուրջ (այս ժողովածուում):

³ Կ.Շ. Էնթառապահ, Տիեզերածնության մասին պահպանական առնչությունների շուրջ (այս ժողովածուում):

նահապետական ընտանիքի կառույցը¹: Այս համատեքստում Հայկի աղխը նահապետական ընտանիք-ազգի առաջին, առասպելաբանական նախատիպն է: Հայկի անունը պիտի դառնար անվանումը նրա ազգ-ընտանիքի, որը նախնական բջիջն էր հետագա նույնանուն ազգ-ժողովրդի:

Հնդեվրոպական ցեղը բաղկացած է եղել սովորաբար երեք կլանից: Խորհրդանշական է Հայկի աղխի այրերի թիվը՝ երեք հարյուր, որը կարող է մեկնաբանվել ըստ հնդեվրոպական զուգահեռների, «եռամաս գաղափարախոսության» համատեքստում (հնմտ. հատկապես Հոռմի բնակչության նախնական երեք հարյուրյակ-ները²):

Արամն ընդարձակում է Հայաստանի սահմանները և այդպիսով վերստեղծում Հայաստանը իինգ բյուր՝ հիսուն հազար երիտասարդների («նորատիք») գլուխ անցած: Վաղնջական հնդեվրոպական հասարակություններին բնորոշ էին ամուրի և անհող պատանիների եղբայրությունները, որոնք դաստիարակ-հրամանատարների դեկավարության տակ որսորդությամբ ու ավագակությամբ, գիշատիչ գազանների՝ հատկապես գայլի վարքը նմանակելով ապրում էին ցեղի տարածքի եզրերին, սահմանային շրջաններում³: Նոր հողերի յուրացումը սովորաբար կապվում է այս պատանեկան խմբերի հետ. ըստ բազում ավանդությունների՝ նրանք իրենց աստվածների առաջնորդությամբ հեռանում էին իրենց տարածքներից ու նոր հողեր գրավում⁴: Արամի «նորատի» ռազմիկները ակնհայտորեն համադրելի են պատանեկան հրոսակախմբերին, իսկ նրանց թիվը՝ հիսուն հազար, կարող է մեկնաբանվել որպես այդ խմբերի անձնակազմի թվաքանակի (սովորաբար հիսուն)⁵ պատմականացած հիշողություն:

Լեզվաբանություն: Ազգածին ավանդությունը բացարիկ հնարավորություն է ընձեռում մեկնաբանելու հայոց ցեղանունները: Ցեղանուններն, ինչպես հատուկ անուններն ընդհանրապես,

¹ G.Bonfante, The Armenian Family Terminology. Միջազգային հայերենագիտական գիտաժողով. Չեկուցումներ, Երևան, 1984, էջ 29:

² G.Dumézil, L'ideologie tripartite des Indo-Européens. Bruxelles, 1958, p. 12-15.

³ J.P.Mallory, D.Q.Adams. Encyclopedia of Indo-European Culture, London, Chicago, 1997, p. 6-7, 531, 632-633:

⁴ K.Kershaw, The One-eyed God: Odin and (Indo-) Germanic Männerbünde. Journal of Indo-European Studies Monograph Number 36. Washington D.C. 2001, p. 133 ff., 172 f.

⁵ K.Kershaw, Շշվ. աշխ., էջ 116, 126 ff.

դժվար են ստուգաբանվում՝ անհրաժեշտ են կողմնակի տվյալներ, որոնք կարող են բացահայտել նրանց նախնական իմաստները: Անվանադիր նախնիների բնութագրերը կարող են օգնել պարզելու նրանց անունների ստուգաբանությունը, որով և մենք մոտենում ենք ցեղանվան ստուգաբանությանը:

Արդեն XIX դ. հայ ցեղանունը հանգեցվել է հնդեվրոպական *poti- «տեր, տանտեր, ամուսին» արմատին (Ֆ.Շպիգել, Ո.Կիպերտ): Ժամանակակից քննությունը ցույց է տալիս այս մեկնաբանության հավաստիությունը: Այսպես, որոշ բարբառներում *հայ* բառը հանդես է գալիս որպես մեծահասակ կանանց կողմից ամուսնուն տրվող անվանում՝ «ամուսին», «տանտեր, ընտանիքի գլուխ» իմաստով (հմնտ. հատկապես *մեր հայր* արտահայտությունը):¹ Այդ բառը, ակնհայտորեն, լավագույնս կարող է ստուգաբանվել հնդեվրոպական *poti-ից:

Դայկը մի հսկայական, երեք հարյուր տղամարդ ընդգրկող նահապետական գերդաստանի նահապետն է: Ըստ այդմ, Դայկի անունը նույնպես կարող է հանգել *poti-ին, դիցանուններին բնորոշ նվազական-քնքշական -իկ ածանցով, (*Դայ-իկ* > Դայկ, հմնտ. Աստղիկ դիցանունը և Դայկի որդու՝ նույնատիպ ածանցով կազմված Արամանեակ անունը): Դատկանշական է, որ Դայկի նահապետ կոչման երկրորդ մասը ներկայացնում է նույն *poti- արմատի իրանական արտացոլումը, իսկ նրա հակառակորդ Բելի անունը, ինչպես ասվեց, նույնպես նշանակում է «տեր»²:

Որոշ առումներով Դայկի լավագույն հնդեվրոպական գորգահեռն է հին հնդկական ռազմիկ և որսորդ աստված նետաձիգ Ռուդ-

¹ Դայ բառի այս իմաստը գրանցված է Շամախու, Ղարաբաղի, Խոյի, Սարադայի, Սասունի, Կարինի բարբառներում, տե՛ս Դայոց լեզվի բարբառային բառարան. հ. Գ, Երևան 2004, էջ 238:

² Մյուս կողմից, ինչպես ասվեց, Դայկ է կոչվել Սարս մոլորակը, որն իր հրակարմիր գույնի պատճառով ամենուրեք կապվել է կրակի հետ (հմնտ. հուն. Πυρόεις, հայ. Շրաս): Այս մոլորակի միջագետքյան աստված Ներգալը մ.թ.ա. երրորդ հազարյակի կեսին երլայում նույնացվել էր արևանասեմական Ռաշապ «կրակ» աստծուն (RLA 9. 3/ 4, S. 215): Ըստ մի լեզենի, հայոց թագավորը, որը հանդես է գալիս Դայկի փոխարեն, սպանել է Բելին, հանել Նեմրութ սարի գագաթը և այնտեղ թռնիր շինելով մեջը կախել վառել է (Ա. Ղանդամյան, Ավանդապատում. Երևան, 1969, էջ 72-73): Դայկն, այսպիսով, հանդես է բերում նաև կրակի, կրակարանի (օջախի) աստծու հատկանիշներ: Նրա անունն էլ կարող է հանգեցվել հնդեվրոպական *Hā(s)- «այրե» արմատին, հմնտ. Խեթական օջախի աստծու Հաշշա անունը (կրուկարան-օջախն ամենուր խորհրդանշել է տոհմի անդամների միամնականությունը և կապվել նախնիների պաշտամունքի հետ, տե՛ս, օրինակ, J.P. Mallory, D.Q. Adams, Encyclopedia of Indo-European Culture. London, Chicago 1997, p. 263): Այսպիսով, հնարավոր է, որ Դայկի անվան մեջ իրար են միահյուսվել երկու նախատիպ ծագած հնդեվրոպական *poti- և *Hā(s)- արմատներից:

րան, իր գործի՝ ռուլորաների հայրն ու առաջնորդը (հնմտ. Յայկ և հայ անվանումների հարաբերությունը): Յնդկաստանում Օրին համաստեղությունն անձնավորվում է որպես արարիչ աստված Պրաջապատի, Եղծերուի տեսքով, որին նետահարում է Ռուլրան «Եռամաս նետով»² (iśus trikāṇḍa՝ Օրինի գոտու երեք աստղերն են, որոնք հայոց մեջ կոչվում են Համկուրք): Յատկանշական է, որ Ռուլրայի բնութագրական նակիրների (ganapati, vrātāpati, bhūtāpati, rāśupati, grhapati, sthapati, sabhapati), ինչպես և Ռուլրայի հակառակորդի Prajāpati անվան երկրորդ մասերը հանգում են հնդեվրոպական *poti-ին:

Յայկի և ամպրոպի աստծու կերպարների համադրության համատեքստում կարող է դիտվել Յայկի հոր՝ աստվածաշնչյան Թորգոնի հետ նույնացումը: Ըստ Աղոնցի, Թորգոնը հնարավոր է մեկնաբանել անստոլիական ամպրոպի աստծու՝ Tarhu- / Tarku-անունից³: Այդ դեպքում, Յայկի Թորգոննեան կոչումը համադրելի է Զևսի հռւճա-լուրիական Տար(ι)γυηνός (< Tarhun-) մակդիրին, որը կարող էր Վերահիմաստավորվել ըստ աստվածաշնչյան Թորգոնի և Կապադովկիայի «Տուն Թորգոնայ» կոչման⁴ (հնում Թեգարամա, ապա՝ Թիլ Գարիմնու): Բայց հարկ է նշել, որ հայերի, ուրեմն՝ և Յայկի ծննդաբանությունը ուշ դարերի երևույթ⁵:

Հնդեվրոպական համատեքստում Արամի առավել ակնհայտ անվանաբանական գուգահեռներն են հնդկական Ռամա (Rāma) անունով հերոսները (հնդեվրոպական *rē-mo-/*rō-mo- «սև, թուխ»։ հայերենում բարը չի կարող սկսվել r-ով և նախաճայն ա-ն հավելում է)։ Արամ անունը պիտի լիներ ամպրոպի հնագույն աստծու մի

¹ Ա. Պետրոսյան, Քայլոց ազգածագման հարցեր..., էջ 193:

² Ορηνή-Πτωχωσαμώνη *hwāmawatēnētirjwān* Βερωπέτηνα υπό τον *R.H.Allen*, *Star Myths: Their Lore and Meaning*, New York, 1963, p. 309-310. *J.Fontenrose*, *Orion: the Myth of the Hunter and the Huntress*. Berkeley, Los Angeles, London, 1981, p. 239-240. *Υ.Ι.Οᾶι εἳσι, Α.Ἄ.Υδι ἀι, Ἡ ἐθῦ ἀδάαι ἀε Ἔι ἀεῖ, Ἡ.*, 1985, n. 16-18, 276-277: Ηιτηρωή *Κέρσχαου* *K.Kershaw*, σεργκ. αγχ., t. 210 ff., 242-244, 252:

³ N.Adontz, Tarkou chez les anciens arméniens. Revue des études arméniennes 1 (1927), p. 191. հմնտ. Ա.Դարբիրյումյան, Յին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամնությունը ու դիցարանը, Երևան, 2001, էջ 21-22 :

⁴ Å.Å. I åòðíñýí, Åðí ýí ñèéé ýí îñ èì èòðí ëí àëý, n. 62.

⁵ Այս ծննդաբանությունն ի հայտ է գալիս Յիպաղուհունոց (III դար), ապա Եվսեբիոս Կեսարացու (III-IV դարեր), իսկ հետո՝ հայ հեղինակների՝ Ազարանգեղոսի, Փավստոսի, Խորենացու, Սեբեոսի Անանունի մոտ. տես N. Adontz, Աշխ., էջ 190-191, և Արքոնց Քայաստանի պատմություն, Երևան, 1972, 15 313: Յովսեպոս Փլավիսոսի մոտ (I դար)՝ Ant. Jud. I.5.1 Թողրամոս/Մյուլգրամոսը փոյուգացիների նախահայրն է:

կոչումը («սև, թուխ» գույնը բնորոշ է ամպրոպային կերպարներին): Մյուս կողմից, այդ հատկանիշը բնորոշ էր հնդեվրոպական պատահի ռազմիկների խմբերին, որոնց դիցաբանական առաջնորդն ու մարմնավորումն է Արամը¹: Ինչպես ցույց է տալիս ուրարտական առաջին արքայի Արամու անունը, Արամ դիցանունը կարող էր նաև անձնանվանական կիրառություն ունենալ (նշենք, որ Յայաստանին հարևան հին Երկրներում դիցանուններն օգտագործվել են որպես անձնանուններ, օրինակ՝ ասուր. Աշուր, Խեթ. Տելեպիհուս, լուլ. Ռունտիյաս, խուր. Կումարայի):

Անանունի տեքստից, ինչպես ասվեց, կարելի է կարծել, որ հայերի արմեն ցեղանվան էպոնիմ է համարվել Արամանեակը: Նա առաջինն է, որ հաստատվում է Այրարատում՝ հայոց աշխարհի կենտրոնում, որն, ըստ ավանդության, կոչվում է Արա Գեղեցիկի անունով՝ «դաշտն Արայի»: Այրարատի այս երկու էպոնիմները հարաբերվում են իրար այնպես, ինչպես իրենց հայրերը՝ Յայկը և Արամը (Յայաստանի էպոնիմները), և կարելի է ասել, որ Արան էլ Արամանեակի «Երկրորդ տիպարն» է: Այրարատի և նրա էպոնիմների այս անունները հիշեցնում են հնդեվրոպական ավանդություններում Երկրների սրբազն կենտրոնների և նրանց դիցաբանական էպոնիմների անունները (հնդեվրոպական *aryo-, *aryomen-): Այսպես, հնդկական ավանդույթում համապատասխան աստվածը կոչվում է Aryaman, հնդարիացիների նախնական հայրենիքը՝ Ḵiryāvarta, իրանական համապատասխան աստվածը՝ Airyaman, իրանի էպոնիմը «Շահնամեում»՝ Iraj (ավելի վաղ՝ Airik), (արևմտա)գերմանական տարածքների կենտրոնում էր բնակվում Hermin(i)on ցեղը, կապված Irmis դիցանվան հետ, Իռլանդիան կոչվել է Ériu, Erin, որի էպոնիմներն են Eremon-ը և Eriu-ն: Ըստ այդմ, կարելի է կարծել, որ Այրարատը կապված է *aryo-ի (որի կանոնավոր հայերեն արտացոլումը պիտի լիներ այր-ը), իսկ Արամանեակը/Արմենակը *aryomen-ի մի տարբերակի հետ, որը ձևափոխվել է Արան անվան ազդեցությամբ²:

Երեմիա Մեղրեցու միջնադարյան բառարանում հիշվում է հայերի և մեկ անվանում՝ *զեղնի, զեղնիկ*, կամ *զեղիք*: Եթե հայ

² A. J. ADONIYS, *Aði yí ñeeé ýí ñ e ì e ði e ë äëý*, n. 90-94.

³ Ա.Ամայան, Բարօհոր հայոց, Երևան, 1975, էջ 64, 67:

ցեղանունը կապված է համարվել Հայկի, արմենը՝ Արամի կամ Արամանեակ/Ար(ա)մենակի հետ, ապա տրամաբանական է Ենթադրել, որ Երրորդ հայկական ցեղանունը՝ գեղմին էլ կապվեր ազգածին ավանդության համահունչ անունների, այսինքն՝ Գեղամի և/կամ նրա ծոռ Արա Գեղեցիկի հետ: Գեղեցիկ բառը ծագում է *wel-«տեսնել» արմատից (իբրև «տեսրոտ»), համահունչ ամպրոպի աստծու հակառակորդի անվանը: Ըստ այդմ, գեղմին(կ) ցեղանունը պիտի ստուգաբանվի *welenyo-նախաձևից (*-ոնիո- բարդ ածանցով), իսկ Վերջին կ-ն ցեղանուններում հանդիպող -իկ ածանցի հետքն է (հմնտ. միջնադարյան բրբա. խայիկ «հայ», ապա՝ հնդիկ, պարսիկ և այլն):

Այսպիսով, հայոց ազգածին ավանդության հնդեվրոպական («Եռաֆունկցիոնալ») համակարգի առանցքային կերպարների անունները նույնպես հնդեվրոպական են: Միևնույն հնդեվրոպական համակարգն են Եերկայացնում նաև այդ անունների հետ կապվող ցեղանունները, որոնց հարաբերությունն արտացոլված է համապատասխան էպոնիմների հարաբերություններում (ընդ որում, *հայ* < *poti- և *գեղմի* < *welnīyo- ստուգաբանությունները, ինչպես ցույց են տալիս *p- > h և *w- > q անցումները, հայկական են): Ըստ այդմ, հայոց ցեղանունների ծագումը բնիկ հայկական է:

Պատմություն: Առասպելը դուրս է իրական տարածությունից ու ժամանակից: Դա Վերաբերում է հատկապես տիեզերածնության առասպելներին, որոնցով է հենց բացատրվում տարածության և ժամանակի առաջացումը: Բայց վիպականանալով և պատմականանալով որպես ազգածին ավանդություն, առասպելը ձեռք է բերում տարածաժամանակային բնութագրեր:

Հայկյանների ավանդության մեջ անհրաժեշտ է տարբերակել մի քանի առասպելաբանական շերտ՝ ա. ին հնդեվրոպական առասպելաբանական միջուկը, բ. հինարևելյան ազդեցությունը, գ. հունական ազդեցությունը, դ. աստվածաշնչյան ազդեցությունը, որից հետո միայն կարելի է առանձնացնել պատմական հիմքը: Հնդեվրոպական և հինարևելյան են, ինչպես ասվեց, նահապետների և նրանց հակառակորդների կերպարները: Հունական ազդեցու-

¹ Այս ցեղանվան վերաբերյալ տես՝ օրինակ, Ա.Ի. ՀՃԾՐԴԻ նույնականացմանը համապատասխան գլուխանունների վերաբերյալ (Կելտական *volcae*, հիլիրհական *velsounas*, հուայսան *volski* և այլն), տես Ա.Ա. ՀՃԾՐԴԻ աշխատանքը՝ Ե. Ա. ՕՐՈՎԻ համար 1979:

թյունը երևում է որոշ նույնացումներից ու անվանումներից (Քսիսութես, Յապետոս/թե/, Կրոնոս, Կաղմոս, տիտաններ) և հին հեղինակների հղումներից, ընդհուպ մինչև Արայի ու Շամիրամի ավանդությունը, որի մի շարք հատվածներ համապատասխանեցվել են Կտեսիասի տեղեկություններին (պահպանված Դիոդորոսի և Եվսեբիոսի մոտ): Աստվածաշնչից պիտի գար ավանդության հատկապես սկիզբը՝ հմտ. Յայկի աստվածաշնչյան ծննդաբանությունը, բարելոնյան ծագումը և նրա տեղաշարժը աշտարակաշինությունից հետո: Նրա առաջին հանգրվանը, Աստվածաշնչյան համատեքստում, Նոյի փրկության լեռն է, որով հայոց նախնի Յայկն իր երեք որդիներով համադրելի է դառնում նաև մարդկության նախնի Նոյին և նրա երեք որդիներին¹:

Որպես պատմական կարող են դիտվել առաջին հերթին այն տեղեկությունները, որոնք չեն բացատրվում առասպելաբանական համատեքստում: Դրանցից այստեղ կարևոր է նշել հայոց առաջին նահապետների Յայաստանում հաստատվելու և նախնական տեղաշարժերի աշխարհագրությունը, որը շատ քիչ չափով կարող էր կախված լինել առասպելաբանական կամ կրոնական գործոններից: Դա վերաբերում է Յայկի հիմնավորմանը Յարքում, ապա և նրա անդրանիկ որդի Արամանյակի, հայերի հաջորդ էպոնիմի տեղափոխությանը Այրարատ՝ Արարատյան դաշտ: Այստեղ է Յայկից հետո կենտրոնանում հայոց տիեզերքի արարումը, ապա և պատմությունը: Յայկի ոստանը Յարքում կարելի է կոչել «նախնական Յայաստան»: Իսկական Յայաստանը սկսվում է Արամանյակից և Այրարատից, որտեղ է կենտրոնանում հայոց տիեզերածնության հիմնական մասը: Մյուս կարևոր էտապն է Արամի կողմից Յայաստանի սահմանների լայնացումը «բոլոր կողմերից» (իրականում, ըստ եղած նյութի՝ արևելքից, հարավից և արևմուտքից), ընդունում, Արամի բնիկ ոստանը նույնապես Այրարատն էր:

Ազգածին ավանդության մեջ որպես հակառակորդ կողմ հանդես են գալիս Յայաստանի հարավի՝ Միջագետքի տիրակալները: Առասպելն, ինչպես ասվեց, իր էությամբ արտաժամանակյա է, որտեղ իրար կարող են խառնվել տարբեր դարաշրջանների եղելություններ: Ըստ այդմ, Յայկի և Բելի, ապա՝ Արամի և Նինոսի, Արայի և Շամիրամի հակառակությունը կարող է համադրվել Յայկական լեռնաշխարհի և Միջագետքի նախապատմական և վաղ

¹ Ա. Պետրոսյան, Յայոց ազգածագման հարցեր..., էջ 208-211, նոյնի՝ Կորդվաց լեռ... :

պատմական իրադարձությունների հետ: Այդպիսիք են Յայկական լեռնաշխարհի հարավից միջագետքյան Ուրուկյան մշակույթի դուրսմղումը Կուր-արաբսյան մշակույթի կողմների կողմից մ.թ.ա. Երրորդ հազարամյակի վերջին, իրեն աստվածացրած աքադական արքա Նարամսինի նվաճումները Յայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում (հնմտ. Բել), Ասորեստանի և Յայկական լեռնաշխարհի բնակչության պատերազմները մ.թ.ա. Երկրորդ հազարամյակի վերջին դարերում և ուրարտական դարաշրջանում:

Առավել առասպելական է ավանդության սկիզբը, իսկ վերջին դրվագներն արդեն մոտենում են իրական պատմությանը: Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ը (1116-1090թթ. մ.թ.ա.) պատմում է իր հաղթանակի մասին մուշքերի, ուրումացիների և ապիշլացիների ցեղերի դեմ, որոնք գրավել էին Յայկական լեռնաշխարհի հարավարևմտյան որոշ շրջաններ: Արամ և Մշակ անունները համարելի են ուրումացիների և մուշքերի ցեղանունների հետ՝ այդ կերպարները կարող են համարվել համապատասխան ցեղերի էպոնիմներ¹:

Ավանդությունն Արամին և Մշակին տեղայնացնում է Կապառովկիայում, իսկ այլ տվյալներ՝ Սասուն-Մուշում: Քննությունը ցույց է տալիս, որ ազգածին ավանդության Արամ-Մշակ գույգը համապատասխանում է «Սասնա ծրեր» էպոսի հնագույն տարբերակի Սանասար-Մուշ գույգին՝ Սասունի և Մուշի էպոնիմներին, որտեղ Սանասարն Արամի կերպարի ժառանգն է, իսկ Մուշը և Մշակը (Մուշ-ակ) միևնույն անվան տարբերակներն են²:

Այստեղ ևս, ինչպես և այլուրեք, առասպել-իրականություն հարբերությունը միարժեք չէ: Արամ անունն անբաժանելի է Յայկական լեռնաշխարհի հարավում և մերձակայքում մ.թ.ա. Երրորդ-առաջին հազարամյակներում հիշվող համահունչ անվանումներից (Arame, Aramu, Arami, Arima, Aruma, Arman, Armanum, Armī, Arimū, Arimu, Armalu, Aramu, Aramale, Arme, Armuna)³: Մյուս կողմից, այն

¹ Այս մասին տես՝ Ա.Պետրոսյան, Ուրարտուի արքայատոհմի և իշխող դասի ժագման շուրջ, նույնի՝ հայոց ազգածագման հարցի շուրջ (այս ժողովածուում): Արամի կողմից Կապառվկիան նվաճելը Երեմն համարվել է հայերի՝ Կապառվկիայում նախնական հանգրվան ունենալու առասպելականացած-աղավաղված արձագանք, հնմտ. Կապառվկիայի հունարեն «առաջին Արմենիա» կոչումը: Բայց վերջինս հռոմեական պրովինցիայի անվանում է, ստեղծված մ.թ. Խ. դ., և այդ մոտեցումը չունի ոչ մի իրական հիմք և գալիս է միայն հայերի արևմտյան ժագման ավանդական վարկածից:

² Ա.Ա. Շահումյան, Ածու յի ու է ու օծու յի ածու, է. 151.

³ Ա.Ա. Շահումյան, Ածու յի ու է ու օծու յի ածու, է. 175.

նույնական է Ուրարտուի առաջին հայտնի արքա Արամուի անվանը (Վերջին ձայնավորի կանոնավոր կորստով): Առասպելի տրամաբանությամբ՝ Արամ նահապետն անխուսափելիորեն իրենում պետք է ներառեր նույնանուն պատմական արքայի հիշողությունը:

Շամիրամը, մի կողմից, Ասորեստանի պատմական թագուհի Sammuramat-ն է (հուն. Σεμίρημας, իշխել է մ.թ.ա. 810-806թթ.), որը հանդես է գալիս բազում ժողովուրդների բանահյուսության մեջ: Նրա անունն արդեն հույժ առասպելաբանական է (սիրիական դիցուհի Անարի մի կոչումն է՝ շամում բարձր երկինք»)¹, իսկ նրա կերպարն, ինչպես ասվեց, Նինվեի հշտարի վիպական տարրերակն է: Ըստ այդմ, այս կերպարները ծևավորվել են առասպելական և պատմական նախատիպերի միահյուսումից: Սա հնարավորություն են տալիս ժամանակագրել ազգածին ավանդության վերջին փուլը Ուրարտուի ծևավորման դարաշրջանով (մ.թ.ա. 860-800թթ.):

Այլ ժողովուրդների ավանդությունները հայերի ծագման մասին: Միանցից առավել հայտնի է Ստրաբոնի բերած ավանդությունը, որը վերագրվում է Ալեքսանդր Մակեդոնացու երկու զորավարների՝ Կիրսիլոս Փարսալացուն և Սեղիոս Լարիսացուն (Ստրաբոն, XI.4.8, XI.14.12. տես և Տրոգոս Պոնտեոսի աշխատության Յուստինոսի համառոտագրությունը՝ XLII.2.3): Ըստ դրա, հայերի նախնին էր Արմենոսը, արգոնավորդների արշավի մասնակիցներից: Նա ծագումով Յունատանի հյուսիսից էր, Թեսալիայի Արմենիոն քաղաքից: Նրա ուղեկիցները հաստատվում են «Ակիլիսենեում (Եկեղյաց գավառը և շրջակայքը - Ա.Պ.), և Սիսպիրիտիսում մինչև Կալաքենե և Աղիարենե»: Այս ավանդությունը, թեև հակասում է Յայկի և առաջին Յայկյանների՝ Յայաստանում հաստատման և տեղաշարժման վերաբերյալ հայկական աղբյուրների տվյալներին, չափազանց հետաքրքրական է: Ակիլիսենեն հնում ներառվել է Յայաստան թագավորության կազմում, որը, շատ ուսումնասիրողների կարծիքով, հենց «նախնական Յայաստան» է²:

Այստեղ, այսպիսով, հայերի նախնին կապվում է հույների՝ առաջին անգամ Յայաստանի մերձակա շրջաններում հայտնվելու առասպելական հիշողության հետ: Ինչպես և առաջին Յայկյաննե-

¹ M. Weinfeld, Semiramis: Her Name and Her Origin. Ah, Assyria..., Studies in Assyrian History and Ancient Near Eastern Historiography Presented to H.Tadmor. Scripta Hierosolymitana, vol. XXXIII, Jerusalem, 1991, p. 99-103.

² Այս մասին մանրամասն տես Ա. Պետրոսյան, Հայոց ազգածագման հարցի շուրջ (այս ժողովածում):

րի ավանդությունները, այն նույնպես արժանացել է գերբնադատական վերաբերմունքի և երբեմն համարվել ամբողջովին արհեստածին մի հնարանք, հունակենտրոն տրամադրությունների արտացոլում, որի հետ դժվար է համաձայնել¹:

Արմենոսը չի հիշվում արգոնավորդների հանրահայտ ցանկերում, որը կարող է ակնարկել նրա՝ երկրորդային կերպով արգոնավորդների առասպելի մեջ ներառվելը: Նկատենք նաև, որ Արմենոսը հայերի օտարալեզու արմեն կոչման և ոչ բուն հայկական հայ ցեղանվան էպոնիմն է: Բայց և այնպես, վերլուծությունը ցույց է տալիս, որ Արմենոսի լեզենդը, իր ամբողջության մեջ, չի կարող հունական հեղինակների հնարանքը լինել: Հայոց առաջին նախնիները տեղայնացվում են Եկեղիքում, այսինքն՝ հին Հայասայի տարածքում, որն, ըստ բազում ուսումնասիրողների, հայոց հնագույն կենտրոնն էր: Ապա, արգոնավորդների առասպելում ի հայտ են գալիս հենց հայ ցեղանվան հետ համադրելի անուններ: Նրանց եկած երկիրը հին աղբյուրներում կոչվում է Այա (Աճ), որը հետազայում է միայն նույնացվել Կոլխիդայի հետ (Այան ուշ աղբյուրներում քաղաքի անուն է): Ավելին, հնարավոր է, որ արգոնավորդների առասպելում պահպանվել են այդ երկրամասի՝ ուրարտական արքաների կողմից նվաճնան դարաշրջանի որոշ հիշողություններ²: Ուշագրավ է, որ, ըստ մի կարծիքի, առասպելն արտացոլում է ոչ միայն հին հույնների տեղաշարժերը Հելլադայից Կոլխիդա, այլ հիշողություն է նրանց ենթադրյալ նախնական հայրենիքից (Հայկական լեռնաշխարհ և շրջակա տարածքները) հույնների գաղթերի մասին³:

Հայտնի է և հունարեն գրող հրեա հեղինակ Հովսեպոս Փլավիոսի (մ.թ. I դ.) հաղորդած հայերի ծննդաբանությունը: Ըստ այդ աղբյուրի, հայերը ծագում են արամեացիների էպոնիմ Արամոսի որդի Ուլոսից (Հրեական հնախոսություն I.6.4): Աստվածաշնչում արամեացիների էպոնիմը կոչվում է Արամ, այսինքն՝ հայերի երկրորդ էպոնիմի հետ նույնական անունով: Հունական ձևով ներկայացված Ուլոսն, ըստ այդմ, պիտի համապատասխանի աստվա-

¹ Ա.Ա. Դ'եմ Օծր՝ Անդեսական առաջնորդության մասին, 1959, հ. 123, Ա.Ա. Էճա՛ր օյց, Էնծի ծեռ-է-քառ հանդիպեական ծանություններ, հայություն պահպանության մասին, 1959, հ. 168-169. Այդ մոտեցման քննադատությունը տես Է. Դ. Անդեսական առաջնորդությունների համար կազմակերպության առաջնորդությունը համար կազմակերպության առաջնորդությունը և առաջնորդությունը համար կազմակերպության առաջնորդությունը:

² Արմենոսի ավանդության և արգոնավորդների առասպելի քննությունը հնդեվրոպական առասպելաբանության և հայոց նախապատմության համատեքստերում տես Ա. Պետրոսյան, Արամի առասպելը..., էջ 62-102, Ա.Ա. Դ'եմ Օծր՝ Անդեսական առաջնորդությունը, հայությունը, համար կազմակերպության առաջնորդությունը, էջ 48, 119:

³ Օ.Ա. Դ'եմ Օծր՝ Անդեսական առաջնորդությունը, հայությունը, համար կազմակերպության առաջնորդությունը, էջ 48, 119.

ծաշնչյան (արամեացի) Արամի որդի Յովհան: Յայոց Արամ նահապետի որդի Արայի Գեղեցիկ մակդիրը, որն առանձին անվանաբանական արժեք ունի, ինչպես ասվեց, ծագում է հնդեվրոպական *wel- նախածնից: Յավանական է, որ Ուլոսի՝ հայերի նախնի համարվելը ոչ թե մի հին հեղինակի կամայական հնարանք է, այլ երկու ազգերի նույնանուն էպոնիմների և նրանց որդիների (Յով/Ուլոս և Արա Գեղեցիկ < *wel-) նույնացման արդյունք: Այսպիսով, հայերը հրեական ավանդություն մտցվել են ազգերի աստվածաշնչյան ծննդաբանությունների շարքը²:

Առաջին հայկանների ավանդության հետ սերտողեն կապված է Լեռնտի Մրովելու (XII դար) հաղորդած վրացական ազգածին ավանդությունը: Այստեղ Թարգամոսի որդի Յառը (= Թորգոմի որդի Յայկ), Նեբրովին սպանողը, վրացիների և կովկասյան միշարք ժողովուրդների անվանադիր նախահայրերի ավագ Եղբայրը և տիրակալն է³: Այդ ժողովուրդները պատկանում են տարբեր լեզվախմբերի, այսինքն՝ այս ավանդությունը նշանակալի չափով գրական գործ է, ստեղծված հայկական ավանդության ազդեցությամբ: Բայց և այնպես, այն արժեքավոր նյութ է պարունակում վրացիների ազգածագման և նախապատմության վերաբերյալ⁴:

«Նախահայկյան բնակչության» ավանդությունը: Ըստ Խորենացու գրքի, Յայաստանը բնակեցվել է Երկու փուլով: Զրիեղեղից հետո Քսիսութքեսի որդի Սեմը գնում է հյուսիս-արևմուտք և Երկու ամիս հաճգրվանում մի լեռան շրջանում, որը Սիմ է կոչում իր անունով (Սասունի լեռներն են): Նրա կրտսեր որդիներից Տարբանը, իր Երեսուն որդիներով, տասնհինգ դուստրերով ու նրանց ամուսիններով, բնակեցնում է մերձակա հովիտը, որը նրա անունով կոչվում է Տարբան (հետագայում՝ Տարոն): Այս ավանդությունն իբր պատմել են Յունաստանում, ըստ մի կորած գրքի, բայց այն

¹ Հովսեանսի գրքի որոշ հրատարակություններում նախընտրությունը տրվում է Ուլուսի Ուրոս ընթերցմանը (տե՛ս Օստար աղբյուրները՝ Հայաստանի և հայերի մասին 9, Երևան, 1976, էջ 56, 102, ծան. 129), բայց Աստվածաշնչի Հովու անունը ցույց է տալիս, որ ճիշտ ձևն է Ուլուսը, որը և առավել ընդունվածն է գրքի հրատարակություններում:

² Այս մասին տես *A.A./ հօծի դյր/*, Հօծ յի ու են յի ու ի է օծ է այ, ի. 86, նույնի՝ Արամի արամատեր.... է 160:

⁴ Դաձեւ, ԱՅԵՒ ու օսմանյան օսման. 1 ., 1977, Խ. 21 թիվ.

հաստատվում է գեղջուկների և «արամազնեայ» (հայ) ծերունիների հին անգիր երգերով: Խոսելով Յայկի և նրա սերունդների Յայաստանում տարածման մասին՝ Խորենացին մի քանի անգամ նշում է, որ Յայկից առաջ Կադմոսի երկրում, Յարքում, Արարատյան դաշտում և Տարոնում սակավաթիվ մարդիկ են ապրել, որոնք ենթարկվել են Յայկին և Յայկյաններին՝ հայերին:

Դժվար է ասել, թե ինչպիսին է եղել Տարբանի ավանդության հայ ծերունիների երգած տարբերակը: Այդտեղ ևս ակնհայտ են հին միջագետքյան, հունական և աստվածաշնչյան ազդեցությունները (Քսիսութքեսը Նոյի շումերական անվան՝ Զիուսուդրայի հունական տարբերակն է, Սենը՝ Նոյի որդին): Պարզ է և բերվող ստուգաբանությունների երկրորդային, հարմարեցված, բնույթը՝ օրինակ, Տարբան > Տարաւն զարգացումը լեզվաբանորեն անհնար է: Յայաստանի հին բնակիչների ավանդությունը հնարավոր կլիներ բացատրել աստվածաշնչյան ազդեցությամբ, բայց հեղինակը բագմիցս նշում է, որ այն հաստատվում է անգիր զրույցներով:

Աշխարհի բազում ժողովուրդների ազգածին ավանդություններում պատճիւմ է իրենցից առաջ իրենց երկրում ապրած հին բնակչության մասին, որին հաճախ գերբնական, արտասովոր գժեր են վերագրվել (հսկաներ, թզուկներ, աստվածություններում, դյուցագուններ): Ակնհայտ է, որ այդ ավանդություններում, ինչպես միշտ, առասպելականն ու պատմականը հանդես են օալիս կողք-կողքի, իրար միահյուսված, իրարից դժվար տարբերակելի վիճակում: Այդպիսի ավանդություններ ունեն և հայերի հարևան կովկասյան ժողովուրդները, որոնց հնագույն տեղական արմատները դժվար է վիճարկել¹ (եթե հայերներին ազգակից հնդեվրոպական լեզուները տարածված են Հնդկաստանից մինչև Խսպանիա, ապա հյուսիսկովկասյան և քարթվելական լեզուները խոսվում են միայն Կովկա-

¹ Այսպես, զատ Լեռնտի Մրովելու, Վրաստանում վրացիներից առաջ ապրել են բունթուրքերը, որոնց անունը մեկնարանվում է հենց որպես «բուն բուրքեր» (Էձի՛ Ծա՛ Ծա՛, թ. 28, 58-60, թ. ծէ 79, 85ա). շատ կովկասյան ժողովուրդների էպոսների համաձայն իրենցից առաջ իրենց երկրներում բնակվել են նարթերը (առասպելական մի ցեղ). արխազական լեզենդներում երկում առաջ ապրել են թզուկ ածանները, իսկ իրենց նախնիները եկել են Եգիպտոսից. չեչենական և ինգուչական լեզենդներում նրանց նախնիները եկել են տարբեր վայրերից՝ Կրաքիայից, Պարսկաստանից և այլն: Այս և մի շարք այլ տվյալների համեմատական քննությունը տես Ա. Պետրոսյան, Ավանդությունը՝ նախահայկյան բնակչության մասին. Նավասարդ, 1991, 10, էջ 13-15:

սում և մերձակայքում): Այսպիսով, այս տեղեկություններին միարժեք պատմական բնույթ վերագրելը մերոդաբանորեն խոցելի է¹:

Մյուս կողմից, անընդունելի կլիներ սրանցում որոշակի պատմական հիշողությունների բացառումը: Բայց հետաքրքիր է, որ այդ «նախահայկյան» բնակիչները չեն կարող նույնացվել խուռառարտական ցեղերի հետ, ինչպես կարծել են ուսումնասիրողները: Յայկի երեք որդիներից խոռը կարող է դիտվել որպես խուռիների (հակ Մանավազը՝ թերևս, ուրարտացիների) էպոնիմ²: Այսպիսով, հայոց ազգածագման ավանդության մեջ պահպանվել են հետքեր նաև խուռառարտական ցեղերի վերաբերյալ, որոնք ներառվել են Յայկյանների տոհմի մեջ: Պետք է ավելացնել, որ Արամանյակի՝ իր հոր Երկիրը բողնելը իր կրտսեր Եղբայրներին և տեղաշարժը Արարատյան դաշտ չի համապատասխանում առասպելի տրամաբանությանը՝ նահաճելի ավագ որդին պիտի ժառանգեր հոր ոստանը, ինչպես տեղի է ունենում Արամանյակի հաջորդների ժամանակ: Պատմական համատեքստում այն կարող է արտացոլել խուռառարտական ցեղերի ճնշման տակ հայերի՝ դեպի հյուսիս տեղաշարժը:

¹ Այս ավանդության քննությունը որպես առասպելական հիշողություն Յայաստանի հին տեղաբնիկների՝ ուրարտացիների վերաբերյալ, տես՝ Գ.Տեր-Սկորտչյան, Յայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1979, էջ 412-413. Գ.Սարգսյան, Ուրարտական տերությունը և հայերը. Ուրարտու-Յայաստան. Երևան, 1988, էջ 108-109, 121-123:

² Ա. Պետրոսյան, Ուրարտուի արքայատոհմի և իշխող դասի ծագման շուրջ:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԾԱԳԱՎԱԾ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
ՔԸՆԱԿԱԲ ՄԵԽԱՐԴՅՈՒՆ
Յոզեֆ Մարկվարտի 140-ամյակին (1864-1930)

Խնդիրը և աղբյուրները: Ազգ, Եվրոպական լեզուներով՝ nation, Nation, Ի ձօք ազգաբանական կատեգորիայի սահմանումը, ազգերի ձևավորման և ժառանգորդության հարցերը գիտության արդիական և միարժեքորեն ընդունված լուծումներ չունեցող խնդիրներից են¹: Ազգածագման առավել դժվարլուծելի և կարևոր մի ասպեկտն է ժողովրդի լեզվական նախնիների բացահայտման հարց՝ հնում մարդիկ տարբերակում էին իրենց ըստ լեզուների²: Այս աշխատության մեջ քննվում է հայերենի հնագույն տարբերակներով խոսող մարդկանց՝ վաղնջահայերի³ հնարավորինս վաղ

¹ Այս հարցերի վերաբերյալ կա երկու մոտեցում՝ «արիմորդիալիստական» և «կոնստրուկտիվիստական»։ Աթափնն ընդունում է ազգերի վաղնջական արմատների էական դերը, երկրորդ՝ դիտում ազգերին որպես նոր դարաշրջանին բնորոշ երևույթներ և վճռական նշանակություն տալիս ուշ ազգաստեղծ գործընթացներին։ Ի միջի այլոց, առաջին մոտեցման կողմնակիցները հայերին համարում են աշխարհի հնում ձևավորված մի քանի ազգերին մեկը։ Այս հարցերի շուրջ տես, օրինակ, A.D. Smith, *The Nation in History: Historiographical Debates about Ethnicity and Nationalism*, Hanover, 2000 և նոյն հետինակի այլ աշխատություններում, հայկական իրականության վերաբերյալ՝ L.Abrahamian, *Armenian Identity in a Changing World*, Costa Mesa, 2005.

² Հայոց ազգածագնամն և Նախապատմության վերաբերյալ իր աշխատություններում հ. Դյակոնովն առանձնացնում է ժողովուրդների ժամանգործության երեք հայեցակետ՝ կենսաբանական, մշակութային և լեզվական: Դիմ ժամանակներին ընորոշ չի եղել ցեղասպանությունը, և տարբեր ցեղերի ներգաղթն ու տեղաշարժերը հայկական լեռնաշխարհում նշանակալի թրիչքածն փոփոխություններ չեն առաջացրել տեղի բնակչության մարդաբանական միջին բնութագրերում, որն, այսպիսով, հիմնականում շարունակում է տեղի հիմ տիպը: Բացահայտ է նաև հայկական լեռնաշխարհի պատմության տարրերը դարաշրջանների նշակութային ժառանգությունն իրարից, այսինքն՝ հայերը հայկական լեռնաշխարհի հնագույն բնիների կենսաբանական և մշակութային ժառանգներն են, տես ս. Է. Դ. Այս- է՛ր ի՛ թ, լ՛ ծահանո՛ ծեց ած յի ո՞ւ ա՛ լ ած ա՞: Ածահա՛, 1968, թ. 7-9, նույնի՛ ծեց ս յօ- ի է- անո՞ւ շ ածահանո՞ւ ած յի ո՞ւ ա՛ լ ած ա՞: Ածահա՛ է Ա ի ոծ է, Նո 4, Ածահա՛, 1983, թ. 11 նույնի՛ ։ Ածահանո՞ւ լ՛ ծահենո՞ւ ծեց ած յի ո՞ւ ա՛ լ յշնսէ: Էնծո՞ ծեց ս յօ- ի է- անո՞ւ ած յի ո՞ւ ա՛ լ ած ա՞: (այսուհետև՝ Է Օ Ա Ե), 1983, Նո 4, թ. 149: Այսպիսով, վիճելի է մնում մասնաւոր հակառակ բարեկարգ բարեկարգ հայություն:

միայն հայերի լեզվական նախնիների նույնացման հարցը:
³ «Կաղնջահայ» տերմինը որպես proto-Armenian, յ՛օ յ՛օ յ՛ձի յ՛ հէջ անվանումների համամեթք առաջարկվել է Գ.Զահոնլյանի կողմէն, որը հայերենի պատմության շղանարածաննան փուլերի կերպերյալ ի հետ անդրադառնում առաջարկել է մինչև մ.թ.ա. XIIդ. հայերենը կոչել Վաղնջահայերեն, իսկ XIIդ. հետո՝ հնագույն հայերեն, տես ս Գ.Զահոնլյան, Յայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 25-26:

նույնացման ու տեղայնացման խնդիրը, նվազագույն անդրադարձով, թե ինչպես և որտեղ է ձևավորվել ու հետագայում զարգացել այդ համրույթը:

Սա, ակնհայտորեն, լեզվական խնդիր է և կարող է լուծվել լեզվաբանական քննության միջոցով: Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում վաղնջահայերենի և հնագույն հայերենի նույնացման և տեղայնացման համար մենք ունենք միայն հինգ գրավոր լեզուներով ավանդված աղբյուրների անվանաբանությունը՝ ցեղանուններ, տեղանուններ, անձնանուններ և դիցանուններ: Ըստ այդմ, պետք է քննել հինգ միջագետքյան, խեթական, հիերոգլիֆային լուվիական և ուրարտական աղբյուրներից հայտնի անվանաբանությունը և, եթե հնարավոր է, գտնել ու տեղայնացնել վաղնջահայերենով ստուգաբանվող անուններ: Անունների մեկնաբանությունը շատ դժվար խնդիր է, և միարժեք լուծումները ոչ միշտ են հնարավոր: Անհրաժեշտ են նաև բանասիրական ու պատմական՝ աղբյուրագիտական, հնագիտական, ազգաբանական վերլուծություններ և հիմնավորումներ:

Դիմաց ազգերի ձևավորման ու վաղնջական շրջանի պատմության վերաբերյալ կան երկու տիպի տեղեկություններ՝ պատմական և ավանդական, պահպանված օտար և սեփական աղբյուրներում: Հայոց նախապատմությունն ուսումնասիրողն այս առումով գտնվում է համեմատաբար նպաստավոր վիճակում՝ սկսած հնագույն միջագետքյան գրավոր աղբյուրներից մինչև առաջին հոլովակները պատմական տեղեկություններ կան Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների մասին: Ավանդականներից հայտնի են մի շարք՝ հայկական, հունական, իրեական, վրացական, արաբական տվյալներ հայերի ծագման և վաղնջական պատմության վերաբերյալ:

Հայերի ծագման ավանդությունները: Այս աղբյուրները մանրանասն քննվում են առանձին աշխատության մեջ¹, և ստորև համարության կամ աշխատության մեջ նշանակած աղբյուրները պատմական աղբյուրները կամ հայերենի մասին աղբյուրները պատմական տեղեկություններ կան Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների մասին: Ավանդականներից հայտնի են մի շարք՝ հայկական, հունական, իրեական, վրացական, արաբական տվյալներ հայերի ծագման և վաղնջական պատմության վերաբերյալ:

¹ Ա.Պետրոսյան, Ազգածին ավանդությունների աղբյուրագիտական նշանակության շուրջ (այս ժողովածուում):

Նոյի որդի Յաբեթի սերնդից: Նա բարելոնյան աշտարակաշինությունից հետո հրաժարվում է Ենթարկվել Բաբելոնի բռնակալ Բելին (նույնացված աստվածաշնչյան Նեբրովթին) և իր հսկայական՝ երեք հարյուր տղամարդ ընդգրկող նահապետական գերդաստանով գալիս բնակվում է Յայաստանում՝ Վանա լճի հյուսիսարևմտյան Յարք գավառում: Բելն իր զորքով հարձակվում է Յայկի վրա, բայց սպանվում է ճակատամարտում: Յայկի որդիներից ավագը՝ Արամանեակը, վերաբնակվում է Այրարատում՝ Արարատյան դաշտում, որը մնում է Յայկյանների հաջորդ սերունդների ոստանը: Արամանեակի որդի Արամայիսը կառուցում է Արմավիր մայրաքաղաքը, նրա որդի Ամասիայի անունով է կոչվում Սասիսը: Ամասիայի որդի Գեղամը դառնում է Գեղամա լեռների ու լճի եպոնիմը: Գեղամին հաջորդում է Յարման, սրան Արամը, ազգածին ավանդության ամենառազմական կերպարը, որը բազմաթիվ պատերազմներում լայնացնում է Յայաստանի սահմանները բոլոր կողմերից: Արամի որդի Արա Գեղեցիկը զոհվում է Ասորեստանի թագուհի Շամիրամի դեմ պատերազմում, և հայերն ընկնում են Ասորեստանի տիրապետության տակ: Սրանով վերջանում է հայոց պատմության «սրբազն»՝ դիցաբանական նահապետների դարշուանը և սկսվում «պատմությունը»:

Յայոց երկրորդ կոչվում է Յայք Յայկի անունով: Ըստ Խորենացու, օտարները Յայաստանը սկսում են կոչել Արմենիա և նման ձևերով Արամի անունով, իսկ Անանունի մոտ շեշտվում է Յայկի որդի Արամանեակ/ Արամենակի ազգածին դերը, որից կարելի է Ենթադրել, որ նա է համարվել արմեն ցեղանվան էպոնիմը: Արա Գեղեցիկի անունով է կոչվում կենտրոնական Այրարատ նահանգն ու նրա սիրտը՝ Արարատյան դաշտը («Դաշտն Արայի»):

Յայերի ծագման վերաբերյալ այլ ժողովուրդների ավանդություններից առավել հետաքրքիրն է հոլնականը, վերագրված Ալեքսանդր Մակեդոնացու երկու գորավարների՝ Կիրսիլոս Փարսալացուն և Սեդիս Լարիսացուն (Ստրաբոն, XI.4.8, XI.14.12. տես և Տրոգոս Պոմպեոսի աշխատության Յուստինոսի համառոտագրությունը՝ XLII.2.3), ըստ որի հայերի նախնին էր Արմենոսը, արգոնավորդների արշավի նասնակիցներից: Նա ծագումով Յունաստանի հյուսիսից էր, Թեսալիայի Արմենիոն քաղաքից: Նրա ուղեկիցները հաստատվում են «Ակիլիսենեում (Եկեղյաց գավառը և շրջակայքը – Ա. Պ.) և Սիսպիրիտիսում մինչև Կալարենե և Արփարենե»:

Ըստ Յովեպոս Փլավիոսի (մ.թ. I դ.), հայերը ծագում են արամեացիների էպոնիմ Արամոսի որդի Ուլոսից (Յրեական հնախոսություն I.6.4): Յունական ձևով ներկայացված Ուլոսն, ըստ այդմ,

պիտի համապատասխանի աստվածաշնչյան (արամեացի) Արամի որդի Յովլին¹:

Առաջին հայկանների ավանդության հետ սերտորեն կապված է Լեռնտի Մրովելու (XII դար) հաղորդած վրացական ազգաժին ավանդությունը: Այստեղ Թարգամոսի որդի Յառը (= Թորգոնի որդի Յայկ), Սեբորին (= Ներովը) սպանողը, Վրացիների և կովկասյան մի շարք ժողովուրդների անվանադիր նախահայրերի ավագ Եղբայրը և տիրակալն է: Իսկ ըստ արար հեղինակներ Յակուտի և Դիմաշկի (XI-XII դդ.) Յայաստանի հիմնադիրը Արմինին էր, Նոյի որդի Յաբեթի սերնոհց²:

Ազգածին ավանդության պատմական կորիզը: Հայոց ավանդության քննությունը ցույց է տալիս, որ այն տիեզերքի և ժամանակի ծագումը ներկայացնող արարչագործության առասպելի մի ուշ տարրերակ է (առաջին Հայկյանների անուններով են կոչվել երկրներ, լեռներ, գետեր, ամիսներն ու ժամերը, իսկ անվանումն առապելաբանության մեջ համազոր է արարմանը): Հայկի և նրա հաջորդ ազգածին նահապետների կերպարները ծագում են հին աստվածություններից: Առասպելական են և նրանց հակառակորդների կերպարներն ու անունները՝ այսպես, Հայկի հակառակորդ Բելը (սենական ե՛լ տեր»)՝ Բարելոնի տիրակալը, պիտի նույնացվի բարելական մեծ աստված Բել-Մարդուկի հետ: Ավանդության առանցքային կերպարները՝ Հայկը, Արամը և Արա Գեղեցիկը, կազմում են հնդեվրոպական «եռաֆունկցիոնալ» մի համակարգ, ներկայացնելով հնդեվրոպական առասպելաբանության համապատասխանաբար առաջին (տիրակալության), երկրորդ (ռազմական) և երրորդ (պտղաբերության) Փունկցիաները: Նույնական մի համակարգ են կազմում նաև հայ նահապետների հակառակորդների կերպարները (Բել, Բարշամին, Շամիրամ): Այսպիսով, սա տիպիկ հնդեվրոպական առասպել է³:

¹ Այս ծննդաբանության և հայկական տվյալների համադրության միջ վարկած տե՛ս *Ա.Պետրոսյան*, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997, էջ 160, *Ա.Ա.Ի ձօ՞ծի դյ՛ւ*, Ած յի ռուսէ յի ՛ն է լ էօ՛ է՛ հեց. Ածական, 2002, հ. 86, 176.

³ Սա ցույց է տալիս, որ Հայկանների ավանդությունը չի կարող ուշ հեղինակների հնարանքը լինել, ինչպես կարծէ են որոշ ուսումնասիրողներ: Արամի ավանդությունը հունական առասպեկտների համեմատությամբ քննել է արդեն ՅՄարկվար-

Առասպելը դուրս է իրական տարածությունից ու ժամանակից: Բայց պատմականանալով՝ առասպելը ձեռք է բերում տարածամանակային բնութագրեր: Այսպես, որոշակի պատմական իրողությունների արձագանքը պիտի լինեն հայոց առաջին նահապետների Հայաստանում հաստատվելու և նախնական տեղաշրժերի աշխարհագրությունը՝ Հայկի հիմնավորումը Հարքում և Արամանեակի տեղափոխությանը Այրարատ՝ Արարատյան դաշտ: Հայկի ոստանը Հարքում «նախնական Հայաստանն» է, իսկ իսկական, պատմական Հայաստանը սկսվում է Արամանեակից և Այրարատից, որտեղ և կենտրոնանում է հայոց տիեզերածնության հետիալյան փուլը (առասպելի հիմնական մասը): Մյուս կարևոր էտապն է Արամի կողմից Հայաստանի սահմանների լայնացումը «բոլոր կողմերից», ընդ որում, Արամի բնիկ ոստանը նույնական Այրարատն էր:

Հունական աղբյուրները հայերի ծագման մասին: Ըստ մ.թ.ա. ՎԴ. պատմիչ Յերոդոտոսի (VII.73), արմենները «փոյութիւնական վերաբնակիչներ» (Փրսցան պատմութեան առաջնական մասում) են և զինվում են փոյութիւնների նման, իսկ Եվլոքսոս Կնիդացու (մ.թ.ա. IVդ.) մի հատվածի համաձայն՝ արմենների լեզուն նման է փոյութերներին (ըստ Ստեփանոս Բյուզանդացու «Եթնիկայի»): Եվստաթիոսը (մ.թ. XIIդ.) կրկնում է այս տեղեկությունները, հիշելով, որ ըստ մի տարրերակի, Արմենոսը ռոդոսցի էր¹: Փոյութիւնները, ըստ որոշ հունական աղբյուրների, բալկանյան մի ժողովուրդ են (ծագումով Մակեդոնիայից), որոնք զարթել են Փոքր Ասիա և հիմնել իրենց թագավորությունը:

տղ, որի մի շարք դրույթներ մնում են ուժի մեջ (տե՛ս ստորև): Հայոց ազգածագնան ավանդության վերաբերյալ համեմատական առասպելաբանության համատեքստում տե՛ս S. Ahyan, *Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes. Revue de l'histoire des religion* CIC-3. G.Dumézil, *Le roman des jumeaux*, P., 1992, p. 133 sqq., Ա.Պետրոսյան, Արամի առասպելը..., Ա.Ա.Ի ձօծի-նյիր, Ածի յի հեռե յի ի ն է և է օ ի է ա յ, նոյնի Հայոց ազգածագնան հարցեր ավանդական տվյալների քննության լուսի տակ.- ՊԲՀ, 2003, №2, Ա. Կարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 225-233, 365-385:

¹ Այս տեղեկությունները բերվում և ընդունվում են բազմաթիվ աշխատություններում, տե՛ս՝ օրինակ, Ն.Ալբոնց, Դայաստանի պատմություն, էջ 306-307, 316-318, Դ.Մանուկյան, Ըննական տեսություն հայ ժողովորի պատմության, հ. Ա. Երևան, 1944, էջ 12-15, Ա.Ա.Ի Շօր առեջ, Առ ին ա օձինօձի, Աճահան, 1959, հ. 122-123, Է.Ի. Այսյեր և Շ.Ի. Շ ձաննոծ ծեյ..., հ. 204-206, *J. Greppin, Early Greek Historical Fragments Pertinent to Armenian Matters. Journal of the Society for Armenian Studies*, №1, 1984, Վ.Սատրենյան, Դայոց ծագումի հարցեր. «Դանդաս ամսօրյա» (այսուհետև՝ ՀԱ), 1991, Լ.Բարսեղյան, Հայ ժողովորի ծագման և կազմավորման հարցեր պատմահստության մեջ, Երևան, 1996, էջ 4-9:

բությունը հայտնի մ.թ.ա. VIII-VIIդդ. (Խեթական կայսրության անկումից դարեր անց)¹: Սա համահունչ է, քայլ ոչ նույնական Արմենոսի ավանդությանը, ըստ որի՝ հայերի նախնին Յայաստան է գալիս Թեսալիայից:

Ակնհայտ է, որ իհն հույն հեղինակները չեն կարող որոշել ժողովուրդների և լեզուների ազգակցության հարցերը, իսկ հունական ավանդություններում բալկանյան ծագում է վերագրվում նաև այլ, ակնհայտ ոչ բալկանյան ժողովուրդների, օրինակ, մարերին (հայերենի՝ անկախ հնդեվրոպական լեզու լինելու փաստը բացահայտվել է միայն 1875-ին. մինչ այդ լեզվաբան-հնդեվրոպաբանների կողմից այն դասակարգվել է իրանական լեզուների շարքում): Ինչեւ, հնդեվրոպական լեզուների մեջ հայերենն, իրոք, որոշ բնութագրերով նույն է հունարենին, ապա և հնաբալկանյան լեզուներին, այդ թվում՝ փոյուգերենին ու թրակերենին, բայց այս վերջինների վերաբերյալ տեղեկությունները սուր են (կասկածի է ենթարկվում ոչ միայն հայ-փոյուգական, այլև նույնիսկ թրակափոյուգական մերձավոր ազգակցությունը): Յունարենի հետ հայերենի մերձավորությունն էլ շատ մեծ չէ, ասենք, հնդիրանական լեզուների հետ ունեցած մերձավորությունից (հետինդեվրոպական դարաշրջանում հաճախ ենթադրվում է հունա-հայ-հնդիրանական միասնության մի փուլ): Ըստ այդմ, հայերենի և հնաբալկանյան լեզուների մերձավորությունը չի կարող բացատրվել միայն ամենապարզունակ ճանապարհով՝ վաղնջահայերին բալկանյան գաղրականներ համարելով²:

Վաղնջահայերի բալկանյան ծագման ժամանակակից կողմնակիցներն իրենց դրույթը ներկայացնում են գիտական պատկերացումների հետ որոշակիորեն համապատասխանեցված ձևով: Այսպես, ըստ Ի. Շակոնովի, հայերենը ոչ թե փոյուգական մի բարբառ է, այլ թրակա-փոյուգական խնճի առանձին մի լեզու: Ներողոտոսի՝ հայերի գաղթականներ լինելու դրույթը, եթե դիտվի բառացի՝ սխալ է, բայց կարող է ընդունվել, եթե դիտվի որպես վկայու-

¹ Φροντισματική περιόδου μεταξύ της αποχώρησης της Ελληνικής Δημοκρατίας από την Ευρωπαϊκή Ένωση και την επένδυσης στην Κύπρο ως διεθνής πόλη. Το πρόγραμμα ήταν ένας προσπάθεια για την ανάπτυξη της Κύπρου ως ένας δημοκρατικής και ανεξαρτητικής χώρας.

² Հայերենի և հնարքականյան լեզուների առնչությունների և հնդեվրոպական մյուս լեզուների մեջ գրաված տեղի վերաբերյալ տե՛ս՝ գ. Զահուլյան, Հայերենը և իհն հնդեվրոպական լեզուները, Երևան, 1970, նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, էջ 86-204, 296-311:

թյուն առ այն, որ հայերը եկել են Հայկական լեռնաշխարհի հարևան արևմտյան տարածքներից, որն առաջ բնակեցված է եղել խեթերով, իսկ հետո՝ փոյուգացիներով¹:

Ուրարտուի խնդիրը: Հայոց ազգածագման և նախապատմության հարցերն ուղղակիորեն առաջվում են Ուրարտուի՝ Հայկական լեռնաշխարհն առաջինը մեկ թագի ներքո միավորած հինարևելյան թագավորության գոյությանը (մ.թ.ա. IX-VIIդդ.): Ուրարտական արձանագրությունների լեզուն հայերենը չէ: Դա է այն հիմնական պատճառը, որ XIX-XXդդ. գիտության մեջ ձևավորվեց հայերի՝ Հայկական լեռնաշխարհ ուշ ներգաղթի դրույթը:

Ըստ ներկայումս լայնորեն տարածված կարծիքի, Հայկական լեռնաշխարհը վաղ բրոնզի դարաշրջանից՝ մ.թ.ա. չորրորդ-երրորդ հազարամյակներում, եղել է խուռառուրարտական ցեղերի բնօրրանը (թեև հնարավոր է, որ արդեն այդ ժամանակներից լեռնաշխարհում առկա էր նաև հնդեվրոպական տարրը)²: Խուռիական ցեղերը, սկսած երրորդ հազարամյակի կեսերից, թափանցում են Յուսիսային Միջագետք և Սիրիա ու իրենց պետությունները ստեղծում այնտեղ³: Այդ ընթացքում Հայկական լեռնաշխարհում կտրուկ կերպով փոխվում է հնագիտական մշակույթը՝ խուռիները լեռնաշ-

¹ Է. Ի. Անյեր Հայք, Ի ծանոնձի ծեյ..., 204-209, նույնի՝ Է Ի ծանոնձի ծեյ..., հ. 155, ի ծեյ ա+. 29, 173-174, մոտավորապես նույն կարծիքին էր և Աճառյանը, տես ս նորա Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 133:

² Կովկասից մինչև Հայկական լեռնաշխարհն ընդգրկող վաղ բրոնզեդարյան Կուրարաքսյան հնագիտական մշակույթի, կրողների խուռառուրարտական ծագման վարկածն առաջարկել է Չ.Բըրնին, տես ս Ch.Burney, Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age. Anatolian Studies VIII (1958), p. 166, որը լայնորեն ընդունվել է այլ ուսումնասիրողների կողմից: Չի բացառվում այդ մշակույթում նաև այլ երմիկական խմբերի, հատկապես հնդեվրոպացիների վաղ ներկայությունը: Այս հարցերի շուրջը տես ս Է. Ի. Անյեր Հայք, Ի ծանոնձի ծեյ..., հ. 20-23, Ch.Burney and D.M. Lung, The Peoples of the Hills. Ancient Ararat and Caucasus, New York, Washington, 1971, p. 47-51, Ch.Burney, Hurrians and Proto-Indo-Europeans: the Ethnic Context of the Early-Trans-Caucasian Culture. Anatolia and the Ancient Near East, Ankara 1989, նույնի՝ The Indo-European Impact on the Hurrian World. When Worlds Collide, Օ. Ա. Աձի էջանուազքա, Ա. Ա. Էսաև Հայք, Է՛ ա՛ ա՛ձի ի ա՛նուազք յշնէ է ե՛ ա՛ ա՛ձի ի ա՛նուազք, 1984, հ. 893-894: Կարծիք կա, որ այդ մշակույթի որոշ դրսնորումներ ձևավորվել են երկու՝ տեղական և արևելակենտրոնական Անատոլիայից ծագող բաղադրիչների համադրությամբ (T.Kiguradze, A.Sagona, On the Origins of the Kura-Araxes Cultural Complex. Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and Beyond, Cotsen, 2003, p. 93), որը տեսականորեն հնարավոր է համադրել այդ մշակույթի երմիկական բաղադրիչների հետ:

³ M. Salvini, The Earliest Evidence of the Hurrians Before the Formation of Mitanni. Urkesh and the Hurrians (Urkesh/Mozan Studies 3. Bibliotheca Mesopotamica 26), Malibu, 1998.

Խարիկյաց, թերևս, դուրս են մղվել նոր էթնիկական տարրի՝ միջնաբրոնզեդարյան մշակույթները ստեղծած ցեղերի ներգաղթի հետևանքով (հնարավոր է համարվում վերջիններիս հնդեվրոպական ժագումը): Իսկ մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին խուռերենին ազգակից լեզվով արձանագրություններ թողած մի հանրույթ միավորում է իր իշխանության տակ համարյա ողջ Հայկական լեռնաշխարհը մի պետության մեջ, որն ասորեստանցիներն անվանում էին Ուրարտու: Այդ հանրույթը, ելնելով ասորեստանյան անվանումից, գիտության մեջ ընդունված է կոչել «ուրարտացի», իսկ լեզուն, որով կազմվել են Ուրարտուի արձանագրությունները՝ «ուրարտերեն» (ուրարտական տեքստերում երկիրը կոչվում է Biainili, իսկ «ուրարտացիների» ինքնանվան վերաբերյալ կարելի է միայն դատողություններ անել):¹

Ուրարտու Երկրանունը հանդես է զալիս IX-VII դդ. ասորես-տանյան աղբյուրներում (Uraťu): Սրա նախնական ձևերն են հա-մարվում Uruačri/ս-ն (մ.թ.ա. XIII դար) և Uračri-ն (մ.թ.ա. X դար), տեղայնացված Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում՝ Կորդ-վաց Արարատ լեռան (Երկայում՝ Զուլի) շրջանում և հարակից տարածքներում²: Ուրարտուի իշխող դինաստիան էլ, կարծում են, ծագում էր Արդինիից (Մուծածիր): Այս երկու Երկրներն էլ գտնվում են Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում, բուն Ուրարտուի տարածքներից դուրս: Այդտեղ էին գտնվում նաև ուրարտական դիցարանի գերագույն եռյակի առաջին Երկու աստվածների՝ Խալդիի և Թեյշեբայի պաշտամունքի կենտրոնները, համապա-տասխանաբար՝ Արդինիում և Կումենուում (Զուլի լեռան շրջա-նում): Երրորդ մեծ աստված Շիվինիի կենտրոնն էր Վան-Տուշպան: Հեշտ է ենթադրել, որ Շիվինին մեծ աստվածն էր Վան-Տուշպայի շրջանի հին բնիկների, որոնց տիրել էին հարավյայն՝ Արդինիից և Կումենուից եկած նվաճողները:

Վերջին համակողմանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուրարտական պետությունը և պետության ատրիբուտները ստեղծողները, հավանաբար, եղել են չափազանց փոքրա-

² A.Á.Í. ē Óðr Íðlæðeé, Áaí ñéit á Óðaðnóáti, n. 43-46, T.Á.Áððóþrýjí, Áeàéí ééè Óðaðnóá, Áððaáá, 1970, n. 17.

թիվ՝ ուրարտերեն խոսող մի հանրույթ կազմել է կայսրության կորիզը, իսկ հիմնական բնակչությունը բաղկացած է եղել այլ տարրերից¹:

Ուրարտական արձանագրություններում հիշվում են բազում ցեղեր ու ցեղախմբեր, որոնք ցույց են տալիս, որ երկիրը բազմալեզու էր: Բոլոր իրազեկ ուսումնասիրողների կարծիքով, Ուրարտուում խոսվող լեզուներից մեկը եղել է հնագույն հայերենը, քանի որ ուրարտական արձանագրություններում կան ակնհայտ հայերեն տեսք ունեցող անվանումներ, իսկ ուրարտերեն լեզվում՝ հայկական փոխառություններ²:

Դնդեվրոպական նախահայրենիքի խմբիրը: Հայերենը հնդեվրոպական լեզու է, ազգակից Հնդկաստանից մինչև Արևմտյան Եվրոպա տարածված բազմաթիվ լեզուների (հնդիրանական, թոխարական, հունարեն, իտալյան, կելտական, գերմանական, սլավոնական, բալթյան և այլն): Այդ լեզուների նախնին՝ հնդեվրոպական մայր լեզուն կամ «նախալեզուն», պիտի խոսվելիս լիներ նախապատմական ժամանակներում, ինչ-որ սահմանափակ մի տարածքում՝ «նախահայրենիքում»: Այդ տարածքը տեղայնացնելու լուծումները փնտրվել են առասպելաբանական, լեզվաբանական, մարդաբանական, գենետիկական և հնագիտական տվյալների հիման վրա: Գիտության զարգացման նախնական էտապում այս տեղայնացվել է Արարատ լեռան լանջերին (ըստ Աստվածաշնչի), իսկ հետագայում, այլևայլ հիմնավորումներով, հնդեվրոպական լեզուների տարածման համարյա բոլոր տարածքներում, Հնդկաս-

¹ P.Zimansky, Urartian Material Culture as State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire. Bulletin of American School of Research 299-300 (1995). տե՛ս և Առևարչ՝ Archaeological Inquiries into Ethno-Linguistic Diversity in Urartu, P.Zimansky, E.C.Stone, Recent Excavations at Urartian Fortress of Ayanis. Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and Beyond. Los Angeles, 2003. Տե՛ս և Ա.Պետրոսյան, Ուրարտուի արքայատոհմի և իշխող դասի ծագման շուրջ (սույն ժողովածուում):

² Տե՛ս հատկապես Գ.Զահորյան, Ուրարտերենը և հայերենը. Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 148-161 և նույն հեղինակի այլ աշխատություններն այդ թեմայով: Հայերին Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում համեմատաբար ուշ դարաշրջանով թվագրող հ. Դյակոնովը ևս գտնում էր, որ ուրարտերենում փոխառություններ կան հայերենից, որոնցից հիշատակելի է և շաղկապի փոխառությունը, այսինքն՝ հայերենը շիման մեջ է գտնվել ուրարտերենի հետ Ուրարտուի կազմավորումից ավելի վաղ, տե՛ս I.M.Diaconoff, First Evidence of the Proto-Armenian Language in Eastern Anatolia, p. 52-53: Վերջին հոդվածում ասվում է, որ հայերը կազմել են Ուրարտուի ռազմական դասը, որը զայիս է հեղինակի՝ հայերին ռազմաշունչ զարթականություն համարելու վարկածից:

თანამდებობა ის უძღვნის Ասիայից մինչև Արևმտյան Եվրոպა, Աերառյալ Փոքր Ասիան¹:

Տարբեր դարաշրջաններում առավել մոդայիկ և ընդունված են եղել «Նախահայրենիքի» տարբեր տեղայնացումներ, բայց Դայկական լեռնաշխարհը և մերձակա տարածքները դրանց թվում չեն եղել: 1970-ականների սկզբներին խորհրդային լեզվաբաններ թ.Գամկերիձեն ու Վ.Իվանովը նոր մակարդակով առաջ են քաշում հնդեվրոպացիների՝ Դայկական լեռնաշխարհին հարակից տարածքներից, իսկ անգլիացի հնագետ Ջ.Ուենֆրյուս՝ հարավ-կենտրոնական Փոքր Ասիայից ծագելու վարկածները, որոնք հետագայում ներկայացվում են մենագրություններով²: Ըստ Զ.Մելորիի ընդհանրացնող աշխատությունների, ներկայումս առավել ընդունված են նախահայրենիքի տեղայնացնան չորս տեսակետներ՝ 1) բալթյան-պոնտական, 2) անատոլիական, 3) կենտրոնաեվրոպական-բալկանյան, 4) պոնտ-կասպյան (Կովկասից հյուսիսի)³: Այսպիսով, բուն Դայկական լեռնաշխարհը ներկայումս ևս առավել ընդունված տեղայնացումների մեջ չի մտնում, սակայն թվարկվածներից երկրորդն ու չորրորդը կարող են բնութագրվել որպես «հայաստանամերձ»⁴: Անհրաժեշտ է նշել, որ այս բոլոր տեղայնացումները հույժ վարկածային են. ակնհայտ է, որ ժամանակակից գիտությունը դեռևս հնարավորություն չունի միարժեքորեն տեղայնացնելու հնդեվրոպական նախահայրենիքը: Դա գիտնականների հաջորդ սերունդների խնդիրն է:

Հայոց ազգածագման խնդրում երբեմն էական դեր է վերագրվել նախահայրենիքին: Բայց ազգածագման հարցն ընդունելիորեն չտեղայնացվող հնդեվրոպական նախահայրենիքի հետ կապելը պարզունակեցնում է խնդիրը: Ավելին, որևէ վարկածի կառուցումը

² O.A. Aai ēdāēēācā. Å. Å. Eāāīā, Oēac. Dāā, C.Renfrew, Archaeology and Language. The Puzzle of Indo-European Origins, London, 1987.

³ J.P. Mallory, D.Q. Adams, Op. cit., p. 297-299.

⁴ Այս, ապա և հայաստանամերձ այլ տեղայնացումների վերաբերյալ տե՛ս Greater Anatolia and the Indo-Hittite Language Family (ed. R.Drews), Journal of Indo-European Studies Monograph №38, Washington D.C., 2001 և այդ գործի մեր գրախոսությունը՝ Լուսնի հասարակական գիտությունների, 2003, №2, էջ 203-211:

հնդեվրոպական նախահայրենիքի կոնկրետ տեղայնացման հիման վրա կարող է արժեգրկել այն: Նախահայրենիքի դարաշրջանը սովորաբար թվագրում են մ.թ.ա. չորրորդ հազարամյակից ավելի վաղ ժամանակներով: Նրա ցանկացած ոչ հայաստանամերձ տեղայնացումը չի բացառում հայերի լեզվական նախնիների՝ Յայկական լեռնաշխարհում գտնվելը մ.թ.ա. չորրորդ, երրորդ և երկրորդ հազարամյակներում:

Յայոց ցեղանունները: Վաղնջահայերի նույնացման և, ընդհանրապես, հայոց ազգածագման վերաբերյալ ներկայումս շրջանառվում է մի քանի գիտական վարկած: Դրանք պատմական և լեզվական մեկնաբանությունների, ենթադրությունների և վերակազմությունների համակիրներ են, որոնք կարող են միավորվել ըստ հայոց ցեղանունների՝ Յայկական լեռնաշխարհում և մերձակայքում հին աղբյուրներից հայտնի ցեղատեղանունների հետ նույնացման տեսակետների (տե՛ս ստորև):

Մյուս կողմից, եական է ոչ միայն ցեղանվան պատմականորեն ավանդված նախատիպը, այլև ստուգաբանությունը, այսինքն՝ թե ո՞ր լեզվից է ծագում և ի՞նչ է նշանակում այն: Եթե ցեղանունը լինի հայկական ծագման, ապա նրա առաջին իսկ հիշատակությունը կմատնանշի (վաղնջա)հայերենով խոսող հանրույթի գոյությունը տվյալ տարածքում և դարաշրջանում, իսկ եթե ոչ հայկական, փոխառված՝ ապա խնդիրը դժվարանում է: Ցեղանունը կարող է փոխառված լինել և մինչ այդ հիշատակությունը, և դրանից հետո, այսինքն՝ միայն այդ տվյալով հնարավոր չի լինի նույնացնել հայախոս հանրույթը:

Ցեղանուններն, ինչպես հատուկ անուններն առհասարակ, դժվար են ստուգաբանվում՝ անհրաժեշտ են կողմնակի տվյալներ, որոնք կարող են բացահայտել նրանց նախնական իմաստները: Ազգածին ավանդությունն է, որ բացահիկ հնարավորություն է ընձեռում մեկնաբանելու դրանք: Այլ տվյալների բացակայության պայմաններում միայն առասպելական անվանադիր նախնիների բնութագրերն են, որ կարող են օգնել պարզելու նրանց անունների ստուգաբանությունը, որով և մենք մոտենում ենք ցեղանունների ստուգաբանությանը (առանց այդպիսի հիմնավորման ցեղանունների ստուգաբանությունը կարող է լինել միայն մտահայեցողական):

Մեր խնդրի համար եական է Յայկի և նրա հետ կապվող հայ ցեղանվան ստուգաբանությունը: Արդեն XIXդ. այն հանգեցվել է հնդեվրոպական *poti- «տեր, տանտեր, ամուսին» արմատին

(Ֆ.Շպիգել, Ռ.Կիպերտ): Այս մոտեցումը երկար ժամանակ լայնորեն տարածված է եղել մասնագետների շրջանում, ապա մերժվել¹, բայց մեր վերլուծությունը ցույց է տալիս դրա հավաստիությունը: Այսպես, որոշ բարբառներում *հայ* բառը հանդես է գալիս որպես մեծահասակ կանանց կողմից ամուսնուն տրվող անվանում՝ «ամուսին», «տանտեր, ընտանիքի գլուխ» իմաստով (հմնտ. տարբեր բարբառներում «ամուսին» իմաստով օգտագործվող գլխավոր, գլխատեր, մեր հայր ձևերը)²: Այդ բառը չի կարող ստուգաբանվել այլ կերպ, քան հնդեվրոպական *poti-hg:

Դայկը մի հսկայական, երեք հարյուր տղամարդ ընդգրկող նահապետական գերդաստանի նահապետն է: Ըստ այդմ, Դայկի անունը նույնպես կարող է հանգել *poti-hn, դիցանուններին բնորոշ նվազական-քնքշական -hg ածանցով, (Դայ-իկ > Դայկ, հմնտ. Աստղիկ դիցանունը և Դայկի որդու նույնատիպ ածանցով կազմված Արամանեակ անունը): Դատկանչական է, որ Դայկի նահապետ կոչման երկրորդ նասը ներկայացնում է նույն արմատի իրանական տարբերակը, և նրա հակառակորդ Բելի անունը նույնպես նշանակում է «տեր» (սեմական ե՛ն, կիրառվել է նաև որպես անկախ դիցանուն):

Այս հոդվածի շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ հայոց նաև մյուս ցեղանունների ստուգաբանությանը: Այստեղ նպատակահարմար է միայն նշել, որ ազգածին ավանդության մյուս առանցքային կերպարների անունները և նրանց հետ կապվող ցեղատեղանունները նույնպես հնդեվրոպական՝ բնիկ հայկա-

¹ N.Dolens et A.Khatch, Histoire des anciens arméniens. Geneve, p. 13, Ա.Խաչատրյան, Դայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 41-42, Գ.Զահենկյան, Դայոց լեզվի պատմություն, էջ 284: Կարծում էին, որ հայերը, անցելով Դայկան լեռնաշխարհ և տիրելով տեղաբնիկ ուրարտացիներին, սկսել են կոչվել «տեր» ի հակադրություն պարտված տեղացիների: Որպես օրինակ բերվում էր հին հնովական նմանատիպ ինքնանունը՝ արյա, հակադրված ստրկացված տեղաբնիկներին: Այս մոտեցումը բնորոշ էր հնդեվրոպաբանության սկզբնական, «արհական» էտապին: Ժամանակակից պատկերացումների համաձայն, Երկու ցեղանուններն էլ հասարակության սոցիալական կառուցվածքի տերմիններ են:

² Դայ բարի այս իմաստի վերաբերյալ տես ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1974, էջ 280, Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 810, Դայոց լեզվի բարբառային բառարան, հ. 9, Երևան, 2004, էջ 238: Այս տերմինն իր տարրենակներով գրանցված է Շամախու, Ղարաբաղի, Խոյի, Սարաղայի, Սասունի, Կարինի բարբառներում: Դարցը քննարկվում է Դ.Խաչատրյանի «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» թեկնածուական աստենախոսության մեջ (էջ 95-96), որի համապատասխան հատվածը տես ս Դ.Խաչատրյան, Ամուսին հասկացության բառանվանումները հայերենի բարբառներում. «Գիտություն և տեխնիկա», 2003, №11, էջ 19:

կան ծագում ունեն: Ընդ որում, այդ անունները, ինչպես և կերպարները, փոխկապակցված են՝ որպես մեկ միևնույն առասպելաբանական համակարգի բաղադրիչներ¹:

Դայ ձևի հոգնակի սեռական *հայոց* ձևը հիմք է տալիս կարծելու, որ մինչև հայերենում Վերջին ձայնավորի անկումը (մեր թվականության առաջին դարերում) այն հնչել է *հայոց. Բայց հնարավոր է, որ *հայ* ցեղանունը այդ հոլովման անցներ ուշ, նման ձևերի համաբանությանք՝ հնմտ. *Տայոց*, *Վայոց*. Ինչևէ, ցեղանունը կարող է ծագեցվել արմատի *-(i)yo- ածանցով կազմված ձևերից, որը կարող էր միացած լինել արմատին արդեն վաղնջական ժամանակներում կամ ուշ շրջանում: Այսպես՝ *poti- > *հայ(h)-, նշված ածանցով՝ *հայոց:

Ելելով հայերի հայ և արմեն ցեղանութերից՝ արդեն XIXդ. կարծիք է հայտնվել, որ հայոց ազգածագման մեջ էական դեր են կատարել երկու էթնիկ տարր՝ հայերը և արմենները²: Այդ կարծիքը կրկնվել է բազում գիտնականների կողմից, որոնք տարբեր ժագում

² E.I. I àdéáí fá, Ááí néeá í áái éne è cí á-áí éá éó àéy enóí ðéé I ádááí áé Áçè. Ændíí áé I eí enoáðñòáá I adí áí í áí i ðí naáúñáí ev. Ni á. 1881. n. 88-90.

Են վերագրել այդ ցեղերին (Երկուսն էլ ոչ հնդեվրոպական, Երկուսն էլ հնդեվրոպական, միայն մեկը հնդեվրոպական): Ավելի հաճախ առաջիններին համարել են տեղական, ոչ հնդեվրոպական, իսկ Երկրորդին բալկանյան ծագում վերագրել: Այս պատկերացումը միայն ենթադրական է՝ իրական հիմքեր չկան այդ ցեղանունների կրողներին իրար ոչ ազգակից համարելու համար:

Արհմների վարկածը: Յայոց ազգածագման վերաբերյալ առաջին համալիր գիտական աշխատությունների հեղինակը Յ.Մարկվարտն է, որի տեսության առանցքային մի մասն է կազմուն արմեն ցեղանվան քննությունը (Նախորդ հեղինակները զբաղվել են հիմնականում հարցի լեզվական կողմով): Ըստ նրա, այն կարող էր ծագել *arm-, *arim- կամ *agum- արմատից, ուրարտական *ini* վերջավորությամբ (հմնտ. ուրարտ. Urmeni ձևը): Այդ արմատը նա համարում է «Ելիականում» (II 781-783) հիշվող Զևսի և Տիֆոնի կռվի վայրի հետ՝ εἰν 'Αρίμοις «Արիմներում»: Յն և նոր հեղինակները Արիմները տեղայնացրել են տարբեր վայրերում. դրանցից մեկն է համարվել Կապադովկիայի Արգայոս հրաբուխը՝ Փոքր Ասիայի ամենամեծ և սրբացված լեռը (Յ.Պարչ): Արիմները ենթադրվում են մի ցեղ՝ հայերի նախնիները, որոնք Բալկաններից տեղափոխվել են Փոքր Ասիա և հաստատվել Կապադովկիայի Արգայոս լեռան շրջանում, հետո անցել Յայաստան: Խորենացու մոտ Արամ նահապետը հաղթում է իր վերջին հակառակորդին այնտեղ, որտեղ հետագայում պիտի կառուցվեր Մաժակ/Կեսարիա քաղաքը, այսինքն՝ հենց Արգայոս լեռան շրջանում: Այնտեղ նա կուսակալ է թողնում իր տոհմակից Սշակին և տեղի բնակիչներին հրամայում է խոսել հայերեն, որի պատճառով հույներն այդ երկրամասը կոչում են *Պռոտին Արմենիան* - «Արագին Յայք» (հուն. Πρώτη Ἀρμενία-ի հայցական հոլովածեն է): Ըստ հեղինակի, հայերի *արհմն ցեղանվան էպոնինը դարձել է Արամ Աստվածաշնչի համանուն էպոնիմի (արամեացիների նախնու) և ուրարտական առաջին արքա Արամուի անունների ազդեցությամբ, իսկ հայ անվանումը ուշ ձև է, ստեղծված Յայաստանում¹:

Մարկվարտը քննադատորեն էր մոտենում հույն հեղինակների տեղեկություններին հայերի՝ փոյուգացիներ լինելու վերաբերյալ և գտնում, որ վաղնջահայերը Բալկաններից Փոքր Ասիա են

¹ J. Marquart, Die Entstehung und Wiederstellung der armenischer Nation, Berlin, 1919, S. 67-68, նույնի՝ Le berceau des arméniens. Revue des études arménienes, 8, 1928, f. 2, p. 215 sqq.

հասել ավելի վաղ, նախապատճական հեռավոր ժամանակներում: Դայերենի բալկանյան ծագումը նա հիմնավորում էր հայերենում բալկանյան զուգահեռների գոյությամբ: Նա նշում էր նաև հայերենում մեծաքանակ ոչ հնդեվրոպական բառերի առկայությունը և գոտնում, որ հայերը ծևավորվել են տարբեր էթնիկական խմբերի միաձուլումից:

Մարկվարտի և լեզվական, և պատմական, և առասպելաբանական մի շարք վերլուծություններ կրկնվել ու զարգացվել են հետագա աշխատություններում (Ս.Արենյան, Ն.Աղոնց, Դ.Մանանդյան, Բ.Պիոտրովսկի, Ի.Դյակոնով, Ս.Երեմյան, Վ.Բընջյանու, Գ.Սարգսյան, Ա.Պետրոսյան և այլք): Ոնանք ընդունել են արիմարմեն կապը, իսկ Կապադովկիայի «Առաջին Յայք» կոչումը երբեմն հիմք է ընդունվել այդ երկրամասը հայերի նախնական մի օրուան համարելու համար: Արմեն ցեղանվան հանար առաջարկվել են մի շարք ստուգաբանություններ¹: Պատմական համատեքստում հաճախ այն համարում են ուրարտական աղբյուրների Arme ցեղատեղանվան մի ածանցյալը², իսկ վերջինս ստուգաբանորեն կարող է կապվել Արան նահապետի անվան հնդեպրոպական հիմքի հետ³:

Մարկվարտի տեսության կարևոր մի թերությունն այն է, որ որպես ելակետ է ընդունվում ոչ թե հայերի ինքնանունը, այլ օտար-ների կողմից տրվող անվանումը (այլանուն): Մինչեւ պատմական ժամանակներում հայերն իրենց կոչել են միայն *հայ*, և թեև հնարավոր է, որ հայերի նախնիների որոշ հատվածներ երբեք կոչ-վեին *արմեն* կամ ննան ձևերով, բայց և այնպես, հայերի ծագման խնդիրը քննարկելիս որպես ցեղի նույնացման գործն առաջնային պետք է լինի *հայ* ցեղանունը⁴: Այդ մոտեցումը ներկայումն չի վի-

¹ Գ.Զահորկյան, Քայլութեալի պատմություն, էջ 285-288:

² Α.Α.Γ' είναι όρδις απότομος, Άλι πείτε αύθιαντα στην παρούσα περιγραφή, π. 124, Ε.Ι. Αύγετος 11, Τόμος 1, σελίδα 234-235, ή δειτε αντίστοιχα σελίδα 114. Ουσιαστικά το θέμα της παρούσας περιγραφής είναι η απόδοση της ιδέας της αποτελεσματικότητας της πολιτικής που προτίθεται να αναπτύξει την οικονομία της Κύπρου. Η παρούσα περιγραφή στην παρούσα περιγραφή, περιγράφει την πολιτική που προτίθεται να αναπτύξει την οικονομία της Κύπρου.

Ա. Ապուրայս, Արամի արասապելը..., էջ 158169, Ա. Ա. Հ ձօժի հյր, Ած յի ունեա յի և է էօն ի այց, էջ 175-178.

Ճարկվում՝ հայոց ազգածագման ժամանակակից վարկածները հիմնվում են *հայ ցեղանվան՝ սեպագիր աղբյուրների* հին ցեղատեղանունների հետ նույնացման տեսակետների վրա:

Խաթի վարկածը: Հայ ձեզ ծագում է խեթական Հatti (Կարդա՝ խաթի) անվանումից: Վերջինս ծագումով նախախեթական է և խեթերին է անցել Փոքր Ասիայի հին բնիկներից, որոնց, ի տարբերություն խեթերի, ընդունված է անվանել խաթեր (ոչ ճշգրիտ տերմինով երբեմն կոչվում են նախախեթեր): Այն, հայերենին բնորոշ օրինաչափություններով, կարող էր դառնալ հայ, հմնտ. հնդեվրոպական *ph^Hter- > հայր անցումը: Վարկածն առաջարիել է Պ.Ենսենը 1898-ին²: Այն կրկնվել է Յ.Աճառյանի, ապա Յ.Տաշյանի կողմից³, որոնք հետագայում, Հայասայի վերաբերյալ աղբյուրների և հայասական վարկածի ի հայտ գալուց հետո անցան Վերջինս կողմը⁴: Մեր ժամանակներում այս վարկածի եռանդում ջատագովն էր հ.Դյակոնովը, որը պաշտպանել է այն հայոց նախապատմությանը նվիրված իր մենագրության մեջ և բացում այլ աշխատություններում:

հատկապես արևմտյան հրատարակություններում շրջանառվող այն միտքը, թե հայերի առաջին հիշատակությունն ի հայտ է զայխ Դարեկ Ի-ի բժիշկունյան արձանագրության մեջ (մ.թ.ա. Vլդ.): Դա միայն Եվրոպական լեզվով է հարթ հնչում, թե «արմենների» մասին առաջին տեղեկությունը կապվում է պրով. Արմինա և արմինիյա ծևերի հետ, բայց նման մոտեցումը միանգամայն անընդունելի է: Կարելի էր, թերևս, ասել, որ այստեղ առաջին անգամ հնարավոր է նոյնացնել հայերին, բայց դա և լս միարժեք չէ: Քետպատողների մեծ մասը գտնում է, որ Դարեկ Ի-ի դեմք ապատարաք «արմենացիները» հայերն էնի, բայց կան և այլ տեսակետներ, տես՝ Դ.Տաշյան, Հարեւ և ուղարքանք, Վիեննա, 1934, էջ 343, Ա.Նօձօձա, Ի հանձ ձայն նաև էնօն ծեռ Ածի ձայն էնօն ծեռ շահ նաև հանձօն ունի է լազ էնօն բայ ՀԱՍՊ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտություններ (այսուհետև՝ ՀԳԱԾ), №8, Դ.Մարգարյան, Ուրարտացիներ, ալարողներ, արմեններ հարցի մասին. ՊԲՀ, 1991, №1:

¹ Նոր ժամանակներում զիտական գրականության մեջ մեզանում ընդունված այդ տերմինները վերցված են ռուսական ձևերից (օձածն, օձածն), որոնք ավելի ճշգրիտ են ու հաջող, քան եկրոպական լեզուներից վերցված հիթիբներ, հաթեր ձևերը (ի-ի ծիշտ համարժեքը /խն է. անհասկանալի է, թե ինչու հիթիթ, եթև գործ ունենք հիտ ածանցի հետ, հմտ. սեմիթ): Նշենք, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ խեթերը կոչվում են քետացի (Ծննդ. ժ.15, 20 և այլուր):

² P.Jensen, Hittiter und Armenier, Strassburg, 1998. Համառոտ թարգմանությունը ստուգված է Պ.Ենսեն, Հիփերներն ու հայերն. ՀԱ, 1898, № 8-11:

Դաստիարակության մասին օրենքը՝ և սահմանադրության շինարկը. - «Կիրապ», գրականացնախարարության հոգածառական ժողովականության մասին, Թիֆլիս, 1901, էջ 235, 7. Տաշչյան, Ուսումն դասական հայերեն լեզվի, Վիեննա, 1920, էջ 36-37, 83:

101

Սա հարցի՝ ցեղանվան ծագմանն առնչվող մասն է: Ինչ վերաբերում է պատմական հայեցակետին՝ Ենսենը հայերին համարում էր խեթերի լեզվական ժառանգներ, որն ընդունելի չէ (ներկայումս պարզ է, որ խեթերենը հայերենից շատ տարբեր հնդեվրոպական մի լեզու է): Իսկ Դյակոնովը մանրամասն մշակել է հայերի ազգածագման և նախապատմության խնդիրը:

Ասորեստանի արքա Թիգլաթպալասարը (1116-1090թ.մ.թ.ա.) պատմում է, որ իր գահակալման տարում 20000 մուշքեր, իրենց հինգ արքաներով, որոնք իխուն տարի առաջ նվաճել էին Ալզի և Պուրուլունզի երկրները, գրավում են Կադմուկի երկիրը (սրանցից առաջինը հայկական Աղձնիքն է, երկրորդը՝ չի տեղայնացվում, իսկ երկրորդը՝ Կաղմեայ տունը): Արքան պարտության է մատնում մուշքերի 12000 զորքը, մնացածին տեղահանում և վերաբնակեցնում, իսկ մուշքերի երկիրը միացնում Ասորեստանին: 4000 կաշկացիներ (այլ անունով՝ ապիշլացիներ) և ուրումացիներ՝ «խեթական երկրի անհանգիստ/անհնազանդ զորքեր», որոնք «քաղաքներ էին գրավել» նույն երկրամասում, առանց կովի հպատակ-վուում են առբային¹:

Դյակոնովը գտնում է, որ այդ մուշքերն են հենց վաղնջահայերը: Ըստ նրա, Խեթական կայսրության անկումից հետո (շուրջ մ.թ.ա. 1200թ.) Արևմտյան Եփրատի և Արածանիի միախառնման տեղից արևմուտք ընկած շրջանի ողջ տարալեզու բնակչությունը կոչվել է հայոց «Խեթ» տերմինով: Վաղնջահայ-մուշքերը կարող էին տարածված լինել նաև այդ շրջանում, ինչի հետևանքով և Խաթեն դարձել է մուշքերի՝ ուրարտացիների կողմից տրվող անվանումը: Հետազոյում այդ անվանումն անցնում է հենց մուշքերին, կամ, այլ կերպ ասած, ուրարտացիները, յուրացնելով մուշքերի լեզուն՝ հայերենը, դարձնում են այդ տերմինն իրենց ինքնանվանումը, *hat'iyos* ածանցյալ ձևով (այսինքն՝ հնդեվրոպական **(i)yos* ածանցով), որից և պիտի առաջանար հայ գեղանունը²:

¹ A.K.Grayson, Assyrian Royal Inscriptions, Vol. II, Wiesbaden, 1976, p. 12, 18, 66-67, 92-93, Անեօ՛տ -ահաե՛մ ի նե՞ա ե՞նօ՛ւ -ի ե՞ւ ւ ի ե՞նօ՛ւ ծե՞ Օդածօ՛ (ի ած., ծա՞ա. Է. Ի . Այսե՞ւ ի ած). ԱՃԵ. 1951. №2 (պատրիկուլ՝ ԱՃԵ ԵՕ). №10, 11, 12, 13:

² Տե՛ս, օրինակ, Ի. Ղակոնով, Խեթերը, փոյտօպացիները, հայերը. - ՊԿԱԾ, 1956, №11, էջ 77-78, Է. լ. Անցելի համար, Ե ծանոնթ ծեց..., 234-236, նույնի՝ լ աչայ Աչեց է Ածի ա՛ ը լ է՛ է՛ 600. ա՛ ի ն. չ է լ օ ան անձնու ի նեռ օձնաք, դ. 51 նու., նույնի՝ Է լ ծանոնթ ծեց..., դ. 172-173 (հաշվի առնելով սեպազի Հա-ա-թ-գրությունը, հեղինակը հաճախ օգտագործում է Հա-թ, հա՛տիոս ձևեր, երկար ա-ով): Hatio ծկը, որպես խեթերի ցեղանուն և հայ ծիփ նախատիպ արկա է արդեն Պ. Ենսենի մոտ՝

Այս մուշքերը պայմանականորեն կոչվում են «արևելյան մուշքեր», ի տարբերություն փոյուգացիների, որոնք, կարծում են, որ ավելի ուշ սեպագիր աղբյուրներում նույնպես մուշքեր են կոչվել: «Արևելյան մուշք»-վաղնջահայերը համարվում են փոյուգացիներին ազգակից, բայց ոչ նույնական բալկանյան մի ցեղ: Բալկաններում և Արևմտյան Փոքր Ասիայում հայտնի թրակա-փոյուգական տաս- ցեղանունը (հմնտ. անտիկ աղբյուրների Մոսիա/Moesia երկրանունը) կարող էր տարածվել ազգակից բոլոր ցեղերի վրա, ընդորում, «արևելյան մուշքերի» անվանման մեջ վերջին կ-ն ենթադրվում է հայերենի ք հոգնակերտը:

Ըստ հեղինակի, հայերի այդ բալկանյան նախնիները չեն կարող անցնել ողջ Փոքր Ասիայով, իներական կայսրության գոյության դարաշրջանում, առանց հետք թողնելու տարածաշրջանի գրավոր աղբյուրներում. այդ գաղթը պիտի տեղի ունեցած լիներ իներական կայսրության անկումից հետո և Ուրարտուի կազմավորումից առաջ¹: «Արևելյան մուշքերը» պիտի լինեին ավանգարդը հայ-փոյուգական ցեղերի, որոնք իներական կայսրության անկումից հետո Բալկաններից անցան Փոքր Ասիա և հաստատվեցին Յայկական լեռնաշխարհի արևմուտքում: Այստեղ, Կապադովկիայում, իին Թեգարանա հետագայում՝ Թիլ Գարիմու) երկրանասուն նրանք ստեղծում են իրենց նախնական ոստանը, որի արձագանքն է Յայկի Թորգոնյան ծննդաբանությունը: Նրանց՝ Յայկական լեռնաշխարհի այլ շրջաններում տարածվելու գործում էական է եղել ուրարտական արքաների՝ գերիների տարաբնակեցման քաղաքականությունը: Յայաստանի պատմական կենտրոնի՝ Այրարատի և Արարատյան դաշտի «հայացման» առթիվ հատկապես նշվում է Արգիշթի Լ-ի կողմից նորակառույց երերունի ամրոցում 6600 «ռազմական մարդկանց» բնակեցումը Խաթե և Շուփանի (Մալաթիա և Շոփ) երկրներից, որոնք, ըստ հեղինակի, մասամբ կամ լրիվ հայերենի կրողներ պիտի լինեին: Սկզբնական շրջանում վաղնջա-

P.Jensen, նշվ. աշխ., էջ 3-4 և այլուր, *Պ.Ենսեն, նշվ. աշխ., էջ 227-228 և այլուր*): Անհրաժեշտ է ճշտել, որ մ.թ.ա. XII դարի համար ճիշտ կլիներ կանխարդել *hat'yo- (*հարիյո-*) նախածնը, քանի որ վերջին -s-ն վաղնջահայերենում կարող էր արդեն ընկած լինել. ինչ վերաբերում է Դյակոնովի բերած *hat'yos-ին, ապա և հայերենով գրված *հատիյոս-ին*, որանք ուղղակի սխալ վերակազմություններ են, որոնցից *հայ-ո* ձևը չեր կարող առաջանալ (*ty- > y զարգացում չկա հայերենում, իսկ դասական հնդեվրոպաբանության մեջ ենթադրվող հայկական «բաղաձայների տեղաբարժը» (*t > t', որին պիտի հաջորդեր t' > y անցումը) արդեն պետք է որ տեղի ունեցած լիներ:

¹ Է.Ղ .Այցել Ի Ճ, Ի Ճահանջ Ճեյ..., հ. 203-209. Նույնի՝ Է Ի Ճահանջ Ճեյ..., հ. 168-169.

հայերը քանակապես նշանակալի հորեն զիջել են Յայկական լեռնաշխարհի տեղաբնիկներին¹, բայց, պատմական հանգանակների բերմամբ, նրանց լեզուն դարձել է ընդհանուր հաղորդակցության միջոց, և մյուս էքնոսները ձուլվել են նրանց մեջ:

Դյակոնովի վարկածն, ինչպես և մյուսները, ունի մի շարք ուժեղ և թույլ կողմեր.

ա. Ուժեղ կողմերից ամենանշանակալին սուբյեկտիվ է. սա միակ վարկածն է, որ մշակվել է ժամանակի գիտության բարձր մակարդակով և, տարբեր հայեցակետերից, լայնությամբ ու խորությամբ ներկայացնում է հայոց ազգածագման և նախապատմության հարցերը պատճական և լեզվական, որոշ չափով՝ նաև հնագիտական, մարդաբանական, մշակութաբանական տվյալների հիման վրա:

Բ. Հանձնաժողովը կատարում է հայերի՝ փոյլագացիներին ազգակից ինչեւու վերաբերյալ հին հունական տպյան ներին:

գ. Ուրումու և մուշքու ցեղանունները համարելի են Արամ նահապետի և նրա կուսակալ Մշակի անուններին, որոնք կարող են դիտվել որպես այդ ցեղերի էպոնիմներ: Սա համահունչ է ուրումացիների «Խաքե երկրի մարդիկ», այսինքն՝ «կապադովկացի» բնութագրին և մուշքերի ենթադրյալ տեղայնացմանը (միայն թե, ըստ ավանդության, Արամը Հայաստանից է անցնում Կապադովկիա, իսկ ըստ այս վարկածի, հայերը Կապադովկիայից են եկել Հայաստան)²:

Դ. Արածանի գետանունը, առաջին անգամ վկայված մթ.ա. IXդ. կեսի ասորեստանյան մի աղբյուրում, Aršania (կարդա՝ Արծանիա) ձևով, գետի ստորին հոսանքների համար³, բացահայտ հայկական տեսք ունի՝ հմնտ. *Harg- «փայլուն, սպիտակ» արմատի միայն հայերենին բնորոշ արժ (հմնտ. արժաք, արժնել) արտացոլմամբ, -անի < *-a-niyā բարդ ածանցով (Արածանի ձևը հետագա

¹ *Է. Ճ. Այս ը թա, Ի ձեռնո՞ւ ծեյ..., ի. 230, Առաջին՝ Օեւ ս յօւ է-անեօ ի ձեռնաւան-ի եւ..., ի. 17, ի ծեւ հ- 20, Առաջին՝ Ե ի ձեռնո՞ւ ծեւ..., ի. 174.*

զարգացման արդյունք է, հմնտ. հուն.՝ Ἀρσανίας ձևը): Սա ցույց է տալիս, որ հայալեզու տարրը եղել է այս շրջանում (Ծոփքում) մ.թ.ա. I դ. առաջ¹:

Վարկածի թույլ կողմերից են՝ ա. սեպագիր ի-ի և հայ. հ-ի նույնացումը, թ. հայերենում *-t- > -y- անցումը մ.թ.ա. XII դ. հետո ժամանակագրելը (որի համար այլ կովանաներ չեն բերվում), գ. հայ ցեղանվան փոխառված լինելը, երբ էպոնիմի անունը լավագույնս մեկնաբանվում է հնդեվրոպական հիմքերով, դ. հայերի ենթադրյալ *հարիյուն* ցեղանվան բացակայությունը ուրարտական աղբյուրներում, ե. մուշքերի՝ որպես «Խաթի Երկրի մարդիկ» չհիշվելը, զ. մուշքերի հետ բացահայտորեն նույնանուն անտիկ աղբյուրների մոսքերի (սեպագրում օ հնչյունը հաղորդվել է ու-ով, իսկ այդ ս-ն՝ շ-ով)` հայերին հարևան, բայց տարբեր մի ցեղ լինելը, է. ուշ ուրարտական աղբյուրներում իրարից տարբեր Խաթի և Մուշքինի Երկրների հիշատակությունը (այսինքն՝ նույնիսկ Ուրարտուի անկմանն անմիջապես նախորդող դարաշրջանում մուշքերը *հարիյուն* չեն կոչվում), ը. Վերին Եփրատի շրջակայքում նշված դարաշրջանից հայտնի անվանումներում հայերեն անձնանունների բացակայությունը և թ. որոշակի հակասությունը հայոց ազգածագման ավանդության տվյալներին, որտեղ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանները (նաև Եփրատից արևմուտք) չեն հիշվում որպես հայոց ազգածնության կենտրոն, այլ ընդհակառակը, այնտեղի հայկականացումն է համարվում Երկրորդային:

Այս թույլ կետերը հիմնականում տեսականորեն հաղթահարելի են, և հեղինակն անդրադարձել է դրանցից շատերին: Բայց որոշ հարցեր հատուկ պարզաբանման կարիք ունեն: Նախ, *հայ* < Խաթի

Դայերի՝ Դայասայի դարաշրջանին հաջորդող պատմությունը, այսինքն՝ Դայասա-Դայը անցումը, որը միջարկվում է Ուրարտուի դարաշրջանով, Գ.Դափանցյանը պատկերացնում էր այսպես: Խեթական պետության անկումը հանգեցնում է Դայասայի ուժեղացմանը: Ենթադրվում է հայասացի-հայերի էթնիկական առաջխաղացում Դայասայից դեպի Մալաթիա, և, այսպիսով, ողջ Փոքր Դայքի տարածքների գրավումը, որտեղ նրանք իրենց են միաձուլում տեղի հին բնակչությունը: Մ.թ.ա. VIIդ. վերջին և ավելի ուշ նրանք սկսում են Մալաթիայից շարժվել դեպի հարավ-արևելք՝ Ծոփք, ապա Աղձնիք և ավելի հարավ-արևելք: Տեղական ցեղերի և պարսկական իշխանությունների հզոր հակազդեցության պատճառով նրանք մ.թ.ա. VIդ. սկսում են հաստատվել Ուրարտուի արևմտյան տարածքներում և, ի վերջո, յուրացնում ողջ լեռնաշխարհը: Եղել է նաև հայերի շարժում Դայասայից դեպի արևելք, որի հետևանքով մ.թ.ա. IVդ. հայացվել է Արարատյան դաշտը: Դայերի՝ Ուրարտուի հարավային շրջաններից այս շարժումը նա համադրում է Դայկի և նրա որդի Արամանեակի ավանդությունների հետ, այսինքն՝ ժամանակագրում է այդ ավանդությունների հիմք հանդիսացած եղելությունները հետուրարտական դարաշրջանով²:

Այս խնդիրը մշակվել է նաև մյուս հեղինակների աշխատություններում (Մանանյան, Երեմյան, Սարգսյան և այլք), որոնք հիմնականում փորձել են հաշտեցնել եղած տարրեր տեսակետները: Մանանյանը, Մարկվարտի հետևությամբ, վաղնջահայերների կրողներ էր համարում Դոմերոսի արիմներին, իսկ Դայասան տեղայնացնում էր Վանա լճի մերձակայքում, որով այն նույնանում էր Դայկի ոստանին՝ Դարքին: Երեմյանը վաղնջահայ-արիմներին նույնացնում էր ուրումացիների հետ, որոնք հայ են կոչվել Դայասայի անունով: Երկու հեղինակներն էլ հայերի կողմից Դայկական լեռնաշխարհի հիմնական մասի յուրացումը թվագրել են հետուրարտական ժամանակներով: Գ.Սարգսյանը նույնական շատ չի հեռանում նախորդ հետազոտողների դրույթներից: Դեղինակը նշում է, որ մասնագետները

¹ Ա.Սովորյան, Սրբազն լեռնաշխարհը, Երևան, 2000, էջ 7-8, 36-38, 40-47, տե՛ս և A.E. Շահումյան, Առաջնահայությունների հայության մասին, Երևան, 2000, էջ 187-188.

² Ա.Ա. Էռուս, Հայության մասին, Երևան, 2000, էջ 123 հայության մասին, Երևան, 2000, էջ 155 հայության մասին:

(Գ.Խալաթյանց, Գ.Ղափանցյան, Ս.Երեմյան, Բ.Պիոտրովսկի, Ի.Ղյակոնով, Գ.Մելիքիշվիլի և ուրիշներ) առանձնացնում են Եփրատի վերին հոսանքի հովիտը որպես հայ ժողովրդի կազմավորման բնօրրան մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսում։ Դա Ղյակոնովի կողմից նշված տարածքներն են, գումարած Յայասան, որոնք, բացի Յայասայից, կոչվել են «ուշ-խեթական» թագավորություններ, բայց իրականում «էթնիկապես հագեցած են եղել հայկական տարրով»։ Յայերը Յարք՝ Յայկի ոստանը պիտի անցնեին Մալաթիայից և նրան հարակից տարածքներից։ Դրա վկայությունն է Յայկին Թորգոնի որդի համարելը՝ վերջինս աստվածաշնչյան «Թորգոնի տան» (Կապադովկիա) եպոնիմն է։ Մ.թ.ա. XII դ. ուրումացիները (որոնց հետ է կապվում արմեն ցեղանունը) և մուշքերը գրավում են լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանները։ Աշաջանում է տարբեր անվանումներով հիշվող, բայց հայկական, դեպի լեռնաշխարհի կենտրոնը ձգտող մի մեծ էրնալեզվական զանգված, որը բախման մեջ էր Ուրարտուի հետ (բախման ամենաեռում կետը՝ «հայկական էրնալեզվական զանգվածի բաստիոն») են համարվում Տարոնը և Ուրմե երկիրը։ Զի բացառվում հայկական կղզյակների առկայությունը նաև լեռնաշխարհի արևելքում, որոնցից հիշվում են Արգիշթի I-ի կողմից էրեբունիում վերաբնակեցված 6600 գերիները (Ենթադրյալ հայախոս)։ Յայկի՝ Բարելոնից Յարք անցնան ավանդությունը ճշտվում է որպես հայերի՝ Կապադովկիայից Յարք տեղաշարժ, ստեղծված մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին – I հազարամյակի սկզբներին, որպես արտացոլում պատմական իրողությունների։ Յայկի ժառանգների կողմից լեռնաշխարհի արևելյան շրջանների յուրացումը ժամանակագրովում է մ.թ.ա. VIII–VII դ. իրողություններով, որով և ավարտվում է հայ ժողովրդի կազմավորումը¹։

Այս վերակազմությունը, ինչպես և նախորդները, իմանականում մտահայեցողական է՝ ոչ մի լեզվական կամ այլ իրական հիմք չի բերվում ուշխեթական թագավորությունները և նրանց արևելյան հարևան երկրները (որոնց, բացի Ծոփքի արևմտյան հատվածից, դժվար է «ուշխեթական» համարել) հայկական տարրով հագեցած, Տարոնը և Ուրմեն՝ հայկական բաստիոն, իսկ էրեբունիի վերաբնակիչներին հայախոս համարելու վերաբերյալ։ Եթե դրանք լինեին, ապա հայոց ազգածագման խնդիրը շատ ավելի մոտ կլիներ իր լուծմանը։

¹ Գ.Մարգարյան, Ուրարտական տերությունը և հայերը, նույնի՝ Խորենացու «Յայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, ՊԲՀ, 1992, №2-3:

Հայաստանի կապի համար կարելի է ներկայացնել մի քանի ուժեղ փաստարկ.

ա. Յայսայի տեղայնացումը Փոքր Յայքի սահմաններում, որը, ի հակադրություն Մեծ Յայքի, կարող է դիտվել որպես «նախնական Յայսատան»: Փոքր Յայք անվանումը, թերևս, այնքան էլ հին չէ, բայց կարող է ակնարկել որոշ հին պատկերացումներ: «Մեծ» մակդիրով են հաճախ կոչվել ցեղի կողմից ավելի ուշ յուրացված տարածքները, իսկ «Փոքր» կոչումը անցել է այն նախնական շրջաններին, որտեղից սկիզբ է առել ցեղի հետագա ծավալումը. հնմտ. Փոքր Փոյուգիա, Փոքր Լեհաստան, Փոքր Ռուսիա և այլն¹ (բայց հնմտ. Փոքր Յայք, ասված Կիլիկիայի համար, որն ավելի ուշ է յուրացվել):

Բ. Յունական ավանդության համաձայն, Յայտայի շրջանում՝ Ակիլիսենեում է սկզբնապես հաստատվել հայոց էպոնիմ արգոնավորդ Արմենոսը²:

գ. Այն երկիրը, որը մեկնում են արգոնավորդները, հնագույն աղբյուրներում կոչվում է Աճ (Այա). սա կարող է դիտվել որպես փաստարկ առ այն, որ տեղաբնիկների լեզվում երկրանունն ունեցել է [Յայա] և ոչ [Խայա] հնչողությունը, և միայն խեթական սեպագրում է ներկայացվել («տառադարձվել») որպես Խայա-սա (Hayasha)³:

Դ. Հայկական նախաքրիստոնեական աստվածների մեջ մասի (Արամազդ, Անահիտ, Միհր, Նանե, Բարշամին) պաշտամունքները կենտրոնացած են նույն՝ Ակիլիսենեի շրջանում, Բարձր Հայքի երեք հարևան՝ Դարանաղի, Եկեղյաց և Դերջան գավառներում։ Հայոց նախաքրիստոնեական դիզարանի կառույցը և աստվածնե-

¹ Հ. Ի. Օօօաաաաաա, Աշկ. աշխ., 165-166:

³ Այս երկիր և Քայասայի նոյնացման վերաբերյալ հայագիտության մեջ առաջին անգամ տես *C. Toumanoff, Studies in Christian Caucasian History*, Washington D.C., 1963, p. 57-58, հարցի գրականությամբ (այդ համարովությունն առաջին անգամ արվել է վրացագիտական գրականության մեջ), տես և *Ա. Պետրոսյան*. Արամի առաստեղության պատմությունը. Երևան, 1988, էջ 65-69. Ա. Ա. Ղաջարյանը, ածոյ վի հեռեւ յի լի է լ եօ՛ ը այս, էջ 48-49:

ոի կերպարները որոշակիորեն համադրելի են հայասական պաշտամունքների հետ¹:

Սրանց կարելի ավելացնել նախորդ վերլուծության մի դրույք՝ Արմենոսը, որպես հայոց էպոնիմ, համապատասխանում է Կրամին, որը, մյուս կողմից, կարծես թե անձնավորում է ուրումացիների ցեղը: Իսկ այս ցեղի նախնական տարածքը կարող էր լինել Հայաստան:

Թույլ կետերն են՝ ա. հայ. հ-ի և սեպագիր հ-ի համադրությունը, բ. սպասելի սեպագիր այս-ի (= *հայո) փոխարեն հայա- ծկը, գ. (ա)շա վերջավորության՝ տարածաշրջանի տեղանուններում ոչ տարածված ածանց լինելը, դ. Հայասայի անվանաբանության մեջ վաղնջահայ տարրի ոչ բացահայտ լինելը, ե. հայոց ազգածագման ավանդության մեջ Հայասայի հիմնական տարածքների դեր չունենալը և նույնիսկ չիհշատակվելը, զ. հետխեթական դարաշրջանում Hayasa-ի հետ համարելի ցեղատեղանունների բացակայությունը:

Զնայած թվացյալ նույնությանը, նախաձայն հ-ի համապատասխանությունը սեպագիր է-ին հայ < Հattī և հայ < Հaya(ša) վարկածներում տարրերում է իրարից: Առաջին դեպքում հայ ցեղանունը փոխառված է համարվում խաթի-ից, իսկ երկրորդում ենթադրվում է, որ խեթերի համար օտար *հայ- ցեղանունն է հաղորդվել որպես սեպագիր հայ- (այսինքն՝ առաջին դեպքում օտարալեզու՝ խեթական խ-ն է հայերենում արտացոլված համարվում որպես հ, իսկ երկրորդում՝ վաղնջահայ հ-ն է խեթական սեպագրում ներկայացվել որպես խ): Ինչպես ասվեց, ըստ Գրեպինի, հայ-խեթական բառային համընկնումներում հայ. հ-ի և խեթ. է-ի համապատասխանությունն ակնարկում է ընդհանուր ծագում: Հayaša-ն խեթերեն բառ չէ, այլ խեթերին օտար մի երկրի անվանում, և այդ մոտեցումն այստեղ կիրառելի չէ: Բայց կարելի է ասել, որ եթե հայ և Hayas̫a = Խայասա անվանումներն ինչ-որ կերպ

¹ Որոշ փաստեր բոլյ են տալիս նույնիսկ ենթադրելու, որ Հայաստայի գերազագույն աստծու գաղափարի տակ քաքնված է հայոց էպոնիմ Հայկը, ավելի ճիշտ՝ նրա հնագույն նախատիպը: Այսինք, Հայաստայի գլխավոր աստվածը, Ներկայացված՝ U.GUR գաղափարագրով, հանապատասխանում է անդրաշխարհի և պատերազմի միջազգեռյան աստված Ներզարին: Միջազգեռյան պահնողություն Ներզարի անունով է կոչվել Մարս նոլորակը, որը հայոց մեջ, ի թիվս այլ անունների, կոչվել է Հայք: Այս հարցերի շուրջ տե՛ս Ա.Ա./ձօծ՛նյ/՝ Ածի յի հեռեւ յի ն է է օհի է՛ հեյ, ո. 139-147, Ա. Պետրոսյան, Հայոց ազգածագման հարցեր..., էջ 212-217, նույն՝ Հայկական դիզայններ.... 207-208, 221-225:

կապված են իրար հետ, ապա խեթական հայաշա-ն է ծագում տեղական, հնարավոր է՝ հայկական հայ-ից:

Հունական աղբյուրների Այան հետագայում նույնացվել է Կոլխիդայի հետ (Այս ուշ աղբյուրներում քաղաքի անուն է Ոհոն գետի վրա)¹, իսկ հնագույն Կոլխիդան, գոնե մասնակիորեն, համընկել է Հայասայից²: Արգոնավորների առասպելը և Այա երկիրը թվագրվում են Տրոյական պատերազմին նախորդող սերնդով (մ.թ.ա. XIIIդ.), այսինքն՝ Հայասայի գոյության դարաշրջանով: Ըստ այդմ, թեև դա մինչ այժմ ասվել է միայն վարկածային ձևով, առասպելաբանական Այան պետք է համապատասխանի Երկրային Հայասային (և ինչպես կարող է միևնույն տարածքների՝ միևնույն դարաշրջանով թվագրվող երկու անվանումների այդպիսի նմանությունը պատահական լինել): Խեթ. հայաշա-ի և հուն. Այաի համադրությունը ցույց է տալիս, որ այդ Երկրանվան արմատը պիտի լիներ հայ-ա: Դայ ցեղանունը վերականգնվում է որպես *հայո-, բայց, ինչպես ասվեց, հնարավոր է, որ ո հիմքը ուշ երևույթ լինի: Եվ հնարավոր չէ³, որ Դայան լիներ հայ ցեղանունից կազմված Երկրանուն (*ցա ածանցով): Ընդհանրապես, ավելի հավանական է, որ օտարալեզու հ-ն սեպագրում հաղորդվեր հ-ով, բան այն, որ օտարալեզու խ-ն հնագույն հայերենում ընկալվեր որպես հ:

Այս վարկածում ևս հայ էթնոսն իր անվանք ի հայտ չի գալիս ուրարտական արձանագրություններում, որոնց ողջ հսկայածավալ անվանաբանության մեջ չկան սեպագիր հայ-, հայա- տարրով անվանումներ (Հայասան չի հիշվում խեթական դարաշրջանից հետո, իսկ նրա տեղում ուրարտական աղբյուրները հիշում են Դիառլիի թագավորությունը): Ուրարտական աղբյուրներում չկա և ոչ մի տեղեկություն, որ ակնարկի Հայասայի բնակիչների կողմից լեռնաշխարհը յուրացնելու մասին: Եվ ի. Դյակոնովը հայասական վարկածը բացառելու հիմնական կարևոր հիմքերից մեկն է համարում Հայասայի և Հայքի միջև պատճականորեն գրանցված կապերի բացակայությունը³: Դա է գլխավոր պատճառը, որ Գ.Սարգսյանի՝ այս

¹ Այս քաղաքի տեղադրության վերաբերյալ տե՛ս Ա. Անդրեև-Շահումյան, Է հահահահ է յի Դ է յի նույնացնելու համար անհնարինությունը, Պատմական անհնարինությունը Հայասայի պատմության մեջ, Խոհեմարտ Հայոց պատմության անհնարինությունը, Երևան, 2004, էջ 52:

² Հնագույն Կոլխիդան (ուրարտ. Quilha, վկայված մ.թ.ա. VIIIդ.) գտնվել է ճորոխի ավազանում (Ա. Ա. Ղազարյան, Հայասայի կազմում:

³ Է. Լ. Անդրեև, Պատմական անհնարինությունը, Երևան, 2004, էջ 172.

վարկածի պատմական մեկնաբանությունը, բացի «նախնական Հայաստանի» մեջ Հայասան և ընդգրկելուց, շատ կետերում համարյա նույնական է Դակոնովի տեսությանը: Սա, իհարկե, չի նշանակում, որ չկան այլ հնարավորություններ: Յենց Գ. Զահոռկյանի աշխատություններում կա Հայասա-Հայք անցման մեկ այլ, անվանաբանական նյութի հիման վրա արտահայտված մի տեսակետ, որը, ցավոք, չի քննարկվել պատմական համատեքստում¹:

Ինչպես ասվեց, Հայկի տեղայնացումը Վանա լճի հյուսիսում՝ Հարք գավառում չի կարող բացատրվել առասպելաբանական պատճառներով, այլ պիտի որ պատմական հիմք ունենա: Հայասա-Հայք ժառանգորդությունը կարող է ընդունելի լինել, եթե Հայասան ընդգրկել է նաև Հայկի հանգրվան Հարքը, այսինքն՝ Վանա լճի հյուսիսը: Այս դրույթը ևս կարող է որոշ կովաններ ունենալ. ա. Հայասայի քաղաքներից մեկը գտնվել է «ծովի մեջ», որն, ըստ որոշ հետազոտողների, կարող էր լինել Վանա լիճը (տեղայնացումը շատ ենթադրական է՝ հուսալի տվյալներ չկան)², բ. հնարավոր է

¹ Վանա և Ուրմիա լճերի հարավային շրջաններում համբիանում են այ-բաղադրիչով սկսվող մի շարք անվանումներ (Այա, Այագանան, Այալե, Այսիաշ, Այասոն, Այդոն), որոնք տեսականորեն կարող են կապվել *հայ* ցեղանվան հետ, տես ս. Գ. Զահոռկյան, Ուրարտերենը և հայերենը, էջ 159-161 (Ըկատենք, որ անվանումների վերջին մասերը բողնվում են հիմնականում առանց մեկնաբանության, իսկ Այած-Այդոնի և հայ. տուն բարի կապը հույժ ենթադրական է): Ըստ հեղինակի, այս տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ հայկական ցեղերի՝ *հայ* ցեղանունով բնորոշվող խումբը տեղայնացվել է լեռնաշխարհի հարավում (ի հակադրություն արոնեն ցեղանունով բնորոշվող խճի, որն ըստ Arme, Urme անվանումների տեղայնացվում է արևմտաքում): Այս միտքը ևս խոցելի է՝ անվանաբանությունից հայտնի է, որ տեղանուններում որևէ ցեղանվան հանդես գալը այդ ցեղի լայն տարածվածության ցուցիչ չէ. օրինակ, «Ուլսական» կոչվող մի գյուղ կարող է լինել ինչ-որ տեղ՝ Ղազախստանում և ոչ բուն Ուլսաստանում, ուր բոլոր գյուղերը ռուսական են, տես ս. Ա. Ա. Շահումյանը, Անդրեաս Մանուկյանը, 1965, հ. 40: Եթե այդ անուններն իրոր կաա ունեն *հայ* ցեղանվան հետ, ապա դրանք ցույց են տալիս, որ հայերն այդտեղի հին բնակչների մեջ ուշ եկվորներ են (քանի որ ցեղանունից ստեղծված տեղանուններ կարող են լինել միայն օտար շրջապատում): Եվ հեղինակը էլ, բերելով հայասական անունների զուգահեռներ ուրարտական անվանաբանությունից (Խայաշ - Ayduni, Azzi - 'Aza, Հուգանա - Հուկա, Baltaik - Baltulhi, Arhita - Arhi, Arniya - Arna, Duqqama - Duqama, Halimana - Ulmania, Elamunia, Alaman, Parraya - Parra), ենթադրում է, որ եղել է «Հայասայում և մերձակայքում գտնվող ցեղերի տեղաշարժ դեպի հարավ արևելք՝ ընդհուպ մինչև Ուրմիա լճի հարավը»:

² Այդ քաղաքի՝ Վանա լճի շրջանում գտնվելու վերաբերյալ տես՝ E. Forrer, Hajasa-Azzi. Caucasica. Fasc. 9, 1931, S. 17-18, Բ. Ա. Դաշտակյան, Նույնական հայությունները Հայաստանում, 1986, S. 23. Այլ տեղայնացումների մասին տես՝ Ա. Թույսան, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյունների), Երևան, 2004, էջ 38-39:

հայասական Arհիտ տեղանվան համապատասխանությունը ուրարտական Arհի-ին¹ (Մուշից ոչ հեռու), իսկ Վերջինս Գ.Սարգսյանը նույնացնում է հենց Հարդին²:

Եական թույլ կետերից է, ինչպես նախորդ վարկածում, հայերենով հուսալիորեն ստուգաբանվող անունների բացակայությունը վաղնջահայերի ենթադրյալ նախնական տարածքներում։ Նշվել է, որ հայասկան անունների թիվը փոքր է, և եթե որևէ երկրում մի լեզվով ստուգաբանվող անունների առկայությունը կարող է համարվել այդ լեզվի ներկայության ցուցիչ, ապա բացակայությունն ապացույց չէ այդ լեզվի բացակայության (օրինակ, ուշ խեթական անվանաբանության մեջ խեթական տարրը չնշին է)³: Ինչևէ, այդ բացը լրացնելու փորձ է արվել Գ.Զահուկյանի վերջին աշխատություններում, բայց Դայասայի և մերձակայրի անունների (հատկապես՝ անձնանունների) առաջարկվող հայկական ստուգաբանությունները մտահայեցողական են և կասկածելի⁴, մինչեւ ի հայտ են գալիս

¹ Ա.Ա.Աշածըյի, Ծանոթագրություն հայության մասին, էջ 19. Յետաքրքիր է, որ Arhita-Arhî համապատասխանությունը կարող է բացատրվել հայկական *-t-> -y- զարդացմամբ (-ita > -iya > -ia), որը այդ դեպքում կժամանակագրվի Յայսասայի և Ուրարտուի միջև ընկած դարաշրջանով:

4. Սարգսյան, Ուրարտական տերությունը և հայերը, էջ 93, նույնի՝՝ Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, էջ 39. այս համադրումը լրացվում է Պլինիոս Ազագի հիշատակած Archene գավառի և Յարքի նույնացմանը (ըստ Մարկվարոսի և Սանանյանի): Այս նույնացումների շարքն, հիհրութեան շատ ենթադրական է (հնմտ. *հայ-Հեյասա*, բայց Յարք-Արհիտա, և ոչ սպասելի *Հարկի* համապատասխանությունը): Ինչևէ, այդ դեպքում հնարավոր կլիմեր Յայկ նահապետի նույնացումը Արհիտա քաղաքի աստված՝ Ու տաքսանաժ-ին, հեռուս զնացող ընդհանրացումներով (այս աստվածը համապատասխանում է Խորթիական Թեշուրին, իսկ Վերջինս՝ Յայկին, *A. A./ Ճօծ՛ի նյ՛,* Ած յի հեռէ յի ն՛ է ն՛ է հ՛ է անը, ն. 54, *Ա. Պետրոսյան, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը. ՊԲՀ, 2002, №2, էջ 251-253):*

³ Օ.Ա. Անմեծագործ է Ա.Ա. Էջմանը, Օք. Թաա, թ. 913.
⁴ Սիս մի շաբա ստուգաբանություններ հեղինակի՝ այդ թեմային նվիրված վերջին հոդվածից (*G.B.Djahukian, Did Armenians Live in Asia Anterior...*, թ. 26-27): Արական անձնանուններ՝ Aisya – հայ. այժի, Aniya – հանի «տատ, նախնի», Mariya – մարի «եզրչուն». դիցանուններ Terittitunpi - «Երտտուն «եռապոչ», Siliisi [...] սիլիս «սիրեկան». տեղանուններ՝ Azzi – հմնտ. ազ-«ջոր», Ingalaوا – հմնտ. ըմկալ կամ անգա, Arziya – հմնտ. արժ-նել, արժ-աթ, Lahirhila – հմնտ. հիյու/խու «խոճիք»: Ցավոր սրտի, այս հողվածի սահմաններում հնարավոր չէ քննարկել այդ ստուգաբանությունները, բայց նշենք մի քանի նկատառությունները կասկածել են, Terittitunpi-ն առավել հիշեցնում է բականան դիցանունները (հմնտ. հուն. Τρίτων, Τιθονός, Τιτύος, Τιτάνες), իսկ Arziya-ի Հայաստանում գտնվելու կասկածելի է: Բոլոր ստուգաբանությունները կամացական են, քանի որ չկան ոչ մի հիմք դրանց մեւնաբանության համար: Ասպածի ոչ թե Ժատուն

ակնհայտ անատոլիական և բալկանյան տեսք ունեցող անուններ¹: Հայասական անունների՝ այլ հեղինակների կողմից առաջարկված հայկական ստուգաբանություններուն առավել կասկածելի են:

Անհրաժեշտ է հատուկ անդրադառնալ հայերի՝ վերին Եփրատից արևմուտք նախնական հանգրվան ունենալու վարկածին: Ուսումնասիրողների համար երկար ժամանակ ելակետային է եղել հայերի արևմտյան՝ Բալկաններում, ապա Կապադովկիայում նախնական օրրաններ ունենալու դրույթը: Այս մոտեցումն է իշխում ոչ միայն Մարկվարտի և Դյակոնովի, այլև հայասկան վարկածի կողմնակիցների շրջանում (Ղափանցյան, Սանանյան, Երեմյան, Սարգսյան), որոնք նույնաեն վաղնջահայերին Հայասայից տանում են Կապադովկիա՝ Մալաթիայի շրջանը, ապա նոր միայն բերում Հայաստան: Բայց, ինչպես տեսանք, Մալաթիայում և մերձակայքում վաղնջահայերի և հայերի հետքեր չեն բացահայտվում, իսկ Հայկյանների ավանդության մեջ, մինչև Արամ նահապետի առապելական հաղթանակը Կապադովկիայում, արևմտյան տարածքները չեն հիշվում: Այդ պատճառով առաջ է քաշվել Հայկի՝ Թորգոնյան (կապադովկյան) ծննդաբանությունը, ի հաստատումն հայերի արևմտյան ծագման և «նախնական Հայաստանի»՝ Մեծ Հայքից ավելի արևմուտք գտնվելու, որտեղից և հայերը կարող էին անցնել արևելք²: Կապադովկիայի հունարեն «Առաջին Հայք» կոչումը, կարծում են, կարելի է ընկալել որպես «Նախնական Հայաստան»³: Բայց խորենացու հիշած «Առաջին Հայքը» հիշոմեական պրովինցիայի անվանում է՝ ստեղծված մ.թ. IVդ., և այդ անվանումը հնացնելու հրական հիմքեր չկան:

Ե այս ստուգաբանությունները և Գ.Զահորեականի՝ հարցի լավագույն գիտակի կարծիքը, այլ շեշտում դրանց վարկածային բնույթը:

² Նման տարբեր մենարախոնություններ տես՝ Յ. Սարգսյանի, Ա. Աղաբեկյանի, Ա. Երեմյանի և այլոց աշխատություններով. հարցի Վերաբերյալ առավել խորությամբ տես Է. Ի. Անցեղի հայոց պատմությունները, Ա. Պողոսյան, Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, Ա. Քոչյան, Տուն Թողոջնայ, Եղվան, 1998:

³ Սեբաստիան, Յայերի ցեղային միությունը Արմե-Ծուարիա երկրում, Յայ ժողովողի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 233:

Թորգոնը Աստվածաշնչի Բեթ Թողարման է (Եբր. Twgrmh, Tgrmh, Trgmh, հուն. Θοργαμά, Θωργαμά, Θεργαμά), հայ. Տուլ Թորգոնայ, որը համապատասխանում է ասուր. Tegarama, խեթ. Te/akarama, լուվ. Lakarama տեղանվանը Կապադովկիայում: Հայերի՝ աստվածաշնչի Թորգոնի հետ ունեցած կապն ուշ երևույթ է: Հովսեպոս Փլավիոսի (Իղ.) մոտ Թորգոնը (Թորգամես, Թյուգրամես) փոյուզացիների նախահայրն է, իսկ հայերն, հնչպես տեսանք, ծագեցվում են Արամի որդի Ուլոսից: Որպես հայերի նախահայր Թորգոնն առաջին անգամ հանդես է գալիս քրիստոնյա հեղինակների՝ Հիպոլիտոսի (IIIԻ.), ապա Եվսեբիոսի մոտ (IVԴ.):¹ Այստեղից էլ այդ ծննդաբանությունն անցել է առաջին հայ հեղինակների՝ Ազարանգեղոսի, Փավստոսի, Խորենացու երկերը: Թորգոնը Գոմեր/Գամերի ժառանգն է, որը ներկայացնում է Կապադովկիան (Ծննդ. X.2-3, Խորենացի, Ա. ե, թ. Ժբ. հմնտ. հայ. Գամիրը «Կապադովկիա»): Թորգոնի՝ հայերի նախնի համարվելու գաղափարը կարող էր գալ հայերի՝ Կապադովկիայի հարևանները լինելու փաստից: Մրա հաջորդ քայլն է հայերի՝ Թորգոնի եղբայր Ասքանազից սերված համարվելը (առաջին անգամ՝ Կորյունի մոտ): Այսպիսով, չնայած հայերի Թորգոնյան-կապադովկյան ծագման հարցի շուրջ եղած բավական նշանակալի գրականությանը, այն հիմնված է Աստվածաշնչի մի ուշ մեկնաբանության և Արամի՝ Կապադովկիայում ունեցած ծակատանարտի առասպելի համարության վրա, որը գալիս է հայերի արևմտյան ծագման դրույթը հաստատելու ձգտումից: Այս հարցում միակ իսկական կրվան կարող է լինել շրջանի անվանաբանության մեջ հայկական տարրի գոյությունը, որի համար լուրջ հիմքեր չկան: Կապադովկիայի պատմությունը և անվանաբանությունը բավական լավ հայտնի են, բայց ոչ մի դարաշրջանում հայերենով քիչ թե շատ հուսալիորեն ստուգաբան-վոր անուններ ավանդված չկան:

Ինչ վերաբերում է միջագետքյան ՀԱ.Ա-ի և Հայաշա-ի համադրությանը, այն, թեև բավարար չափով մշակված չէ, բայց խոստումնալից է: Ծուբուր լեռնային երկիրը, հավանաբար, բնակեցված էր այլալեզու ցեղերով, որոնց մի մասը կարող էր և հնդեվողական լինել¹: Այդ դեպքում, պետք է մշակել, թե ինչ ճանապարհներով պիտի իրականանար ՀԱ.Ա (Ծուբուր)-Հայաշա-Յայք պատմական գարգացումը:

Այսպիսով, հայասական վարկածը ևս, չնայած իր լայն տարածվածությանը մասնագետների շրջանում, ունի մի շարք թույլ կետեր և չմշակված դրույթներ: Մի կողմից, դժվար է հավատալ, որ իրար այդքան նման երկու անվանում՝ Յայսա և Յայք, իրար հետ կապված չլինեն (մյուս առավել ուժեղ փաստարկն է հայոց նախնի Արմենոսի և հիմնական հեթանոսական պաշտամունքների տեղայնացումն այդ շրջանում): Բայց, մյուս կողմից, կան դժվարություններ, որոնք խանգարում են պատկերացնել Յայսա-Յայք գարգացումը:

Եթիունյան վարկածը: Յայ ցեղանունը կապված է ուրարտական աղբյուրների Էտիս- երկրանվան հետ (Ներկայացված Էտիսու կամ Էտիսի ածանցյալ ծևերով՝ «Եթիուական երկիր»): Այդ երկրի տարածքը հիմնականում համապատասխանում է Մեծ Յայքի Այրարատ նահանգին²: Յայ ցեղանվան հնարավոր նախատիպերից մեկը, ինչպես տեսանք, կարող էր լինել *hat'iyo- (*հարիյո-), հնդեվրոպական *poti-yo-hg կամ, եթե լեզվաբանորեն և պատմականորեն հնարավոր է՝ հati-hg: Սեպագրում չկան նշաններ [օ] հնյունի համար՝ այն հաղորդվել է որպես *ու* և, ընդհանրապես, ուրարտ սեպագիր *ու*-ն սովորաբար հաղորդում է [օ]-ն³ (Ի.Դյակոնովն իր գրքի անգլերեն տարբերակում Էտիս-ն տառադարձում է որպես Etio)⁴: Սեպագրում չկան նշաններ նաև [հ]-ի համար, և այն կարող էր չհաղորդվել (ուրարտական սեպագրում է-ի նաև [հ] հնյունը

¹ Տարբեր աղբյուրներում հիշվող շուրարական բառերի և անվանումների վերաբերյալ տես և *I.J. Gelb*, Op. Cit., p. 15-22. Ծուբարա-հայկական հնարավոր առնչությունների վերաբերյալ *A. A. Շահումյան*, Առաջնային հայության առաջնային հայությունների մեջ կապը, Երևան, 1988, 188-189:

² *I. A. Ածօծիքի յանական առաջնային հայությունների մեջ կապը*, Երևան, 1988, 262-263.

³ *E. I. Անդրեասյան*, Առաջնային հայությունների մեջ կապը, Երևան, 1985, 34:

⁴ *I.M. Diakonoff*, The Pre-History of the Armenian People. Delmar, New York, 1984, p. 134, n. 21.

հաղորդելն ընդիմանապես կասկածելի է¹: Ուրարտ. ե-ն հնչել է, հավանաբար, որպես լայն [ε] կամ նույնիսկ [æ]: Դա է, թերևս, պատճառը, որ ուրարտ. նախաձայն ե-ին հայ-ուրարտական համընկումներուն սովորաբար համապատասխանում է հայ. ա-ն²: Կարելի է կարծել, որ հնագույն հայերենում կամ գոնե նրա մի բարբառում ան ունեցել է այնպիսի (փակ) արտասանություն, որ ուրարտերենում ընկալվել և հաղորդվել է որպես ε [ε/æ]: Այսինքն՝ հայ. *hat'i(y)-օն ուրարտերենում կարող էր «տառադարձվել» հենց որպես ետ:

Ընդ որում, պարտադիր չէ, որ հայ. ՚ > յ անցումը տեղի ունենար մ.թ.ա. IX-VIIդդ. հետո: Ե՞օ-ն, որպես լեռնաշխարհի մի նշանակալի մասը տիրող ցեղի անվանում, կարող էր ուրարտերենին անցած լինել գրավոր վկայված լինելուց դարեր առաջ, մինչև մ.թ.ա. IХդ., երբ այն հնչում էր որպես հաթի՛ռ, և մնար ուրարտենում այդ հին ձևով, մինչդեռ հնագույն հայերենում կարող էր արդեն հայոց ձևը ստացած լինել:

Այսահոտվ, ըստ այս վարկածի, հայոց երկիրը՝ ուրարտական ժամանակների Յայաստանը, ուրարտական աղբյուրներում հանդես է գալիս որպես Etiu-ni/ի: Վարկածն առաջ է քաշվել մեր կողմից 1983-ին և իհմնավորվել մի շարք աշխատություններում (իրատարակված 1984-ից):

¹ Ե. Լ. Այսեղինա, Ղ ածածեան է Օ Ի ածեան օծածողի հ յշւնեա, ՞ 42, 52, Ե. Լ. Օհա-էջեց, Օօծածողուն է օծածողուն յշւնեա, ՞ 41. հմտ. և ուրարտ. Abuni – հայ. Յալ(ն)ունիք (Դ. Ա. Ածածօթից յիշ, Օեաչ. Թաա, ՞ 9-10) ու Arhi – Յառը (?) համապատասխանությունները, որոնք կարող են բացատրվել տեղական հ-ի՝ ուրարտական սեպագուում չարտացոլվելով:

² Հնագույն պատմական շահագույն լուսաբանութեավ:

Ս.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին Եթունին եղել է հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային շրջաններն ընդգրկող ցեղերի մի նշանակալի կազմավորում՝ կոնֆեղերացիա: Ցավոք, Եթունիի, ինչպես և լեռնաշխարհի մյուս նշանակալի ցեղամիավորումների պատմությունը դեռ սպասում է իր գրողին: Դատելով Վանի արքաների արձանագրություններից՝ Եթունիի բաղկացուցիչ իշխանությունները նրանց արշավանքների արդյունքում բազմից նվաճվել են, ավերվել, իսկ բնակչությունը՝ գերեվարվել:

Արդեն հշպուինին և Սենուան, մ.թ.ա. I Խդ. վերջին հիշում են իրենց հակառակորդ ցեղերին օգնության եկած «Եթուլսիի արքաներին»¹: Յաջորդ արքաները պատմում են իրենց նորանոր հաղթական արշավանքների մասին: Այդ տեղեկությունները միակողմանի են՝ անընդհատ հիշվում են միայն Կանի արքաների հաղթանակները և նվաճումները: Բայց և այնպես, որոշ դեպքերում ի հայտ են գալիս հակառիի փաստեր: Ըստ Արդիշի Լի տարեգրության մի հատվածի մեկնաբանություններից մեկի, եթիւնցիներն այդ հզոր արքայի ժամանակներում ողջ տերության միջով արշավել են մինչև լեռնաշխարհի ծայր հարավ և առևանգել Արդինի քաղաքի աշտւզն, որն իմաստավորվում է որպես «կուռք, աստված» և համեմատվում հայ. աստուած բարի հետ²: Ուսւա Լի ժամանակների (մ.թ.ա. շուրջ 730-710թթ.) ասորեստանյան հետախուզական մի աղբյուրի համաձայն, «Եթինացիները երկու անգամ ապստամբել են նրա (Ուսւայի- Ա.Պ.) դեմ, նրանք ռազմական կորուստներ են պատճառում նրան, նրանք ավարառության են ենթարկել նրան: Երրորդ անգամ նրանք ելնում են նրա դեմ: Ուրսան (Ուսւան) եկել է ուղիղ Տուրուշպայից (Տուշպայի ասուրական անվանումն է), զնում է ևս

² Ա.Լ. Ի ձեռնաթագավորության մասին օրենքը՝ ՀՀ օրենք 146-147, կազմակերպությունը պահպանության մեջ մտնելու մասին օրենքը՝ ՀՀ օրենք 178, 180, ի ծնէ ձ. 44:

մեկ անգամ էթինացիների դեմ»: Ըստ մեկ այլ, հատվածաբար պահպանված աղբյուրի, «Ուրարտուն ավերված է», որից հետո հիշվում են «Էթունացիները», որոնք և, կարելի է կարծել, ավերել էին երկիրը¹: Կասկած չկա, որ այս «էթինացիները» և, թերևս, «էթունացիները» (e-ti-ni-a-a, e?-tu?-na-a-a, երկրորդ տեքստը վնասված է) եթունացիներն են, որոնց անվանումն ասորեստանցիները փոխառել են ուրարտերենից: Այդ դարաշրջանում չկար նման անվանումով մեկ այլ երկիր կամ ցեղ, որ կարողանար մի քանի արշավանք կազմակերպել և ավերել այնպիսի հզորագույն երկիրը, ինչպիսին էր Ուրարտուն: Սեպագիր Էտիս- իհմքն է ակնարկում և գրչության *etina-/etuna* տատանումը²:

Ինչպես բազմիցս շեշտել է Ի. Դյակոնովը, Յայկական լեռնաշխարհի հայացման գործում մեծ պիտի լիներ Վանի աղբաների՝ գերիների վերաբնակեցման քաղաքականությունը: Յենց եթունից են տարվել ամենամեծ քանակությամբ գերիներ, որոնց թիվը, ըստ միայն հատվածաբար պահպանված աղբյուրների, բազում անգամներ գերազանցել է արևմուտքից բերվածներին (մասնավորապես, Երեսունինի՝ ուրարտական չափանիշներով ոչ շատ մեծաքանակ 6600 վերաբնակիչներին): Մի արձանագրության համաձայն, Մինուա արքան եթունից տարել է 50 ամի՞՝ «հիսուն բյուր»՝ կես միլիոն մարդ³: Ղժվար է հավատալ այս թվի իրական լինելուն, բայց և այնպես, դա վկայում է Ուրարտուի և եթունինի հակադրության նասշտարների մասին (գերիների այս թիվը բավարար կլիներ Յայկական լեռնաշխարհում եթունինի լեզուն տիրապետող դարձնելու համար): Եթունից հսկայական քանակությամբ գերիներ են տարել նաև Մինուայի հաջորդները: Ուրարտուի անկումից քիչ առաջ, Ռուսա Ա-ը (մ.թ.ա. 685-645) եթունին իհշում է «թշնամական/օտար» երկրների շարքում (այդ թվում իհշվում են Ասորեստանը, Խաքե-Մելիդը, Խալիտու-Խաղտիքը, Մուշքինին, Ծիլուկու-

¹ H. Saggs, The Nimrud Letters, 1952. “Cuneiform Texts from Nimrud”, V. London, 2001, p. 117, 147. Այս աղբյուրի և էթինացի-էթունիցի մեկնաբանության հանար ես պարտական են ուրարտագետ Ե.Գրեկյանին, որին և հայտնում են ին երախտագիտությունը:

² Յրատարակիչը երկրորդ աղբյուրի էթունացիների անվանումը թեականորեն համեմատում է Չամուա երկրի եթինի լեռնանվան հետ (H. Saggs, նշվ. աշխ., էջ 148): Ղժվար է պատկերացնել, որ ինչ-որ մի լեռան այլուրեք անհայտ թնակիչներն ի վիճակի լինեն ավերելու Ուրարտուն:

³ A.M. Dincöl, Die neuen urartäischen Inschriften aus Körzüt. Istanbuler Mitteilungen, Bd. 26, 1976, S. 25-26 (թարգմանության մեջ վիճակ՝ 50000), M. Salvini, Un testo celebrativo di Menua. SMEA, XXII, 1980, p. 167: Ըստ Ե.Գրեկյանի, սա կարող էր գրչության սխալ լինել (հիսուն հազարի փոխարեն):

Սյունիքը և Երկու այլուրեք անհայտ երկրներ), որտեղից նա գերիներ է Վերաբնակեցրել Վանի շրջանում¹: Այսինքն՝ Եթիունին նորից բախման մեջ էր Վանի թագավորության հետ: Այսպիսով, Եթիունին, շատ անգամներ ենթարկվելով Վանի արքաների հարձակումներին և ժանր կորուստներ կրելով, ինքն էլ կարողացել է հակադրվել նրանց և մինչև այդ թագավորության անկումը պահպանել իր «հակառարտական» ինքնությունը:

Այրարատը Մեծ Հայքի կենտրոնական նահանգն էր, նրա միջնաբերդը, իշխող դինաստիաների ոստանը, Երկրի քաղաքական, կրոնական, մշակութային կենտրոնը: Ազգածին ավանդության մեջ, ինչպես ասվեց, հայոց առաջին նահապետ Հայկը հաստատվում է Հարք գավառում, բայց նրա ավագ որդի և ժառանգ Արամանեակը տեղաշարժվում է Այրարատ՝ Արարատյան դաշտ, որտեղ է Հայկից հետո կենտրոնանում հայոց տիեզերքի արարումը: Արարատյան դաշտի շրջակա լեռները կոչվում են Արամանեակի հաջորդների անուններով, իսկ ողջ նահանգն ու նրա կենտրոնը՝ վերջին ազգածին նահապետ Արա Գեղեցիկի անունով՝ «Դաշտն Արայի», որը և զոհվում է այդտեղ: Սկսած լեգենդար պատմության այդ դրվագներից մինչև այժմ Այրարատը մնում է հայոց ոստան՝ այստեղ են գտնվել հայոց համարյա բոլոր մայրաքաղաքները՝ Արմավիրից մինչև Երևան:

Արարատյան դաշտի և Այրարատի Երկու էպոնիմների՝ Արամանեակի և Արայի անունները հիշեցնում են հնդեվրոպական ավանդություններում Երկրների սրբազնա կենտրոնների դիցաբանական էպոնիմների անունները²: Արա Գեղեցիկի հայր Արամի անունը նույնական է Ուրարտուի առաջին հայտնի արքա Արամուի (շուրջ մ.թ.ա. 860-840թթ.) անվանը (Վերջին ձայնավորի կանոնավոր կորստով): Առասպելի տրամաբանությամբ՝ Արամ նահապետն անխուսափելիորեն իրենում պետք է ներառեր նույնանուն պատմական արքայի հիշողությունը: Վերջինիս նշանավոր կենտրոնը՝

¹ M. Salvin, The Inscriptions of Ayanis (Rusahinili = Eiduru kai). Ayanis. Ten Years of Excavations at Rusahinili Eiduri-kai, Roma, 2001, p. 258, 261.

² Այսպես, հնդկական համապատասխան աստվածը կոչվում է Aryaman, հնդարիացիների նախնական հայրենիքը՝ Aryavarta, իրանական աստվածը՝ Airyaman, Երկիրը՝ Ariyānām «արիացիների երկիր» (որից և Իրան), Իրանի էպոնիմը «Շահնամեում»՝ Իրե (հնում՝ Airik), (արևմտա)գերմանական տարածքների կենտրոնում էր բնակվում Herminon ցեղը, կապված Irmīn դիցանվան հետ, իռլանդիան կոչվել է Eriu, Erin, որի էպոնիմներն են Eremon-ը և Eriu-ն (*aryomen, *aryo-): Այս հարցերի շուրջը տես՝ A. A. Դանիելյան, Ած յի հեռե յի ի է օծ է ած է, ո. 90 հեք.:

«արքայական քաղաք» Արշաշկ-ն ստուգաբանորեն և աշխարհագրորեն նույնանում է հետագա Արծեշի հետ՝ ին Արծէ, սեռ. Արծիշոյ < *Արծէշո- < *Արծեսքո- (սրա համարյա ճշգրիտ արտացոլումն է ասորեստանյան սեպազիր Արշաշկ-ն), հնդեվրոպական *arg'esk^(h)-օ- նախաձևից, որը *Harg'- «փայլուն, սպիտակ» արմատի մի ածանցյալն է¹: Արամուից հետո Ուրարտուի արքայական դինաստիան, ինչպես և պետության կենտրոնը, ամենայն հավանականությամբ, փոխվել է²: Ուրարտուի հաջորդ հայտնի արքան է Սարդուրի I-ը, Լուրիապրի որդին, որի նայրաքաղաքն էր Տուշպան (Վաճ): Արամուի և հայոց անվանադիր նահապետ Արամի անունների նույնությունից և Արամուի «արքայական քաղաքի» հայկական անվանումից կարելի է կարծել, որ Արամուն հայկական ծագումով իշխող էր, որը կրվում էր Ասորեստանի արքա Սալմանասար III-ի դեմ Վաճա լճի հյուսիսում՝ Դավի ոստանի շողանում:

Ազգածին ավանդության մեջ որպես Ուրարտուի կառնիմ հանդես է գալիս Ասորեստանի Շամիրամ թագուհին (հայտնի շատ ժողովուրդների առասպելներում): Նա է, որ կարուցում է Վան քաղաքը, որը հայոց մեջ կոչվել է նաև Շամիրամակերտ, Շամիրամի քաղաք: Ուրարտական աղբյուրներում այն կոչվում է Դաշրա և պաշտամունքի կենտրոնն էր Դաշրւեա դիցուհու, արևի աստծու կոնց: Դարերի ընթացքում ինը պաշտամունքներն անվանակիսվում են, բայց պահպանում իրենց բնութագրերը, այսինքն՝ Շամիրամի կերպարում պիտի պահպանված լինեն Տուշպուեայի հատկանիշները: Շամիրամին է վերագրվել և Վանի շրջանը ոռողող

² A.A. I ձԵՇԵԾՈՎՆԵ, ԼաՅԵ-ՕՇԱԾՈ, Օա՛ւենե, 1954, թ. 202, *M. Salvini, Geschichte und Kultur der Urartäer*. Darmstadt, 1995, S. 35.

ջրանցքի՝ «Շամիրամի առվի» կառուցումը, որն իրականում կառուցել է Ուրարտուի Մինուա արքան (մ.թ.ա. 810-786): Շամիրամը գոհվում է Վանա լճի ափին,¹ իսկ առասպելաբանական տրամաբանությամբ՝ հերոսը դաշնում է իր գոհված վայրի եպոնիմը: Նա է, որ հաղթում և նվաճում է Յայաստանը, Արայի Երկիրը, որն «Արայի դաշտն» է, Այրարատը: Ավանդության՝ մեզ հասած տարբերակում Վանը կառուցվում է Արային հաղթելուց հետո, և ընդհանրապես պատմվում է Ասորեստանի և Յայաստանի հակադրության մասին, բայց, հաշվի առնելով առասպելներում պատմական իրողությունների արտացոլման ոչ միարժեք բնույթը, որպես հակադրության կողմեր կարող են դիտվել Վանի շրջանը՝ Արային հաղթած թագուհու ոստանը և Այրարատը, ուրարտական անուններով՝ Բիայնիլին և Եթիունին: Ընդ որում, հակադրությունն անձնավորված է ուրարտական մայրաքաղաքի և հայոց կենտրոնի դիցաբանական եպոնիմների կերպարներով:

Շամիրամի պատմական նախատիպը՝ Սամմուրամաթ թագուհին, իշխել է մ.թ.ա. 810-806թթ., և Շամիրամի ու Արայի հակադրությունը պատմական համատեքստում կարող է դիտվել որպես այդ նույն ժամանակներում Վանի թագավորության կողմից Եթիունիի նվաճման առասպելաբանական արտացոլումը: Ընդ որում, Արայի Երկիրը (հնմտ. «դաշտն Արայի»)² վաղնջական Յայաստանը, միանշանակ կերպով համապատասխանում է ուրարտական աղբյուրների Եթիունին:

Ըստ ավանդության, Արան յոթերորդ Յայեյան (այսինքն՝ ծագումով հայ) իշխողն էր Այրարատում: Այդ յոր սերունդներով է առասպելում կողավորվել հայոց պատմության նախառարարտական փուլը: Ըստ ավանդության, Արայից հետո հայերն ընկնում են Ասորեստանի իշխանության տակ, որից դուրս են գալիս շատ սերունդներ անց, այդ երկրի կործանման արդյունքում (Խորենացի, Ա. իա): Ըստ արաբ պատմիչ Մասուդու գրի առաջ մի տարբերակի, Շամիրամից հետո հայերն են Երկար իշխել Նինվեի արքաների վրա: Իրականում, այդ դարաշրջանում Ուրարտուն էր իշխող դիրք գրավում տարածաշրջանում: Այս տվյալների հակասությունը կարող է վերանալ, եթե ընդունենք, որ Ուրարտուն հյուսիսիցիների

¹ Շամիրամի գոհվելու գրույցների վերաբերյալ տե՛ս Մ.Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 70-71:

(հայերի) հետազա բանահյուսության մեջ նույնացվել է Ասորեստա-նին, իսկ հարավցիների կողմից՝ Հայաստանին¹:

Եթիւնիկ և Վաճա լճից հյուսիս գտնվող տարածքների միշտը անուններ կարող են մեկնաբանվել վաղնջահայերենով (իհարկե, դա չի նշանակում, որ հայկական են բոլոր անունները): Այդ ստուգաբանությունների շարքը և հիմնավորումները հնարավոր չեն կայացնել այս հոդվածի սահմաններում, բայց կարելի է որոշ փաստարկներ բերել մեկական տեղանվան³ և անձնանվան⁴ հայկական ծագման վերաբերյալ:

¹ Մատուցու բերած լեզենյոր և նրանում Ուրարտուի նվաճումների արտացոլման վերաբերյալ տե՛ս՝ *Ա.Տեղ-Ղոնջյան*, «Արա և Ծամիրամ» առասպեկի մի արձագանքը արար պատմի Մատուցու մոտ», **ՊԲՀ**, 1965, №4: Եթուարքիր է, որ Սիրիայի հյուսիսի քրիստոնյաների ժամանակակից բանահյուսության մեջ, որտեղ Ծամիրամը հանդես է գալիս որպես իրենց քաղուկի, հայոց Արամ արքան և Ծամիրամը պատրաստվում են ամուսնանալ, բայց Արամը դավում է և զղիվում պատերազմում, տե՛ս՝ *G.Bohas*, *Les araméens du bout du monde, La memoire des chrétiens d'Orient*, Toulouse, 1994, p. 23 սq.

⁴ Հայտնի է մի արք, որը կարող էր լինել ամբողջ Եփումիի տիրակալը: Նրա անունը էր Diusini (ԷՕԷ՝ 241, C₅₁), այսինքն՝ Դիուսին, տեսականորեն հնարավոր է նաև Tiusini /Shnol'shini/ (արք. սեպագիր di-ն երբեմն ընթերցվում է տի): Այն բացահայտորեն համադրելի է հներվողական, մասնավորապես՝ բալկանյան *deiwo- (կամ *dhes-) «աստված» + *g'ēn- «ծին, տոհմ» անձնանվաճական մոդե-

Թվում է, թե հայերի եթիունյան ծագման որոշ արձագանքներ աղավաղված ձևով հասել են մինչև ուշ ժամանակներ: Ըստ Խորենացու (Ա.ի, լր), Ասորեստանի թագավոր Տևտամոսը հայերի Զարմայր նահապետին եթովպացիների գործով օգնության է ուղարկում Տրոյային, որտեղ և նա զոհվում է հելլենացի քաջերից, բայց հեղինակը կուգեր, որ նա հատկապես Աքիլլեսի ծերքով զոհված լիներ (այստեղ Զարմայրը համապատասխանում է «Իլիականի» Մեմնոնին): Ինչո՞ւ պիտի հայոց նահապետը դառնար եթովպացիների գործի առաջնորդ: Յնարավոր է, որ հայոց ցեղանվան ուրարտական սեպագիր Էտիս-անվանաձևը (հմնտ. և ասորեստանյան ետին-/ետոնա-) ինչ-որ կերպ հասնելով ուշ հեղինակներին՝ վերահմաստավորվեր եթովպայի համահունչ անվանք¹:

Մյուս վարկածների հեղինակները չեն ներկայացնում հայերի վաղնջական ցեղանվան իրենց նախընտրած ձևերի հետ ուղղակի համարելի անուններով կոչվող քիչ թե շատ նշանակալի էթնիկական միավորներ ուրարտական արձանագրությունների հսկայածավալ անվանաբանության մեջ, որտեղ հիշվում են լեռնաշխարհի անգամ ամենաերկրորդական ցեղերը: Իսկ ըստ այս վարկածի, հայերը և նրանց երկիրը նույնացվում են որպես մի հզոր կոնֆեղերացիա, լեռնաշխարհի՝ իր ներուժով երկրորդ էթնոքաղաքական միավորը, տեղայնացած հենց այն տարածքներում, որը և ազգածին ավանդության մեջ, և պատմական դարաշրջանում հանդես է գալիս որպես հայոց կենտրոն (Այրարատ):

Այս վարկածը շատ պելի պարզ կարող է բացատրել Ուրարտու-Հայաստան անցումը՝ որպես լեռնաշխարհի հյուսիսային և հարավային երկու էթնոքաղաքական կենտրոնների հակադրության արդյունք: Հարավի շուրջ երկդարյա տիրապետությունից հետո գերիշխանությունն անցնում է հյուսիսին: Ընդ որում, այս երկու կենտրոնների բնակչությունը և նույնիսկ վերնախավը կարող էին գոնե մասամբ նույն էթնիկական համրույթներին պատկանել: Վանի արքաների և եթիունի դարավոր հակադրությունն իր մասշտաբներով ուղղակի անհամենատելի է Վանի արքաների և Ուրմե-

լին (հմնտ. հուն. Διογένης, Θιογενεῖς, թրակ. Διυζενι, Diuzenus, թերևս և կելտ. Divogenos): Թեև այս անունը երենն թրակյան է համարվել, բայց կարելի է նշել, որ ուրարտ. ֆ-ն համապատասխանում է հայ. ծ-ին (Է. Լ. Անյելլ Ռիթ, լ ձօձձօձձան...՝ թ. 36. Գ. Զահուլյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 430-431), հնրեվլոպական *ց*-ի միայն հայերենին բնորոշ արտացոլմանը, որը մատնանշում է անվան հայկական ծագումը, տե՛ս Ա. Ա. Ղ ձօձձի լոյն, Ած յի ոհեք յի լի է և օծ է ած յ, թ. 189-190:

¹ Ա. Ա. Ղ ձօձձի լոյն, Ած յի ոհեք յի լի է և օծ է ած յ, թ. 114, Ա. Պետրոսյան, Արամի առասպելը..., էջ 124:

Տարոնի՝ Գ.Սարգսյանի կողմից շեշտվող հակադրությանը (և, թերևս, Վանի ու լեռնաշխարհի ողջ արևմուտքի՝ Ուրմե, Մուշքի, Խաթե, Ծուփանի երկրների հակադրությանը):

Այս վարկածով առավել հասկանալի է դառնում Հայաստանի մասին գրած առաջին ականատես հեղինակ Քսենոփոնի այն տեղեկությունը, որ երկրի մի մասը կոչվում էր «Արևմտյան Հայաստան» («Անաբասիս», IV.4.4, մ.թ.ա. 401թ.), իսկ որպես «քուն Հայաստան» է ներկայանում երկրի արևելյան մասը¹, որը պետք է համապատասխանի ուրարտական աղբյուրների եթիունին և հարակից շրջաններին:

Հայոց ազգածագման մյուս վարկածների հեղինակները հայոց ակունքները փնտրել են Հայկական լեռնաշխարհի հարավում և արևմուտքում: Դրա համար կան որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ՝ հնագույն աղբյուրների տեղեկությունները վերաբերում են լեռնաշխարհի հարավային և արևմտյան շրջաններին, ազգածին ավանդություններում հայոց առաջին կենտրոնները տեղայնացվում են Վանա լճի հյուսիսում կամ Եկեղյաց գավառի շրջանում, իսկ ըստ հունական աղբյուրների, հայերը եկել են արևմուտքից: Բայց անկախ ամեն ինչից, երբ հայերի նախնիներին ուրարտական ժամանակներում փնտրում են արևմուտքում, դրանով ենթադրվում է, որ նրանք լեռնաշխարհի հիմնական տարածքներն են մտել գլխավորապես Ուրարտուի անկումից հետո: Իսկ եթե ընդունենք, որ հայերը տարածված են Եղել լեռնաշխարհում արդեն մինչուրարտական ժամանակներում, ինչպես կարծում են վերջին ժամանակների բոլոր լուրջ ուսումնասիրողները (Դյակոնով, Զահուկյան, Իվանով, Սարգսյան և այլք), ապա կարող ենք նախառարարտական ժամանակներով թվագրել նաև հայերի՝ իրենց կենտրոնն Այրարատը դարձնելը, որն ազգածին ավանդության մեջ ներկայացվում է հայոց հենց երկրորդ նահապետ Արամանյակի (ըստ Անանունի՝ հայոց երկրորդ էպոնիմի) Արարատյան դաշտում հաստատվելով:

Եվս մեկ փաստարկ: Հայկի որդիներից հայերի նախահայր Արամանեակն է, որ բողնում է հոր ոստանը և գնում հաստատվում Այրարատում: Մյուս երկուսը՝ Խոռը և Մանավազը, մնում են տեղում և դառնում տեղի էպոնիներ (Խորխոռունիք և Մանաւազեանք): Սա անհասկանալի է: Նահապետի ավագ որդին և ժառանգը, երբոսի երկրորդ էպոնիմը պիտի մնար հոր ոստանում, ինչպես, ի միջի այլոց, տեղի է ունենում Արամանեակի հաջորդների դեպ-

¹ Այս մասին տե՛ս Գ.Սարգսյան, Ուրարտական տերությունը և հայերը, էջ 61-64:

քում (տեղաշարժվում են կրտսեր որդիները՝ օրինակ, Շարան, Սիսակը): Այս անհամապատասխանությունն առասպելի տրամաբանությանը, ինչպես և մյուս դեպքերում, կարող է բացատրվել պատմական պատճառներով: Յայլի որդիներից խոռը պիտի հանարվի խուռիների էպոնիմը (սեպագիր հորրի = խօ՞ > հայ. խոռ, հմնտ. եբր. հօրִ, հուն. χορδίος), իսկ Սանավազը, մեկնաբանվելով որպես ուրարտական Մենուա անվան իրանականացած մի ձև, կարող է համարվել ուրարտական էպոնիմ: Ըստ այդմ, խոռի ու Սանավազի մնալը Յարքում և Արամանյակի գաղթը կարող է բացատրվել որպես հայերի՝ խուռա-ուրարտական ցեղերի ճնշման հետևանքով այդ շրջանը լքելու առասպելական արձագանք¹: Դա, ակնհայտորեն, պետք է տեղի ունենար Ուրարտուի հզոր տերություն դառնալուց ավելի վաղ:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Եղած փաստերի տրամաբանության համաձայն, եթե *հայ* ցեղանունը նույնիսկ կապված էլ չլինի եթունիի հետ, միևնույն է, այդ երկիրը պիտի Եղած լիներ հայերի կենտրոնը արդեն նախառարատական ժամանակներում:

Այս վարկածի համար կարելի է նշել հետևյալ ուժեղ կետերը.

ա. Տարածական և ժամանակային համապատասխանությունը ազգածին ավանդության տվյալներին, ուր Այրարատը և Արարատյան դաշտը հանդես են գալիս որպես հետիայլյան Յայստանի կենտրոն:

բ. Հայերի՝ ուրարտական ժամանակներում բացահայտ նույնացումը որպես լեռնաշխարհի բնակչության մի կարևորագույն հանրույթ, ի հակադրություն մյուս տեսակետների, ուր հայերն, անբացատրելիորեն, չեն երևում ուրարտական արձանագրությունների հսկայածավալ նյութում:

գ. Ուրարտու-Հայաստան անցման պատճականորեն հեշտ մեկնաբանելիությունը, որպես Հայկական լեռնաշխարհում իշխանության կենտրոնի փոփոխություն՝ աշխարհագրորեն հյուսիսից հարավ, երևիկապես՝ Ուրարտուի հշխող տարրող հայերին:

¹ Խորհ՝ որպես խուռակների էպոնիմի վերաբերյալ տե՛ս Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. իին շրջան, Երևան, 1961, էջ 114-115, Գ. Զահորեցյան, Սովունք խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական առբյուրները. ՊԲՀ, 1981, №3, էջ 55. Մանավագ-Մենուա հնարավոր նոյնացման վերաբերյալ՝ Գ. Զահորեցյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 441; Հայկի որդիների գրույցների առասպելաբանական ակունքների և պատմական հայ-խուռակաբանական կապերի արտացոլումների վերաբերյալ Ա. Ի. ձօժ՛նը, Ած յի նեռն յի ն է լ էօ՛ն է՛ ձե՛ց, ն. 192-199:

Դ. Գոնե մեկ արքայի անվան ակնհայտ հայկական ստուգաբանելիությունը. մյուս վարկածները, հայերին տեղայնացնելով լեռնաշխարհի հարավում և արևմուտքում, այդ շրջաններում չեն կարողանում գտնել հայերենով հուսալիորեն ստուգաբանվող անուն ունեցող գոնե մեկ իշխողի:

Թույլ կողմերն են՝ ա. Էտև ձևը Ենթադրելի Atiu-ի փոխարեն, բ. հայերենում՝՝ > յ անցման ժամանակագրության անհայտ լինելը, գ. Եթիւնիում ոչ ակնհայտ հայերեն անունների առկայությունը և այլն:

Սուլբյեկտիվ գործոնը: Զերնպահ մնալով վերջնական եզրակացություններ արտահայտելուց փաստենք, որ այս երեք վարկածներն են, իրենց տարբերակներով, ներկայումս շրջանառվում գիտական գրականության մեջ¹: Երեքն էլ, իրոք, «Վարկածային» են, որը պայմանավորված է տվյալների սակավությամբ, դրանց ոչ միարժեք մեկնաբանման հնարավորությամբ և համակողմանիորեն մշակված չլինելով: Ընդ որում, չի բացառվում, որ եղած վարկածներն իրար հետ կապված լինեն, կամ մեկը մյուսի մի տարբերակը լինի²: Բայց դա միայն տեսական հավանականություն է, և բերված երեք վարկածները դեռևս պետք է դիտվեն որպես իրարից անկախ:

Հայագիտությունը, ինչպես արևելագիտությունն առհասարակ, քաղաքականացված է: Հսկայական միջոցներ և եռանդ է վատնվում ոչ թե գիտական խնդիրների անշարժ քննարկման և ճշմարտության բացահայտման, այլ քաղաքական նպատակներ հետապնդող տեսակետների պաշտպանության վրա: Այս Վիճակը միայն դժվարացնում է գիտության առաջընթացը:

Հայոց ազգածագման վարկածների տարածման և գնահատության գործում շատ մեծ է անձնավորությունների դեղը: Ի՞՞յակոնովը՝ հայ ժողովրդի նախապատմության վերաբերյալ մենագրության հեղինակը, համաշխարհային ճանաչում ունեցող արևելագետ էր, որն իր հեղինակած և խմբագրած բազում աշխատություններում, հրատարակված հայերեն, ռուսերեն և Եվրոպական լեզուներով, պաշտպանում էր իր վարկածը: Նրա մենագրությունը թարգմանվել է անգլերեն և իր մյուս աշխատությունների հետ

դարձել արևմտյան մասնագետների ուղեցույցը հայոց ազգածագման և նախապատմության խնդիրներում (արևմտաքում հարցին իրազեկ մասնագետներ չկան): Այսպիսով, Դյակոնովի տեսությունը, թեև իր անբողջության մեջ հարցին իրազեկ մասնագետների շրջանում կողմնակիցներ չունի, բայց լայնորեն հղվում է աշխարհի գիտական հրատարակություններում:

Հայասական վարկածի՝ աշխարհի գիտական շրջանակներում գնահատման գործում էական է եղել Գ. Ղափանցյանի՝ լեզվաբանական մոտեցումների անընդունելի լինելը (այդ հիման վրա է քննարատվում այն հ. Դյակոնովի և նրա հետևորդների կողմից): Այն, իր հետղափանցյանական՝ լեզվաբանորեն ծզգրտված տարբերակներով, իրազեկ մասնագետների շրջանում փաստորեն միակ տարածված վարկածն է:

Ի.Դյակոնովը և հայասական վարկածների հեղինակներն իրենց աշխատություններում վերլուծել են երկու վարկածների ուժեղ և թույլ կողմերը և քննադատել ու անհավանական համարել իրենց կողմից մերժվողը¹: Ընդ որում, թեև սովորաբար մյուս կողմի համար թողնվել է որոշ հավանականություն, երբեմն օգտագործվել է կատեգորիկ, նույնիսկ կոպիտ ոճ²: Ինչ վերաբերում է էթիունյան վարկածին, այն հասուկ քննարկումների առիթ չի տվել: Նկատելի դեր է կատարել այն հանգամանքը, որ այն դեռևս չի հիմնավորվել հասուկ աշխատության մեջ³:

¹ Ե.Ի. Այսեր ի ա, Ծանոթություններ... , ն. 209-213. Լուսական Է ի ծանոթություններ ամ յի ու այսպիս է, ն. 158, Ա. Այս յօցի ք ամ օւնա ա ի օւն յօցի ի ամ աշա ամ յի, ԵՕԱ, 1961, №2, ն. 107-110, Ա.Ա. Առաջնություններ յօցնելու ամ աշա ամ յի, գ. Զահրայան, Դայն լեզվի պատմություն, եղ 281-283, Ծ.Ա. Առ եճանակած, Ա.Ա. Էսակ ի ա, Օւ. Ծան, ն. 913:

սկզբանական հրուս իրենց երգով գայթապղուն և կրտսանուն իր տոպայնաներին):
3 Եթ որոշ աշխատություններուն այդ Վարկածը փորձել է պաշտպանել Յ.Կարագոյանն ըստ, ցավոք, անճորունելի փաստարկների հիման վրա, որոնց ըննառատությունն տես 9.Ալպազման. Սի հավելում. Ուրարտու-Հայաստան. Եթ 169 և

Հայերի բալկանյան ծագման վարկածն է ընդունված թուրք և թուրքամետ հեղինակների գիտական և ոչ միայն գիտական աշխատություններում: Այս վարկածում նրանց գրավում է հայերենի կրողների, ուլեմն և հայերի՝ բալկանյան ոչ մեծաքանակ գաղթականներ լինելու ենթադրությունը: Ըստ այդմ, հղվում է Դյակոնովի մենագրությունը, բայց հաշվի չեն առնվում այդ աշխատության մեջ ու հեղինակի մյուս գործերում հիմնավորված այն բազմաթիվ դրույթները, որոնք «հայանպաստ» են համարվում: Այդ թվում՝ այն, որ հայերը հաստատվել են Յայկական լեռնաշխարհում Ուրարտուի ձևավորումից շատ ավելի վաղ, որ հայերենից փոխառություններ կան ուրարտերենում, որ հայերը Ուրարտուի և լեռնաշխարհի հին բնակչության գենետիկական և մշակութային ժառանգմերն են, որ հայ ժողովրդի պատմությունը չի կարելի սկսել Ուրարտուի անկումից, այլ պետք է ներառի Ուրարտուի և նախորդ կազմավորումների դրաշջանը և այլն: Ցավալի է, որ այս նույն մոտեցումն է իշխում արևմտյան հայագետների աշխատություններում: Ընդ որում, աչքի է զարնում այդ արտադրանքի գիտական ցածր որակը¹:

Պետք է նշել և հայաստանյան մերձգիտական շրջանակներում շրջանառվող ոչ գիտական «ազգակենտրոն» տեսակետների բացասական հետևանքները: Այդօրինակ մեթոդներով հայերի պատճական բարձր դերի հիմնավորումը նշանակում է տուրք տալ քաղաքականացված հակահայ արտադրանքին և գիտությունը վերածել ազգայնական և հակազգային քաղաքական նկրտումների պայքարի թատերաբեմի: Դա հենց այն ուղին է, որ նախանշում են հայերի պատճական դերի նսեմացման քաղաքականության հեղինակները:

A. A. I aðor ñýr. Ñai i í aðaaí éa aði yí e aí i ði n eí éaéécaöeé i ñeðáééé i ði ði - aði yí neí aí ýcúéa:

Դրա մի արտադրոց օրինակ է 1997-ին ԱՄՆ-ում հրատարակված «Հայ ժողովուրդ և հնից մինչև նոր ժամանակները» երկաստոր աշխատությունը, ուր Հայ ժողովորդի ձևավորումը զլիսում (հեղինակ՝ Զ. Ռասել), անհավատալի քանակությամբ հակագիտական և հնքնահնար «փաստերի» և գործին կապ չունեցող տեղեկությունների տարիքի տուկ որպես միակ գիտական տեսակտն է հոչակվում հ. Դակոնվի վարկածի սեփական հակագիտական շարադրանքը, իսկ հայասական վարկածը Եւրկայացվում է որպես միայն հայերի կողմից հնարված մի տեսություն (The Armenian People From Ancient to Modern Times. Vol. 1. New York, 1997, p. 19-35), սեւ Ա. Պետրոսյան, Զ. Ռասելի «հայագիտական» հնարանքները, ՊԲՀ, 2000, №2:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Ուրարտա-հնդեվրոպական և հայկական առնչությունների շուրջ	5
Էրեբունիի հին բնակչության ծագման շուրջ	28
Ուրարտուի արքայատոհմի և իշխող դասի ծագման շուրջ	43
Ազգածին ավանդությունների աղբյուրագիտական նշանակության շուրջ	70
Հայոց ազգածագման հարցի շուրջ. քննական տեսություն	89

Արմեն Պետրոսյան

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Տեխնիկական խմբագիր՝ Խ.Քարառուղլանյան
Շարվածքի պատասխանատու՝ Լ.Բաղրամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժեկիի 23/1

Կայք՝ [www.noravank.am](#)
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/Փաքս՝ +(374 10) 44 04 73

Թուղթ՝ օֆսեթ, ֆորմատը՝ 60X84 1/16:
Տպաքանակը՝ 300: Տառատեսակը՝ Arial Armenian, Sildipar:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: